



Չ. ՏԱՐԻ


ԲԱՌՈՒՄ

ՊԼՇՏՕՆԱԿԱՆ ԱՐԱՆԻՐ
ԱՐԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ԱՅՐ ԹՈՒԻՅ ՄԻՈՅ ԷԶՐԻԼՏԻ

Երբէ

2023

II. ԷԶՐԻԼՏԻ




ՀՐԱՄԱՆԱԻ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌԻ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



«ԷԶՄԻԱԾԻՆ»

կրօնագիտական եւ հայագիտական ամսագիր

Խմբագրական


Գլխավոր խմբագիր՝ **Գեորգ Մադոյեան**

Լեզուատնական խմբագիր՝ **Նարէ Սարգսեան**

Տեխնիկական խմբագիր՝ **Գոռ Գրիգորեան**

Խմբագրական խորհուրդ՝ **Տ. Եզնիկ արք. Պետրոսեան,
Տ. Չաքարիա ծ. վրդ. Բաղումեան,
Տ. Անդրէաս վրդ. Եզեկեան,
Գոհար Աւագեան,
Ազատ Բոգոբեան,
Խաչիկ Բաֆֆի Գազեր**





“Etchmiadzin”

Journal of Religious and Armenological Studies

Editorial staff

Editor-in-Chief **Gevorg Madoyan**

Stylistic editor **Nare Sargsyan**

Technical editor **Gor Grigoryan**

Editorial Board **Archbishop Yeznik Petrosyan,
Proto-Archimandrite Zakaria Baghumyan,
Archimandrite Andreas Yezekyan,
Gohar Avagyan,
Azat Bozoyan,
Hacik Rafi Gazer**



«Эчмиадзин»

Религиоведческий и арменоведческий журнал

Редакционный состав

Главный редактор **Геворг Мадоян**

Стилистический редактор **Нарэ Саргсян**

Технический редактор **Гор Григорян**

Редакционный совет **Архиепископ Езник Петросян,
Протоархимандрит Закария Багумян,
Архимандрит Андреас Езекян,
Гоар Авакян,
Азат Бозоян,
Хачик Рафи Газер**

**Քրիստոս յարեալ ի մեռելոց.
Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի**

Կանաչ
Իսկուհի




Իսկուհի
Եւ զմեզս

Կեանքս
և մահս



Կեանքս
և մահս



**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՎԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՍԸ
ՄԵՐ ՏԵՐ ԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ՅՐԱՇԱՓԱՌ ՎԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻՈՒՎ**

(Երևան, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, 9 ապրիլի, 2023 թ.)

Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն:

«Իսկ Որդի մարդոյ եկեալ, գտանիցէ՛
արդեւ հաւատս յերկրի»

(Ղուկ. ԺԷ. 8):

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ ի Հայաստան, յԱրցախ եւ ի սփյուռս,
Այսօր համախմբված մեր եկեղեցիների հարկերի ներքո՝ փառաբա-
նում ենք հարուցյալ Փրկչին՝ ավետելով. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:
Օրհնաբանում ենք հրաշափառ Հարությունը մեր Տեր Հիսուս Քրիստո-
սի, Ով չարչարվեց, խաչվեց ու հարություն առավ, որպեսզի մեզ ազատի
մեղքի ու մահվան իշխանությունից, Ով աստվածային անսահման սիրով,
Իր փրկագործությամբ մարդկության համար բացեց հավիտենության ու
երկնքի արքայության ճանապարհը: Քրիստոս ցրեց անհուսության խա-
վարը, հարության շնորհը պարգեւեց մարդկանց, նաեւ զորացրեց՝ երկ-
րային այս իրականության մեջ հառնելու տառապանքներից, չարի ներ-
գործությամբ աշխարհն ալեկոծող աղետներից ու ավերածություններից:

Քրիստոսի խաչելությունից մինչ օրս փարիսեցիական խարդավանք-
ները, հուդայական մատնությունները, պիղատոսյան դատավարություն-
ները արհավիրքներ են սփռում աշխարհում, աղճատում արարչաստեղծ
մարդու կերպարն ու էությունը: Այսպիսի իրողությունների հանդիման,
արդարեւ, նոր ուժգնությամբ է հնչում Քրիստոսի խոսքը. «Երբ մարդու
Որդին գա, արդյոք երկրի վրա հավատ կգտնի»:

21-րդ դարը, սիրելի բարեպաշտ ժողովուրդ, լուսավորյալ նոր դարաշրջան պիտի լիներ գիտական ձեռքբերումներով, տեխնոլոգիական մեծ նվաճումներով, մարդու կյանքի, մարդու իրավունքների ու արժանապատվության պաշտպանության միջազգային նորմերով ու օրենքներով: Բայց որքան անմեղ մարդիկ, որքան ժողովուրդներ են պատերազմների գողգոթաներում նեղությունների ու վշտերի ենթարկվում, տառապանքների խաչին գամվում՝ անարդարության, գերիշխանության մոլուցքի, խտրականության պատճառով, պայքարում գոյաբանական սպառնալիքների դեմ: Մենք եւս անցանք 44-օրյա պատերազմի, Հայաստանի սահմանների վրա հարձակումների աղետալի իրողությունների միջով: Մեր հայրենիքը ներքին եւ արտաքին մտահոգիչ մարտահրավերների պայմաններում դիմակայում է անվտանգ ու խաղաղ կյանքի ապահովման ամենօրյա փորձությունների: Հարազատ Արցախը տեւական ժամանակ շրջափակված է եւ դիմագրավում է անասելի դժվարությունների ու զրկանքների: Այս անհանգստացնող, վտանգալի երեւոյթների հանդիման, մեր սրտերում կրելով չամոքվող վիշտը մեր նահատակ, գերեվարված, անհայտ կորած ու վիրավոր զավակների, ականատես ենք նաեւ ցավալի այլ իրավիճակի, թե ինչպես են թշնամանքի, ատելության դրսեւորումները բաժանարար պատնեշներ դնում աշխարհասփյուռ մեր ժողովրդի կյանքում, խարխւում ազգային միաբանությունը: Ականատես ենք, թե ինչպես են անտեսվում դարերով նվիրագործված ավանդույթները, մեր ինքնության հիմնասյունը հանդիսացող արժեհամակարգը, խաթարվում մեր ժողովրդի ազգային-հոգեւոր անվտանգությունը, որը մեծապես կարեւոր է մեր դեմ ծառացած լրջագույն մարտահրավերների հաղթահարման համար: Մեր կյանքում տեղ գտած նմանօրինակ ընթացքները, հատկապես հետպատերազմյան շրջանում, ավելի են ծանրացնում կրած վշտի ու կորուստների ցավը: Եւ այսպիսի իրադրության մեջ ամենքիս համար առավել ուժգնություն է հնչում Քրիստոսի հարցադրումն ու հանդիմանությունը. «Երբ մարդու Որդին գա, արդյոք երկրի վրա հավատ կգտնի» (Ղուկ. ԺԸ. 8), «Ո՛ր է ձեր հավատը» (Ղուկ. Ը. 25):

Հիրավի, երբ պետական եւ հասարակական կյանքում արդարությունը եւ ճշմարտությունը դադարում են լինել առանցքը ձեռնարկումների ու իրագործումների, շարունակելու ենք առերեսվել պիղատոսականության դրսեւորումների: Փարիսեցիական խարդավանքները շարունակվելու են, քանի դեռ քինախնդրության եւ հիշաշարության մղումով

սփռվում են զրպարտանք ու անիրավություն: Հուգայական մատնությունները շարունակվելու են, քանի դեռ չեն դադարում ուրանալ Աստծուն ու սրբությունները, արժեզրկել հայրենիքի նվիրական գաղափարը: Մինչդեռ պետություն, հասարակություն եւ ընտանիք ամուր ու զորեղ են, երբ խարսխվում են աստվածադիր պատգամների, անանց արժեքների վրա, որոնք բարօրության ուղենիշ են եւ առաջնորդում են երկնային զորակցությամբ արդյունավորելու ջանքերը՝ ի խնդիր ժողովրդի ապահովության, առաջընթացի ու բարգավաճման:

Սիրելիներ, հարության հավատքը հաղթանակ է փորձությունների դեմ, որին բնորոշ չէ վախի, հուսահատության, անկումի ոգին, աղետաբեր դատապարտելի հաշտվողականությունը: Որքան ծանր ու անելանելի թվա ներկա իրավիճակը, այնքան ավելի զորավոր ու հաստատուն պետք է լինի մեր հավատը: Հավատքը պիտի արտահայտվի յուրաքանչյուր քայլի ու արարքի մեջ՝ անձնական, հավաքական ու համագգային անդաստանում: Հավատքով ու միաբանությամբ ենք հաղթահարել մեր պատմության ընթացքում բազմաթիվ արհավիրքներ, վերակերտել մեր անկախ պետականությունը եւ ստեղծագործ կյանք վերընձյուղել հայրենի հողի վրա: Այսօր էլ Աստծու հանդեպ, մեր ուժերի հանդեպ հավատն է, որ պիտի զորացնի մեզ՝ դուրս գալու ճգնաժամային իրավիճակներից, կառուցելու լուսավոր ապագա:

Արդ, ազգովի վերանորոգենք մեր հավատը մեր Փրկչի հրաշափառ Հարության տոնախմբությամբ եւ մեր կյանքով, մեր ամեն խոսքով ու գործով վկայենք մեր հավատարմությունը Քրիստոսին, վկայենք մեր նախանձախնդրությունը հանդեպ մեր տերունավանդ հավատքը եւ կերտենք հարուցյալ նոր իրականություն Քրիստոսի հետ:

Այս մաղթանքով եւ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» ավետիսով եղբայրական Մեր ողջույնն ենք հղում մեր Սուրբ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների գահակալներին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Սահակ արքեպիսկոպոս Մաշալյանին: Ամենայն բարյաց մաղթանքով Սուրբ Հարության հոգեպարար ավետիսն ենք բերում քույր Եկեղեցիների հոգեւոր Պետերին՝ հայցելով Ամենակալ Աստծու զորակցությունը Քրիստոսապատվեր առաքելության արդյունավորման գործում: Հայրապետական Մեր սերն ու օրհնությունն ենք հղում մեր






Սուրբ Եկեղեցու ողջ հոգեւոր դասին եւ հավատավոր Մեր ժողովրդին ի հայրենիս եւ ի սփյուռս:

Սուրբ Հարության այս լուսաշող օրը Մեր աղոթքն ենք վերառաքում առ Բարձրյալն Աստված եւ խնդրում, որ Քրիստոսի Սուրբ Հարության կենսանորոգ շնորհներով փոխակերպվի ու բարեզարդվի աշխարհը, եւ մարդկությունը երկնային զորակցությամբ հառնի տառապանքներից ու նեղություններից, հաստատի բարիք ու խաղաղություն: Հարության զորացնող ուժն ենք հայցում Փրկչից հատկապես Արցախի Մեր զավակների համար, որպեսզի խիզախ ու անկոտրում լինեն ոգով եւ արցախցուն բնորոշ ամուր եւ անհողդողդ կամքով հաղթահարեն իրենց առջեւ ծառացած բոլոր փորձությունները: Թող հարուցյալ Փրկիչը Իր շնորհներն ու ողորմությունը տարածյալ պահի հայրենի մեր երկրի՝ Հայաստանի ու Արցախի վրա եւ Իր Սուրբ Աջի հովանու ներքո ապահովության ու բարօրության մեջ պահպանի համայն մեր ժողովրդին ի սփյուռս աշխարհի այսօր եւ միշտ եւ հավիտյանս. ամեն:

Քրիստոս յարեալ ի մեռելոց. օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի:



**Ն. Ս. Օ. Տ. Տ. ՎԱՐԵՊԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ
ՅԻՇԱՏԱԿԻ ՕՐՈՒԷՅ ԱՌԻԹՈՎ**

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,

Հարիւր եւ աւելի տարիներ առաջ մէկ եւ կէս միլիոն հայորդիք իրենց կեանքի գնով վկայեցին հաւատարմութիւնը աստուածաշնորհ մեր հայրենիքին ու հաւատքին՝ մերժելով ուրացութիւնն ու ուժացումը: Նրանք կենդանի պահեցին իրենց հաւատն ու յոյսը մեր ժողովրդի վերածննդի հանդէպ: Ծիծեռնակաբերդի յուշահամալիրը խորհրդանշում է այդ վերածնունդը, որն իրականութիւն դարձաւ հայրենիքի մի փոքր հատուածում անկախ պետականութեան վերակերտումով, ինչպէս եւ աշխարհի տարբեր երկրներում ցեղասպանութիւնից փրկուած հայորդեաց նոր կեանքի վերընձիւղումով:


Այսօր Հայաստանում ու Արցախում եւ ի սփիւռս աշխարհի, ազգովի համախմբուած եկեղեցիներում, յուշակոթողների առջեւ, աղօթք ենք բարձրացնում առ Աստուած՝ խնդրելով Հայոց ցեղասպանութեան սուրբ նահատակների բարեխօսութիւնը, որպէսզի միաբան ու աննկուն կամքով կարողանանք դիմագրաւել արհաւիրքներին ու սպառնալիքներին, պայքարել հայոց արդար դատի յաղթանակի համար եւ նպաստել մեր ժողովրդի կեանքում ու աշխարհում ցեղասպան եղեռնագործութիւնների ու ոճիրների կանխմանը:

Թո՛ղ Երկնաւոր Տէրը խաղաղութիւն ու բարօրութիւն պարգեւի Հայաստան ու Արցախ մեր հայրենիքին, եւ թո՛ղ յարուցեալ մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի երկնային շնորհները եւ սէրը բաշխուեն համայն մեր ժողովրդին ու ողջ մարդկութեանը այսօր եւ միշտ, ամէն:









Տ. ԱՐՏԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԻԳՐԱՆՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(2 ապրիլի 2023 թ.)

Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Նախահավիտյան Խոսք, այսօր եկար տաճար
սահմանելու օրենքը, հեթանոսների փրկու-
թյան համար

(Շարականոց, Կանոն Մաղկազարդի):

Սիրելիներ, Մաղկազարդ է այսօր: Հիրավի ծաղկազարդ, որովհետեւ
նախորդ օրը ծառերից ճյուղեր ենք պոկել եւ պատրաստել, այսօր
առավոտյան հավուր պատշաճի օրհնության կարգ կատարել, եւ հիմա՝
այս պահին Սուրբ եւ Անմահ Պատարագ ենք մատուցում բաց վարագույ-
րով եւ անգամ հաղորդվելու ենք Տիրոջ Սուրբ Մարմնով եւ Արյամբ:

Օրացուցային առումով մենք թերթեցինք ընդամենը մի քանի էջ մինչ
այս օրը, սակայն հավատքի տեսանկյունից անցանք վիթխարի ճանա-
պարհ՝ Բուն Բարեկենդանից մինչեւ Մաղկազարդ:

Այս ճամփորդությունը ներհայեցողական մի հրաշալի հնարավորու-
թյուն է քննելու մեր սրտերը եւ ըմբռնելու՝ արդյոք Մեծի Պահոց անցած
շաբաթները եւ գալիք Ավագ Շաբաթը մեզանում ընդամենը սննդային
պահեցողություն են, թե՞ ինքնակատարեգալործման, ինքնապատրաս-
տության իրական շրջան:

Բուն Բարեկենդանի կիրակին հիշեցինք նախամոր եւ նախահոր կե-
ցությունն անտրտունջ եղեմական պարտեզում, երբեմն հոգոց հանելով
անդրադարձանք այդ թվացյալ անհոգությանը նախանձով՝ կարծելով,
որ դրախտը եղեմական մի միջավայր է, որտեղ, բնավ, աշխատելու կա-
րիք չկա: Արարիչը կենդանական աշխարհի ներկայացուցիչների անվա-
նակոչությունը վստահեց Ադամին եւ անգամ առաջին կնոջ անունը եւս
հորինեց հողեղենը: Ուրեմն՝ դրախտը մի իրականություն է, որտեղ Տերը

Թույլատրում է արարածներին վայելել Իր անմիջական ներկայությունը եւ մասնակից դառնալ արարչությունը, որի պատիվը չունեին անգամ լուսեղեն հրեշտակները: Մեզ ինչն է խանգարում այս կյանքում մեր շուրջ մեր դրախտը պահել, հոգ տանել, փայփայել, քանի դեռ այն ունենք:

Արտաքսման կիրակին մենք դարեր շարունակ ընկալել ենք որպես համամարդկային առաջին սպաթաքում, որով կատարել սխալ շեշտադրումներ՝ համարելով գլխավոր մեղքը պտղի ճաշակումը, այլ ոչ թե կատարվածը որպես մեղք չընկալելն ու չընդունելը: Ադամն ի պատասխան Արարչին, մեղքը բարդեց Եւայի վրա, Եւան՝ օձի եւ մարդն արարչակից լինելու տիտղոսից զրկվեց, դարձավ տիեզերական քառսի ծնող:

Ծննդոց ներդաշնակությունը խախտվեց եւ երկրագնդի առաջին ծնողները տեսան ամենասարսափելին՝ սեփական որդու սպանությունը մյուս որդու ձեռքով:

Մեղքի խոստովանումից խուսափելը մենք փոխառել ենք գերազանցապես, իսկ արարչակից լինելու տիտղոսից պահել ենք ընդամենը մեկ խտացված չակերտյալ պատվիրան՝ ծառ տնկել, զավակ ծնել եւ տուն կառուցել:

Անառակ որդու պես մենք դեգերեցինք այս աշխարհին հատուկ վիճակներում՝ մտնելով հորից ստացած մեր բաժին ունեցվածքը եւ Սուրբ Հոգու բազում շնորհները: Փոխանակ լույս եւ սեր տարածելը՝ սերմանեցինք ատելություն եւ նախանձ: Անգամ չունեցանք ուժ եւ կորով լինելու գոնե ավագ որդու պես եւ չմնացինք մեր հոր կողքին եւ հոգ չտարանք ժառանգված տնտեսությունը: Թեեւ երբեմն էլ տրվելով տնտեսության տնօրինությանը՝ մեկուսանում ենք նյութի աշխարհում եւ միայն հարեւաններից ենք իմանում, որ մեր տանը տոն է, խնջույք կա, քանի որ մեր անառակ եղբայրն է վերադարձել, ում չենք փնտրել, չենք համոզել վերադառնալ հայրական ակութ:

Տնտեսից սովորեցինք ինչպես կարելի է ուրիշի ունեցվածքով բարեկամ շահել: Առավել խելացիները հասկացան, որ անհնար չէ այս աշխարհի որդիներին միաժամանակ լուսո որդիներ լինել:

Դատավորի կիրակիով այրի կինը մեզ սովորեցրեց, որ ամենօրյա, աննահանջ դիմումներով հնարավոր է արդարության ուղու վրա բերել անգամ անիրավ դատավորին:

Դալստյան կիրակին մեզ սովորեցնում է վախենալ, վախենալ ապագայից: Ինչ է սպասվում օրենսդրին, եթե նա առաջինն է խախտում իր

իսկ ստեղծած օրենքը, ի՞նչ է սպասվում ռամիկ գյուղացուն, երբ նա ազնիվ սերմը չէ, որ ի պահ է տալիս հողին, ի՞նչ է սպասվում մեր տեսակի մի մեծ զանգվածին, որ, խոսքիս բուն եւ փոխաբերական իմաստներով, թքած ունի իր երկրին՝ հողին, իր աղոթքի տան պատերի մեջ ծխախոտի մնացուկը «մոռացողին», ի՞նչ է սպասվում ուսուցչին ու մտավորականին, երբ իրենց տված կրթությունն ու դաստիարակությունը իրենց անգամ փոփոխության չի ենթարկում, ի՞նչ է սպասվում եկեղեցականին, ով դեռ Սուրբ Խորանի աստիճաններից իջնելիս՝ արդեն չի ապրում իր խոսքի համաձայն: Եւ ի՞նչ է սպասվում, ի վերջո, մեզ՝ բոլորիս, երբ անտարբեր նայում ենք, թե ինչպես է մեր տնկած եւ աճեցրած ծառը դառնում անպտուղ, կառուցած տունը լքվում եւ ավերվում, ծնած որդին՝ հեռանում եւ դավաճանում: Եւ ուրեմն՝ առաջիկա գալուստը լինելու է շատ համապատասխան՝ լացով եւ ատամների կրճտոցով:

* * *

Այդ օրերին հատկանշական է, որ Տերն այլեւս չէր արգելում խոսել իր հրաշքներից կամ փառաբանել Իրեն. այժմ ամբողջ Երուսաղեմի ժողովուրդը օրհնաբանում էր Քրիստոսին, քանի որ, ինչպես սպասվում էր Դավթի աթոռին բազմելու էր օրինական գահակալը՝ Թագավորը:

Իրողությունից գիտակցումից մարդիկ հանում էին իրենց հագուստները, պոկոտում էին արմավենիների ճուղերը եւ փռում էին Տիրոջ ճանապարհին:

Այս անցքերից 33 տարի առաջ արեւելքից եկած ծերունիներն արդեն ազդարարել էին Իսրայելի տան Թագավորի՝ Մեսիայի ծնունդը, սակայն ժողովուրդը ականջալուր չէր եղել այդ ավետիսին եւ Բեթղեհեմյան մսուրը չէր դարձել ուխտատեղի:

Երուսաղեմը չէր ցնծում նաեւ, երբ Տերը 40 օրականում առաջին անգամ եկավ Երուսաղեմի Տաճար եւ Իրեն դիմավորեց միայն մի շատ տարեց ծերունի: Ոչ ոք իր հագուստները չէր փռում պատանի Քրիստոսի առջեւ, երբ նա երկրորդ անգամ եկավ Երուսաղեմ:

Միայն երբ ջուրը գինի դարձավ, կաղերը քայլեցին, խուլերը լսեցին եւ կույրերը տեսան, կենցաղից եւ քաղաքական թոհուրեոհից կարծրացած ժողովրդի սիրտը հանկարծ նկատեց Հիսուսին: Ամենքը, մոռանալով իրենց գուլքն ու ունեցվածքը, պարտքերն ու պարտավորությունները, վազեցին Երուսաղեմի դարպասների մոտ՝ այնտեղ էր իրենց «փրկությունը»:

Այդ օրերին ամբողջ Պաղեստինը գտնվում էր հռոմեական տիրապետության ներքո եւ ամեն հրեայի համար Մեսիան առաջին հերթին ռազմական գործիչ էր, ով պիտի ազատեր նրանց օտարի տիրապետությունից: Ոչ ոք չգիտեր, որ ընդամենը երեք դար անց, Հռոմը ինքը դառնալու էր Նազովրեցու լույսի կրողը՝ դառնալու էր քրիստոնյա:

Անշուշտ, Քրիստոս ազատեց Իսրայելի տունը բազմաստվածության լծից, սակայն ոչ սպասված եղանակով. առանց պատերազմի եւ առանց արյունահեղության եւ այդ իսկ պատճառով Երուսաղեմի ժողովուրդը, որ ծարավ էր արյան վրեժով, հագեցում չգտավ:

Երուսաղեմի ժողովուրդը դիմեց Հռոմի կուսակալին, որի իշխանությունից ջանում էր ազատվել, խաչել երիտասարդ Մեսիային, որ սեր էր բերել եւ ոչ թե սուր:

Ցավոք, մարդկային սիրտն այդպիսին է. մենք ամեն հանգամանքի մեր չափիչն ու արշինն ունենք եւ ամեն ինչի կենտրոնում սիրում ենք դնել մեզ: Ծաղկազարդի իրողությունը սպասումի եւ իրականության համեմատականի լավագույն չափանիշն է: Այդ օրերին Երուսաղեմի ժողովուրդը քաղաքական ընկալումով բաժանված էր մի քանի խմբերի եւ միմյանց քարկոծում էին, սակայն Մեսիայի գաղափարը Երուսաղեմի բնակիչների անհատական եւ համամիասնական շահերը զետեղել էր մեկ տեղում: Փարիսեցիներն ու սադուկեցիները, մաքսավորներն ու զելոտները մի կողմ էին դրել քաղաքական եւ վարդապետական տարաձայնությունները եւ եկել էին գտնելու իրենց թե՛ անհատական եւ թե՛ միասնական փրկությունը:


Թեեւ պատմական այս դեպքերից անցել են դարեր, բայց եւ մարդկային հոգեբանության մեջ մնացել ենք նույնը: Լինելով քրիստոնյա՝ մենք Աստծուն հիշում ենք միայն այն ժամանակ, երբ կարիք ունենք որեւէ բանի: Հարագնա եւ սպառողական մեր ժամանակները մեզ սովորեցնում են լինել անհատապաշտ եւ նյութամոլ. հենց դրանով իսկ մենք նմանվում ենք Երուսաղեմի այն օրերի մարդկանց, ովքեր իրենց հագուստները եւ ճյուղերը փռում էին Տիրոջ առջեւ միայն մեկ բանի համար, որպեսզի սեփական խնդիրները լուծում ստանան:

Մեր օրերում եւս, մենք ընտրում ենք որոշ անհատների եւ լիահույս սպասում, որ մեզ ուղղորդելու են հանգիստ եւ անգործ նստելու տանը, քանի դեռ մեր հարցերը լուծելու են մեր փոխարեն: Հասկանալով, որ սպասումն ու իրականությունը տարբեր են՝ ինքնաքննադատության փո-

խարեն, ատելությամբ ենք լցվում այդ անհատի նկատմամբ եւ փնտրում Հռոմի կուսակալին, որպեսզի խաչը հանի մեր սպասումները չիրականացրած մարդկանց:

Առհասարակ այլոց դատելու կարողությունը գերազանց է զարգացած մեզանում: Դիցուք՝ պատանին տապալում է քննությունները եւ մեղավորը քույրն է, որ չի օգնել իրեն: Ձեռնարկատիրական ոլորտում չեն հաջողում՝ ծնողներն են մեղավոր, որ հարուստ չեն եղել եւ ժառանգություն չեն թողել: Բազմամյա պարապ եւ անբեղուն ծառայությունը սպասված պտուղները չի բերում՝ երկիրը երկիր չէ: Եկեք խոստովանենք, որ սեփական անձից պատասխանատվությունը ցրելու եւ հատկապես անտրտուն չաշխատանքից խուսափելու համար պատրաստ ենք մեղադրել եւ խաչել ամենքին:

Եւ եթե, ամեն տարի եղանակի եւ օրացույցի ցուցումների պես նույն են մեր աղոթքները եւ, ցավոք, նաեւ մեր վարքը եւ մարդիկ, որոնց խաչում ենք, գոնե չզլանանք եւ մեր խաչելության Գողգոթայում գտնենք նրանց, որոնց արդեն խաչել ենք, նայենք հալածյալ ու արյունոտ երեսներին եւ ասենք՝ «Աստուած, քաւեա՛ զմեղաւորս, Աստուած քաւեա՛ զմեղաւորս, Աստուած քաւեա՛ զիս զմեղաւորս ի մեղաց եւ կեցո՛ւ. ամէն»:



Տ. ԱՐՇԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՍՈՒՐԲ ՋԱՐՈՒԹՅԱՆ ՃՐԱԳԱՆՈՒՅՑԻՆ
ՍԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(8 ապրիլի 2023 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ,

«Քրիստոս յարեալ ի մեռելոց» ավետիսով մեր ուրախությունն ենք կիսում ամենքիդ հետ հուլիսի հաղթանակի լուսավառ այս երեկո: Քրիստոսի սուրբ Հարության այս ճրագալուցքին մեր մտքերը դառնում են կրկին շարշարանաց այն ճանապարհին, որ պսակվեց աննման Հաղթանակով: Խոհերով փոխադրվում ենք Բեթղեհեմից մինչեւ Նազարեթ, Գալիլիայից մինչեւ Երուսաղեմ եւ Գեթսեմանիից մինչեւ Գողգոթա:

Գեթսեմանիի պարտեզի ծառերը դողում էին մերթ ընդ մերթ սաստկացող քամու հոսանքից՝ կանխագուշակելով, կարծես, սպասվող ահասարսուռ իրադարձությունները: Մինչ Հիսուս քրտնաթոր ու աղեկեղ աղոթում էր: Աղոթում էր այնպես, ինչպես ո՛չ ոք, երբեք եւ ոչ մի անգամ չի աղոթել:

Սպասվող դավաճանության ու շարշարանքների, խաչելության ու մահվան սոսկալի տեսարանները չէին հեռանում Նրա մտապատկերից եւ առանձին թախանձանք էին հաղորդում առանց այդ էլ Նրա սրտահույզ աղերսանքին. «...Հայր, անցո՛ղբաժակս զայս յինչն» (Մարկ. ԺԴ. 36):

Շատ ժամանակ շանցած՝ ամբոխը, մատնիչ Հուդայի ուղղորդմամբ, խուժեց պարտեզ: Հիսուս ձերբակալվեց ու տարվեց դատաստանական ատյան եւ բեմականացված շարահնար դատավարությունից հետո, «Ի խաչ հան զդա, ի՛ խաչ հան»՝ (Մարկ. ԺԵ. 13) ամբոխի խելակորույս ու ջղաձիգ վայնասունների ներքո, կայացվեց Հիսուսի մահապատժի անխուսափելի դատավճիռը:

Ուրբաթ առավոտյան Հիսուս արդեն խաչին էր գամված... Մի քանի ժամ անց, շարշարանքներից հյուծված ու ուժասպառ, Հիսուս ավանդեց

հոգին՝ վերջին ուժերը հավաքելով՝ ցավից ու տառապանքից դառնացած ձայնով աղաղակելով. «Աստուած Իմ, Աստուած Իմ, Ինչո՞ւ թողեցիր ինձ (Մարկ. ԺԵ. 34), ...Հայր, քո ձեռքն եմ ավանդում Իմ հոգին» (Ղուկ. ԻԳ. 46):

Ժամն է թաղման...

Հուղարկավորները պատանքով պատեցին Հիսուսի խոշտանգված մարմինը, ամփոփեցին գերեզմանախորշում: Հաջորդ օրը՝ կիրակի վաղ առավոտյան, երբ արեւը տակավին չէր ցրել գիշերվա մթության վերջին շղարշները, յուղաբեր կանայք հուսաբեկված ու համաքայլ մոտեցան Հիսուսի գերեզմանին:

Գերեզմանի քարը հեռացված էր...

Հիսուսի մարմինը չկար...

Մոտակայքում մի սպիտակազգեստ մարդ, որն ասես պարտիզայանը լինեք, խորհրդավոր ու հաստատակամ ձայնով դիմեց կանանց. «...խաչված Հիսուսին էք փնտրում. Այստեղ չէ այլ հարյավ» (Մտթ. ԻԸ. 5(Բ), 6): Այո՛, խաչված Հիսուս Հարություն է առել՝ «Քրիստոս յարեալ ի մեռելոց»:

Այսպես սկսվեց Հիսուսի Հարության պատմությունը, այսպես տառապանքը վերածվեց հաղթանակի եւ մահը դարձավ կյանքի նախերգանք:

Սիրելի քույրեր եւ եղբայրներ,

Շուրջ երկու հազար տարիներ քրիստոնյաներս Հիսուսի հետ անցնում ենք տառապանքի ճանապարհը, վերապրում Նրա Չարչարանքները, խաչելությունն ու մահը եւ մասնակից դառնում Հարության ուրախությանը:

Շատերը փորձեցին կասկածի տակ առնել մարդկության պատմության մեջ երբեւիցե տեղի ունեցած խոշորագույն այս իրադարձության, այս հրաշքի վավերականությունը: Ազատականներն ու «կարմիր աթեիստները» Քրիստոսի կյանքի ու Հարության պատմությունը համառորեն փորձեցին մղել առասպելաբանության դաշտ, որում ամփոփված են մարդկության՝ անմահության հասնելու տենդագին երեւակայության պատկերներն ու երազները:

Այլք Քրիստոսի Հարությունը գնահատեցին որպես մի տիեզերական խաբեություն՝ հայտարարելով, որ խաչվողը ոչ թե Քրիստոս էր, այլ Նրա նմանությունն ունեցող մի անձ: Մեղադրվեցի նաեւ Քրիստոսի առաքյալները, թե իբր կաշառելով պահակազորին գողացել են Քրիստոսի մարմինը:

Քրիստոսի Հարության դեմ մարտնչողների շարահանար ու հիվանդագին երեւակայութիւնը հասավ անգամ այնտեղ, որ հայտարարեցին, թե Հիսուս ոչ թե մահացավ խաչի վրա, այլ պարզապէս կորցրեց գիտակցութիւնը եւ կամ հայտնվեց լեթարգիական քնի մեջ, որից հետո գերեզմանում արթնանալով հեռացավ այնտեղից:

Քրիստոսի Հարության պատմականութեան ժխտման փորձերը, սակայն, դատապարտվել են ձախողման, դատապարտվել են պատմական ու հնագիտական ժամանակակից հայտնագործութիւնների ու տվյալների անհաղթահարելի ուժով:

Հակառակ, սակայն, Քրիստոսի Հարության իրողութեան անժխտելիութեան, Հարության իրողութիւնը՝ իր գերբնականութեամբ ու անընդգրկելիութեամբ, շարունակում է անընկալելի մնալ մարդկանց համար: «Ինչպէս կարող է մարդ կենդանանալ մեռնելուց հետո, արդո՞ք սա ինքնախաբեութիւնն չէ եւ այրած սրտի կեղծ մխիթարանք», — հարցնում են նրանք: Այո՛, չափազանց դժվար է հավատալ Հարության հրաշքին, երբ ամենու՛ր եւ ամէ՛ն օր բախվում ենք մահվան անհաղթահարելիութեանը, երբ անդառնալիորեն հողին ենք հանձնում ծերերին ու մանուկներին, կանանց ու տղամարդկանց, ծաղկած ու թռչնած կյանքերին: Ինչպէս հավատալ Հարությանը, երբ հողը կլանում է բոլոր կյանքերը, եւ երբ հողից ստեղծվածը դառնում է հողին՝ անէանալով փոշու աշխարհում:

Ավելի դժվար չէ՞, սակայն, հավատալ, որ մարդու կյանքը սոսկ հող է դառնում: Դյուրի՛ն է արդյոք մտածել, որ լոկ մի կայծ է մարդկային կյանքը հավեժի բոցում: Հնարավո՞ր է հավատալ արդյոք, որ մեր կյանքի պատմութիւնը զրկանքների ու շարշարանքների, չհագեցնող ուրախութիւնների ու նվաղկոտ հաջողութիւնների մի անիմաստ ժամանակագրութիւնն է, որն ավարտվում է մահվան տխուր ու անփառունակ վերջաբանով:

Քրիստոսի Հարության հրաշքը բացահայտում է մարդկային կյանքի նպատակը, հարութիւն առնելու հույս է պարգեւում ամենքիս, վերափոխում մեր մահախուճապ դեգերումները, դառնում վավերական նշաձողը մեղքի ու առաքինութեան, չարի ու բարու, լույսի ու խավարի միջեւ:

Քրիստոսի Հարության հանդեպ հավատքով մարդկային կյանքը դադարում է լինել ծնունդից մինչեւ մահ ձգվող մի ժամանակամիջոց, Քրիստոսի Հարութեամբ երկրավոր կյանքը դառնում է պատվանդանը հավիտենական կյանքի: Այս պատճառով է, որ Քրիստոսի Հարությանը հավա-

տացողները նայում են անդին քան զմահն է, անդին, ուր ձգվում է հավիտենական կյանքը:

Քրիստոսի Հարությունը փոխում է մեր կենսակերպն ու հայացքները: Քրիստոսի Հարությանը հավատացողները քրիստոնեությունը դարձնում են ոչ թե զբաղմունք, այլ էություն ու բովանդակություն: Քրիստոսն յայի համար հարստությունը դառնում է միջոց բարեգործության, պաշտոնը՝ ճանապարհ ծառայության եւ ոչ աթոռապաշտության: Քրիստոսի Հարությունը՝ աշխատանքը վերածում է օրհնության եւ ոչ միջոց այլոց կեղեքման, նվաստացման եւ սեփական ազահության բավարարման: Քրիստոսի Հարությանը հավատացողները հայրենիքը չեն դիտարկում սոսկ որպես բնակավայր, այլ ինքնության սրբազան մասունք, եւ աստվածսիրությունը միահյուսում են հայրենասիրությանը: Քրիստոսի Հարությանը հավատացողի համար ուրախություն է եղբայրների ու բարեկամների համար զոհաբերվելը եւ ոչ թե նրանց զոհաբերելը, նվիրաբերվելը, քան թե նվեր ընդունելը: Հարության հույսով ապրողի համար նույնքան արգահատելի մեղք է սեփական ինքնության նկատմամբ հարձակումներից չպաշտպանվելը, որքան այլոց կյանքի նկատմամբ ոտնձգություն կատարելը:


Հարության հույսից զրկված են բոլոր նրանք, ովքեր երկրավոր կյանքը դարձրել են մրցավազք միայն ու միայն հազեցնելու նյութական ու զգայական իրենց կարիքները: Հարության ավետիսը չի հասել նրանց, ովքեր ամեն ինչից ավելի ու ամեն ինչից վեր «Մոլությունների մեհյանում» խնկարկում են սեփական Ես-ի անարվեստ կուռքին: Այո, Հարության ավետիսի ժառանգորդը նրանք են, որոնց հույսը կապված է հավիտենությունը: «Եթե միայն այս կյանքի համար ենք հույս դրել ի Քրիստոս, ապա ողորմելի ենք քան բոլոր մարդիկ» (Ա. Կորնթ. ԺԵ. 19),— այս է պատգամում առաքյալը:

Արդ, սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ, գոտեպնդվենք ու զորանանք, հեռացնենք մեզանից տագնապներն ու վախերը, քանզի մենք հույս ունենք Հարության, խոստում ունենք Տիրոջից, որ անմահությունն է մեր ժառանգությունը, վկայություն ունենք, որ խորտակված է մահվան զորությունը: Պատգամ ունենք Տիրոջից, որ անիմաստ ու աննպատակ չէ մեր կյանքը: Միայն պետք է գործել, պետք է գործել՝ հայացքն ուղղած Քրիստոսի սուրբ Հարության հրաշափառ ու ճշմարտապատում Լույսին՝ զինված հավիտենական կյանքի հույսով եւ ապավինած Աստուծո մշտնջենական զո-

րակցությունը, քանզի Տիրոջ Հարությունը ոչ թե միայն պատմական իրողություն է, այլ իրական ու շնդհատվող ներգործություն, որով հաղթահարելի են դառնում բոլոր փորձությունները՝ ի փրկություն Քրիստոսին հավատացող հոգիների եւ ի փառս Աստծու, որին գոհություն եւ փառք բարձունքներում հավիտյանս հավիտենից ամեն:

Շնորհք, սեր եւ ողորմություն ընդ ձեզ եւ ընդ մեզ եւ ընդ ամենեւին. ամեն:

Քրիստոս յաբեալ ի մեռելոց, մեզ եւ ձեզ մեծ աւետիս:



Տ. ԶԱՔԱՐԻԱ ՍԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՂՈՒՄՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝ ԽՈՍՎԱԾ ՍՈՒՂՆՈՒ Ս. ԳԵՒՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒՄ ԿՐԿՆԱԶԱՏԿԻ ՏՈՆԻՆ

(16 ապրիլի 2023 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Ե՛ս եմ յարութիւն եւ կեանք. որ հաւատայ
յիս, թէպէտ եւ մեռանի՝ կեցցէ՛»

(Յովհ. ԺԱ. 25):

Սիրելի՛ աստվածապաշտ ժողովուրդ,

Արդեն մեկ շաբաթ է, ինչ ցնծում եւ ուրախանում է Հայոց Եկեղեցին, որովհետեւ նրա զանգերի ղողանջներն ավետում են մեր Տիրոջ եւ Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի հրաշափառ հարուստ ավետիսը, իսկ քրիստոնյաներս միմյանց ողջունում ենք՝ սրտանց եւ անվախ ասելով. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Տիրոջ հարուստնը նոր կյանքի սկիզբն է, հնի վերաիմաստավորումը, մահվան նկատմամբ հաղթանակն ու մեկ օր Նրա պես մեր հարուստն առնելու գրավականը: Այո՛, լուսը հաղթեց խավարին, կյանքը՝ մահվանը, թափուր գերեզմանը վերածվեց լոկ հիշողության, իսկ Քրիստոսի առաքյալներն ու Նրա հետեւորդներն ամրացան եւ զորացան հավատքի մեջ՝ Հոգեգալստից հետո ցրվելով աշխարհով մեկ եւ քարոզելով Ս. Ավետարանը: Հիսուսի հարուստն ցանկալի լուրն արդեն դարեր շարունակ ամենքիս սիրտն ու հոգին լցնում է երջանկությամբ եւ հատկապես ապագայի հանդեպ անխախտ հույսով՝ նոր իմաստ հաղորդելով մեր կյանքին եւ պարբերաբար հիշեցնելով տերունական անսուտ խոսքը. «Ես եմ հարուստնը եւ կյանքը, ով հավատում է Ինձ, թեպետեւ մեռնի, կապրի» (Հովհ. ԺԱ. 25): Ուրեմն, է՛հ այս կյանքում, է՛հ հանդերձյալ աշխարհում ապրելու համար պետք է աներկբայորեն հավատալ հարուցյալ Տիրոջը, որ մշտապես մեզ հետ է կյանքի բոլոր հանգրվաններում եւ մասնավորապես նեղությունների, տխրության ու վշտի մեջ:

Հարուստնը մեր հավատի հիմքն է, որի վրա է կառուցված նաեւ Եկեղեցու ողջ ծիսական կյանքը: Առանց հարուստն իրականության ընդուն-

ման, չկա քրիստոնեություն, առավել եւս՝ քրիստոնյայի ճշմարիտ կյանք: Եթե մեր Տերը հարություն չառներ, ապա իմաստազուրկ կլինեին անգամ Նրա չարչարանքները, մահը, թաղումը եւ մյուս տնօրինությունները: Հիսուսի հարության մեջ իմաստավորվեց ամեն ինչ՝ դառնալով սկիզբը նոր արարչության եւ նոր կյանքի: Ս. Հարության խորհուրդն օղի ու ջրի պես անհրաժեշտ է Քրիստոսի Եկեղեցու ամեն անդամի՝ ապրելու հույսով եւ հավատով, արարելու սիրով եւ պատրաստակամությամբ, անդադար պայքարելու եւ բոլոր փորձություններից հաղթանակած դուրս գալու համար: Երբեք չեմ դադարելու միշտ հիշեցնել ձեզ կարեւոր մի ճշմարտություն՝ մեր Տերն ու Աստված հաղթել է, մենք էլ ենք հաղթելու, եթե մեզ բաժին հասած պատերազմները քաջաբար մղենք, զանազան փորձությունների, մարտահրավերների առաջ չծնկենք, հավատարիմ մնանք մեր նախնյաց դավանանքին ու նրանց ստեղծած հոգեմտավոր հարուստ ժառանգությանն ու արժեհամակարգին: Մեր պապերն ու տատերը հարության հավատքով էին ապրում, աղոթքով իրենց օրը սկսում, փառք տալիս Աստծուն ամեն ինչի համար, ինչ կամ ինչ արժեքներով ենք այսօր մենք ապրում... Ինչպես Յուդաբեր կանայք եւ առաքյալները ժամանակին գոտեպնդվեցին հարության ավետիսով եւ իրենց հետագա կյանքն իմաստավորեցին հավատքի գործերով, այնպես էլ հիմա նույն այդ բարի լուրը մեր կյանքը համակում է ուրախությամբ եւ ցույց տալիս ճշմարիտ ու առաքելական հավատքի կարեւորությունը մեզանից յուրաքանչյուրի համար:

Այսօր Հայոց Եկեղեցում Նոր կիրակի է կամ Կրկնազատիկ, որ վերանորոգության եւ վերարթնության խորհուրդն ունի: Քրիստոսի հարությունը վերանորոգեց մեղքի պատճառով անկյալ մարդուն եւ նոր մարդ լինելու հույսը ներշնչեց՝ Աստծուն նորովի ճանաչելու, Նրա կամքի համաձայն ապրելու եւ մեր մեջ վերականգնելու աստվածային պատկերը: Եկեք խոստովանենք, որ առօրյայում ամեն անգամ «նոր» բառն արտաբերելիս՝ հաճախ ենք ուրախանում, քանզի այն արդեն իսկ փոփոխություններ է ենթադրում, հնի ավարտ եւ ինչ-որ լավ բանի սկզբնավորում: Եւ ահա Ս. Հարության գեղեցիկ տոնն ազդարարում է ձմեռային ցրտաշունչ եւ մեռելային եղանակի վերջն ու գարնանային ջերմության սկիզբը եւ առհասարակ բնության վերազարթոնքը: Նույնն է նաեւ մեր հոգեւոր կյանքի պարագայում, երբ հարության մեջ զորացած՝ փորձում ենք Քրիստոսով նոր մարդ լինել եւ ականջալուր լինել Ս. Պողոս առաքյալի խոսքին. «Հեռու վանք ձեզնից հին մարդուն, որ ապականվում է խաբուսիկ ցան-

կուլթյուններով, համաձայն իր նախկին ապրելակերպի, նորոգվե՞ր ձեր հոգով ու մտածելակերպով, դարձե՞ք նոր մարդ, որ ստեղծված է Աստծու պատկերի համաձայն, ապրե՞ք արդարությանմբ, սրբությանմբ ու ճշմարտությանմբ» (Եփես. Ռ. 22–24):

Անխոս նոր լինելը մեծ ճիգ ու ջանք է պահանջում, համբերություն եւ համառություն, որի վերջնակետը ադամորդու փրկությունն է: Մենք ամեն ինչի մասին մտածում ենք այս կյանքում, երբեմն էլ՝ երկրորդական ու անպետք բաների մասին, իսկ որքան ժամանակ ենք հատկացնում մեր հոգու փրկությանը, չէ՞ որ մեկ օր հոգի ենք տալու, անմահ չենք եւ Վերջին դատաստանին դեմառդեմ կանգնելու ենք անկաշառ Դատավորի առաջ: Նոր արարած լինելու հոգեւոր այս ճանապարհորդության համար անհրաժեշտ է օր առաջ վերափոխվելու եւ այլակերպվելու որոշում ընդունել, եթե իսկապես սրտանց եւ ամբողջ հոգով ցանկանում ենք հավիտենապես ապրել Աստծու ներկայության մեջ, վայելել երկնքի արքայության քաղցր պտուղները: Բայց արի ու տես, որ շատ հաճախ ուզում ենք, որ բոլորը՝ մեր ընտանիքի անդամները, ընկերները, բարեկամները, դրացիները, մեզ շրջապատող տարբեր մարդիկ անպայման փոխվեն՝ ակամայից մոռանալով, որ այդ փոփոխությունը պետք է սկսենք ամեն մեկս մեզնից եւ հենց այսօր, գուցե վաղն ուշ լինի: Սիրելիներ, երբեք չվհատվեք եւ չընկճվեք հոգեւոր եւ մարմնավոր պատերազմներում, քանզի Տերն այս վերափոխության ընթացքում ձեզ մենակ չի թողնի եւ կտա նաեւ համապատասխան ուժն ու կամքը: Պարզապես ամո՛հր բռնեք Աստծու ձեռքից եւ բաց մի՛ թողեք, քանզի այն ձեզ կառաջնորդի դեպի հավիտենական կյանք եւ արքայություն:

Կրկնազատկի լուսավոր այս տոնը եւ ընդհանրապես Հինանց շրջանը մեզ անընդհատ հիշեցնելու են հարության լույսի եւ հավատքի մասին: Ի վերջո՞՞ ո՞վ է քրիստոնյան, եթե ոչ հարության լույսի մեջ քայլողն ու հարության հավատքով առաջնորդվողը: Այսպիսի մարդն ազատ է, արժանապատիվ, բարձր գիտակցությամբ եւ պատասխանատվությամբ, եւ ամենակարեւորը՝ անսպառ սիրով եւ հույսով լի: Նա ապրում է եւ չի վախենում, որովհետեւ հարության լույսը ջերմացնում է, իսկ հարության հավատքը՝ ուժ տալիս: Հենց այս հավատքով զորացավ եւ աճեց Քրիստոսի Եկեղեցին, իսկ Տիրոջ աշակերտներից շատերը նահատակվեցին այդ ճշմարտության համար՝ անմահանալով եւ Տիրոջ հետ միավորվելով: Այսօր էլ Աստված ուզում է մեր մեջ տեսնել այդ լույսն ու հավատը,

որը միավորող եւ հաղթանակող զորությունն ունի: Հետեւաբար, այս աշխարհում պետք է ապրենք եւ գործենք Ս. Հարության որդիների նման՝ ոչ միայն մեր կյանքում ապրելով հարության բերկրանքը, այլեւ հավատարիմ լինելով Հարուցյալին՝ հավատքի Զորագլխին, ով այնքան շատ է սիրում մեզ:

Լույսի զավակներ, Նոր կիրակին մեզ համար նաեւ ուխտի վերանորոգության եւ հարության հավատքի մեջ ամրանալու առիթ է, քանզի ձեւավորված ավանդույթի համաձայն՝ Մաշտոցյան Մատենադարանից Ս. Գեորգ է բերվել Շուրիշկանի խնդրակատար եւ հրաշագործ Ս. Ավետարանը: Թող բոլորիդ ուխտն ընդունելի լինի Տիրոջ մոտ, իսկ ձեր խնդրանքներն ու ցանկությունները Նրա կամքով անպայման կատարվեն: 1498 թ. գրված այս Ավետարանը եւ նրան առնչվող բոլոր հրաշքներն ու դեպքերը հարության հավատքի, հաղթանակած Աստծու հանդեպ մեր նախնիների անպայմանավոր սիրո, Աստծու խոսքի հանդեպ վստահության ու հավատարմության դրսևորումներն են: Ուրեմն, զորանանք Աստծու խոսքով, ընթերցենք եւ սերտենք Աստվածաշունչը, ճանաչենք Փրկչին ու ճանաչեցնենք նաեւ մյուսներին՝ մեր կյանքի օրինակով դառնալով Տիրոջ վկաներն ու Նրա խոսքի տարածողները:

Սիրելի՛ ուխտավորներ, այսօր անպայման աղոթեք հայոց պետականության անսասանության եւ Առաքելական մեր Եկեղեցու անշարժության, հոգեւոր եւ աշխարհիկ իշխանավորների համար, ձեր աղոթքներում հիշեք նաեւ արցախահայ մեր արիասիրտ հայրենակիցներին, որոնք ամիսներ շարունակ անտրտունջ եւ անվհատ պայքարում են ազգային եւ քրիստոնեական մեր ինքնության պահպանման ու հայրենիքում ապրելու անխախտելի իրավունքի համար, չմոռանաք հայոց բանակի զինվորներին ու հրամանատարներին, հիվանդներին, նեղյալներին, տկարներին եւ աշխարհասփյուռ ամեն հայի:

Թող արժանապատիվ խաղաղությունը շուտափույթ հաստատվի Հայոց աշխարհում, հարուցյալ Տերը մշտապես հաղթանակներ պարգևի, իսկ մենք ի լուր աշխարհի գոչենք. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:



Տ. ԶԱՔԱՐԻԱ ՍԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՂՈՒՄՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ԱՇԽԱՐՀԱՍՏՐԱՆ ԿԻՐԱԿԻՆ

(23 ապրիլի 2023 թ.)

Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Դո՛ւ եւ Քրիստոսն՝ Որդի Աստուծոյ կենդանոյ»
(Մատթ. ԺԶ. 16):

Հարուստիան հավատքով զորացած հավատացյալներ,

Հայոց Եկեղեցին Ս. Զատիկից հետո հիսուն օր շարունակ մեզ հիշեցնում է ավետարանական ամենակարեւոր ճշմարտությունը. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»: Ձեր այս միասնական, հաղթական, ուրախ բացականչությունը խոսքերից առավել պետք է դառնա էություն, կյանք եւ մտածողություն՝ հաղթահարելու բոլոր դժվարություններն ու փորձությունները եւ կյանքի հանդեպ լցվելու անսահման հույսով: Որքան էլ հիմա ծանր է, ցավալի եւ անորոշ, բայց պետք է ապրել եւ ապրեցնել, պայքարել ու հաղթել, քանզի մեր Տերը հաղթել է: Եւ Տիրոջ հարուստիան ավետիսը հենց այն աստվածային բերկրանքն է, որ մեզ երկրից երկինք է առաջնորդում՝ մեր սիրտն ուրախությամբ լցնելով ու մեր հավատքը զորացնելով հավիտենական կյանքով ապրելու անխախտ հույսով եւ վստահությամբ: Ուստի պատահական չէ, որ Հինանց շրջանի ամեն կիրակի նորովի է բացահայտում հարության խորհուրդը եւ մեզ ուժ տալիս՝ չվհատվելու եւ չտխրելու, այլ մտածելու հարության լույսի, հաղթանակի մասին՝ առավել սերտացնելով կապն Աստծու եւ Եկեղեցու հետ:

Այսօր մեր Եկեղեցում Աշխարհամատրան կամ Կանաչ կիրակին է, որ քրիստոնյաներիս հիշեցնում է երկրի վրա հիմնադրված առաջին մատուռ-եկեղեցուն՝ Վերնատան մասին, ուր Քրիստոս Ս. Հաղորդության խորհուրդը հաստատեց: Ինչպես դիպուկ բնորոշել է Ե. դարի նշանավոր աստվածաբան Ս. Եղիշե վարդապետը. «[Քրիստոս] մեկ օր հացացավ Վերնատանը եւ հանապազ հացանում է Եկեղեցիներում՝ Ս. Սեղանի

վրա»: Եւ ամեն անգամ, երբ Ս. Պատարագ ենք մատուցում մեր եկեղեցիներում, դրանք վերածվում են Նոր Վերնատան, իսկ մենք հնարավորություն ենք ստանում ճաշակելու Տիրոջ իրական Մարմինն ու Արյունը: Վերնատունը Տիրոջ հարությունից հետո նաեւ Տիրամոր, առաքյալների եւ Քրիստոսի հետեւորդների հավաքատեղին էր, ուր նրանք միասնաբար աղոթում էին, ճաշում եւ հաղորդվում: Հենց այստեղ հոգեգալստյան օրը Ս. Հոգին կրակե լեզուների տեսքով իջավ առաքյալների վրա՝ նրանց զորացնելով իրենց ապագա առաքելության համար: Այսպես աճեց ու ամրացավ Քրիստոսի խորհրդական մարմինը՝ Եկեղեցին, եւ Ս. Պողոս առաքյալի խոսքի համաձայն՝ դարձավ «ճշմարտության սյունը եւ հաստատությունը» (Ա. Տիմ. Գ. 15):

Այս կիրակիին տրված «կանաչ» մակդիրը մատնանշում է բնության վերազարթոնքը, Քրիստոսի Եկեղեցու կենդանությունը եւ մշտագալսարությունը: Կենդանի է Եկեղեցին, որովհետեւ հավետ կենդանի է նրա հիմնադիրը՝ Քրիստոս Աստված: Մշտագալար է, քանզի նրա մեջ է գործում Ս. Հոգին՝ Եկեղեցին պահելով ճշմարտության մեջ եւ շնորհագրաբերելով ամեն քրիստոնյայի: Ուրեմն, Եկեղեցին քարացած, մեռած կամ պատմական հաստատություն չէ, այլ կենդանի իրականություն, որ անընդհատ վերանորոգվում եւ այլակերպվում է: Անշուշտ, այս ամենի մեջ կարեւոր դերակատարություն ունենք նաեւ մենք՝ Քրիստոսի հոտի անդամներս, որ մեր ներկայությամբ, Եկեղեցու կյանքին կանոնավոր մասնակցելով եւ նրա մեջ լինելով՝ այն միշտ կենդանի ենք պահում:

Հայոց Եկեղեցու վերջին շրջանի լուսամիտ եւ մտավորական եկեղեցականներից Տ. Զարեհ արք. Ազնավորյանը, որին ես բախտ եմ ունեցել տեսնելու եւ ունկնդրելու Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցում, դասախոսություններից մեկի ժամանակ գեղեցիկ համեմատություն է անում՝ նշելով, որ Եկեղեցին «աշխարհի վրա երկնքի քաղաքացիության պատրաստության վայրն է»: Ինչպես որ որեւէ երկրի քաղաքացիություն ստանալու համար մարդուց պահանջվում են սահմանադրության, զանազան օրենքների, պատմության իմացություն, այնպես էլ հոգեւոր քաղաքացիության համար Եկեղեցու զավակները պետք է որոշակի գիտելիքներ ունենան՝ նախեւառաջ Ս. Մկրտության խորհրդով դառնալով Եկեղեցու անդամ: Այլ խոսքով՝ եթե իսկապես ուզում եք Մայր Եկեղեցին առավել ուժեղ տեսնել, ապա այդ զորացումը, վերափոխումը սկսե՛ք ամեն մեկի ձեզնից՝

գիտակցաբար եւ պատրաստված մոտենալով Եկեղեցու խորհուրդներին, սրբազան ծեսին, Աստվածաշունչը դարձրե՛ք ձեր սեղանի գիրքը, կարդացե՛ք եւ լուսավորվե՛ք, հաղորդ դարձե՛ք Հայոց Եկեղեցու ծոցում ստեղծված հոգեմտավոր անգին ժառանգությունը, ապրե՛ք քրիստոնեավայել, գործե՛ք եւ մտածե՛ք քրիստոնեաբար: Այդ ժամանակ ձեր նախանձախնդրության, ոչ կրավորական պահվածքի, Եկեղեցու հանդեպ տածած սիրո եւ գիտակցված հավատքի շնորհիվ նաեւ հոգեւորականությունը կտեսնեք վերափոխված, իսկ Եկեղեցին ձեզ համար լիովին կդառնա փրկության տապանն ու ազգային-քրիստոնեական ինքնության լավագույն բացահայտման վայրը:

Սիրելի՛ հավատացյալներ, բնականաբար, այսօր մեր Եկեղեցում ընթերցվող աստվածաշնչային հատվածներն անդրադառնում են Եկեղեցուն, նրա հիմնադրմանը եւ Վաղ Եկեղեցու համայնքային կյանքին: Ս. Մատթեոս ավետարանիչը պատմում է Փիլիպպյան Կեսարիայում տեղի ունեցած ուշագրավ մի դեպքի մասին: Նախքան Երուսաղեմ ճանապարհվելը, Հիսուս ցանկանում էր ավելի շատ ժամանակ անցկացնել աշակերտների հետ, հնարավորինս խոսել, զրուցել նրանց հետ՝ պատրաստելով գալիք կարեւոր առաքելությունը: Եւ ահա Տերը հարցնում է առաքյալներին, թե մարդիկ Իր մասին ի՞նչ են մտածում. «Մեկն ասում է՝ Հովհաննես Մկրտիչը, մյուսները՝ Եղիան, ոմանք էլ՝ Երեմիան կամ մարգարեներից մեկը» (Մատթ. ԺԶ. 14): Հրեական միջավայրում այս նույնականացումները պատահական չէին: Ս. Հովհաննես Մկրտիչը հզոր եւ շնորհակիր անհատականություն էր, ուստի շատերը նրան շփոթում էին Մեսիայի հետ: Եղիան նույնպես եզակի մարգարեներից էր, որ հրեղեն կառքով երկինք բարձրացավ: Նրանք հավատում են, որ Մեսիայի գալստից առաջ անպայման նախ Եղիան պետք է գա: Սա է պատճառը, որ ցայսօր հրեաները զատկական սեղանին միշտ մեկ աթոռ ազատ են թողնում՝ սպասելով նրա գալստյանը: Հիսուսի մեջ նրանք տեսնում էին նաեւ Մեսիայի նախակարապետին՝ նույնացնելով Նրան Եղիայի հետ: Իսկ Երեմիան այն մարգարեն էր, որ նախքան գերությունը, մի լեռան քարանձավում թաքցրեց Վկայության խորանը, Ուխտի տապանակը եւ պաշտամունքի այլ առարկաներ: Հրեաները նաեւ այս մարգարեին են սպասում նախքան Մեսիայի հայտնվելը:

Առաքյալներին լսելուց հետո Հիսուս տալիս է կարեւոր հարցը, թե նրանք ի՞նչ են մտածում Իր մասին: Հավանաբար մի պահ առաքյալները կարկամեցին եւ լռեցին: Բայց կրկին հախուռն բնավորությամբ Ս. Պետրոս առաքյալն առաջն նետվեց եւ հայտարարեց. «Դու ես Քրիստոսը՝ կեն-

դանի Աստծու որդին»՝ կրկնելով նախադասված Ս. Բարթողիմեոս առաքյալի նույն արտահայտությունը: Ս. Պետրոսն այս դրվագում, ի դեմս նաեւ մյուս առաքյալների, վկայում է այն հավատքի մասին, որ Քրիստոս սպասված Փրկիչն էր եւ ոչ թե ինչ-որ մարգարե: Հիսուսն այս խոստովանության համար երանի տվեց նրան՝ ասելով. «Ես էլ քեզ ասում եմ, որ դու ժայռ ես, եւ այդ ժայռի վրա եմ շինելու Իմ Եկեղեցին, եւ դժոխքի դռները նրան չեն կարողանա հաղթել» (Մատթ. ԺԶ. 18): Այսինքն՝ Քրիստոսին որպէս Աստծու որդի եւ Փրկիչ հավատալն ու ընդունելը դարձավ հենց այն ժայռը՝ ամուր վեմը, որի վրա կառուցվեց Եկեղեցին:

Դարեր են անցել Քրիստոսի ժամանակներից, շատ մաքուր եւ պղտոր ջրեր են հոսել եւ դեպքեր կատարվել, բայց Աստծուն եւ Ճշմարտությունը ճանաչելու, Նրան գտնելու փնտրտուքը չի մարել մարդկանց սրտերում: Իրականում այսօր էլ Ս. Պետրոս առաքյալի նման նույն խոստովանությունն է պահանջվում մեզնից՝ Ճշմարտության մեջ մնալու եւ վկայելու ուղղափառ հավատքի մասին, որ Ս. Հոգու շնորհիվ պահպանվում է Եկեղեցում: Ուրեմն, ցնծանք եւ քաջ գիտակցենք, որ զավակներն ենք այդ Ճշմարտությունը կրող առաքելահիմն ու լուսավորչահաստատ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, համախմբվենք նրա շուրջ՝ մեր զորավոր ո՛չն ասելով բոլոր այն ուժերին, որոնք փորձում են խարխլել հոգեւոր մեր միությունն ու անվտանգությունը, որոմներ ցանել բերրի արտերում, հեռացնել նախնայաց հավատքից, կտրել արմատներից ու ժամանակի փորձությունն անցած արժեհամակարգից՝ դարձնելով անդեմ աշխարհաքաղաքացի, որը զուրկ է ինքնությունից: Այս դաժան պայքարում իրավունք չունենք հոգնելու, հոռետեսությամբ լցվելու, ետքայլ կատարելու մեր ազգային իղձերից ու նպատակներից, այլ ընդհակառակն՝ միասնականությամբ, համահայկական ներուժի միավորմամբ, սեփական եսի ուրացմամբ պետք է շարունակենք պայքարը՝ հանուն հավերժական Հայաստանի եւ հայոց պետականության զորացման:

Թող ամենակարող Աստված անսասան պահի Ս. Թադեոսի առաքելական Աթոռը, նրա շնորհազարդ Գահակալին, մեր սիրելի Հայրենիքը, զորացնի ամեն հայի՝ պարուրելով հարության հավատքով ու հաղթանակներ պարգեւելով:

Հարուցյալ Տիրոջ սերը, խաղաղությունը եւ ողորմությունն ամենքիս հետ լինեն հավիտյանս հավիտենից, ամեն:



ՍԻՄԵՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՐԵՒԱՆՅԻ

ՊԱՐՏԱՎՃԱՐ՝

ԲԱՐԵՄԻՏ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻԴ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ԻՄ ԱՅՍ ՓՈՔՐ ԳՐՔԻ ՀԱՄԱՐ, ՈՐ ԿՈՉՎՈՒՄ Է ՊԱՐՏԱՎՃԱՐ

Երանելի Պողոս առաքյալը, կամենալով Աստծու բոլոր սպասավորներին եւ ծառաներին ցույց տալ վարձատրությունն ու պատիժն իրենց այն ծառայության համար, որին կոչված է յուրաքանչյուրը, կորնթացիներին գրում է, թե «...քանի որ Քրիստոսի ծառա եւ ավետարանիչ կարգվեցի, ուստի եթե ավետարանում եմ, դա պարծանք չէ, քանզի պարտավորություն է դրված ինձ վրա: Արդ, եթե կամովին եմ անում այն, վարձ կա ինձ համար, իսկ եթե ակամա, ծանր պարտականություն է ինձ հանձնված: Բայց վա՛յ ինձ, եթե չավետարանեմ, քանի որ ով որպէս ծառա է կանչվել, պարտավոր է կատարել իր Տիրոջ հրամանները, այլապէս նրա պարծանքն ընդունայն կլինի, որովհետեւ պարտավորություն է դրված նրա վրա» (հմմտ. Ա. Կորնթ. Թ. 16—17):

Նույնն է ասում նաեւ Քրիստոս. «Մի՞թե ծառան շնորհապարտ է դարձնում իր տիրոջը, երբ կատարում է նրա բոլոր հրամանները» (հմմտ. Ղուկ. ԺԷ. 10): Սակայն եթե ծառան կամովին եւ հոգարությամբ կատարի իր սպասավորությունը՝ համաձայն իր տիրոջ հրամանների, ապա այդժամ տիրոջից կվարձատրվի ավելիով, քան ինքն արժանի իսկ էր, ըստ այն խոսքի, թե «շատի վրա կկարգեմ քեզ» (Մատթ. ԻԵ. 23): Սա է նշանակում այն խոսքը, որ ասում է՝ «եթե կամովին եմ անում այդ, վարձ կա ինձ համար»: Իսկ մեկ այլ տեղում էլ ասում է. «Այն երեցները, որոնք տքնում են նաեւ խոսքով եւ ուսուցանելով, կրկնակի պատվի արժանի թող լինեն» (հմմտ. Ա. Տիմ. Ե. 17):

¹ Փոխադրությունը կատարվել է հետևյալ հրատարակությունից՝ ՍԻՄԵՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՐԵՒԱՆՅԻ, Գիրք որ կոչի Պարտավճար, Ս. էջմիածին, 1779:

«Մինչդեռ եթե ակամա եմ անում,— ասում է,— ապա դա իմ պարտավորությունն է միայն»: Ասել է թե՛ եթե իմ սպասավորությունը տրտնջալով, ծուլությամբ, անհավատարմությամբ կամ հարեւանցիորեն եմ կատարում, միայն այն եմ արած լինում, ինչը որ, պարտավորվածությունից ելնելով, ստիպված էի անել՝ առանց վարձատրության, որովհետեւ ինչպես ակամա գործված մեղքը մեղք չի համարվում, նույնպես նաեւ ակամա առաքինությունն էլ առաքինություն չի համարվում եւ վարձատրություն չունի:

Արդ, եթե մեկը, ով ակամա է կատարում իր տիրոջ հրամանը, վարձատրություն չի ստանում, ապա ուրեմն ի՞նչ է սպասում նրանց, ովքեր ամենեւին չեն կատարում [Տիրոջ հրամանները]: Ահա այդ մասին է ասում. «Բայց վայ է ինձ, եթե չավետարանեմ»: Նույն միտքն է արտահայտում նաեւ այն, որ Քրիստոս մեկ ուրիշ առակի միջոցով էլ ասում է. «Երանի՛ է այն ծառային, որին իր տերը, երբ որ գա, ըստ իր կամքի արած կգտնի... նրան իր բոլոր ինչքերի վրա վերակացու կկարգի» (հմմտ. Ղուկ. ԺԲ. 43—44): Իսկ եթե ուտի, խմի եւ իր տիրոջ հրամանը զանց առնի, տերը կգա եւ «նրան մեջտեղից երկու կտոր կանի եւ նրա բաժինը անհավատների հետ կդնի» (Ղուկ. ԺԲ. 46)... այնտեղ կլինի լաց եւ ատամների կրճտում: Ահա՛ թե ինչ է նշանակում այն, որ ասում է. «Բայց վայ է ինձ, եթե չավետարանեմ»: Այս «վայ»-ը նշանակում է նաեւ այն [խոսքը], որը [Տերն] ուղղում է քանքարաթաքույց ծառային. «Դ՛նրա հանեցեք դրան արտաքին խավարը, քանի որ իր ծառայությունը չկատարեց, այլ իր տիրոջ արծաթը թաղեց [հողի տակ] ու ոչ թե բազմապատկեց այն» (հմմտ. Մատթ. ԻԵ. 30):

Սույն «վայ»-ն է խորհրդանշում նաեւ այն [խոսքը], որը [Տերն] ասում է Եզեկիելի միջոցով. «Եթե դու անօրենին չզգուշացնես, որ հետ դառնա իր շարությունից, նրա արյունը քո ձեռքից եմ պահանջելու» (հմմտ. Եզեկ. Դ. 20): Այդպիսով կամենում է ասել, թե «Քեզ ոչ միայն քո մեղքերի համար եմ պատժելու, այլ նաեւ նրանց, ովքեր քեզ էին վստահված, սակայն որոնց դու չպահպանեցիր»: Սուրբ Գրքում բազմաթիվ են այսպիսի սպառնալիքները՝ ուղղված Աստծու ժողովրդի հոգեւոր հովիվներին, որոնք անփույթ կգտնվեն իրենց հոտի կորստյան համար ու հոգ չեն տանի նրանց: Ահա՛ թե նաեւ ինչու է սուրբ Պողոսն ասում. «Բայց վայ է ինձ, եթե չավետարանեմ»:

Արդ, քանի որ այժմ մեր նույն Քրիստոս Աստծու կողմից նաեւ մեր նվաստ [անձն] է կարգվել որպես Հայոց օրհնյալ ազգի եւ լուսավորչա-

ծին զավակների հոգեւոր հովիվ, տնտես ու սպասավոր, ուստի միեւնույն հարկադրանքը եւ պարտականութիւնն է դրված նաեւ ինձ վրա, որպէս-զի ամենքիդ մշտապէս ավետարանեմ ու քարոզեմ մեր Քրիստոս Աստ-ծու պատվիրաններն ու կամքը՝ հոժարակամութեամբ զգուշացնելով ձեզ [հեռու մնալ] վնասակար ամեն բանից, որի շնորհիվ կվարձատրվեմ Նրա կողմից ու ոչ թե հեղգութեանս եւ անհոգութեանս պատճառով «վայ»-ը կժառանգեմ՝ համաձայն սուրբ Պողոսի [խոսքերի]:

Բայց իմ օրհնչալ ազգին նաեւ այն է հայտնի, որ ներկայիս չարա-պատեհ ժամանակահատվածում ես ինքս չեմ կարող գալ եւ ներկայանալ ամենքիդ առջեւ, ինչը որ անկարելի իսկ է: Այդ իսկ պատճառով էլ հանձն առա գրել այս փոքրիկ գրքուկը եւ ուղարկել ամենքիդ՝ սրա միջոցով հա-կիրճ հաղորդելով այն կարեւորագույնը, որը ես պարտավոր եմ հաղոր-դել, իսկ դուք էլ պարտավոր եք լսել, գիտենալ ու մանավանդ կատարել:

Ուստի Քրիստոսի սիրով աղաչում եմ ձեզ՝ ամենքիդ, որ սա ընդունեք հոժարութեամբ, խորամտութեամբ ընթերցեք, ըմբռնեք գրի առնված խոս-քերի իմաստը եւ ըստ ամենայնի գործադրեք դրանք այնպէս, ասես թե ես ինքս եմ եկել ձեզ մոտ ու խոսում եմ ձեզ հետ այդ խոսքերով..., որ-պէսզի այս փոքրիկ գրքիս շնորհիվ երկու կողմերս էլ մեր պարտավճարը մարած լինելով՝ հաշվետվութեան օրը պարզերես կանգնենք մեր Քրիս-տոս Աստծու առջեւ: Այդ իսկ պատճառով էլ այս գրքի անունը կոչեցինք «Պարտավճար»: Ուրեմն, ձեր չլսելու եւ չկատարելու պարագայում ար-դեն, ահավասիկ, այս գրքուկիս հետ վկա են նաեւ երկինքն ու երկիրը, ես, իմ պարտքը վճարած լինելով, անպարտ կլինեմ:

Ո՛ղջ եղեք Տիրոջով:

Հիսուս Քրիստոսի խոնարհ ծառա
ՏԵՐ ՍԻՄԵՈՆ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս
եւ Սուրբ Էջմիածնի ավելածու

Գ Լ ՈՒ Խ Ա .

ՈՐՈՒՄ ՅՈՒՅՅ Է ՏՐՎՈՒՄ, ԹԵ ԳՐՔՈՒՄ ԻՆՉ ՆՅՈՒԹԵՐԻ Է
ԱՆԴՐԱԴԱՐՁ ԿԱՏԱՐՎԵԼՈՒ

Քրիստոսի սուրբ առաքյալների ժամանակներում, երբ տարբեր ազգերի ու զանազան կրոնների ներկայացուցիչներ դարձի գալով ընդունում էին Քրիստոսի հավատքը, այդ նորագարծների միջեւ քիչ չէին պատահում վեճերն ու տարաձայնությունները հավատքի, դավանանքի եւ ավանդույթյան շուրջ: Ոմանք ասում էին, թե քրիստոնյաները պարտավոր են թլփատվել, իսկ ոմանք բացառում էին դա: Ոմանք այս կամ այն գործը մեղք էին համարում քրիստոնյաների համար, իսկ ոմանք՝ հակառակը: Մի մասն ասում էր, որ այսինչ բանը քրիստոնյաները կարող են ուտել, իսկ մյուս մասն արգելում էր դա: Ոմանք ասում էին՝ «ես այսինչ առաքյալի աշակերտն եմ», ոմանք էլ ուրիշ առաքյալների աշակերտ էին համարում իրենց: Ու այսպիսի շատ դեպքեր, որոնք հայտնի են մեզ սուրբ Պողոսի «Նամակներ»-ից ու «Գործք առաքելոց»-ից: Եւ թեպետ վիճելի հարցերի շուրջ առաքյալները ճիշտ ժամանակին լավն ու օգտակարն էին առաջադրում եւ կանոնակարգում, սակայն, այնուամենայնիվ, այդպիսի տարաձայնությունների թեմաներն ու պատճառները չէին սպառվում: Ահա թե ինչու նաեւ սուրբ Պողոսն է հռոմեացիներին գրում, թե «Ահա ձեզ մի փորձաքար եմ տալիս, որի միջոցով կարող եք վերացնել այդպիսի տարակուսանքները եւ հավաստիորեն գիտենալ, թե որն է մեղքը, խտրելին ու վնասակարը, եւ թե որն է բարին, հաճելին ու օգտակարը» (հմմտ. Հռոմ. ԺԲ. 2): Ահավասիկ՝ «ամենայն ինչ, որ հավատից չէ, մեղք է» (Հռոմ. ԺԴ. 23): Այսպիսով կամենում է ասել, թե «ձեր հավատքը ձեզ համար փորձաքար է վճռատու դարձրեք, որպեսզի ինչ էլ որ կամենաք անել կամ խոսել, կամ էլ որեւէ հարցի շուրջ տարակուսեք, թե արդյո՞ք դա խտրելի է, թե կարելի, այդ հարցը ձեր հավատքին հանձնեք եւ ձեր հավատքից հարցնեք, ու ինչպես որ ձեր հավատքը վճռի ու դատի, դա՛ է ճշմարիտն ու հավանություն արժանին»: Ահա՛ Սուրբ Հոգու արձակած ճշմարիտ վճիռը:

Արդ, հավատքը, առհասարակ, երկու կերպ է լինում: Առաջինը պարզ ու սուրբ հավատքն է, որն Աստծուն ու աստվածային երեւույթներին է վերաբերում եւ բնորոշ է հատկապես Աստծու ընտրյալներին: Հավատքի երկրորդ կերպը մարդու խղճմտանքն է, որը վերաբերում է մարդուն եւ

մարդկայինին ու որը բնությունից տրված է յուրաքանչյուր մարդու: Իսկ ահա սուրբ Պողոսի առաջադրած փորձաքարը մատնանշում է հավատքի այդ երկու տեսակներն էլ ու ճշմարտապես վերաբերում է այդ երկուսին, քանի որ թե՛ աստվածային հավատքը (որն ունեն ճշմարիտ քրիստոնյաները) եւ թե՛ խղճմտանքը (որը բոլոր մարդիկ ունեն) երբեւէ չարի առաջ տեղի չեն տա ու չեն վճռի որեւէ շար եւ վնասակար բան խոսել կամ գործել:

Ուրեմն այս աշխարհում այն ամենը, ինչ որ խոսքով ասեն եւ գործով գործեն, եթե համաձայն հավատքի այս երկու տեսակների եւ դրանց ընտրության լինի, բարի ու ընտրելի է, իսկ եթե հեռու է այդ երկուսից եւ դրանց հակառակ է, մեղք եւ խոտելի է ու նույնիսկ Աստծու դեմ եւ Նրա համար իսկ անհաճո է՝ համաձայն սուրբ Պողոսի դատողության: Հստ այդմ՝ նաեւ այլ տեղում է ասում, թե «առանց հավատի անհնար է հաճելի լինել Աստծուն» (Եբր. ԺԱ. 6): Ուրեմն տեսնենք, թե ինչ ու ինչպես են վճռում հավատքի այս երկու կերպերը, որոնց պարտավոր ենք հետեւել: Նախ դիտարկենք ճշմարիտ հավատքը, որն ունեն բոլոր ճշմարիտ քրիստոնյաները, եւ ապա կխոսենք այն երկրորդի մասին, որը յուրաքանչյուր մարդ էլ ունի:

Գ Լ Ո Ւ Խ Բ .

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ, ՈՐՈՒՄ ԽՈՍՎՈՒՄ Է

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՀԱՎԱՏՔԻ ՄԱՍԻՆ

Արդ, երանելի սուրբ նախնիների սահմանման համաձայն՝ ճշմարիտ ու աստվածային պարզ հավատքն այն է, որը մենք պարտավոր ենք ցուցաբերել Ամենասուրբ Երրորդության հանդեպ՝ հավատալով Հորը, Որդուն եւ Սուրբ Հոգուն՝ որպես երեք Անձերի, բայց մեկ Աստծու՝ անժամանակ, անսկիզբ, անհասանելի, անճառելի, ամենակարող եւ բոլոր արարածներին ոչնչից արարող: Եւ պարտավոր ենք հավատալ, որ այդ երեք Անձինք մեկ բնություն ունեն, մեկ կամք, մեկ զորություն, մեկ իշխանություն, մեկ տերություն, մեկ աստվածություն ու փառավորվում են մեկ երկրպագության մեծությամբ՝ երկնավորներից եւ երկրավորներից: Հայր՝ Աստված, Որդին՝ Աստված, եւ Սուրբ Հոգին՝ Աստված, սակայն ո՛չ թե երեք Աստված, այլ մեկ Աստված:

Հայրն անժին ու անսկիզբ է, քանի որ ծնունդ կամ սկիզբ չի առել որեւէ բանից: Որդին անմարմնաբար եւ անսկզբնաբար ծնվել է Հորից,

ինչպես խոսքը՝ մտքից: Իսկ Սուրբ Հոգին անքննաբար ու անսպառո-
րեն, մտքի համար անհասանելի կերպով եւ խոսքերով անճառելիորեն
բխել է Հորից: Եւ թեպետ Հայրը կոչվում է անսկիզբ ու անծին, Որդին՝
Նրանից ծնված, եւ Սուրբ Հոգին՝ [Հորից] բխած, սակայն Որդին ու Հո-
գին Հորից ավելի փոքր եւ հետին չեն համարվում, ու ոչ էլ Հայրն է
ավելի մեծ ու գերակա, քան Որդին եւ Հոգին են, այլ [երեքն էլ] էու-
թյամբ ու բնությամբ համագո եւ միասնական են՝ անբաժանելի մեկ
Աստված: Եւ թեպետ դա աննախագես ու անըմբռնելի է, սակայն սուրբ
վարդապետները որեւէ կերպ [փորձում են] օրինակներ բերել՝ ասե-
լով, որ չկա եւ չի կարող լինել մարդ՝ առանց խոսքի ու կենդանության,
կամ արեգակը՝ առանց լույսի եւ ջերմության, այդպես էլ Հայր Աստ-
ված չի կարող լինել առանց Որդու եւ Սուրբ Հոգու: Այդ իսկ պատճա-
ռով էլ [աստվածային երեք Անձինք] համարվում են հավիտենակից,
համագոյակից եւ մեկ բնությամբ [միավորված] ու միայն անձերով եւ
դեմքերով բաժանված:

Աստվածային հավատքն ահա այսպէս է ուսուցանում մեզ հավատալ
Սուրբ Երրորդությանը, ինչպես որ հակիրճ ասացինք: Միեւնույն սուրբ
եւ ճշմարիտ հավատքը մեզ ուսուցանում է նաեւ հավատալ ու խոստո-
վանել, որ Սուրբ Երրորդության երեք Անձանցից մեկը, այսինքն՝ Որդի
եւ Բանն Աստված, Հոր ու Սուրբ Հոգու կամքով եւ հաճությամբ Գաբրիել
հրեշտակապետի ավետիսի ժամանակ իջավ Աստվածածին Սուրբ Կույս
Մարիամի մեջ եւ Հորից ու Սուրբ Հոգուց անպակաս եւ անբաժան մնա-
լով՝ բովանդակվեց նրա (Մարիամի) որովայնում: Եւ Նա (Որդին), որ
ըստ ամենայնի՝ անբովանդակելի էր, նրա (Մարիամի) մաքուր արյունից
վերցնելով՝ խառնեց Իր հետ ու մարմնանալով՝ կերպավորվեց մեր կեր-
պարանքով ու եղավ ճշմարիտ մարդ՝ բանական հոգի եւ միտք ունենա-
լով, բայց միեւնույն ժամանակ Աստված մնալով:

Եւ այդպես Բանն Աստված, մեր կատարյալ բնությունն առնելով, ան-
բաժանորեն ու անշփոթաբար միավորեց Իր աստվածային կատարյալ
բնությանը եւ նրա (մեր մարդկային բնության) հետ մեկ եղավ՝ միավո-
րյալ մեկ բնություն կազմելով: Ո՛չ մարմնի բնությունը փոխարկեց Աստ-
վածության անմարմին բնությանը եւ ո՛չ էլ Աստվածության անմարմին
բնությունը մարմնի վերափոխեց, այլ մեր մեղանշական, ապականացու
եւ մահկանացու բնությունն անմեղության, անապականության ու ան-
մահության փոխարկելով՝ միավորեց Իր հետ, եւ այդ միավորությամբ էլ

անշփոթ ու անփոփոխ պահեց իր պարզությունը: Եւ Սուրբ Հոգուց հղանալով՝ իննամսյա ժամանակահատվածից հետո ծնվեց՝ անխախտ պահելով իրեն ծնողի կուսությունը: Ու անվանվեց «Քրիստոս», այսինքն՝ Օծյալ Տեր, որն Աստված է եւ մարդ:

Այսպիսով՝ Նա, որ անմարմնաբար եւ աստվածաբար, անմայր ծննդյամբ հավիտենությունից էլ առաջ ծնվել էր Հորից, նույն ինքը ժամանակի մեջ ծնվեց Կույսից՝ անհայր ծննդյամբ, մարմնով եւ մարդաբար: Նա, Ով նախկինում միայն Աստված եւ Աստծու Որդի էր, դարձավ մարդ եւ մարդու որդի: Ո՛չ թե Աստծու Որդին ուրիշ է, եւ Կույսի Որդին՝ ուրիշ, այլ նույն ինքը եւ Աստված ու Աստծու Որդի է, եւ մարդ ու մարդու որդի: Եւ [Նա] մարմնի մեջ չբնակվեց՝ որպես թե տաճարում, այլ ինքն իր վրա ընդունեց մարմնի թանձրությունն ու ճշմարտապես մարմնացավ՝ ո՛չ թե, սակայն, Կույսից «օտարանալով», այլ նրա (Կույսի) բնությունից [վերցնելով իր մարմինը]: Ո՛չ թե Կույսի արգանդում ոչնչից նորաստեղծեց եւ ձեւավորեց իր մարմինը՝ առանց մարդկային մարմին առնելու, այլ Կույսի արյունից վերցրեց ու խառնեց իրեն, որի արդյունքում եւ թանձրացյալ կերպարանք առավ նույն ինքը՝ ճշմարիտ Աստված, ու դարձավ ճշմարիտ մարդ, ո՛չ թե փոփոխմամբ, այլ միավորություն: Այդ իսկ պատճառով էլ [այս միավորությունը] կոչվում է «նոր եւ սքանչելի խառնում», քանի որ ո՛չ երբեւէ եղել է այդպես եւ ո՛չ էլ կլինի:

Վարդապետները, այնուամենայնիվ, այս միավորությունն ու խառնումը ինչ-որ առումով նմանեցնում են մարդու հոգու եւ մարմնի օրինակին, չնայած որ, ըստ ամենայնի, նման չէ: Ինչպես որ անմարմին հոգու եւ թանձրեղեն մարմնի միավորությամբ ձեւավորվում է մեկ անհատ մարդը՝ միավորված մեկ բնությամբ, ու նա չի կոչվում «երկու մարդ», այլ՝ «մեկ», թեպետ եւ երկու [«բնությունից»] է բաղկացած, այդպես էլ Աստծու Բանի անմարմին ու առանձնական բնությունը միավորվեց մարդու հոգեղեն եւ մահականացու բնության հետ, ու եղավ մեկ Քրիստոս, եւ այդուհետեւ չի ասվում «երկու», այլ՝ «մեկ», թեպետ եւ երկու [«բնությունից»] է միավորված: Եւ ինչպես որ մարդն իր մեջ ունի իրար միավորված հոգի ու մարմին, եւ ո՛չ հոգին է մարմնին խառնվում ու շփոթվում, ո՛չ մարմինը՝ հոգուն, եւ քանի դեռ մարդ կենդանի է, նրա մեջ այդ երկուսից (հոգուց եւ մարմնից) որեւէ մեկը ո՛չ պակասում է ու ո՛չ էլ անհետանում, սակայն այդ նույն [էակը] մեկ մարդ է համարվում (օրինակ՝ ոմն Պետրոսն ինչ էլ որ գործում է, այդ գործը ո՛չ

Թե միայն հոգուն է վերագրվում կամ միայն մարմնին, այլեւ այդ երկուսից (հոգուց եւ մարմնից) միավորված Պետրոսին), այդ նույն կերպ նաեւ Քրիստոս էր, որ, Աստծուց եւ մարդուց լինելով, Իր մեջ միավորված ուներ կատարյալ Աստվածություն ու կատարյալ մարդկություն: Ո՛չ Աստվածությունն էր մարմնին խառնված ու շփոթված, ո՛չ մարդկությունը՝ Աստվածությանը, եւ ոչ էլ նրանցից մեկը (Աստվածությունը կամ մարդկություն) պակասել էր կամ անհետացել, բայց, այդուհանդերձ, Նա մեկ «Քրիստոս» էր կոչվում, եւ Նա ինչ էլ որ գործում, այդ նույն Քրիստոս էր գործում: Թե՛ աստվածային հրաշքները եւ թե՛ մարդկային տկարությունները, որոնք Նա կամավորաբար կրում էր, ո՛չ թե միայն Աստծուն են վերագրվում կամ միայն մարդուն, այլ այդ երկուսից (Աստվածությունից եւ մարդկությունից)՝ միավորված մեկ Քրիստոսին: Քանի որ երբ միեւնույն Քրիստոս կամենում էր, աստվածային [հատկություններն] էր ցույց տալիս, ինչպիսիք էին անսերմնաբար եւ անհայր ծնունդը, մոր կուսությունն անխախտ պահելը, ծովի վրայով քայլելը, հացը բազմացնելը, մեռածներին հարություն տալը եւ նմանատիպ այլ դրսեւորումներ, որոնք Աստծո՛ւ գործեր են, եւ ոչ թե՛ մարդու: Նույնպես եւ երբ կամենում էր, մարդկային [հատկություններն] էր ցույց տալիս, ինչպիսիք էին ծնվելը, կաթով կերակրվելը, թլփատվելը, քաղցը, ծարավը, ննջելը, խաչվելն ու մեռնելը եւ այսպիսի այլ դրսեւորումներ, որոնք մարդկային գործեր ու կրքեր են եւ ոչ թե աստվածային: Սակայն այս բոլորը գործողը եւ կրողը միեւնույն Բանն Աստված էր՝ մարդացած եւ մեկ բնությամբ միավորված՝ մեկ Քրիստոս եղած: Եւ ինչպես որ աստվածային ու մարդկային բնությունները միավորվեցին եւ մեկ բնություն եղան մեկ Քրիստոսի համար, Որը Աստված էր եւ մարդ, այդպես նաեւ աստվածային ու մարդկային դեմքերը, կամքերն ու ներգործությունները միավորվեցին եւ եղան մեկ դեմք, մեկ կամք ու մեկ ներգործություն:

Այս ամենից ելնելով՝ հավատում ենք, որ հավիտենությունից էլ առաջ Հորից ծնված Բանն Աստված, Որն անմարմին, անտեսանելի, անշոշափելի եւ անմահ էր՝ ըստ Աստվածության, ըստ մարդկության՝ ճշմարտապես երեւաց, շոշափվեց, չարչարվեց եւ մեռավ: Եւ դա ո՛չ թե ըստ զանազանության՝ որպես թե մեկը չարչարվեց ու մեռավ, իսկ մյուսն անչարչար եւ անմահ է: Այլ Նա Ինքը, Ով աստվածային բնությամբ անչարչար եւ անմահ է, նույն Ինքը չարչարվեց ու մեռավ մարդկային բնությամբ: Նույն Ինքը, եւ ոչ թե մեկը կամ մյուսը, կամ էլ այս կամ

այն [բնությունը], որովհետեւ անբաժանելի եւ անճառելի միավորությունը վերացրեց թիվն ու զանազանությունը: Այդ իսկ պատճառով էլ Աստծուն է վերագրվում արյունը, չարչարանքն ու մահը, եւ Աստված կոչվում է «խաչված» եւ «մեռած»: Որովհետեւ թեպետ աստվածային մասնահատուկ եւ առանձին բնության համար անկարելի են այդպիսի [հատկությունները], սակայն մարմնի հետ անբաժանելի միավորության պատճառով [այդ բնորոշումները] վերագրվում են Աստծուն: Քանի որ թեպետ աստվածային մասնահատուկ բնության համար անհնարին էր չարչարվելն ու մեռնելը, ինչպես որ մարդուն հատուկ բնության համար էլ անկարելի է մահվամբ մահը մեռցնելն ու մահկանացուներին կյանք տալը, այդ իսկ պատճառով անմահ բնությամբ Աստված միավորվեց մարդու մահկանացու բնությանը, որպեսզի անհնարինը հնարավոր եւ անկարելին կարելի դարձնի, որպեսզի անչարչարելին եւ անմահը որպես չարչարելի ու մահկանացու չարչարվի, մեռնի եւ կենդանացնի այդ նույն մահկանացու բնությունը:

Այս հավատքով պաշտպանվե՞նք չարաշունչ հերձվածողներից եւ մանավանդ Եւտիքեսի շփոթաբանությունից ու Նեստորի տարանջատումից [Քրիստոսի անձի մեջ աստվածային եւ մարդկային բնությունների բաժանումից]: Այսպես է մեզ ուսուցանում ճշմարիտ եւ պարզորոշ հավատքը՝ խոստովանել եւ հավատալ Ամենասուրբ Երրորդությունն ու Քրիստոսի՝ մեր Աստծու փրկագործ մարդեղությունը: Այսպես են վկայում եւ ուսուցանում Աստվածաշունչ բոլոր Սուրբ Գրքերը: Այս հավատքն իր աշակերտներին եւ առաքյալներին ուսուցանեց նաեւ Քրիստոս, իսկ սուրբ առաքյալներն էլ իրենց հետեւողներին նույնն ուսուցանեցին ու քարոզեցին աշխարհին: Նրանցից ուսանեցին նաեւ առաջին սուրբ հայրապետներն ու առաքելաշավիղ հայրերը, եւ նրանք նույնպես նույնը քարոզեցին ու կանոնավորապես սահմանեցին իրենց ժողովուրդների համար: Նրանցից՝ այդ նախկիններից ու առաջիններից էին սուրբ Սեղբեստրոսը եւ մեր սուրբ Լուսավորիչը, սուրբ Թագավորներ Կոստանդիանոսն ու մեր Տրդատը, որոնք հայրապետական եւ Թագավորական վճիռներով [այդ ուսուցումները] հաստատեցին ու սփռեցին ամբողջ աշխարհով մեկ: Եւ այդ հավատքը քարոզեց նաեւ հայոց ազգի մեր նույն սուրբ Գրիգոր Լուսավորիչը, ու այն մենք մինչեւ այսօր դավանում եւ պահպանում ենք անթերի ու առանց այլալուծյան՝ Աստծու շնորհներով եւ մեր նույն սուրբ Լուսավորչի աղոթքներով:

ԳԼՈՒԽ Գ. [Ա. ՄԱՍ]

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ՔԱՆԻ ԺՈՂՈՎ Է ՏԵՂԻ ՈՒՆԵՑԵԼ,
ԵՒ ԴՐԱՆՑ ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ՈՐՊԻՍՈՒԹՅՈՒՆԸ

Արդ, առաջին սուրբ հայրապետների ժամանակներում, երբ ոմանք այս սուրբ հավատքին դեմ ելան ու [այդ հավատքից դուրս] խոսեցին, այդպիսով սխալվեցին եւ մեղավոր համարվեցին, որի պատճառով եւ սուրբ հայրապետներից նզովվելով՝ դատապարտվեցին: Այդպիսիք էին պիղծ Սաբելն ու զազրելի Արիոսը, քանի որ պիղծ Սաբելը Սուրբ Երրորդություն Անձանց հատկություններն էր ուրանում՝ համաձայն հրեաների եւ ալլազգիների տեսակետի [Սուրբ Երրորդությունն] իբրեւ մեկ Անձ խոստովանելով, իսկ անիծյալ Արիոսը Որդուն էր ուրանում՝ Նրան «արարած» եւ բնությամբ Հայր Աստծուց օտար համարելով: Այդ իսկ պատճառով եւ սուրբ հայրապետները սուրբ թագավորներ Կոստանդիանոսի ու մեր Տրդատի հրամանով Փրկչի 325 թվականին ժողովվեցին Նիկիայում (նրանց հետ էր նաեւ մեր սքանչելագործ սուրբ Արիստակեսը՝ իր հայր սուրբ Գրիգորի պատվերով) ու նզովելով հերքեցին եւ դատապարտեցին պիղծ Սաբելին եւ Արիոսին: Եւ սահմանելով՝ կանոնավորեցին ու գրով ավանդեցին հավատալ Սուրբ Երրորդությանը՝ Հորը, Որդուն եւ Սուրբ Հոգուն որպես երեք դեմք ունեցող երեք Անձինք, որոնք անբաժանելի ու համագոտ երեւոյթյամբ [միավորված են] մեկ բնության եւ մեկ Աստվածության մեջ: Իսկ Որդուն, Որին Արիոսն ուրանում էր, դավանեցին որպես Հոր բնությունն [ունեցող] ճշմարիտ Աստված՝ ճշմարիտ Աստծուց, ծնունդ եւ ոչ թե արարած: Եւ նույն Որդին Հոր կամքով ու Սուրբ Հոգու հաճությամբ իջավ Աստվածածին Կույս Մարիամի մեջ, Սուրբ Հոգու միջոցով հղացավ նրա արգանդում, մարմնացավ եւ մարդ եղավ հանուն մեր փրկության, խաչվեց, մեռավ ու թաղվեց, հարություն առավ եւ համբարձվեց երկինք ու նույն մարմնով նստեց Հոր աջ կողմում եւ նույն մարմնով էլ գալու է Հոր փառքով՝ դատելու ողջերին ու մեռածներին:

Եւ մեր սուրբ Գրիգոր Լուսավորիչը եւս ընդունեց այս դավանությունը իր որդու՝ սուրբ Արիստակեսի միջոցով ու [այն] կնքեց՝ [իր կողմից] հավելելով. «Իսկ մենք փառավորենք [Նրան, որ] հավիտենությունից էլ առաջ էր՝ երկրպագելով Սուրբ Երրորդությանն ու մեկ Աստվածությանը՝ Հորը, Որդուն եւ Սուրբ Հոգուն», ինչպես որ յուրաքանչյուր օր երգում ենք մեր եկեղեցիներում:

Իսկ այնուհետեւ՝ Թեոդոս Մեծի եւ մեր Արշակի ժամանակներում, կրկին ընձյուղվեց [այս անգամ արդեն] հայհոյիչ Մակեդոնի անեծքի արմատը, [ներա՛ռվ] ընդդեմ այս հավատքի սկսեց հայհոյություններ խոսել Սուրբ Հոգու մասին՝ Աստվածությունից օտար ու «գործակատար» համարելով Նրան։ Այդ իսկ պատճառով էլ Փրկչի 395 թվականին (381 թ.) վերահիշյալ թագավորների հրամանով հարյուր հիսուն սուրբ հայրապետները (որոնց թվում էր նաեւ մեր հայրապետ սուրբ ու մեծն Ներսեսը) ժողովվեցին Կոստանդնուպոլսում եւ նզովելով մերժեցին ու դատապարտեցին հայհոյիչ Մակեդոնին։ Իսկ Նիկիայի հանգանակին էլ հավելեցին սա. «Հավատում ենք Սուրբ Հոգի Աստծուն՝ Տիրոջը եւ Կենդանարարին, Որը Հորից է բխում (բնագրում՝ «ելնում») ու Հոր եւ Որդու հետ միասին երկրպագվում ու փառավորվում է բոլոր արարածների կողմից»։ Սա նույն սուրբ Ներսեսի ձեռքով ընդունեց նաեւ մեր ազգը, ու [այդ դավանությունը] մենք անշեղ ենք պահում Աստծու Սուրբ Հոգու շնորհների միջոցով։

Իսկ հետո՝ Թեոդոս Կրտսերի ժամանակներում, գլուխ բարձրացրեց անիծյալ Նեստորը, որն Աստծու ներողամտությանը բազմեց Կոստանդնուպոլսի պատրիարքի [գահին] եւ Քրիստոսի տնօրինության հայհոյության նպատակով բացելով իր հոտած բերանը՝ ուրացավ Աստծու Բանի մարմին առնելն ու ճշմարիտ մարդ լինելը եւ չարաչար կերպով մեկ Քրիստոսին երկուսի էր բաժանում, այսինքն՝ երկու Անձ ու երկու բնություն էր [խոստովանում]։ մեկը՝ աստվածային, իսկ մյուսը՝ մարդկային։ Որպես Աստված՝ անձնավոր մարդու մեջ էր բնակվում եւ երբ կամենում էր, ցույց էր տալիս Իր զորությունը տեսանելի մարդու միջոցով, իսկ երբ թույլ էր տալիս, մարդն իր տկարությունն էր ցույց տալիս։ Այս իսկ պատճառով էլ Սուրբ Կույսին «մարդածին» էր կոչում եւ ոչ թե «Աստվածածին»։ Դրա համար եւ Ալեքսանդրիայի սուրբ Կյուրեղ հայրապետը, որն այն ժամանակ որպես պարիսպ ու վահան էր քրիստոնեական հավատքի համար եւ առաջին սուրբ հայրերի [սահմանած] կանոնների պահապանն էր, դիմեց Թեոդոս Կրտսերին ու խնդրեց ժողով գումարել։ Վերջինիս հրամանով էլ Փրկչի 437 թվականին (պետք է լինի՝ 431.— ծ. թ.) Եփեսոսում հավաքվեցին երկու հարյուր սուրբ հայրապետները (որոնց գլխավորում էր սուրբ Կյուրեղը), որոնք էլ դատապարտելով՝ նզովեցին պիղծ Նեստորին ու նրա հետեւորդներին եւ [ներանց] դուրս վտարեցին Քրիստոսի Եկեղեցուց։ Իսկ այնուհետեւ ո՛չ թե մի նոր բան [հաստատեցին], այլ Նիկիայի սուրբ ժողովի կողմից սահմանված միեւնույն [կանոն-

ներն] ընդլայնեցին եւ ուղղեցին ընդդեմ անիծյալ Նեստորի եւ ընդդեմ Քրիստոսին «բաժանող» ամենքի էլ Նրան (Քրիստոսին) դավանեցին որպէս աստվածային ու մարդկային բնություններից անբաժանելի եւ անշփոթ խառնումով միացած ու միավորված մեկ Անձի, մեկ Բնության, մեկ Դեմքի, մեկ Կամքի եւ մեկ Ներգործության մեջ:

Եւ այդպիսով՝ նույն Ինքը՝ Բանն Աստված, ճշմարտապէս մարդացել ու մարմնով ծնվել է Սուրբ Կույսից, որի համար եւ [Նրա] ծնողը կոչվում է «Աստվածածին» ու ոչ թե «մարդածին»: Այդ նույն ժողովում դա իսկ է սահմանում սուրբ Կյուրեղը՝ ասելով. «Արդ, մեր Տեր Հիսուս Քրիստոսին՝ Աստծու Որդուն, խոստովանում ենք որպէս կատարյալ Աստված եւ կատարյալ Մարդ, քանի որ միավորությունը երկու բնություններից եղավ: Այդ իսկ պատճառով էլ մեկ Քրիստոս, մեկ Որդի եւ մեկ Տեր ենք խոստովանում, չնայած որ չենք ուրանում նաեւ բնությունների զանազանությունը, այլ ասում ենք, որ [այդ բնություններն] անճառելի ու անշփոթ միավորությամբ են [միացած]: Եւ Սուրբ Կույսին [խոստովանում ենք] որպէս Աստվածածին՝ [Աստծու] Բանի՝ նրանից մարմնանալու եւ մարդանալու պատճառով»:

Իսկ ահա մեր սուրբ Սահակ Պարթեւը, մեր երկրում [տիրող] խառնակությունների ու մեր ազգին [պատուհասած] խռովությունների պատճառով չկարողանալով ներկայանալ ժողովին, գրի համաձայնությամբ ընդունեց ժողովի [սահմանած] դավանությունն ու [այն] ավանդեց հայոց ազգին, եւ [այդ դավանությունը] մենք ունենք ու անշեղ ենք պահում Քրիստոսի շնորհներով:

Արդ, այս երեք սուրբ ժողովները, թեպետ երեքն էին ու տարբեր ժամանակներում եւ տարբեր հայրապետների կողմից [գումարված], սակայն կարծես թե մեկ անձի կողմից ու միեւնույն ժամանակում են [գումարվել], եւ որպէս մեկ պարան՝ երեք թելերից [բաղկացած], սակայն մեկ խորհուրդ ունեցող, Սուրբ Հոգու կողմից «հյուսված» ու միավորված Ամենասուրբ Երրորդությանը համամիտ ու միաձայն քարոզեցին մեկ եւ նույն հավատքն ու միաբանությամբ սահմանեցին այն, որ է «Հավատամբ»-ը, որն ամեն օր երգում ենք մեր եկեղեցիներում: [Այդ ժողովները] միեւնույն Սուրբ Հոգով զորացած ու արիացած՝ Քրիստոսի Եկեղեցուց քաղեցին եւ արմատախիլ արեցին բոլոր ապականիչներին ու հերձվածողներին եւ նրանց չար աղանդները: Եւ որպէս իմաստուն նավավար, Սուրբ Հոգու հողմով [առաջնորդվելով], [այդ ժողովները] Քրիստոսի նավը՝

սուրբ Եկեղեցին, ու նրա մանուկներին, անվնաս պահելով հերձվածողների շարաշունչ փոթորիկներից, ճշմարտության նավահանգիստ հասցրին: Եւ որպէս Քրիստոսի արթուն ու զգաստ տնտես եւ բարի ծառա, շահելով ու բազմացնելով Նրա արծաթը, այսինքն՝ ճշմարիտ հավատքը եւ մաքուր դավանությունը Սուրբ Երրորդության եւ Բանն Աստծու մարդեղության հանդէպ, այն փոխանցեցին ու ավանդեցին հավատացյալների բոլոր ազգերին եւ Եկեղեցիներին:

Ուրեմն, առանց որեւէ ընդդիմության հանդիպելու, «քրիստոնյա» կոչվողներից յուրաքանչյուր ոք կարող է խորհել իր Եկեղեցու եւ ազգի մասին ու արդարացիորեն քննել՝ արդյոք իր եւ իր Եկեղեցու հավատքն ու դավանությունը համապատասխան եւ նույնական են այն հավատքին ու դավանությանը, որն ավանդեցին Քրիստոս եւ Նրա առաքյալները, ու եթե [այդ դավանությունը] ընդունվել եւ կանոնավորվել է համաձայն այս երեք սուրբ ժողովների, որոնց մասին մինչ այս պահը խոսում էինք, ապա [այդ դավանությունը] ճշմարիտ է ու արդար: Իսկ եթե որեւէ տեսակի անհամաձայնություններ, հավելումներ կամ պակասություններ ունի ու այլափոխված է [այդ ճշմարիտ դավանությունից], ապա այն, համաձայն սուրբ Պողոսի, սխալ եւ մեղանշական է, քանի որ ճշմարիտ հավատքի սահմաններում չի մնացել: Քանի որ ինչպէս որ կարգուկանոնը, ըստ սուրբ վարդապետների, կապում եւ միավորում է, այդպէս էլ անկարգությունը լուծանում ու բաժանում է: Սա հաստատապէս այդպէս է, քանի որ նոր սերունդները պարտավոր են նախնիներին հետեւել ու համաձայնել նրանց հետ, իսկ եթե ընդվզեն, կքայքայվեն եւ կօտարանան նրանցից: Ինչպէս որ քարերի եւ այլ շինությունների դիրքն ու շարքը որքան որ ուղիղ գծով «համաձայնում» են իրենց հիմքի հետ, այդքան հաստատուն ու անխախտ են լինում, իսկ որքան որ շեղվում եւ հեռանում են հիմքից, այնքան խախտու ու վտանգավոր են դառնում: Այս իսկ պատճառով էլ ճարտար որմնադիրները ուղղացույց պարանի օգնությամբ անթարթորեն նայում են հիմքին, որպեսզի ըստ դրա շարեն քարերը: Ծառերի ոստերն ու շուղերը որքան հաստատուն են [կառչած] արմատին եւ բնին, այնքան դալար ու պտղաբեր են լինում, իսկ որքան ճեղքվում եւ հատվում են արմատից, այնքան տկարանում ու ցամաքում են՝ կորցնելով իրենց զորությունը: Ծանապարհորդները, քանի դեռ գլխավոր եւ արքունական ճանապարհով են ընթանում, այդքան ժամանակ ապահով ու անվտանգ են, իսկ երբ դուրս են ելնում [այդ

ճանապարհից] ու շեղվում են դրանից, այդժամ երկյուղի ու վտանգի մեջ են հայտնվում:

Արդ, քրիստոնեական ճշմարիտ հավատքի հիմքը, արմատը եւ ուղիղ ճանապարհը Ինքը՝ Քրիստոսն է՝ համաձայն Իր իսկ անսուտ խոսքի. «Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը եւ կենդանարար որթատունկը»: Եւ այս հիմքի վրա ուղղագիծ հաստատվեցին սուրբ առաքյալները, այս արմատի վրա հաստատվեցին ու այս ճանապարհով ընթացան՝ ըստ այն [խոսքի], թե «թողեցին ամեն բան ու Նրա հետեւից գնացին»: Այդպես եւ Քրիստոս ասաց. «Ես եմ որթատունկը, իսկ դուք՝ Ինձ վրա հաստատված ճյուղերը»: Իսկ սուրբ առաքյալների [հիմքի] վրա էլ դրվեցին եւ ուղղաձիգ շարվեցին երեք սուրբ ժողովների առաջին սուրբ հայրապետները, որոնցից շատերը նույնիսկ ականատես են եղել առաքյալներին, ու նրանց իսկ միջնորդությամբ հաստատվեցին կենդանարար, ճշմարիտ որթատունկի վրա եւ ընթացան Քրիստոսի արքունական պողոտայով: Այս իսկ պատճառով էլ ընդունելի ու տոնելի դարձան բոլոր ազգերի կողմից:

Եւ երբ այս երանելիներն իրենց ժամանակներում տեսան, որ [ոմանք] շեղվել են ուղիղ գծից ու խախտվել են հիմքից, ճեղքվել են արմատից եւ դուրս են եկել ճշմարիտ ճանապարհից, այդպիսիներին (ինչպես, օրինակ, վերոհիշյալ հերձվածողներին) մերժեցին ու վտարեցին միաբանությունից եւ իրենց շարքերից ու հեռու վանեցին իրենցից եւ Քրիստոսի Եկեղեցուց: Եւ նաեւ ապագայի մասին հոգ տանելով՝ իրենց հավատքն ու դավանությունը արձանագրեցին գրով՝ որպես կանոն եւ ուղղորդող պարան, որը ցույց է տալիս սկզբնական հիմքը եւ ուղիղ ճանապարհը, ու դա (այդ հավատքն ու դավանությունը) ավանդեցին քրիստոնյաների բոլոր Եկեղեցիներին, որպեսզի այն ունենան որպես ուղղացույց կանոն եւ դրա միջոցով [անխախտ] պահեն հավատքի շինության կարգավորությունը: Ու ոչ թե նրանք էին, որ խոսում եւ կանոնակարգում էին, այլ Սուրբ Հոգին՝ համաձայն Քրիստոսի խոսքի, թե «ոչ թե դուք եք խոսում, այլ Սուրբ Հոգին»: Եւ ըստ սուրբ Պետրոսի [խոսքերի]՝ «Սուրբ Հոգուց մղված էր, որ խոսեցին Աստծու մարդիկ»: Այդպես նաեւ սուրբ Կյուրեղը, դատապարտելով Նեստորին (որը հայհոյություններ էր խոսում ընդդեմ սուրբ ժողովների), նրա նման պիղծ ու նրան համախոհ Հովհաննես Անտիոքացուն գրում է, թե «մենք ամեն ինչում հետեւում ենք սուրբ հայրերին, եւ նույնիսկ ինքներս մեզ չենք վերապահում ու ոչ էլ ուրիշներին ենք թույլ տալիս որեւէ բառ անգամ փոխել [այն դավանու-

թյունից], որը սահմանել են այնտեղ (այսինքն՝ սուրբ ժողովների ժամանակ), կամ էլ նույնիսկ մեկ վանկ շրջանցել՝ հիշելով ասված այն [խոսքը], թե «Մի՛ փոփոխիր հավիտենությունս սահմանները, որոնք հաստատել են քո հայրերը»: Քանի որ ոչ թե նրանք էին, որ խոսում էին, այլ Աստծու եւ Հոր Հոգին, Որը բխում է Նրանից եւ օտար չէ Որդուն՝ ըստ Բանի էություն»:

Արդ, քանի որ այս երեք սուրբ ժողովները Սուրբ Հոգու միջոցով «խոսեցին», ուստի նա, ով շեղվում եւ հեռանում է սրանց [սահմանած] կանոններից ու շավիղներից, մեղանշում է եւ դատապարտություն է արժանի: Քանի որ ով հեռանում ու օտարանում է սրանց [սահմանած] կանոնից եւ գծից, այդպիսով, անտարակույս, հեռանում ու օտարանում է նաեւ առաքյալներից ու նույնիսկ Քրիստոսից: Այժմ տեսնենք, թե որ ազգն ու Եկեղեցին շեղվեցին եւ հեռացան սրանցից (սուրբ ժողովներից): Եփեսոսի սուրբ ժողովից ու երանելի Կյուրեղի վախճանվելուց հետո նրան հաջորդում է մեծն Դիոսկորոսը, որը եւս իր նախորդի՝ Կյուրեղի նման երեք սուրբ ժողովների ջատագովն էր: Իսկ Նեստորի կործանումից հետո էլ Կոստանդնուպոլսում պատրիարք է դառնում Մաքսիմիանոսը, նրանից հետո՝ Պրոկղը, իսկ նրանից հետո՝ պիղծ Փլաբիանոսը: Թեոդոս Կրտսեր թագավորից հետո էլ Կոստանդնուպոլսում [գահին] է բազմում ամբարիշտ Մարկիանոսը: Եւ այդ ժամանակամիջոցին նեստորադավան լեւոնը որպես պապ բազմում է Հռոմում: Ու ահա իրար հետ համաձայնում են այս երեքը, այսինքն՝ դելը, դուքսը եւ դատավորը, որպեսզի տապալեն Քրիստոսի Եկեղեցու հիմքն ու այլայլեն նրա մաքուր հավատքը: [Այդ երեքն էին] Մարկիանոս թագավորը, լեւոնը եւ Փլաբիանոսը, որոնք երեքն էլ նեստորական էին ու պատկանում էին միեւնույն հերձվածին, եւ նրանց նախորդն էր Պողոս Սամոսատցին:

Իսկ երբ Փլաբիանոսը Կոստանդնուպոլսում պատրիարք դարձավ, սկսեց օրեցօր բացահայտել իր հերձվածը, սակայն հասարակության ահից ելնելով՝ դեռեւս չէր կարողանում հայտնապես «երկու անձ» խոստովանել, եւ Նեստորն էլ աքսորված ու դեռեւս կենդանի էր, այս պատճառով էլ իր մտքում ծածկաբար «երկու անձ» խոստովանելով՝ [բարձրաձայն խոսելով, սակայն], «երկու բնություն» էր ասում:

Այդ ժամանակաշրջանում մեկ այլ հերձված էլ հայտնվեց, [որի հեղինակը] Եւտիքես անունով վանահայրն էր, որը, ընդդեմ Փլաբիանոսի, Քրիստոսի մեջ «մեկ բնություն» էր դավանում, սակայն խառնակումով

եւ առերեւոյթ միայն [իրար միացած]: Ապա Փլաբիանոսը, պատճառ բերելով Եւտիքեսի հերձվածը, [նամակ] է գրում Հռոմ՝ Լեւոնին: Երբ Լեւոնն ունկնդրում է Փլաբիանոսին, նրան իսկույն եւեթ գրով [պատվիրում] է ժողով գումարել, եւ իր թունավոր տոմարը (որը լեցուն էր հերձվածներով եւ ամեն ինչով համաձայնում էր Նեստորի մտքերին, միայն թե Քրիստոսի համար հայտնապես չէր ասում «երկու անձ»), որը դեռ շատ վաղուց կազմել էր ու պատշաճ ժամանակի էր սպասում երեւան հանելու համար, ուղարկում է Փլաբիանոսին՝ իր աղանդակցին, որպեսզի [Փլաբիանոսը] ժողովում Եւտիքեսին «մեկ բնություն» ասելու համար նգովելուց հետո նրա իսկ (Եւտիքեսի) դեմ ուղղված իր տոմարը հաստատի, որը (Լեւոնի տոմարը) «երկու բնություն», «երկու կամք» եւ «երկու ներգործություն» էր դավանում: Ապա Փրկչի 460 թվականին (պետք է լինի՝ 448 թվականին) Փլաբիանոսը, համաձայն Լեւոնի գրության, իր նման մի քանի հոգու հետ ժողով է գումարում Կոստանդնուպոլսում, եւ Եւտիքեսին նգովելով՝ կարգալուծ են անում «մեկ բնություն» ասելու համար: Ու նաեւ հիշատակում են Լեւոնի տոմարը, սակայն երկյուղ ունենալու պատճառով չեն հաստատում այն, քանի որ Թեոդոս Կրտսերը դեռեւս կենդանի էր, եւ բացի այդ՝ ոչ պակաս տարակուսանքներ ունեին Դիոսկորոսի վերաբերյալ:

Այս ժողովից հետո Եւտիքեսը գնում է Դիոսկորոսի մոտ եւ նրան հայտնում է իր կարգալուծության, անցած ժողովի ու Լեւոնի տոմարի որպիսության մասին: Իսկ իր դավանած [վարդապետության] մասին էլ ասում է, թե դա շփոթության հետեւանք է, սակայն [իրականում] կեղծավորություն է անում, որպեսզի հետո դարձյալ վերադառնա իր փոխածին ու նույն [մտքին] մնա: Իսկ երբ Դիոսկորոսը լսում է Փլաբիանոսի հերձվածների եւ Լեւոնի տոմարի մասին, իսկույն դիմում է Թեոդոս Կրտսերին եւ խնդրում է ժողով գումարելու հրաման տալ: Եւ Փրկչի 461 թվականին (պետք է լինի՝ 449 թվականին.՝ ծ. թ.) Թեոդոսի հրամանով 150 հայրապետները ժողովվեցին Եփեսոսում, իսկ ժողովը գլխավորում էր նույն Դիոսկորոսը, որն իր ժամանակի երեւելիներից էր ու ջատագովն էր ուղղափառության, ինչպես որ վերելում նշեցինք: [Ժողովականները] քննեցին Փլաբիանոսի եւ Եւտիքեսի գործերը եւ Եւտիքեսին զղջացած համարեցին՝ նրա «մեկ բնություն» ասելը հաստատապես որպես շփոթմունքի հետեւանք ընդունելով, իսկ Փլաբիանոսին համարեցին իր հերձվածի մեջ համառոտ՝ ըստ Նեստորի աղանդի ու Լեւոնի տոմարի, որը նույնպես

մեջտեղ բերեցին ժողովի ժամանակ: Այդ իսկ պատճառով Փլաբիանոսին դատապարտելով՝ գահընկեց արեցին իր աթոռից եւ նզովեցին, նրա հետ նզովեցին նաեւ Լեւոնի տոմարը եւ բոլոր նրանց, ովքեր Քրիստոսին «երկու» էին ասում ու բաժանում էին: Եւ համաձայն նախորդող ժողովի, որը գումարվել էր Կյուրեղի ժամանակ, հաստատեցին Քրիստոսի համար «անշփոթ միավորություն մեկ բնություն» ասելը:

Ապա այս ամենից հետո աթոռագուրկ Փլաբիանոսը գնում է Հռոմ՝ իր սիրելի համադավան Լեւոնի մոտ, եւ նրան պատմում է Դիոսկորոսի արարքներն ու տոմարը նզովելը եւ մյուս դեպքերը, իսկ օրեր անց նա (Դիոսկորոսը) ընկնում ու մեռնում է: Լեւոնն էլ, այս ամենը լսելով եւ դեռ վաղուց սուրբ Կյուրեղից մեծ վերք ստացած լինելով իր վարդապետին՝ Նեստորին նզոված լինելու պատճառով, այժմ էլ [ականատես լինելով], որ նրա (Կյուրեղի) հաջորդն էլ իր սիրելի Փլաբիանոսին գահընկեց արեց ու նզովեց եւ նրա հետ մեկտեղ նզովելով խաչատառակեց նաեւ իր տոմարն ու իրեն, կարեվեր խոցված լինելով, այրվում էր եւ բորբոքված էր Դիոսկորոսի դեմ ու հնար եւ ժամանակ էր փնտրում վրեժ լուծելու համար:

Արդ, ինչպես որ Սուրբ Գրքում է բազմիցս նկարագրվում Աստծու թողտվություն մեղավորների հաջողության հասնելու մասին, այդպես նաեւ այս Լեւոնը հաջողեց, քանի որ պատշաճ ժամանակ գտավ իր փափագի համար: Եւ բարեպաշտ Թեոդոսի վախճանին հաջորդող ժամանակամիջոցում, երբ նրան հաջորդում է վերոհիշյալ չարափառ Մարկիանոսը, որն ախտամոլ, տգետ ու թերահավատ մեկն էր, իսկ նրա կիցն էլ Պուլքերիա Երկրորդ Իզաբելն էր՝ Նեստորի ձեռամբ մկրտված, նրան աղանդակից եւ նրա, Լեւոնի ու Փլաբիանոսի սիրելին... Լեւոնը գրում է նրանց՝ մեծ թախանձանքով խնդրելով, որ հրաման տան ըստ իր փափագների ժողով գումարելու համար: Եւ Մարկիանոսն ու մանավանդ նրա կին Պուլքերիան էլ հրաման են արձակում, [ըստ որի՝] բոլոր քաղաքներից հավաքվեցին ուղղափառները եւ չարափառներն ու նաեւ շատերը՝ առաջին սուրբ ժողովների ժամանակ կարգալույծ հռչակված եւ նզովված: Նրանք՝ 636 ժողովականները, հավաքվեցին Քաղկեդոնում Փրկչի 472 թվականին (պետք է լինի՝ 451 թվականին): [Ժողովականների] թիվն այդքան էր, որպեսզի Նիկիայի ժողովի կրկնապատիկը լիներ՝ էլ առավել ազդու, քան այն: Եւ ժողովը գլխավորեցին Լեւոնի աթոռակալները, ու այն առաջին ժողովի [մասնակիցներից] ոմանք նզովվեցին: Ապա մեջտեղ բերվեց Լեւոնի տոմարը (մանավանդ որը հաստատելու համար իսկ

հրավիրվել էր այս ժողովը), որի մի հատվածի ընթերցումից հետո ուղղափառների բոլոր շարքերը դարձյալ Դիոսկորոսի հետ միաբան աղաղակեցին, թե «դա Պողոս Սամոսատացո՛ւ [ուսմունքն] է, անգամ Նեստորն այդպիսի հայհոյություն չխոսեց»: Եւ թե՛ «ոչ ոք իշխանություն չունի նոր հավատ հաստատել, քանի որ մեզ համար բավական են Նիկիայում, Կոստանդնուպոլսում եւ Եղեսիայում «գծված» հավատքի սահմանները»: Ու այսպիսի շատ խոսակցություններ:

Իսկ երբ թագավորը տեսավ, որ անհնարին է ուղղափառների հավանությունը ստանալը, այնուհետեւ սկսեց դեկոսյան իշխանությունը գործի դնել, ըստ որի եւ հրամայեց, որ ով հավանություն չտա ու չընդունի Լեւոնի տոմարը, բանտի, աքսորի եւ մահվան կմատնվի: Եւ այդպես էլ վարվեցին Դիոսկորոսի ու մյուս բոլոր ուղղափառների հետ՝ մատնելով նրանց աքսորի, որի ժամանակ էլ [վերջիններս] վախճանվեցին: Ոմանց՝ բանտերում, ոմանց էլ շարշարանքների ու այլ նեղությունների մեջ հալումաշ արեցին, եւ նրանք մարտիրոսություն [այս կյանքից] մյուս կյանք վերափոխվեցին:

Իսկ ովքեր ընդունեցին ու հետեւեցին այն շար ժողովին, [դա արեցին] ոմանք՝ երկյուղից ելնելով, ոմանք՝ կաշառքի միջոցով խաբվելով, ոմանք՝ կեղծավորությամբ՝ թագավորին ու նրա կնոջը հաճոյանալու համար, իսկ ոմանք էլ՝ հերձվածողներ եւ Լեւոնի կողմնակիցներ լինելու պատճառով: [Նրանք՝ բոլորը միասին,] հազիվ հարյուր հոգի եղան, որ ընդունեցին Լեւոնի տոմարը եւ սահմանեցին Քրիստոսի վերաբերյալ «երկու բնություն», «երկու կամք» եւ «երկու ներգործություն» ասել. մեկը՝ աստվածային, եւ մեկը՝ մարդկային: Աստվածայինը հրաշքներն էր գործում, իսկ մարդկայինը տրամական [կրքերն] էր կրում, ինչպես որ հայտնապես ցույց է տրվում տոմարում: Բայց եւ Նեստորին առերես նգովեցին հանրությանը խաբելու համար, ինչի առթիվ ուղղափառները հայտնապես ասացին՝ «եթե Նեստորի [ուսմունքն] եք հաստատում, էլ ինչո՞ւ եք նրան նգովում»:

Զարմանքի է արժանի նաեւ այն, որ սույն ժողովին հավանություն տվողներից շատերը նախկինում մասնակից էին եղել Կյուրեղի օրոք հրավիրված ժողովին, որի ընթացքում Քրիստոսին դավանել էին «մեկ բնությամբ», իսկ «երկու բնություն» ասողներին նգովել էին: Ապա այդ նույն [ժողովականները] ներկա գտնվեցին Փլաբիանոսի [հրավիրած] ժողովին, ուր, ընդդեմ Եւտիքեսի, «երկու բնություն» քարոզեցին, իսկ


«մեկ բնություն» ասողներին էլ նզովեցին: Այնուհետեւ նրանք ներկայացան Դիոսկորոսի [հրավիրած] ժողովին, եւ այնտեղ էլ ընդդեմ Փլաբիանոսի դավանեցին «մեկ բնություն», իսկ «երկու բնություն» ասողներին նզովեցին: Նրանք չորս անգամ իրենք իրենց նզովեցին եւ ի վերջո անեծքի տակ մնացին: Այստեղից նույնպես կարող ես գիտենալ այս ժողովի «զորությունը», ժողովվածների «հավատ»-ը եւ հաստատված սահմանումների ու կանոնների ուղղափառությունը: [Վերոնշյալ] ժողովականներից մեկը եւ երեւելին էր նաեւ Հոբնաղ Երուսաղեմացին, որը չորս անգամ ինքն իրեն նզովեց:

Արդ, մինչեւ այս Քաղկեդոնի ժողովը քրիստոնյա բոլոր ազգերն ու Քրիստոսի բոլոր Եկեղեցիները, թեպետ լեզուներով տարբեր էին, սակայն հավատով եւ դավանությամբ մեկ ու բոլորովին միաբան էին՝ որպես մեկ ազգ եւ մեկ Եկեղեցի, ու նրանք՝ բոլորը, ինչ որ ընդունել էին առաջին երեք սուրբ ժողովներից, այդ նույնը միաբանությամբ պահում էին, եւ ամենքը միաշավիղ, ուղիղ գծով ու ճշմարիտ ճանապարհով ընթանում էին դեպի Քրիստոս: Եւ եթե երբեմն-երբեմն էլ որեւէ հերձված էր ի հայտ գալիս ընդդեմ Քրիստոսի մեկ Եկեղեցու միաբանության, ամենքը, որպես մեկ անձ ու մեկ սիրտ միաբանվելով, հալածում էին այն ու ոչնչացնում: Մինչդեռ այս չարահույզ ժողովը բոլորովին տապալեց Քրիստոսի Եկեղեցու խաղաղությունը ու բաժանելով ցաքուցրիվ արեց քրիստոնյաների միաբանությունը եւ օտարացնելով թշնամացրեց իրար դեմ: Եւ [այդ ժողովի] գարշելի ծուխը ելնում է ու պիտի ելնի մինչեւ աշխարհի վախճանը: «Գայթակղություններ պետք է որ գան աշխարհում, բայց վա՛յ նրան, ում միջոցով կգան...» (հմմտ. Մատթ. ԺԸ. 7):

Շարունակելի

Գրաբարից փոխադրությունը՝
ԱՆՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ
ԵՒ ԳԵՒՈՐԳ ՍՐԿ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ





Doi: 10.56737/2953-7843-2023.04-47

ՍԱՄՎԵԼ ՍԱՐԿԱՎԱԳ ՊՈԴՈՍՅԱՆ
ՀԱՆ, Արարատյան Հայրապետական թեմ

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՉԱՐԹՈՆՔԸ ԵՒ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՉ¹

ՄԱՍ Ա.

Պատմական ընդհանուր նկարագիր

Ժամանակային զգալի շրջան է ընդգրկում հայկական միջնադարյան կրթական ավանդության վերազարթոնքի եւ Եւրոպական լուսավորության հետ փոխկապակցման պատմությունը²: Գրեթե ողջ ԺՀ.—ԺԹ. դարերի ընթացքում լուսավորական զանազան գործիքներ փոխառվում ու համադրվում են միջնադարյան հայկական կրթական ավանդույթի հետ եւ տարածվում Օսմանյան կայսրությունում ապրող հայության մեջ (հետայսու՝ արեւմտահայություն): Միջնադարյան կրթության վերազարթոնքի վայրն Օսմանյան կայսրության արեւելքն է՝ Բաղեշ գավառի Ամրդուլի վանքը, իսկ լուսավորական նվաճումների հետ դրա շաղկապումը տեղի է ունենում Օսմանյան կայսրության արեւմուտքում՝ կայսերանիստ մայրաքաղաք Կոստանդնուպոլսում եւ շրջակայքի³ հայկական կրթական կենտրոններում: Միջնադարյան կրթության վերազարթոնքը եւ լուսավորության տարածումը զուգընթաց է 1453 թ.

¹ Ստացվել է 10.04.2023, գրախոսվել է 17.04.2023:

Էլ. հասցե՝ samveldpirpoghosyan@gmail.com:

² Այս հոդվածի նպատակը իմ թեկնածուական հետազոտության («Փիլիսոփայության եւ աստվածաբանության ներկայակցվածության Տիրան Ներսույանի հայեցակարգը») համար հիմք նախապատրաստելն է՝ ուղենշելով այն նախընթաց գաղափարային հարացույցները, որոնք ազդել կամ կամ պայմանավորել են ուսումնասիրվող հեղինակի միջավայրը:

³ Օրինակ՝ առաջադիմական կենտրոններ կարելի է համարել Բուրսան (Պրուսա) եւ Իզմիրը (Ջմյուռնիա) եւ այլն:

Բյուզանդական կայսրության վերացումից հետո այլևս Օսմանյան տիրապետության մեջ արեւմտահայության կյանքի կազմակերպման տարբեր իրադարձություններին:

Այդ պատմական շրջանում որպես արեւմտահայության կյանքի կայացման կարեւոր իրադարձություններ կարելի է առանձնացնել՝ 1461 թ. Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության հիմնումը⁴, ԺԶ.—ԺԸ. դարերի ընթացքում Օսմանյան կայսրության վարչական բաժանումը 19 վիլայեթներին, 1718—1730 թթ. Լուսավորության մուտքը Օսմանյան կայսրություն⁵ եւ 1839 թ. «Թանզիմաթ»-ին⁶ հաջորդող 1861 թ. «Ազգային Սահմանադրության» հաստատումը:

Այս զարգացումների ընթացքում, սկզբում գրեթե աննկատ, ծավալվում է հայկական վանքերի բարեկարգումը: Դրա արդյունքում վանքերից մի քանիսի գործունեության շրջանակն ընդլայնվում է, տարբեր միաբանությունների անդամներ սկսում են միմյանց հետ կապեր հաստատել, իսկ ավելի ուշ այս վանքերից ելած որոշ հոգեւորականներ պատրիարքության եւ այլ բարձր աստիճանների են հասնում եւ ազդում արեւմտահայության ողջ ներքին եւ արտաքին կյանքի վրա⁷: Վանքերից ծավալվող բարենորոգչության սկզբնավորման գլխավոր օջախները եղել են այդ վանքերին կից գործող կրթարանները (Վանա լճի, Վարազա վանքի⁸, Առաքելոց, Ամրդուու եւ այլն), ի դեմս դրանց վանահայրերի, ուսուցիչնե-

⁴ Թեեւ հարկ է նկատել, որ բուն պատրիարքական արտոնություններով այն ի հայտ է գալիս 1612 թ.-ից հետո միայն, երբ նրան սկսում են ենթարկվել այլ առաջնորդություններ, տես Ա. ԱԼՊՕՅԱՆՆԻ, Կազմութիւն արեւմտահայութեան, Շողակաթ, ԺԱ., Կ. Պոլիս, 1962, էջ 23, ինչպես նաեւ պատրիարքության մասին ավելի մանրամասն տես Շ. ԳԱԼՈՒՍՅԱՆ, Թուրքիոյ Հայոց Պատրիարքութեան Պատմական Դերը եւ անոր հիմնումով իրագործուած մշակութային նուաճումները, Շողակաթ, ԺԱ., Կ. Պոլիս, 1962, էջ 6—16, 74—98:

⁵ Օսմանյան կայսրության պատմության մեջ այս ժամանակահատվածը կոչվում է «Կակաչի դարաշրջան», մանրամասն տես PEKER, D. & TASKIN O., The Enlightenment Tradition and Science Education in Turkey, in M. R. Matthews (Ed.), History, Philosophy, and Science Teaching, New Perspectives, Switzerland: Springer, 2018, (pp. 67-97), p. 73:

⁶ «Թանզիմաթ»-ով բարելավվում են երկրի քաղաքական եւ վարչական կարգերը, իսկ փոքրամասնություն կազմող քրիստոնյա ազգերին շնորհվում են քաղաքացիական հավասար իրավունքներ:

⁷ Բ. ԵՂԻՍՅԱՆ, Հայ կաթոլիկ եւ աւետարանական յարանուանութեանց բաժանումը ԺԹ. դարուն, Անթիլիաս, 1971, էջ 42—44:

⁸ Վարազա վանքում Մկրտիչ վրդ. Խրիմյանի ծավալած կրթական գործունեությունը նույնպես էական ազդեցություն ունի արեւմտահայության մեջ նոր գաղափարների ներմուծման, ազգայինի պահպանման եւ բարոյական զարգացման համար, ինչն իր առանձնահատկություններով մեկ այլ հետազոտության առարկա է:

րի, սաների: Նրանց միջոցով են արեւմտահայության մեջ ներմուծվում նոր եւ անհրաժեշտ, Եւրոպական լուսավորական ընդհանուր ավանդից վերցված գործիքները՝ մամուլ, տպարաններ, երկսեռ կրթական հաստատություններ եւ այլն⁹:

Վանական կրթարանների միջնադարյան ավանդն ազգային կյանքում զգալի է դառնում հատկապես ԺԸ. դարից սկսյալ, երբ Օսմանյան տերություն կրած ծանր ռազմական պարտություններից հետո (նախ՝ Կարլովիցյան 1699 թ., Պասարովիցյան 1718 թ. պայմանագրեր, հետո ռուս-թուրքական 1768—74 թթ. պատերազմներ) միմյանց հաջորդող մի քանի սուլթաններ՝ Մահմուդ Բ. (1808—1839), Աբդուլ Մեջիդ (1839—1861) եւ Աբդուլ Ազիզ (1861—1876), սկսում են Եւրոպական Լուսավորությանը հետեւելով՝ բարեփոխումներ իրականացնել եւ վերանայել կայսրության ընդհանուր մոտեցումները մի շարք ոլորտներում՝ ռազմական, բժշկական, կրթական եւ այլն: Նրանք, պահպանողական հետամնացությունից դեպի առաջադիմություն ձգտելով, միաժամանակ փոխում են տերության խտրական վերաբերմունքն ազգային փոքրամասնությունների նկատմամբ¹⁰: Սկզբում եկեղեցական շրջանակների, իսկ հետագայում նաեւ աշխարհականների մասնակցությամբ արեւմտահայերն այս բարեփոխումներին դրականորեն արձագանքող առաջին փոքրամասնություններից են եղել:

ԺԸ. դարում, Օսմանյան տերության մեջ կատարվող վաղ բարեփոխումներին համընթաց, արեւմտահայության՝ միջնադարից դեպի լուսավորություն ընթացքը սկզբնավորվել է՝ նախ կրոնական-չատազովական ուղղությամբ՝ երբեմն ընդդեմ կաթոլիկ, երբեմն՝ բողոքական,

⁹ Եւրոպական Լուսավորությունը ամփոփ ձեւով այսպես է նկարագրում Բ. Եղիայանը. «ԺԹ. դարու առաջին քառորդէն սկսած, ամբողջ Եւրոպայի եւ Միջերկրականեան երկիրներու ազգերը թեւակոխած էին արդէն արագ եւ անօրինակ բարեշրջումի մը, որ հետզհետէ ընդլայնելով պիտի վերածուէր ներկայ մեր դարու գիտական հրաշալիքներով ճոխացած համաշխարհային քաղաքակրթութեան, ժողովուրդներու ինքնիշխանութեան սկզբունքներով: Միջազգային այդ լուսաւորութեան նպաստեցին անշուշտ, նախ՝ Ֆրանսական յեղափոխութիւնը, որ պետական վարչակարգերու մէջ ներմուծեց դեմոկրատիկ սկզբունքներ, ապա նաեւ Անգլիոյ մէջ ծագում առած ու տարածուած Եւրոպայի ճարտարարուեստական յեղաշրջումը, որ ամբողջ մեքենական ոյժերը տրամադրեց մարդ արարածի կամքին: Նպաստեց մանաւանդ՝ Գաղթատիրական դրութեան ծաւալումը, որ աշխարհի բոլոր ազգերը իրարու հետ անմիջական շփման մէջ բերաւ, փոխադարձաբար օգտագործելու համար իրարու հում-նիւթի բնական աղբիւրները, ճարտարարուեստական ու երկրագործական արտադրութիւններն ու վաճառականական շուկաները», տես Բ. ԵՂԻԱՅԵԱՆ, նշ. աշխ., էջ 34:

¹⁰ Տէս անդ, էջ 33—37:

երբեմն էլ՝ այլ կրոնական քարոզչական ալիքների: Այդպիսով, միջնադարյան կրթությամբ նախապատրաստված հոգեւորականները ձեռնամուխ են եղել ի շահ սեփական ավանդույթների պաշտպանության լուսավորական գործիքներ ներգրավելուն: Վաղ շրջանի լուսավորամետ շարժումը թերեւս կարելի է անվանել «պահպանողական լուսավորություն»: Հետագայում, երբ Եւրոպական լուսավորության ազդեցությունը Օսմանյան կայսրությունում ավելի է խորանում, արեւմտահայության մեջ այն նույնպես ավելի ընդարձակ, հասարակական, կրթական, մշակութային բնույթ է ստանում, ինչն էլ կարելի է կոչել «բուն լուսավորություն»:

Հայկական միջնադարյան կրթության «արտաքին»¹¹ բաղադրիչը

Ակնհայտ է, որ հայկական գրական եւ առհասարակ մշակութային վերազարթոնքի բոլոր հանգրվաններում էական գործոն է եղել «արտաքին» աշխարհի հետ հաղորդակցումը: Նույնպես եւ կրթության կայացումը հայության մեջ հաճախ է ուղեկցվել «արտաքին»-ի հետ առնչակցությամբ: Գրերի գյուտից մինչեւ արդի տպարանների եւ կրթարանների հիմնումը կրթությունը մեզանում եղիշե արք. Դուրյանի բառերով՝ ընթացել է «ուսումնական գաղթականութեամբ»¹², պարբերաբար ներառել «արտաքին», անծանոթ ու նոր բաղադրիչներ եւ ուրույն ձեւով յուրացրել է դրանք:

Գալով բուն թեմային՝ պետք է նկատել, որ հայկական կրթական հաստատություններին սկզբից եւեթ բնորոշ է եղել կրթական որոշակի ավանդույթի հետեւելը: Դարերի ընթացքում այդ ավանդույթին, որ սկզբում գերազանցապես աստվածաբանական ծրագիր է ներառել, պարբերաբար ավելացել են այլ գիտակարգեր՝ փիլիսոփայություն, քերականություն, տոմարագիտություն եւ այլն: Հստ հայկական դպրոցների պատմությանը քաջածանոթ պատմաբան Ա. Ալպոյաճյանի՝ հայկական կրթարաններում նախ առաջնային է եղել Ս. Գրքի եւ «Եկեղեցու հայրերի» ժառանգության

¹¹ «Արտաքին» եզրն այստեղ կիրառված է ոչ թե իր միջնադարյան հիմնական՝ «հեթանոսական», այլ ավելի լայն «օտար», «անծանոթ» «սեփականից կամ յուրացվածից անդին եղող» իմաստով:

¹² Եղիշե Դուրյան, Պատմութիւն Հայ Մատենագրութեան, Կ. Պոլիս, 1885, էջ 14:

ուսուցումը: Հետագայում (է դարի վերջ)¹³ է, որ դրանց ավելացել են հունական «եռյակ» եւ «քառյակ» («եռյակ»-ի շարքին են պատկանել՝ ճարտասանությունը, իմաստասիրությունը եւ քերականությունը, իսկ «քառյակ»-ին՝ թվաբանություն, երկրաչափություն, աստղաբաշխություն եւ երաժշտություն) գիտակարգերի ուսուցումը, սակայն ոչ ամբողջովին, այլ մասամբ եւ ընտրողաբար:

«Այսպէս՝ հայ մշակույթին մէջ կու գար տեղ գրաւել յունական ուսումը, ինչպէս նաեւ յունական դպրոցներու ուսման ծրագիրը, որ է. դարուն վերջերը տիրապետեց ամեն կողմ: [...] դժբախտաբար այս լայն ծրագիրը կը թուի, թէ ամեն վարդապետարաններուն մէջ չէ գործադրուած լիովին եւ շատ մը տեղերու մէջ անոնցմէ մասեր միայն դասախօսուած են»¹⁴:

«Յունական ուսումն» արտահայտությունամբ նկատի է առնված կրթական «եռյակ» կամ «քառյակ» գիտակարգերի ուսուցման համակարգը, որ տարբեր վանքերում եւ ժամանակներում համապատասխանեցվել կամ գործարկվել է ըստ հնարավորության եւ անհրաժեշտության¹⁵: Այն ապահովել է նոր գիտությունների ճանաչումն ու յուրացումը, որոնք ընդգրկում էին ավելի լայն շրջանակ, քան Ս. Գիրքը եւ հայտնի եկեղեցական հեղինակների գրվածքները:

ԺԱ. դարից «արտաքին» գիտությունների հետ առնչությունը դրսեւորվել է «արտաքին կամ նուրբ գրեանք» կոչված եւ կրթական նպատակով ստեղծված ընթերցման բացատրական ցանկերի կազմման եւ կիրառման միջոցով: Թերեւս այս կերպ զանազան գիտությունների «դասագրքեր»

¹³ Ըստ Ս. Արեւշատյանի եւ այլ ուսումնասիրողների ոչ աստվածաբանական գիտությունների հետ ծանոթացումը, «եռյակ» եւ «քառյակ» գիտություններին վերաբերող որոշ գրքերի թարգմանությունն եւ տեղայնացումն սկսվել է ավելի վաղ՝ 450/60-ականն թվականներից, տես «Формирование философской науки в древней Армении (V-VI вв.)», Ереван, 1973:

¹⁴ Ա. ԱԼՊՅԱՆՆ, Պատմութիւն Հայ Դպրոցի, Բ. հրատ., հտ. Ա., Գահիրէ, Նոր Աստղ, 1942, էջ 174:

¹⁵ Այս ավանդույթը տարբեր վանական կրթարաններում զանազան զարգացումներ է ստանում: Օրինակ Տաթևի վանքում, Սերգիո Լա Պորտայի առաջադրած թեզի համաձայն, ԺԴ. դարից հետո հայ վարդապետները կրթվել են նախ փիլիսոփայական գիտությունների մեջ, եւ հետո միայն նրանց իրավունք է տրվել աստվածաբանական գրվածքներ հեղինակելը: Այդուհանդերձ սա դիտվում է որպէս լատին կրթական ազդեցության հետեւանք: Գրիգոր Տաթևացին իր վարդապետական աստիճանը ստանում է նախ փիլիսոփայական երկեր՝ լուծմունքներ, հետո՝ ծայրագույն վարդապետության աստիճանը ստանալու համար՝ սուրբգրային մեկնություններ գրելով: Տես SERGIO VAN ASCH LA PORTA, The Theology of the Holy Dionysius, Volume III of Gregor Tat'ewac'is Book of Questions, Introduction, Translation, and Commentary, 2001, pp. 34–35 (անտիպ):

եւ սկզբնաղբյուր համարվող նյութերը վերածվել են ուսուցման նյութի եւ վանքերում փոխանցվել են մի սերնդից մյուսին: Նույն կերպ էլ ի սկզբանե ավանդվող Ս. Գրքի եւ սեփական ժառանգությունը վերաբերող երկերն ամփոփվել են «Ներքին կամ լայն գրեանք» կոչված ցանկերում¹⁶:

Ինչպես նկատում է Հակոբ Անասյանը, հայկական մատենագրության մեջ հայտնի «ներքին եւ արտաքին գրեանք» ցանկերը ստեղծվել են «դասավանդման կարգ»-ի նպատակով¹⁷: Սակայն դրանց բովանդակությունը միշտ չէ, որ նույնն է եղել: Այդուհանդերձ երկու ցանկերն ապահովվել են ծանոթացումն ու յուրացումը թե՛ սեփական ավանդական եւ թե՛ արտաքին, այն է՝ փիլիսոփայական, քերականական, հոետորական, տոմարագիտական եւ հարակից այլ՝ ոչ աստվածաբանական միջնադարյան գիտակարգերի հետ¹⁸:

Այսպիսով, կարելի է ասել, որ հայկական միջնադարյան կրթությունը «երկճյուղ» բնույթ է ունեցել, ուստի դրական վերաբերմունքը որեւէ «արտաքին», նոր եւ առաջադեմ գիտության նկատմամբ դարեր ի վեր տարածված է եղել հայկական կրթական ավանդույթի մեջ: «Արտաքին»-ը ներառող եւ սեփականի հետ համադրելու մոտեցումը նույն կերպ ի հայտ է գալիս, երբ արեւմտահայության մեջ հնարավոր է լինում լուսավորական գործիքների փոխառումը եւ միահյուսումը միջնադարյան ավանդի հետ:

Ըստ պատմիչ Առաքել Դավրիժեցու¹⁹ արեւմտահայության մեջ տվյալ երկճյուղ կրթական ավանդության տարածումը վերսկսվել է Բաղեշ շրջանի Ամրդոլու վանքից (Ժէ. դարում): Նախ «Արտաքին» եւ շուտով «Ներքին գրեանք» այստեղ հիմք է դրվել միջնադարյան կրթական ավանդության տարածմանը, ինչը, հասնելով Կոստանդնուպոլիս, արեւմտահայության մեջ,

¹⁶ Լավագույն օրինակը համարվում է Գրիգոր Աբասյանի «Գիրք Պատճառաց» ժողովածուն, որի մասին ավելի մանրամասն տե՛ս Ն. ԱՎԻՆԵԱՆ, Մատենագրական հետազոտություններ, հտ. Ա., Վիեննա, 1922, էջ 1–84:

¹⁷ Հ. ԱՆԱՍՅԱՆ, Հայկական Մատենագիտություն, Ե.–ԺԸ. դդ., հտ. Ա., Երեւան 1959, էջ XIII, XV:

¹⁸ «Արտաքին եզրով էր նշվում գիտության ու գրականության մեջ այն ամենը, որ դուրս էր կրոնական կամ եկեղեցական գիտության կամ գրականության շրջանակից, կրոնականն ու եկեղեցականն համարելով որպէս ներքին (ներսի, ընտանի), թեւէ վերջին տերմինը հազվագեպ է պատահում», Հ. ԱՆԱՍՅԱՆ, նշ. աշխ., էջ XIII: Այս եզրերի բացատրության մասին առավել մանրամասն տե՛ս Է.–Մ. ՇԻՐԻՆՅԱՆ, «Գիտություն Գրոց»-ը Միջնադարյան Հայաստանում («անկանոն, արտաքին եւ նուրբ գրեանք»), ԵՊՀ Տարեգիրք, Ժ., 2015, էջ 29–71:

¹⁹ ԱՌԱՔԵԼ ԴԱՎՐԻՋԵՑԻ, Գիրք Պատմութեանց, աշխատասիրությամբ Լ. Խանլարեանի, ՀԳԱ հրատարակչություն, Երեւան, 1990, գլ. ԻԹ., էջ 311–326:

անհրաժեշտաբար նպաստել է լուսավորական որոշ գործիքների ներդրմանը՝ սկզբում, սակայն, կրոնական-ջատագովական նպատակներով միայն:

Հետեւաբար, կարելի է եզրակացնել, որ իր պատմության հիմնական շրջանում հայկական միջնադարյան կրթական ավանդույթը մի կողմից հակված է եղել արտաքին գիտությունների յուրացմանը, իսկ մյուս կողմից՝ սեփական ժառանգության պահպանմանը եւ զարգացմանը: Հենց դա էլ՝ անկաշկանդ մոտեցումը նոր եւ արտաքին գիտելիքներին եւ սեփական ժառանգության կարեւորումը, հետագայում հնարավոր է դարձրել ոչ թե լուսավորական գործիքներին կուրորեն դիմակայելը, այլ դրանք զուգահեռաբար յուրացնելը եւ կիրառելը սեփական ավանդության պահպանման համար:

Վերազարթոնք Ամրդոլու վանքի «Դասատան» մեջ

Բյուզանդական կայսրության վերջին շրջանում եւ դրանից հետո, քաղաքական-պատերազմական վայրիվերումների արդյունքում հայկական միջնադարյան կրթական ավանդությունը հայտնվում է ճգնաժամի մեջ, սակայն իսպառ չի անհետանում: Արեւմտահայության մեջ ԺԶ դարում այս կրթական ավանդության վերազարթոնքի օրրանն է դառնում Ամրդոլու վանքը (գտնվել է Վանա լճի հարավ-արեւմուտքում՝ Բաղեշ գավառում, որը հայկական աղբյուրներում հայտնի է Բզնունիք կամ Աղձնիք անուններով): Վանքի ծագման մասին հիշատակությունը հասնում է մինչեւ ԺԵ. դար եւ կապվում Տաթեւի վանական աստվածաբանական ավանդության հետ²⁰:

Ամրդոլու վանքի հատկապես երկու վանահայրերի՝ Բարսեղի եւ Վարդանի օրոք այս հաստատությունը, վերաբացահայտելով եւ կրկին կիրառելով հայկական միջնադարյան կրթական ավանդույթը, սկսում է իր ազդեցությունը տարածել թե՛ արեւելահայ եւ թե՛ արեւմտահայ կրթական կենտրոնների վրա (Էջմիածին, Զուղա, Մեծ Անապատ/ Լիմ կղզի, Կ. Պոլիս եւ այլն)²¹: Այս վանքին կից գործող աստվածաբանական դպրոցի

²⁰ Բ. Մ. ՎՐԹ. ԿԻՒԼԵՍԵՐԵԱՆ, Կոլոտ Յովհաննէս Պատրիարք, Վիեննա, 1904, էջ 2:

²¹ «Բարձր համբաւի կը հասնի Բաղէշ-Պիթլիսի Ամրտօլի Վանքը, ուր մեծահանճար ուսուցիչներ՝ Բարսեղ Վարդապետ եւ Վարդան Բաղիշեցի այնպիսի ուսումնական կարգեր կը հաստատեն, որ իրենց դպրոցը կը ճանչցուի որպէս «համալսարան», ԺԵ. դարու երկրորդ

(հիշատակվում է նաեւ որպես «Դասատուն») կամ «Համալսարան») վերազարթոնքն ընթանում է վերոհիշյալ հայկական կրթական ավանդույթյան «երկճյուղ» ուղղություններով:

Այդպիսով Ամրդուլի վանքի «Դասատան»-ն առաջին հերթին իրականացվում է միջնադարյան կրթական ժառանգության «Արտաքին գրեանք» վերաբացահայտումը (հատկապես քերականության) Բարսեղ Վարդապետի միջոցով, ով տեղում ուսուցանել է այն:

Ելնելով Ա. Դավրիժեցու փոխանցած տվյալներից Բարսեղը՝ վերարժարծողն ու մասնավորապես «Արտաքին գրեանք»-ի դասավանդման հիմնադիրը, «յինքնէ իսկ գիտակ էր թէ գիտութիւն արտաքին իմաստից եւ քերականութիւն ո՛չ գոյ ի մէջ վարդապետացն Հայոց եւ ինքն մեծաւ տարփանօք ըղծայր թեւեւ հասանել այնմ գիտութեան, ոչ միայն իւր այլեւ ազգին, զի արծարծեալ սփռեսցի ի մէջ ազգիս Հայոց որպէս զի ամենեւեան հասցեն այնմ շնորհաց եւ գիտութեան»²²:

Իսկ Վարդան վարդապետն իր հերթին կարեւորությունը տվել է հատկապես հայկական մատենագրության պահպանությանը՝ ձեռագրերի արտագրման եւ փոխանցման գործին, այսպիսով նաեւ նեցուկ դառնալով հատկապես «Ներքին գրեանք»-ի զարգացմանը:

«Յայսմ ժամանակի սա (Վարդան վարդապետ) միայն երեւեալ աշխատող եւ հոգաբարձու ծածկեալ եւ անյայտ պատմագրաց: Եւ սա բազում աշխատութեամբ եւ ջերմեռանդ սիրով ժողովեաց եւ ի լոյս էած, զմանս ի հեռաստանէ բազում ծախիւք բերելով եւ զմանս գրել տալով գրագրաց՝ հմուտ եւ արագագիր գրչաց»²³:

Վարդանը նաեւ հայտնի է թե՛ որպես ինքնուրույն պատմագրական բնույթի գրվածքների ²⁴ եւ թե՛ որպես իր կազմած Ամրդուլի վանքի գրացուցակի հեղինակ²⁵: Ամենայն հավանականությամբ Վարդանը, ի հա-

կիսուն: Այնտեղ ուսման ծրագրի մաս կը կազմեն, ո՛չ միայն աւանդական Ս. Գրոց ընթերցումն ու մեկնությունը, այլ եւ հին Հայ Մատենագրության ուսումը, եւ մանաւանդ «Արտաքին ուսմունք» կոչուած փիլիսոփայական եւ բնագիտական ուսումները, այդ դարերուն Եւրոպական համալսարաններու ծանօթ «Երբեակ» եւ «Քառեակ» ուսմանց ծրագիրներով», Բ. ԵՊԻԱՅԵԱՆ, նշ. աշխ., էջ 44:

²² Ա. ԴԱՎՐԻԺԵՅԻ, էջ 311:

²³ Ս. ՏԷՐ-ՅԱԿՈԲԵԱՆ, «Վարդանայ Վարդապետի Բաղիշեցույ Յուցակ գրոց Ամրդուլի վանուց», Արարատ, ԼՂ. տարի, Բ.-Գ., 1903, էջ 177—178:

²⁴ Վ. Ա. ՀԱԿՈԲՅԱՆ, Մանր ժամանակագրություններ, հտ. II, Երեւան, 1956, էջ 384—398:

²⁵ ՏԷՍ Ս. ՏԷՐ-ՅԱԿՈԲԵԱՆ, նշ. աշխ., էջ 176—189:

կադրություն Բարսեղի, առավել կենտրոնացած է եղել կրոնական հայրենական ավանդության պահպանման վրա (ներքին գրեանք):

Այս երկու ուղղությունները՝ «Արտաքին եւ ներքին գրեանք», նոր շունչ, ծավալ ու տարածում են ստանում Վարդան Բաղիշեցու աշակերտ Հովհաննես Կոլոտի եւ նրա աշակերտ Հակոբ Նալչանի միջոցով (հետագայում երկուսն էլ ստանձնում են Կոստանդնուպոլսի պատրիարքի պաշտոնը): Վերջիններս հայկական միջնադարյան կրթական ավանդույթը հասցնում են արեւմտահայության կենտրոն՝ Կոստանդնուպոլիս, եւ յուրովի զարգացնում են այն հիշյալ երկու ճյուղերով (արտաքին եւ ներքին բովանդակությամբ)՝ արեւմտահայության մեջ ստեղծելով մի նոր գրական ու կրթամշակութային մթնոլորտ²⁶: Հենց այս երկճյուղ կրթական ծավալումն է, որ ԺԸ.—ԺԹ. դարերում հիմք է ծառայում արեւմտահայության մեջ լուսավորության արագ եւ օգտակար ներթափանցման համար:

Անցում Կոստանդնուպոլիս. լուսավորության նախակարապետները

Հայկական միջնադարյան կրթական ծրագիրն Ամրդուլից հասնում է Կոստանդնուպոլիս՝ ամրդուլյան ավանդության ժառանգորդ Հովհաննես Կոլոտի միջոցով²⁷: Այստեղ այն հաստատվում է նոր, ավելի բարենպաստ պայմաններում, սակայն առերեսվում է նախկինում անհայտ մարտահրավերների: Հովհաննես Կոլոտն առաջին հերթին ստիպված էր հակադրել հայ-կաթոլիկների ունիթորական գործունեությանը՝ ուսյալ հոգեորականներ պատրաստելով: Այդ անելու համար Հովհ. Կոլոտը միավորում է ամրդուլյան եւ տաթեւյան գործիքները²⁸, կրթական-բարեկարգչական աշխատանքը եւ թարգմանական յուրացումը՝ դիմակայելով եւ մրցակցելով կաթոլիկների հետ:

²⁶ Այն նախապատրաստություն ուներ ի դեմս Կոստանդնուպոլսի հայ պատրիարքներ Գալուստ Ամասիացու եւ Ավետիքի, որոնք ԺԷ. դարի երկրորդ կեսին արդեն կրթական գործունեություն էին ծավալում Ժողովրդի մեջ՝ պաշտպանելու համար նրանց կաթոլիկ միսիոներներից, տե՛ս Բ. ԵՂԻԱՅԵԱՆ, նշ. աշխ., էջ 45—46:

²⁷ Ամրդուլ վանքում եւ դրանից դուրս Հովհաննես Կոլոտի ծավալած գործունեության մասին ավելի մանրամասն տե՛ս Բ. Մ. ՎՐԴ. ԿԻՐԼԷՍԻՐԵԱՆ, նշ. աշխ.:

²⁸ Տաթեւի վանքը հայտնի է ԺԵ դարի իր թարգմանական հակադրեցությամբ ընդդեմ դոմինիկյան ունիթորական շարժման, ավելի մանրամասն տե՛ս ՅՈՎՀԱՆՆԵՍ ՔՈՆԵՑԻ, Յաղագս Քերականի, Ս. Ավագյան, Լ. Խաչիկյան, Ներածություն, Երեւան, 1977, Լ. ԽԱՉԻԿՅԱՆ, Արտագի Հայկական Իշխանությունը եւ Ծործորի Դպրոցը, ԲՄ, 11, 1973, 125—210:

Այս շարժումը կարելի է ձեռակերպել նաեւ որպէս վանական գործիքակազմի փոխադրում վանքից քաղաքային միջավայր. բեկումնային մի պահ, որով սկսվում է «պահպանողական լուսավորութեան» կայացումը եւ վանականութեան նոր ընկալումն ու զարգացումը, որը մեկ դար անց իր գլխավոր պարտականութիւններից մեկն էր համարելու համայն ազգային կյանքում լուսավորութիւն սփռելը:

Ընդհանրացնելով Հովհ. Կոլոտի ծավալած լուսավորամետ գործունեությունը՝ կարելի է առանձնացնել երեք դրվագ: Առաջինը Կոստանդնուպոլսի Սկյուտար թաղամասում 1715 թ. կրթարանի (գրականութեան մեջ հիշվում է որպէս «Դպրոց») հիմնումն է: Այստեղ ուսանած 27 աշակերտներ հետագայում ստանձնում են բարձր եկեղեցական աստիճաններ եւ նշանակալի լուսավորական գործունեություն են ծավալում արեւմտահայության մեջ²⁹: Թեեւ արեւմտահայության հոգեւոր ուսումնարանը այլեւս քաղաքային միջավայրում է (եւ ոչ թե վանական պարիսպների մեջ մեկուսացված), սակայն այն միաժամանակ պահպանում է միջնադարյան կրթական ավանդույթի սկզբունքը, ըստ որի այն նախատեսված էր միայն հոգեւորականների պատրաստելու համար: Մյուս կողմից այստեղ ներառվում են նոր առարկաներ, ինչպիսիք են՝ լատիներենի, հունարենի եւ իտալերենի ուսուցումը եւ այլն³⁰:

Երկրորդ նշանավոր նախաձեռնությունն էր աննախագեպ ծավալի թարգմանական աշխատանքը (որը հատուկ չէր Ամրդոլու վանքին, սակայն, ինչպէս նշվեց, հարազատ էր տաթեւյան վարդապետներին): Այս թարգմանական շարժումն իր ստեղծած մեծածավալ ավանդի արդյունքով ընդհանուր հայկական գրական պատմության մեջ համարվում է «Երրորդ Թարգմանական դպրոց», ոսկեդարի եւ արծաթե դարի թարգմանական դպրոցներից հետո³¹: Հենց Հովհ. Կոլոտի Սկյուտարի Ս. Կարապետ եկեղեցու մոտ հաստատված «Դպրոցի» մեջ էլ հրամցվում են յուրացված թարգմանությունները³²՝ նպատակ ունենալով կրթվող հոգեւորականութեան մեջ զարգացնել այդ ժամանակի համար անհրաժեշտ աստ-

²⁹ Բ. Ծ. ՎՐԳ. ԿԻՒԼԷՍԷՐԵԱՆ, նշ. աշխ., էջ 70:

³⁰ Անդ, էջ 50:

³¹ «Եթէ ոչ որակի, գոնէ քանակի կողմէն կը գերազանցեր ատոնք ոսկի եւ արծաթի դարուն բոլոր թարգմանութիւնները», Բ. Ծ. ՎՐԳ. ԿԻՒԼԷՍԷՐԵԱՆ, նշ. աշխ., էջ 43:

³² Անդ, էջ 50:

վաժաբանական հմտությունները՝ հատկապես տրամաբանությունն ու ալլաբանությունը³³:

Որպես երրորդ լուսավորամետ գործ հիշատակելի է կրթության զարգացման համար տպարանի³⁴ եւ Մատենադարանի հիմնումը: Հստ Բ. Կոլոլեսերյանի «100 հատորի մօտ նախնեաց գործերէն» տպագրվում են Կոլոտի նախաձեռնությամբ, որոնց խմբագրությունը եւ հիշատակարանների կազմումը վերագրվում է հենց նրան³⁵: Թե՛ հայկական մատենագրության եւ թե՛ նոր թարգմանված օտար աշխատությունները տպագրությամբ հասանելի են դառնում այս Մատենադարանում, որն օգտաշահ գործել է մինչեւ 20-րդ դարավերջ³⁶: Տպագրությունը եւ Մատենադարանը հետագայում նպաստում են արեւմտահայության լայն շրջանակների մեջ լուսավորության տարածմանը:

Այս երեք քայլերը ամուր հիմք են նախապատրաստում լուսավորության հետագա զարգացման համար: Չնայած Հովհ. Կոլոտին հնարավոր չէ բնորոշել որպես «բուն լուսավորության» գործչի, այդուհանդերձ նա ակնհայտորեն արեւմտահայության մեջ լուսավորության մուտքի ապահովման գլխավոր դերակատարն է, ով մեկ ոտքով դեռեւս կանգնած է միջնադարյան ավանդության մեջ, իսկ մյուսով քայլ է կատարում դեպի Եւրոպական լուսավորություն: «Բուն լուսավորության» համեմատությամբ ահա այսպես է նրա գործունեությունը նկարագրում նրա առաջին մեծ կենսագիրներից մեկը.

«Հայ ազգի լուսաւորութեան մասին Կոլոտի տեսութիւնը զուտ կրօնական հանգամանք մը ունի: Այս տեսութիւնը դարձ ոգին է, որ կ'արտայայտէ»³⁷:

Այսինքն՝ «բուն լուսավորությունը», որ տարածվելու էր եւ ընդգրկելու էր թե՛ աշխարհականներին եւ թե՛ հոգեւորականներին, այս փուլում դեռեւս սաղմնային վիճակում է: Հիմնականում կրոնական խնդիր-

³³ Անդ:

³⁴ Կոստանդնուպոլսի առաջին հայկական տպարանը սկսել է գործել 1567-ին Աբգար դպիր Թոխատեցու նախաձեռնությամբ: Երկար ընդհատումից հետո այս ավանդույթը 1694-ին վերականգնում է Ամիրզու վանքի մեկ այլ ժառանգ՝ Գրիգոր Մարգվանցին, որ հետագայում նաեւ համագործակցել է Կոլոտ Պատրիարքի հետ, տէս Շ. ԳԱՆՈՒՍԵԱՆ, նշ. աշխ., էջ 75–76:

³⁵ Բ. Մ. Վ. ԿԻՒԼԵՍԻՐԵԱՆ, նշ. աշխ., էջ 51:

³⁶ Գ. ԲԱՄՊՈՒՔԵԱՆ, Յովհաննէս Պատրիարք Կոլոտ (1678–1741) եւ իր աշակերտները, Ստանպուլ 1984, էջ 19: Այս Մատենադարանը սկզբնապես չի ունեցել հանրային հասանելիություն, սակայն իր տեսակի մեջ Կոստանդնուպոլսում առաջինն է եղել: Դրա մասին առավել մանրամասն տէս Բ. Մ. ՎՐԳ. ԿԻՒԼԵՍԻՐԵԱՆ, նշ. աշխ., էջ 89–108:

³⁷ Անդ, էջ 90:

ներն են, որ մեծ դեր են խաղացել Հովհ. Կոլոտի գործունեության մեջ: Առաջնային են եղել ուսյալ հոգեւորականների պատրաստությունը, կրոնական-մշակութային ազդեցության տարածումը, ջատագովության նպատակով նոր գործիքների ներգրավումը եւ այլն: Հետեւաբար քաղաքական-հասարակական բարենորոգության ձգտումները, ընդհանուր կրթության, աշխարհիկ մամուլի եւ այլ իրողությունների առաջացումը սկսվելու էր ավելի ուշ:

Հովհ. Կոլոտի գործունեությամբ սկսված դեպի «բուն լուսավորություն» ընթացքն արեւմտահայության համար շարունակվում է նրան հաջորդող պատրիարք եւ նրա աշակերտ Հակոբ Նալյանի միջոցով: Վերջինս աչքի է ընկնում ինքնուրույն աստվածաբանական աշխատություններ գրելով³⁸, աշխարհիկ-երկսեռ կրթությունը սկզբնավորելով³⁹ եւ գրական-լուսավորական աշխարհիկ աշխատություններ հրատարակելով: Մասամբ, եւ ոչ Հովհ. Կոլոտի շրջանի ծավալով, Հակ. Նալյանը նաեւ պատվիրատուն է զանազան գիտական ոլորտների աշխատությունների թարգմանությունների, օրինակ՝ Նյուտոնի «Փիլիսոփայության եւ բնաբանություն»⁴⁰ գործի, թուրք պատմաբան Քյաթիբ Չելեբիի «Զիհաննյումա» աշխարհագրական գրքի եւ այլն⁴¹, որոնք դարձյալ մեծ առաջադիմական քայլ էին ժամանակի համար:

Հակոբ Նալյանի անվան հետ է կապվում ոչ միայն աշխարհականների կրթությունը, այլեւ իգական սեռի կրթության առաջին քայլը, ինչը մինչ աշխարհիկ կրթության թուլատրումն Օսմանյան կայսրության մեջ, արդեն իսկ մեծ առաջընթաց էր, որ ազդարարում էր միջնադարյան կրթության ավարտը եւ կրթական նոր համակարգի մուտքը:

³⁸ Նրա ուշագրավ գրական գործունեությունն այսպես է ամփոփում Մրմրյանը. «Թողուց 15—20 հատորի չափ պատկառելի գործեր, որոնց գլուխ կրնանք դնել Նարեկի ընդարձակ մեկնությունն եւ ձեռագիր ստուար Աստուածաբանությունը. ասոնց մէջ՝ Թաղէսէն, Արիստոտէլէն, Պլաթարէն մինչեւ Նիւտոն վկայութեան կողուած են: Եւ այդ գործերուն մէջ առ հասարակ կը փայլի՝ ժողովուրդին հասկնալի ըլլալու յորդ ճիգի մը հետ՝ փիլիսոփայական եւ աստուածաբանական խոր հմտութիւն եւ պարզ գրաբառ մը եփուն...», Յ. ՄԵՐՄԵՐԵԱՆ, Ստուերք հին դէմքերու (1635—1900), Կոստանդնուպոլիս, 1907, էջ 23:

³⁹ Գ. ՆԱԶԻԿՅԱՆ, Արեւմտահայ մանկավարժական միտքն ու դպրոցը (19-րդ դարի սկզբից մինչեւ 19-րդ դարի 50—60-ական թվականներ), Երեւան, 1969, էջ 22:

⁴⁰ Նյուտոնի եւ այլ բնագետների աշխատություններ դրանից առաջ արդեն թարգմանվել էին թուրքերեն՝ ռազմական առաջընթաց ապահովելու նպատակներով, տե՛ս PEKER, D. & TASKIN O., The Enlightenment Tradition and Science Education in Turkey, էջ 74:

⁴¹ ՏԵՄ Գ. ԲԱՄՊՈՒՔՃԵԱՆ, Յակոբ Պատրիարք Նալեան (1706—1764). Կեանքը, գործերը եւ աշակերտները, նախաբանը՝ Շ. Գալստեան, Ստանպուլ, 1981, էջ 49:

Սրա հետ մեկտեղ, Հակոբ Նալյանը համարվում է արեւմտահայերի մեջ աշխարհաբարն առաջին անգամ գրական լեզու գործածող գլխավոր մատենագիրը⁴²:

Ուրեմն մի կողմից մրցակցությունը հայ-կաթոլիկների եւ բողոքական շարժումների ու այլ կրոնների հետ, մյուս կողմից կրթության համար բարենպաստ պայմանները, պատրիարքական իր պաշտոնը եւ Հովհ. Կոլոտի նախապատրաստած «հողը», Հակոբ Նալյանին հնարավորություն են ընդձեռում զարգացնելու կրթական ոլորտը ոչ միայն եկեղեցականների, այլեւ առհասարակ ընդհանուր արեւմտահայության համար, ուրեմն ապահովել մեկ քայլ եւս դեպի «բուն լուսավորություն»:

Այս զարգացումները հետեւյալ կերպ է նկարագրում ժամանակաշրջանին քաջածանոթ Հ. Մրմրյանը.

«Տասնեութերորդ դարի առաջին քառորդին սկսելով՝ Յովհաննէս Կոլոտ, Գրիգոր Շիրաքյակիւր եւ ապա Նալեան արդիւնաւոր Պատրիարքներուն ջանքով՝ Կ. Պոլիսի մէջ հիմը դրուած է եւ արդէն բանասիրական եւ եկեղեցասիրական բանաւոր եւ գրաւոր զարգացումի մը առ հասարակ Թուրքահայ՝ մանաւանդ բարձրաստիճան՝ եկեղեցականաց համար, թօթափելով շփոթ ու տարտամ անցեալէն ինչ չոր ու ցամաք ուսում եւ սարք որ կար. քերական ու աստուածաբան անպէտ նրբութեանց, որ նարակն էին ծանծաղ եւ կոռուքոյծ աստուածաբանութեան մը եւ անհրապոյր յշանկուցող գրականութեան»⁴³:

Շուրջ մեկ հարյուրամյակ հետո է միայն Օսմանյան կայսրության մեջ օրենքով հաստատվում կրթությունը բոլորի համար⁴⁴ եւ արեւմտահայ զանազան քաղաքներում եւ գյուղերում բացվում են բազմաթիվ կրթարաններ: ԺԹ. դարավերջին Օսմանյան կայսրության մեջ արդեն հաշվվում է մոտ 450 հայկական դպրոց եւ 80 000 հայ աշակերտ, իսկ միայն Կոստանդնուպոլսում 48 դպրոց եւ 6000 աշակերտ⁴⁵: Այս ականքներ

⁴² «Նալեանի գործերը մեծ մասամբ գրուած ըլլալով իր ժամանակի աշխարհաբարով, որպէսզի հասնէր եւ ըմբռնելի դառնար աւելի լայն զանգուածներուն, բայց իր բուն նպատակէն, որ էր մտքեր լուսաւորել, հոգեւոր կեանք արծարծել եւ Հայ եկեղեցին աւելի հիմնաւոր անդամ դարձնել իր ժողովուրդը, ծառայած է նաեւ քովնտի նպատակներու. օրինակ արծարծել են հասարակ ժողովուրդին մէջ ընթերցանութեան սէրը եւ վարժութիւնը, ինչ իր հազուագիւտ երեւոյթ մըն էր իր ժամանակին», Գ. ԲԱՄՊՈՒԲՃԵԱՆ, նշ. աշխ., էջ 14:

⁴³ Յ. ՄԷՐՄԷՐԵԱՆ, նշ. աշխ., էջ 31:

⁴⁴ Տէս Գ. ՆԱԶԻԿՅԱՆ, նշ. աշխ. էջ 23:

⁴⁵ PEKER, D. & TASKIN O., The Enlightenment Tradition and Science Education in Turkey, p. 75.

փաստի հետեւում իհարկե անուրանալի է արեւմտահայության լուսավորության հիշյալ նախակարապետների գործը:

Արեւմտահայ հոգեւորականները շարունակում են իրենց կրթութունը ստանալ Հակոբ Նալբանի կողմից 1741 թ. Սկյուտարից Գումգափու տեղափոխված կրթարանում, որտեղից ելնում են այս նույն ավանդույթին պատկանող նշանավոր անձինք: Սկիզբ առնելով երկու առաջնորդների՝ Հովհաննես Կոլոտ եւ Հակոբ Նալբան պատրիարքների գործունեությամբ, հաջորդ պատրիարքների օրոք էլ եկեղեցիներին կից ուսումնարանների լուսավորական գործը շարունակվում է: Դրան նպաստում է Օսմանյան տերության մեջ շարունակվող համընդհանուր լուսավորական բարենորոգչական շարժումը եւ արեւմտահայության դրա նկատմամբ դրսեւորած մեծ ոգեւորությունը ու գործնական արձագանքը: Կոստանդնուպոլիսը դառնում է արեւմտահայության կրթական-մշակութային կենտրոնը եւ հռչակ ստանում հայկական այլ ուսումնական կենտրոնների մեջ, որտեղից պարբերաբար այցելություններ են լինում այստեղ՝ ծանոթանալու եւ ձեռք բերվածով կիսվելու նպատակներով⁴⁶:

Ամփոփում

Վերոգրյալն ամփոփելով՝ կարելի է ասել, որ հայկական միջնադարյան կրթության «երկճյուղ» բնույթը կարմիր թելով անցնում է Բաղեշի Ամրդոլի ուսումնարանից մինչեւ Կոստանդնուպոլսի հայկական կրթարաններ եւ պայմանավորում աշխարհիկ ու հոգեւոր գիտությունների եւ դրանց հարակից գործիքների նկատմամբ արեւմտահայ հոգեւորականների լայնախոհ վերաբերմունքը: Սրա արդյունքում Եւրոպական լուսավորական նվաճումների յուրացումը իրականացվում է բնականորեն՝ որպես «արտաքին», սակայն անհրաժեշտ գործիքների ներգրավում, այնպես, ինչպես ժամանակին նման գործիքներ յուրացվել են այլ, նույնիսկ հակառակ ճամբարներից (ինչպես օրինակ Տաթևի դպրոցում): Այս յուրացումների ու փոխկապակցումների նպատակը ներքին կամ սեփական բովանդակության զարգացումն ու տարածումն է եղել: Հետեւաբար Ամրդոլի «համալսարանը», Սկյուտարի «Դպրոցը» եւ Գումգափուի «Ուսումնարանը» այն հաստատություններն են, որոնք հող էին նախապատրաստել արեւմտահայության

⁴⁶ Տե՛ս Ա. Ա. ՊՅՅԱՆՅԱՆ, Պատմութիւն Հայ Դպրոցի, էջ 578:

մեջ Լուսավորության ներթափանցման համար եւ արդեն իսկ սկսել էին իրագործել այն:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Միջնադարյան կրթություն, Եւրոպական լուսավորություն, արտաքին գրեանք, ներքին գրեանք, կրթարաններ, «պահպանողական լուսավորություն», «բուն լուսավորություն»:


РЕЗЮМЕ

Двуединный принцип армянского средневекового образования с одной стороны интегрировал новый, внешний материал и с другой стороны хранил и расширял собственные традиции. В 17-м веке открытие «Внешних писаний» и воспроизведение «Внутренних писаний» в монастыре Амрдол, расположенном в Западной Армении, возродило средневековое образование в армянских монастырях. В последующие два столетия монахи Амрдола перенесли эту образовательную традицию в новый центр в Константинополе и основали новые духовные школы, отличающиеся от предыдущих учреждений. В ходе идеологических столкновений с Европейским Просвещением, начавшим менять политические и социокультурные устои в Османской империи, армянское духовенство обратилось к новым действиям. Это явило своего рода Консервативное просвещение с религиозной апологетической повесткой дня, отделенное от других конфессий. Между тем, традиционное просвещение заложило основу просвещения, ставшего достоянием последующих поколений западноармянского духовенства и мирян.

SUMMARY

The twofold nature of the Armenian medieval education integrated a new, external material while preserving and extending the prevailing internal tradition(s). This process took place seemingly in an undisturbed way and simultaneously with the

pressures of time. In the 17th century, the rediscovery of the “External writings” and the reproduction of the “Internal Writings” at Amrdol Monastery in Western Armenia creatively revived medieval education in Armenian monasteries. Over the next two centuries, the monks of Amrdol carried this educational tradition to a new center in Constantinople and established new theological schools with an identity distinct from previous institutions. In the course of ideological clashes with the European Enlightenment, which began to penetrate politically and socio-culturally into the Ottoman Empire, the Armenian educated clergy integrated new tools, which served as a kind of Conservative Enlightenment with a religious apologetic agenda directed against other denominations. Meanwhile, the Conservative Enlightenment laid the foundation for the Fundamental Enlightenment, which was to become the property of succeeding generations of Western Armenian clergy and laity.



ԽՈՍՔ ԹԱՐԳԱՆՉԻ

Ի. դարի առաջին քառորդում Օսմանյան կայսրության ողջ տարածքում եւ հարակից շրջաններում հայերի ցեղասպանությանը զուգահեռ երիտթուրքերը կազմակերպել են նաեւ երկրում ապրող մյուս ժողովուրդների՝ ասորիների, ասուրիների¹, հույների, եզդիների եւ այլ ազգային փոքրամասնությունների զանգվածային կոտորածներով ուղեկցվող բռնագաղթեր ու բռնի կրոնափոխություններ: Ի տարբերություն ցեղասպանության ենթարկված ուրիշ ազգերի, եզդիների ցեղասպանության հարցը գրեթե ուսումնասիրված չէ ողջ աշխարհում: Սույն իրողությունը բացատրելի է նրանով, որ պահպանված սակավաթիվ արխիվային նյութերի ու սկզբնաղբյուրների մեծ մասն անհասանելի է գիտական շրջանակներին: Այդուհանդերձ, գիտության բազմաթիվ մշակներ (Ի. Չարնի, Թ. Շմիդինգեր, Զ. Գեսթ, Օ. Էհրինգ, Ա. Հինթոն եւ այլք) տարբեր ժամանակներում փորձել են զբաղվել սույն խնդրի բազմակողմանի հետազոտությամբ: Եզդիների եւ, առհասարակ, ցեղասպանությունների՝ ընկերային-մարդա-

¹ Հայերեն գրականության մեջ «ասորի» («ասորական») եւ «ասուրի» («ասուրական») բառերը, որոնք համապատասխանում են անգլերեն «syrian» եւ «assyrian», եզրույթներին, դիտարկված են իբրեւ հոմանիշներ (տե՛ս Ս. ՄԱԼԽԱՍԵԱՆՅ, Հայերէն բացատրական բառարան, հտ. 1, Երեւան, 1944, էջ 236, ինչպէս նաեւ՝ Գ. ԱՐՔ. ՃԷՐՃԷՐԵԱՆ, Փ. Կ. ՏՕՆԻԿԵԱՆ, Ա. ՏԷՐ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ, Հայոց լեզուի նոր բառարան, հտ. 1, Պէյրութ, 1992, էջ 194 եւ այլն): Միջնադարյան գրականության մեջ նրանք հայտնի են եղել «արեւմտյան ասորիներ» (կամ՝ «հակոբեկյաններ») եւ «արեւելյան ասորիներ» (կամ՝ «նեստորականներ») անուններով, որը պայմանավորված է եղել Ե.-Զ. դարերում Ասորական եկեղեցու բաժանման արդյունքում ձեւավորված դավանաբանական ուղղություններին կամ ավանդություններին հարելու իրողությամբ: Սակայն ԺԹ. դարավերջից ասորիների մի հատվածի, հիմնականում՝ Արեւելքի Ասորական եկեղեցու հետեւորդների մոտ արտասահմանյան քարոզիչների անուղղակի ազդեցությամբ արմատավորվել է հին ասորեստանցիների շառավիղներ լինելու գաղափարը: Այսինքն՝ նրանք իրենց համարում են Սեմի որդու՝ Ասուրի ժառանգները (Մենդ. Ժ. 22), իսկ ասորալեզու մյուս եկեղեցիները, մասնավորապէս՝ Ասորի Ուղղափառ եկեղեցին չի ընդունում «ասորեստանյան գաղափարը» եւ պաշտպանում է արամեական ծագումը: Այսինքն՝ ուղղափառ ասորիներն իրենց համարում են Սեմի մյուս որդու՝ Արամի հետեւորդները (Մենդ. Ժ. 22): Սույն դիրքորոշման կողմնակից է նաեւ սեմագետների մեծ մասը: Հաշվի առնելով այս ամենը, ինչպէս նաեւ՝ այն հանգամանքը, որ տվյալ գրքի հեղինակը նույնպէս «syrian» եւ «assyrian» եզրույթներն օգտագործել է իմաստային այդ տարբերությամբ՝ սույն թարգմանության մեջ դրանց իբրեւ հայերեն համարժեք նախընտրել ենք առաջինի դեպքում կիրառել «ասորի», իսկ երկրորդի պարագայում՝ «ասուրի» բառերը (ծնթ. թրգմ.):

բանական դիտանկյունից իրականացվող հետազոտությունների շրջանակում իրենց մոտեցումներով եւ մասնագիտական վերլուծություններով հույժ կարեւոր նշանակություն ունեն Վիեննայի համալսարանի պրոֆեսոր, մարդաբան Մարիա Սիբս-Հոհենբալքենի աշխատությունները:

Մարիա Սիբս-Հոհենբալքենը ծնվել է 1965 թ., Ավստրիայում: Դպրոցական կրթություն ստանալուց հետո 1984—1993 թթ. ուսանել է Վիեննայի համալսարանում՝ ուսումնասիրելով ընկերային եւ մշակութային մարդաբանություն, արաբագիտություն, թուրքագիտություն եւ հուդայագիտություն:

1993 թ. ստացել է մագիստրոսի աստիճան՝ պաշտպանելով «Sêr sêre-çi jine, çi mère. առյուծը առյուծ է՝ արու, թե էգ. ընկերային-մարդաբանական հետազոտություններ քուրդ կանանց պատմության, հասարակական կառուցվածքի եւ քաղաքական պայմանների վերաբերյալ» թեզը:

2003 թ. փետրվարին պաշտպանել է «Ռեյեն Կուրդան. արտագաղթի, սփյուռքի եւ անդրազգայնության տեսական մոտեցումների ազգագիտական ակնարկներ» Վիեննայի եւ Եւրոպայի «քրդական ուղիների» օրինակով» ատենախոսությունը, որից հետո նրան շնորհվել է փիլիսոփայության դոկտորի կոչում՝ հասարակական եւ մշակութային մարդաբանության ոլորտում:

1991—1993 թթ. աշխատել է Վիեննայի Ազգագրության թանգարանում, իսկ 1994—2000 թթ.՝ կիրառական մարդաբանության բնագավառում հետազոտություններ իրականացրել Ավստրիայի սահմանամերձ շրջաններում:

1997 թվականից, որպես այցելու դասախոս, դասավանդել է Վիեննայի համալսարանի Ընկերային եւ Մշակութային Մարդաբանության ամբիոնում, Կրեմսի ու Ս. Փյոլթենի համալսարաններում:

1997—2000 թթ. մասնակցել է Ավստրիայի Գիտության Նախարարության աջակցությամբ իրականացվող «Նախկին Հարավսլավիայից ու Թուրքիայից գաղթած փախստականների ընտանիքներն Ավստրիայում» ծրագրի աշխատանքներին՝ որպես գիտաշխատող:

1999—2007 թթ. կես դրույքային պայմանագրային հիմունքով ժամանակավորապես աշխատանքի է անցել Վիեննայի համալսարանի Հասարակական եւ Մշակութային Մարդաբանության ֆակուլտետում՝ որպես կրտսեր դասախոս: Սույն ժամանակահատվածում արդեն բավականին հեղինակություն ձեռք բերած գիտնականը, դասավանդելուց զատ, զբաղվել է մագիստրոսական թեզերի գիտական ղեկավարությամբ, ինչպես նաեւ՝ կազմել ամբիոնի ազգագրական եւ լուսանկարչական հավա-

քածուները՝ զուգահեռաբար զբաղեցնելով համալսարանի ուսումնական ծրագրերի համակարգման բաժնի փոխտնօրենի պաշտոնը:

2003–2010 թթ. մասնակցել է դասախոսների փոխանակման ծրագրերին, դասախոսություններով հանդես է եկել Լյուբլյանայի (Սլովենիա), Մայնցի Յոհաննես Գուտենբերգի (Գերմանիա), Բրունելի (Անգլիա), Մայնուի (Իռլանդիա) եւ Անկարայի Մերձարեւելյան Ճարտարագիտական համալսարաններում:

2007–2013 թթ. պայմանագրային հիմունքով եղել է Ավստրիայի Գիտությունների Ակադեմիայի Ընկերային Մարդաբանության ինստիտուտի գիտաշխատող, իսկ 2008–2010 թթ.՝ նաեւ նույն ինստիտուտի փոխտնօրեն:

2013–2018 թթ. մասնակցել է էլիզ Լիխտերի «Հիշողությունների բնապատկերներն արդիականության բազմաքանակ պայմաններում» դոկտորական ծրագրին:

2013 թ.-ից արդեն մշտական աշխատանքի է անցել Ավստրիայի Գիտությունների Ակադեմիայի Ընկերային Մարդաբանության ինստիտուտում որպես գիտաշխատող:

2016–2018 թթ. զուգահեռաբար կրկին աշխատել է որպես Հասարակական Մարդաբանության ինստիտուտի փոխտնօրեն, ապա՝ կարճատեւ դադարից հետո՝ 2019 թ.-ից մինչ օրս վարում է նույն պաշտոնը:

Իր գիտական բազմամյա գործունեության ընթացքում Մարիա Սիբու-Հոհենբալքենն իրականացրել է մի շարք դաշտային հետազոտություններ², որոնց առնչությամբ ներկայացրել է գիտական զեկուլցներ եւ հանդես եկել դասախոսություններով՝

ա) «Ավստրիական արտագաղթը դեպի ԱՄՆ. անդրազգային մշակութային կազմակերպություններ» (2005 թ.),

բ) «Փախստականների կրոնական միությունները Վիեննայում (դաշտային աշխատանքի գործնական պարապմունքներ)» (2003–2006 թթ.),

գ) «Թուրք եւ քուրդ ընտանիքները Վիեննայում (ընտանեկան եւ տնային տնտեսության կառուցվածքների փոփոխություններ, գենդերային խնդիրներ)» (2005–2006 թթ.),

դ) «Հետազոտություններ Հունաստանում ապաստանած քուրդ փախստականների համայնքներում», եւ «Հայաստան. նախնական հետազոտություն եզդիական գյուղերում» (2009 թ.),

² Սույնի առնչությամբ տե՛ս 27-րդ ծնթ.:

ե) «ԱՄՆ Զիկագոյի արխիվային նյութերի ուսումնասիրություն եւ դաշտային հետազոտություն քրդական սփյուռքում» (2010 թ.),

զ) «Բեռլինի, Պրահայի, Բուդապեշտի եւ Վիեննայի արխիվներում պահպանված փաստաթղթերի ուսումնասիրություն: Ավստրիացի հետազոտողը եւ արշավախմբերը քրդական շրջաններում, աջակցություն քրդագիտության եւ հասարակական մարդաբանության պատմության զարգացմանը» (2007–2012 թթ.),

է) «Հիշողությունների բնապատկերներն արդիականության բազմաքանակ պայմաններում, մարդկության դեմ կատարված հանցագործությունների հիշողությունը քրդական հասարակություններում» (Էլիզ-Լիխտեր դրամաշնորհային ծրագիր (V289-G15), 2013–2018 թթ.),

ը) «Վաշինգտոնի եւ Զիկագոյի արխիվային վավերագրերի ուսումնասիրություն» (2013 թ., 2014 թ.),

թ) «Դաշտային հետազոտություն Հայաստանի եւ Գերմանիայի եզդիական համայնքում, կարճաժամկետ հետազոտություններ Իրաքյան Քրդստանում եւ Գերմանիայի քրդական համայնքներում» (2014–2017 թթ.) եւ այլն³:

Մարիա Սիբս-Հոհենբալենի գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է մարդաբանության հետեւյալ ճյուղերը՝ քաղաքական, պատմական մարդաբանություն, բռնության եւ հակամարտության մարդաբանություն, հիշողության, արտագաղթի, սփյուռքի, անդրազգայնության եւ փախստականների հետ կապված խնդիրների ուսումնասիրություն ու Մերձավոր Արեւելքի մարդաբանություն՝ քրդագիտության շեշտադրմամբ: Սույն ոլորտներում իրականացրած բազմամյա ուսումնասիրությունների հարուստ փորձառության շնորհիվ լույս աշխարհ են եկել մարդաբանության խնդրո առարկա հարցերին նվիրված բազմաբնույթ հոդվածներ եւ ինքնուրույն կամ համահեղինակությամբ գրված աշխատություններ, ինչպես նաեւ՝ նրա խմբագրմամբ՝ ամսագրեր եւ գիտական ժողովածուներ: Ստորեւ ներկայացված են նրա հոդվածներից, երկերից եւ ուսումնասիրություններից մի քանիսը.

³ Մարիա Սիբս-Հոհենբալենի կենսագրությանն ու գիտական գործունեությանն առավել մանրամասն կարելի է ծանոթանալ հետեւյալ հղումով՝ https://www.oeaw.ac.at/fileadmin/Institute/ISA/mitarbeiter/six-hohenbalken_cv.pdf (վերջին մուտք՝ 13.04.2023):

ՀՈՒՎԱԾՆԵՐ ԵՒ ԵՐԿԵՐ

- “Vorwort zur Reihe Kurdische Studien - Beiträge aus Österreich” (««Քրդագիտություն. հոդվածներ⁴ Ավստրիայից» Մատենաշարի նախաբան»),

- “Promising Beginnings: Early Contributions to the Development of Kurdish Studies at the Time of the Austro-Hungarian Monarchy” («Խոստումնալից ձեռնարկումներ. Քրդագիտության զարգացման վաղ շրջանի հոդվածները Ավստրո-Հունգարական միապետության ժամանակաշրջանում»),⁵

- “Chronologie einer Reise nach Mesopotamien und in den Kaukasus” («Դեպի Միջագետք եւ Կովկաս մի համփորոգության ժամանակագրությունը»),⁶

- “Auf der Suche nach den Tigrisquellen. Forschungen im Schatten des Unternehmens Baghdadbahn” («Տիգրիսի սկզբնաղբյուրների փնտրումի հա- նապարհին. Հետազոտություններ Բաղդադի երկաթուղային ընկերության սավերում»),⁷

- “Ethnographische Sammlungen aus den kurdischen Regionen Ostanatoliens” («Ազգագրական հավաքածուներ Արեւելյան Անատոլիայի քրդական շրջաններից»),⁸

- “Josef Wünsch’s Travels to the East of the Ottoman Empire: Adventures or Pioneering Research” («Յոզեֆ Վյունշի համփորոգություններ դեպի Օսմա- նյան կայսրության Արեւելք. արկածներ կամ առաջնախաղ հետազոտու- թյուններ»),¹⁰

⁴ Սույն համատեքստում կիրառված գերմաներեն/անգլերեն «beiträge/contribution» բառը կարելի է թարգմանել կամ «ներդրում», կամ «հոդված» իմաստներով. նկատի ունենալով հայերենի լեզվամտածողական առանձնահատկությունը՝ մենք նախապատվությունը տվել ենք վերջին նշանակությանը, այդ իսկ պատճառով համապատասխան հատվածների թարգմանություններում կիրառելու ենք խնդրո առարկա բառի «հոդված» իմաստը:

⁵ ՏԷՄ ՄԱՐԻԱ ՏԻՔ-ՀՈԽԵՆԲԱԿԵՆ, Vorwort zur Reihe Kurdische Studien - Beiträge aus Österreich, in: “Kurdische Studien - Beiträge aus Österreich”, Band 1: Reisen zu den Quellen des Tigris... Studien von Josef Wünsch in Mesopotamien, heraus. von M. Six-Hohenbalken, Wien, 2021, էջ 9–16:

⁶ ՏԷՄ ՄԱՐԻԱ ՏԻՔ-ՀՈԽԵՆԲԱԿԵՆ, Promising Beginnings: Early Contributions to the Development of Kurdish Studies at the Time of the Austro-Hungarian Monarchy, “Kurdische Studien - Beiträge aus Österreich”, Band 1, էջ 17–40:

⁷ ՏԷՄ ՄԱՐԻԱ ՏԻՔ-ՀՈԽԵՆԲԱԿԵՆ, Chronologie einer Reise nach Mesopotamien und in den Kaukasus, “Kurdische Studien - Beiträge aus Österreich”, Band 1, էջ 71–94:

⁸ ՏԷՄ ՄԱՐԻԱ ՏԻՔ-ՀՈԽԵՆԲԱԿԵՆ, Auf der Suche nach den Tigrisquellen. Forschungen im Schatten des Unternehmens Baghdadbahn, “Kurdische Studien - Beiträge aus Österreich”, Band 1, էջ 95–114:

⁹ ՏԷՄ ՄԱՐԻԱ ՏԻՔ-ՀՈԽԵՆԲԱԿԵՆ, Ethnographische Sammlungen aus den kurdischen Regionen Ostanatoliens, “Kurdische Studien - Beiträge aus Österreich”, Band 1, էջ 115–128:

¹⁰ ՏԷՄ ՄԱՐԻԱ ՏԻՔ-ՀՈԽԵՆԲԱԿԵՆ, Josef Wünsch’s Travels to the East of the Ottoman Empire: Adventures or Pioneering Research, “Marginalia Historica”, vol. 9, № 1, 2018, էջ 169–196:

- “Obermesopotamien und Ostanatolien während des Ersten Weltkriegs — zwischen menschlichem Leid und kommerziellen Absichten. Eine kritische Untersuchung österreichischer Archivquellen” («Վերին Միջագետքը և Արևելյան Անատոլիան Առաջին աշխարհամարտի ընթացքում. մարդու տառապանքի և առևտրային մտադրությունների միջև. Ավստրիական արխիվային սկզբնաղբյուրների ֆննդատական հետազոտություն») ¹¹,

- “May I be a sacrifice for my grandchildren - transgenerational transmission and women’s narratives of the Yezidi ferman” («Թող որ զոհ լինեմ հանուն թոռնիկներիս. Միջսեր. Սերնդեսերունդ փոխանցումը և եզդիների Ֆերմանի կանանց պատմությունները») ¹²,

- “Violence Expressed: An Anthropological Approach” («Արտահայտված բռնություն. մարդաբանական մոտեցում») ¹³,

- “Memory and Genocide. On What Remains and the Possibility of Representation” («Հիշողություն և Ցեղասպանություն: Սյն մասին՝ ի՞նչ է մնացել և ներկայացման հնարավորությունը») ¹⁴ և այլն:

Ստորեւ հայերեն թարգմանությամբ ներկայացված է Մարիա Սիքս-Հոհենբալքենի «Եզդիների 72-րդ Ֆիրմանը. «Քողարկված Ցեղասպանություն»՝ կազմակերպված Առաջին աշխարհամարտի ընթացքում» ¹⁵ ուսումնասիրության առաջին հատվածը ¹⁶:

Իր հոդվածի սկզբնամասում հեղինակը նախ անդրադառնում է աշխարհում սփռված եզդիական համայնքներին, ներկայացնում Իրաքի եզդիների հետ վերջին տասնամյակում կատարված ողբերգությունները, իսկ հետո մատնանշում իր առջեւ դրված հարցադրումներն ու պարզաբանում դրանց պատասխանները գտնելու որդեգրված մոտեցումներ-

¹¹ SÉU MARIA SIX-HOHNENBALKEN, Obermesopotamien und Ostanatolien während des Ersten Weltkriegs - zwischen menschlichem Leid und kommerziellen Absichten. Eine kritische Untersuchung österreichischer Archivquellen, “Zeitschrift für Genozidforschung”, Institut für Diaspora und Genozidforschung, Heft 18/1, 2020, էջ 50–69:

¹² SÉU MARIA SIX-HOHNENBALKEN, May I be a sacrifice for my grandchildren - transgenerational transmission and women’s narratives of the Yezidi ferman, “Dialectical Anthropology”, vol. 43, № 2, 2019, էջ 161–183:

¹³ SÉU “Violence Expressed: An Anthropological Approach”, ed. by M. Six-Hohenbalken & N. Weiss, Oxford: Routledge, 2016:

¹⁴ SÉU “Memory and Genocide. On What Remains and the Possibility of Representation”, ed. by F. Moradi, R. Buchenhorst, M. Six-Hohenbalken, Oxford: Routledge, 2017:

¹⁵ SÉU M. SIX-HOHNENBALKEN, The 72nd Firman of the Yezidis: A “Hidden Genocide” during World War I?, “Genocide Studies International”, vol. 13, № 1, Spring 2019, էջ 52–76:

¹⁶ Անդ, էջ 52–58:

ընդհանուր հայտնելով, որ եզդիների ցեղասպանության առնչությամբ իր ձեռնարկած նախնական սույն փորձը կնպաստի հետագա հետազոտությունների ձեռնարկմանը:

Երկրորդ հատվածում հեղինակը համառոտակի ներկայացնում է եզդիներին, նրանց կրոնին, ինչպես նաև՝ վեր հանում ԺԹ, ԵԼ Ի, դարերի Օսմանյան կայսրության տարածքում բնակվող եզդիների հանդեպ կիրառված հալածանքների ուրույն պատկերն ու ներկայացնում ազգագրական տվյալները:

Երրորդ հատվածում Մարիա Սիքս-Հոհենբալբենը խոսում է Հայաստանի եզդիական համայնքի մասին՝ նշելով նրանց՝ Հայաստանում առաջին անգամ ապաստանելու ժամանակահատվածի ու պատճառների մասին՝ անդրադառնալով վերջիններիս ծավալած գործունեությանը, ինչպես նաև՝ հայկական միջավայրի դրական ազդեցությանը:

Իր ուսումնասիրության նյութի սկզբնաղբյուրների հետ կապված խնդիրները դիտարկելուց հետո՝ հեղինակը ներկայացնում է, թե ինչպես են օսմանյան թուրքերը նախապատրաստել եզդիների ցեղասպանության իրագործումը:

Հաջորդող հատվածներում Մարիա Սիքս-Հոհենբալբենը քննարկում է ցեղասպանություն վերապրած եզդիների ու հայերի ժառանգներին փոխանցված հիշողություններն ու վկայությունները, դիտարկում Օսմանյան կայսրության բնաջնջման քաղաքականությունն ու դրա աղետալի հետեւանքները, անդրադառնում է եզդիների բռնի կրոնափոխությունը եւ ցեղասպանությունը լուծության մատնելու պատճառներին:

Հետաքրքրական է այն հանգամանքը, որ հեղինակն իր հետազոտության ընթացքում օգտվել է ոչ միայն հայալեզու եւ օտարալեզու սկզբնաղբյուրներում պահպանված հիշատակություններից, այլև հենց ինքն է 2015 եւ 2016 թթ. դաշտային հետազոտություններ իրականացրել Հայաստանի եւ մյուս երկրների եզդիական համայնքներում: Դրանից զատ հեղինակը եզդիների ցեղասպանության այս կամ այն դրվագը կամ երեւոյթը պարբերաբար համեմատում է Հայոց Ցեղասպանության ընթացքում հայ ազգաբնակչության դեմ գործադրված հալածանքների եւ բնաջնջման նախապատրաստական կերպերի հետ, ինչը դուռ է բացում Օսմանյան կայսրության ողջ տարածքում կիրարկված բնաջնջման տարբեր ռազմավարությունները Ցեղասպանության ներկայիս պայմանադրության (convention) Բ. հոդվածում մատնանշված ռազմավարությունների հետ համեմատելու համար:

Մարիա Սիրս-Հոհենբալքենի դիտարկումներն ու վերլուծություններն օգնում են վերականգնել Օսմանյան Թուրքիայում ազգային փոքրամասնությունների դեմ կազմակերպված ցեղասպանությունների բազմաթիվ պատկերը: Դրանով նա մատնանշում է նաեւ այն ուղիները, որոնց միջոցով կարող է զարգանալ համեմատական ցեղասպանագիտությունը:

Սույն թարգմանությամբ փորձել ենք ցեղասպանությունների, բռնի կրոնափոխությունների, տեղահանությունների եւ, առհասարակ, մարդկության դեմ գործված հանցագործությունների հետ կապված խնդիրներով հետաքրքրված անձանց ու մասնագետներին ծանոթացնել ավստրիացի հեղինակավոր գիտնականի՝ եզդիների հալածանքների ու ցեղասպանության առնչությամբ կատարած հույժ կարեւոր ընկերային-մշակութային եւ մարդաբանական դիտարկումներին ու վերլուծություններին:

ՅՈՒՆԿ ՍԱՐԿԱՎԱԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԱՐԻԱ ՍԻՔՍ-ՀՈՀԵՆԲԱԼՔԵՆ

**ԵԶՊԻՆԵՐԻ 72-ՐԴ ՖԻՐՄԱՆԸ¹⁷.
«ՔՈՂԱՐԿԱՄ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ»՝
Ա. ԱՇԽԱՐՀԱՍԱՐՏԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հոդվածը վերաբերում է Առաջին աշխարհամարտի ընթացքում եզդիների դեմ գործադրված կատաղի հալածանքներին: Ցայսօր Օսմանյան կայսրության տարածքում՝ այն ժամանակ ապրած եզդիական համայնքների ճակատագրի առնչությամբ առկա չեն բավարար քանակությամբ հետազոտություններ¹⁸: Արխիվային վավերագրերը սակավաթիվ են, իսկ վերապրածների վկայությունները երբեք գրի չեն առնվել: Միայն վերջին տարիներին Հայաստանի եզդիների, ինչպես նաև եզդիական սփյուռքի ցուցաբերած նախաձեռնությունների արդյունքում ճակատագրական անցյալը հայտնվեց հետազոտությունների կիզակետում: Վերջերս տեղի ունեցած երկու իրադարձություն խթանել են հիշատակի վկայակոչման ուղղությամբ տարվող աշխատանքները եզդիական համայնքում, որին անդամագրված է մոտ մեկ միլիոն մարդ ողջ աշխարհում: Հայաստանի Հանրապետությունում, որտեղ 2015 թ. վկայակոչվում էր Հայոց Ցեղասպանության հարյուրամյա տարելիցը, պաշտոնական հիշա-

¹⁷ Պարսկերեն «Ֆիրման» (նաեւ՝ «Ֆէրման» կամ «Ֆարման») բառը նշանակում է «հրամանագիր», «հրովարտակ» կամ «հրաման», որը հրապարակում էին թուրքական սուլթաններն ու պարսից շահերը: Քանի որ Օսմանյան կայսրության տարածքում բոլոր ցեղասպանություններն իրագործվում էին թուրքական սուլթանների՝ անվիճարկելի օրենքի ուժով օժտված հրամանագրերով, այդ իսկ պատճառով, որպես եզդի ժողովրդի դեմ պատմության ընթացքում իրականացված ցեղասպանությունների պաշտոնական բնութագրիչ անվանում, եզդիական համայնքներն ու ողջ գիտական աշխարհը որդեգրել են հենց սույն եզրույթը (բառի կիրառության առնչությամբ տես ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆՑ, Հայերէն բացատրական բառարան, հտ. 4-րդ, Երեւան, 1945, էջ 624, եւ Հ. ԱՃԱՌՅԱՆ, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հտ. 4-րդ, Երեւան, 1980, էջ 814—815, ինչպես նաեւ՝ Է. ԱՂԱՅԱՆ, Արդի հայերենի բացատրական բառարան, հտ. 2-րդ, Երեւան, 1976, էջ 1602՝ ծնթ. թրգմ.):

¹⁸ Մեծապես երախտապարտ եմ պ. գ. թ. Թերեզա Ամրլանին (Երեւանի Պետական Համալսարան, Հայաստան), որի համակողմանի աջակցության եւ խորհրդատվության շնորհիվ էլ հնարավոր եղավ իրականացնել դաշտային սույն հետազոտությունը: (Դաշտային հետազոտություն» եզրույթի առնչությամբ տես նաեւ 27-րդ ծնթ. (ծնթ. թրգմ.):

տակույթյան [արարողակարգային] փաստաթղթերում անտեսվեց եզդիների հարակից պատմության մեծ մասը, ինչն էլ դրա ճանաչման անհրաժեշտության առնչությամբ լայն քննարկումների պատճառ դարձավ: Իսկ վերջին տասնամյակում Իրաքի՝ ժողովրդագրական առումով ամենամեծ եզդիական համայնքը (մինչև 700 000 մարդ)¹⁹ կրկին ենթարկվել է ցեղասպանական հալածանքների: 2007 թ. իսլամիստական խմբավորումները հարձակում են գործել եզդիների հավաքական երկու քաղաքները, վրա. տասն ականներով բեռնված բեռնատարը մտել է այդ քաղաքները, միաժամանակ սպանվել են հարյուրավոր մարդիկ, իսկ երկու քաղաքներն էլ ավերվել են ամբողջությամբ²⁰: 2014 թ. օգոստոսին «ԴԱԵՇ»-ը՝ այսպես կոչված՝ Իսլամական Պետության (ԻՊ) գրոհայինները սկսեցին հարձակումը եզդիներով բնակեցված հարակից վերջին շրջաններից մեկի՝ Սինջարի [Շինգալ]²¹՝ ուղղությամբ: Բռնի ասպատակություններն իրականացվում էին այնպիսի դաժանությամբ եւ ուժգնությամբ, որը ոչ ոք չէր կարող կանխատեսել կամ պատկերացնել: Եզդիները պարբերաբար ենթարկվել են սպանդի ու տեղահանության. կանայք եւ երեխա-

¹⁹ Օթմար Էհրինգը համեմատել է Իրաքի [ազգային] փոքրամասնություններին վերաբերող ժողովրդագրական տարբեր տեղեկագրություններ եւ ցույց տվել, որ եզդիների մասին վիճակագրական հավաստի տեղեկություններ ստանալն անհնար է: ԱՄՆ Պետական գերատեսչության (դեպարտամենտ)՝ կրոնի ազատության վերաբերյալ միջազգային զեկուցագրում (2012 թ.) հաշվարկված է 500 000–700 000 եզդի: Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային Կրոնական Ազատության Հանձնախմբի՝ 2016 թ. հրապարակած զեկույցի համաձայն՝ 2005–2013 թվականների միջակայքում եզդիների թիվը նվազել է մինչև 500 000-ը: Փյու Հետազոտական Կենտրոնի (անգլ.՝ Pew Research Center) 2014 թ. զեկույցը նույնպես բովանդակում է նույն գնահատականները: 1965 թ. Իրաքում կազմակերպված մարդահամարի արդյունքում կատարված հաշվարկների համաձայն՝ եզդիները կազմում են ընդհանուր բնակչության մոտ 1%-ը (տես Օ. ՕԷՀՐԻՆԳ, Christians and Yazidis in Iraq: Current Situation and Prospects, Sankt Augustin, Berlin: Konrad Adenauer Stiftung, 2017, էջ 90 շրնկ.):

²⁰ Զոհերի թվաքանակի առնչությամբ առկա են տարբեր տեղեկություններ: Հարձակումների կործանարար բնույթի պատճառով հնարավոր չի եղել մարդկային աճյունների ինքնությունը հաստատել: Հաշվարկները տատանվում են 326 սպանվածի ու 526 վիրավորի (տես E. SAVELSBERG, S. HAJO, & I. DULZ, Effectively Urbanized. Yazidis in the Collective Towns of Sheikhan and Sinjar, “Études Rurales”, № 186, 2010, էջ 115, ամբողջական՝ էջ 101–116) եւ 796 սպանվածի ու 1562 վիրավորի միջև (տես Օ. ՕԷՀՐԻՆԳ, նշ. աշխ., 2017, էջ 15):

²¹ Շինգալը/Շենգալը (բրդ.) կամ Սինջարը (արաբ.) շրջան է Իրաքի Նինվե Նահանգում (ծնթ. հեղ.): Հայտնի է նաեւ «Սանկար», «Սինկար», «Նաբուր» եւ այլ անուններով: Տեղակայված է Մոսուլ քաղաքից արեւմուտք: Ունի խմելու եւ ոռոգման ջրի հարուստ պաշարներ եւ շքեղ պարտեզներ: Սույն գավառը կոչվել է սելջուկ տիրակալ Մելիք շահի Սինջար որդու անունով (տես Թ. Խ. ՀԱՎՈՐՅԱՆ, Ս. Տ. ՄԵԼԻՔ-ԲԱՆՇԱՆ, Հ. Խ. ԲԱՐՍԵՂՅԱՆ, Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 4-րդ, Երեւան, 1998, էջ 610 եւ հմմտ. էջ 613՝ ծնթ. թրգմ.):

ները վերապրել են աննկարագրելի եւ տարատեսակ բռնություններ ու վաճառվել որպես պատերազմական ռազմավար: Չնայած այն բանին, որ այդ կանանցից ոմանք ազատվել են փրկագնի վճարման ճանապարհով, շատերը դեռեւս գտնվում են գերության մեջ²²: Բազմաթիվ կանանց ու տղամարդկանց ճակատագրերն անհայտ են: Սինջարը դեռ բավականաչափ անվտանգ չէ ներքին տեղահանության ենթարկված անձանց (ՆՏԱ)²³ վերադարձի համար. արդեն հինգերորդ տարին է, ինչ նրանք ապրում են Քուրդիստանում, Իրաքում կամ հարեւան այլ երկրներում տեղակայված փախստականների ճամբարներում: Շատ քչերին է հաջողվել ապաստան գտնել Եւրոպայում²⁴:

Հայաստանում եւ ողջ աշխարհում բնակվող եզդիներն առերեսվում են իրաքյան եզդիների հալածանքները նկարագրող պատկերների եւ փաստավավերագրական ֆիլմերի հետ: Գիտակցելով սեփական անգործությունն իրենց հավատակիցների տառապանքների եւ, ընդհանուր առմամբ, եզդիական համայնքի անորոշ ապագայի առջեւ՝ նրանք ստիպված են եղել հիշել Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում իրենց նախնիների ձեռք բերած փորձառությունները: Առա-

²² «Առեւանգվածների մոտավոր թիվը 6.800 է (95%CI 4200–10 800).... Առեւանգվածների ավելի քան մեկ երրորդ մասը դեռեւս կորած էր տեղեկագրության իրականացման պահին [տվյալները հավաքագրվել են 2015 թ.]» (տե՛ս V. CETORELLI, IS. SASSON, N. SHABILA, & G. BURNHAM, Mortality and Kidnapping Estimates for the Yazidi Population in the Area of Mount Sinjar, Iraq, in August 2014: A Retrospective Household Survey, "PLoS Medecine", № 14(5), 2017, էջ 1 շրնկ.): Հեղինակները նշում են, որ «սպանությունների եւ առեւանգումների հետեւանքով մահացությունների իրական դեպքերը կարող են թերագնահատված լինել [հավաքագրված տվյալներում՝ փրկվածների հարցում կողմնապահության]» (անդ, էջ 2) եւ անորոշ խնդիրների պատճառներով: Ավելի քան 6000 առեւանգման դեպքերի մասին ՄԱԿ-ին են հայտնել նաեւ քրդական իշխանությունները (անդ, էջ 12):

²³ Անձինք կամ անձանց խմբեր, որոնք հարկադրված լքել են իրենց տներն ու մշտական բնակության վայրերը, մասնավորապես՝ զինված ընդհարումների, համատարած բռնության իրավիճակների, մարդու իրավունքների խախտումների կամ բնական ու մարդածին աղետների պատճառով, եւ որոնք չեն հատել միջազգայնորեն ճանաչված որեւէ պետական սահման (առավել մանրամասն տե՛ս Г. С. Гудвин-Гилл, Статус беженца в международном праве, Москва, 1997, էջ 313–318, եւ Л. В. Павлова, А. В. Селиванов, Международно-правовой статус беженца: пособие для студентов вузов, Минск, 2006, էջ 71–72, ինչպես նաեւ N. GEISLER, The International Protection of Internally Displaced Persons, "International Journal of Refugee Law", vol. 11, № 3, 1999, էջ 451–478, ու R. COHEN, Strengthening Protection of IDPs: The UN's Role, "Georgetown Journal of International Affairs", vol. 7, Winter/Spring, 2006, էջ 101–110, եւ այլն՝ ծնթ. թրգմ.):

²⁴ Տե՛ս „Singal 2014: Der Angriff des „Islamischen Staates“, der Genozid an den Êzîdî und die Folgen“, in: „Wiener Jahrbuch für Kurdische Studien“, Band 4, heraus. von K. Brizić, A. Grond, Ch. Osztovcics, T. Schmidinger, M. Six-Hohenbalken, Wien: Caesarpress, 2016:

շին աշխարհամարտից հետո ժամանակակից ազգային պետությունների ձևավորման արդյունքում եզդիների ավանդական բնակավայրերը բաժանվեցին պետական նոր սահմաններով (Թուրքիա, Իրաք եւ Սիրիա)։ Կովկասի (Հայաստան, Վրաստան) եզդիական համայնքը գրեթե ամբողջ խորհրդային ժամանակաշրջանում մեկուսացված է եղել հետօսմանյան ազգային պետություններում բնակվող եզդիներից։ Համապատասխան համայնքների զարգացումն, այսպիսով, սահմանվում էր սույն տարաբնույթ ազգային պետությունների հասարակական, քաղաքական եւ տնտեսական կառուցվածքով։ Մինչդեռ եզդիները Հայաստանում ստանում էին կրթություն եւ տարածվում էր նրանց մայրենի լեզուն, Իրաքում ապրող եզդիներին, համապատասխանաբար, չէին ներգրավում պետական կառույցների մեջ եւ, հետեւաբար, այնտեղ տգիտությունը հասնում է միանգամայն բարձր մակարդակների²⁵։ Հայաստանում կազմակերպած հարցազրույցիս գրեթե բոլոր մասնակիցները ստացել էին դպրոցական կրթություն եւ խոսում էին երկու լեզվով. նույնիսկ հեռավոր շրջաններում բնակվող տարեցներն էին հաճախել դպրոց։ Հայաստանի եզդիական համայնքում կան մի շարք մտավորականներ, որոնք նույնիսկ գիտական աստիճաններ ունեն։ Այսօր նոր սերունդը գործուն մասնակցություն ունի եզդիների անդրազգային հաղորդակցության²⁶ գործընթացում՝ լրատվական նոր միջոցների եւ ճանապարհորդության համար ընձեռված առավել դյուրին հնարավորությունների օգնությամբ միմյանց մոտեցնելով երկարատեւ բաժանված համայնքները։

Սույն ուսումնասիրության մեջ դիտարկվում է այն հարցը, թե արդյո՞ք կարելի է Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում եզդիների վերապրած հալածանքները որակել որպես ցեղասպանություն, եւ եթե՝ այո, ապա ինչո՞ւ է այն լուծված մատնվել մեկ դար շարունակ։ Մինչ օրս անհասանելի են բացառապես եզդիների ճակատագրին վե-

²⁵ Միգրացիայի Միջազգային Կազմակերպության (ՄՄԿ) գնահատմամբ՝ Իրաքում բնակվող եզդի ազգաբնակչության շրջանակում անգրագիտության մակարդակը հասնում է 70%-ի (տե՛ս Օ. ՕԵՐԻՆԳ, նշ. աշխ., 2017, էջ 91)։

²⁶ Անդրազգային հաղորդակցություն՝ գործընթաց, որը հնարավորություն է տալիս մարդկանց աշխարհաքաղաքական սահմանների շրջանակում հաստատել եւ պահպանել հասարակական-մշակութային կապերը (տե՛ս «Միգրացիայի ոլորտի տերմինների բառարան», 2-րդ հրատ., խմբ.՝ Ռ. ՊԵՐՈՒՇՈ, Զ. ՌԵԳՈՒՅԵ-ՔՐՈՍ, «Միջազգային Միգրացիոն Իրավունք», № 30, Երեւան, 2013, էջ 17՝ ծնթ. թրգմ.)։

րաբերող արխիվային սկզբնաղբյուրները, եւ գրի չեն առնվել նաեւ փրկվածների համապարփակ վկայությունները: Այսօր առկա է աղբյուրագիտական բնույթի միայն երեք տեսակի նյութ, որոնց հետ կարելի է աշխատել. առաջին՝ կարեւորագույն սկզբնաղբյուրներ եւ երկրորդական համապատասխան աղբյուրներ, որոնք վերաբերում են Հայոց ու Ասորվոց ցեղասպանություններին եւ երբեմն բովանդակում եզդիների ճակատագրի վերաբերյալ տեղեկություններ. երկրորդ՝ հալածանքներից տասնամյակներ անց հրապարակված հայաստանաբնակ եզդի անհատների մի քանի կենսագրություններ, հուշեր եւ ընտանեկան պատմություններ²⁷. երրորդ՝ հետագա սերունդների պատմություններ՝ պահպանված [ցեղասպանությունից] փրկվածների փորձառության միջսերնդային փոխանցման հիման վրա:

Առաջին աշխարհամարտի ընթացքում կազմակերպված հալածանքները հաջորդիվ կդիտարկեմ ոչ թե իրավական, այլ ավելի շուտ՝ հասարակական-մարդաբանական տեսանկյունից: Սկզբնաղբյուրների սակավության պայմաններում այսօր փրկվածների երկրորդ եւ երրորդ սերունդների պատմություններն ունեն կենսական կարեւորություն՝ մեկ հարյուրամյակ առաջ եզդիների հետ պատահածն ուսումնասիրելու համար: Ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող եզդիական համայնքներից ներս իրականացված հասարակական-մարդաբանական դաշտային աշխատանքի²⁸ հիմամբ գրված սույն հոդվածը խարսխված է նաեւ [ցեղասպանությունից] փրկվածների ժառանգների (հետ) հուշերի (կամ՝ (հետ) հիշողությունների)²⁹

²⁷ Sêu C. CELÎL, Zozan, Stockholm: Roja Nû Publishers, 1982, եւ H. CINDÎ, Hewarî, Stockholm: Roja Nû Publishers, 1999, *ինչպես նաեւ՝* S. ÎBO, Kurdê rêwî, Ji kirilî bo latîni: X. OMERXALÎ, Stembol: Avesta, 2009:

²⁸ Անգլերեն «fieldwork» եզրույթը թարգմանվում է «դաշտային աշխատանք», «դաշտային հետազոտություն» կամ «դաշտային ուսումնասիրություն» բառակապակցություններով: Այն ընդհանուր մի եզրույթ է, որի միջոցով բնորոշվում են սոցիոլոգիական հետազոտությունների այն գործողությունները, որոնց ընթացքում սոցիոլոգն առնչվում է իրական ընկերային միջավայրի կամ աշխարհի հետ՝ բառի բուն իմաստով: Սա լաբորատորիայում կամ գրադարանում կատարվող ուսումնասիրության հակառակ աշխատանքն է (տե՛ս Ս. ԱՍԻՎՅԱՆ, Սոցիոլոգիա. անգլերեն-հայերեն բացատրական բառարան, Երեւան, 2015, էջ 73՝ ծնթ. թրգմ.):

²⁹ «Հետհուշ» կամ «հետհիշողություն» (անգլ.՝ «postmemory») եզրույթն առաջին անգամ 1992 թ. կիրառել է Կոլումբիայի համալսարանի (ԱՄՆ) պրոֆեսոր Մարիանե Հիրշը՝ իր «Հետհիշողության Սերունդը» փորձագրության մեջ: Հետագա աշխատություններում նա ուսումնասիրել եւ վերլուծել է այն երեխաների կյանքը, որոնց նախնիները Հոլոքոստի զոհ են

վրա³⁰։ Նախկինում [հալածանքներ] վերապրածների փորձառությունները փոխանցվում էին միայն ընտանիքների, տոհմերի եւ գյուղերի սահմաններում, որը ներքին բանավոր պատմության ինչ-որ տարատեսակ է։ Պաշտոնական պատմություն երբեք էլ չի ձեւավորվել։ Այստեղ դիտարկելու ենք նաեւ այն հարցը, թե արդյո՞ք փորձառական բնույթի նյութը հնարավորություն է ընձեռում ուսումնասիրելու եւ վերլուծելու այդ հալածանքները։ Այն պետք է բացահայտի նաեւ սույն իրադարձությունները լուսության մատնելու բազմաթիվ պատճառներից մի քանիսը։

Հիշողությունների ու պատմությունների վրա հիմնված մեթոդաբանական այս մոտեցումը առնչակցվում է նաեւ պատմագրության եւ [իրողությունների] նկարագրության հարցերին։ Ինչպես պնդում են Ն. Արջենթին եւ Կ. Շրամը՝ «հիշողությանը չի կարելի վստահել այնպես, ինչպես՝ պատմությանը, քանի որ անհրաժեշտ է այն ուսումնասիրել ոչ թե որպես անցյալի տեղեկագրություն, այլ՝ իբրեւ ներկայի [մի] արձանագրություն, որը վերաբերում է նրանց, որոնց հետաքրքրություննե-

դարձել։ Եզրույթը հետցեղասպանական հետեւանքային գիտելիքի ու նյութականացված փորձառության փոխանցման համակարգ է. մի երեւույթ, որը նկարագրում է հետագա սերունդների առնչակցությունը նախնիների կրած առանձնական, հավաքական եւ մշակութային վնասներին, փոփոխություններին, որոնք «հիշելի» են միայն այն մարդկանց պատմությունների, պատկերների ու վարքագծի շնորհիվ, որոնց մեջ մեծացել են նրանք։ Համաձայն ամերիկացի հանրահռչակ հոգեբույժ եւ գրող Ռ. Լիֆթոնի կարծիքի՝ տեղեկության փոխանցման գործընթացը տեղի է ունենում այնքան խորը զգայական մակարդակում, որ սկսում են ձեւավորվել սեփական հիշողությունները։ Այսպիսով, անցյալի հետ կապը հետհիշողության մեջ առաջանում է ոչ թե «հիշելու» կամ «մտաբերելու», այլ՝ երեւակայության ներգրավման եւ արտապատկերման կամ «մշակման» միջոցով։ Հետագայում «հետհիշողություն» եզրույթը լայնորեն կիրառվում է գրքերում եւ գիտական աշխատություններում՝ պատմական հիշողության հետ կապված գործընթացները նկարագրելու համար (առավել մանրամասն տե՛ս M. HIRSCH, Family Pictures: Maus, Mourning, and Post-Memory, "Discourse", vol. 15, № 2, 1992—1993, էջ 3—29, եւ նույնի, Family Frames: Photography, Narrative, and Postmemory, Cambridge, MA: Harvard University Press, 1997, ինչպես նաեւ՝ նույնի, Surviving Images: Holocaust Photographs and the Work of Postmemory, in: "Visual Culture and the Holocaust", ed. by B. Zelizer, New Brunswick, NJ: Rutgers University Press, 2001, էջ 146—214, եւ L. MORRIS, Postmemory, Postmemoir, in: "Unlikely History: The Changing German-Jewish Symbiosis, 1945—2000", ED. BY L. MORRIS & J. ZIPES, NEW YORK: PALGRAVE, 2002, էջ 291—306; Տե՛ս նաեւ E. VAN ALPHEN, Second-Generation Testimony, the Transmission of Trauma, and Postmemory, "Poetics Today", vol. 27, № 2, 2006, էջ 473—488, եւ M. HIRSCH, The Generation of Postmemory, "Poetics Today", vol. 29, № 1, 2008, էջ 103—128, ինչպես նաեւ՝ նույնի, The Generation of Postmemory: Writing and Visual Culture after the Holocaust, New York: Columbia University Press, 2012՝ ծնթ. թրգմ.):

³⁰ Այստեղ զետեղված ընտանեկան պատմությունները գրի ենք առել 2015 եւ 2016 թվականներին Հայաստանում ինձ հետազոտակից պ.գ.թ. Թերեզա Ամրյանի հետ իրականացրած համատեղ դաշտային ուսումնասիրության ընթացքում։

րը, հայացքները, փորձառություններն ու կյանքի աշխարհներն ինչ-որ պատճառով անբարյացակամ են կամ դուրս են մնացել պատմական շարադրանքից»³¹։ Հիշողությունները շարունակ վերարտադրվում են. դրանք ներկան ներառում են անցյալի, այժմեականը՝ անցյալի բացահայտման, ինչպես նաեւ՝ անցյալը՝ ներկայի մեջ։ Անցյալի հալածանքների եւ դրանց ճանաչման առնչությամբ Հայաստանի եզդիական, ինչպես նաեւ՝ եզդիների անդրազգային³² համայնքներում առկա ընթացիկ քննարկումը ներառված է պատկանելության եւ ինքնության վերաբերյալ վիճարկելի համընդհանուր քննարկման շրջանակում։ [Ազգային] ինքնության շուրջ ծավալված սույն քննարկումը նման է երկու ազդակների կամ բեւեռների միջեւ տեղակայված ճոճանակի. առաջինի կողմնակիցները հայտարարում են, որ եզդիները քրդական ազգության, հետեւաբար եւ՝ քրդերի անբաժանելի մասն են, իսկ մյուս կողմն ընդգծում է եզդիների՝ որպես ինքնուրույն համայնքի ինքնավստահությունը։ Մեկ հարյուրամյակ առաջ տեղի ունեցած ցեղասպանության ժամանակ գործադրված բռնությունների շուրջ ծավալված բանավեճի ընթացքում հատկապես բուռն քննարկման առարկա է դարձել քրդերի՝ դրանցում ունեցած դերակատարության հարցը։ Սա նշանակում է, որ ազգային պատկանելության արդի հասկացությունները դժվար թե կարելի է կիրառել մեկ դար առաջ գոյություն ունեցած հասարակարգերի առնչությամբ։

Սույն հոդվածը հարկավոր է դիտարկել իբրեւ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում եզդիների վիճակի ուսումնասիրության ուղղությամբ կատարված նախնական մի փորձ՝ հույսով, որ այն կնպաստի եւ օգտակար կլինի հետագա հետազոտություններին։ Ի հավելումն [ազգային] պատկանելության շուրջ ծավալված ընթացիկ քննարկումների դիտարկմանը՝ իշխանության հետ հարաբերություններին, ոճրագործներին ու նրանց հրամանատարներին վերաբերող խնդիրների ուսումնասիրության առնչությամբ անհրաժեշտ է ցուցաբերել բազմաբնույթ մոտեցում՝ ներառյալ առանձին շրջանների հետազոտությունը՝ եզդիների՝ երկար ժամանակ քողարկված ցեղասպանության եւ դրանում «քրդերի» ունեցած դերակատարության հարցերը քննելու համար։

³¹ N. ARGENTI & K. SCHRAMM, "Introduction," Remembering Violence: Anthropological Perspectives on Intergenerational Transmission, New York: Berghahn Books, 2011, էջ 3:

³² Եզրույթի առնչությամբ տե՛ս 25-րդ ծնթ.։

ՈՎՔԵՐ ԵՆ ԵԶԴԻՆԵՐԸ

Եզդիականությունը միաստվածյան կրոն է, որն առնչակցություն ունի հին իրանական կրոնական համակարգերի հետ եւ փոխկապակցված է քրիստոնեության, հուդայականության ու մահմեդականության (հատկապես՝ սուֆիզմի) հետ: Խորհրդապաշտական սուֆի մահմեդական արմատներով Շեյխ Ադի իբն Մուսաֆիրը ԺԲ. դարում հիմնադրում է սուֆիական մի շարժում եւ սկզբնավորում ժամանակակից եզդիական համայնքի ավանդույթը³³: [Սուլեյի առնչությամբ պահպանված] գրավոր սկզբնաղբյուրները գրեթե չեն օգտագործվում, իսկ դրանց ծագումը վիճարկելի հարց է³⁴: Եզդիների ավանդական բնակավայրերը գտնվում էին նախկին Օսմանյան կայսրության արեւելյան եւ հարավարեւելյան հատվածներում (ներկայիս Թուրքիա, Իրաք եւ Սիրիա)՝ քրդերով բնակեցված շրջանների կենտրոնում: Եզդիականության սուրբ կենտրոնը հյուսիսային Իրաքում տեղակայված Լալեշն է: Կրոնը, որն ընդգրկում է եզդիների համար առանձնահատուկ մի համակարգ, խմբի ինքնության [պահպանման] միակ աղբյուրն է³⁵: Դարերի ընթացքում հավատքը փոխանցվել է միայն բանավոր կերպով՝ դասակարգային խմբավորման հանրային-կրոնական կառույցների սահմաններում: Անհատներն իրենց ծնողներից են ժառանգում, թե երեք խմբավորումներից ո՞ր մեկին են պատկանում իրենք՝ կամ՝ քահանայական երկու դասերից (շեյխեր եւ փիրներ) որեւէ մեկին, կամ՝ աշխարհիկ դասակարգին (մ[ու]րիդներ)³⁶:

³³ Տե՛ս P. G. KREYENBROEK, Yezidism in Europe: Different Generations Speak about their Religion, Wiesbaden: Harrassowitz, 2009, էջ 17 շրնկ.:

³⁴ Տե՛ս C. ALLISON, The Yezidi Oral Tradition in Iraqi Kurdistan, Richmond: Curzon Press, 2001, էջ 47 շրնկ., եւ P. G. KREYENBROEK, Yezidism: Its Background, Observances and Textual Traditions, Lewiston, Queenston, & Lampeter: Edwin Mellen Press, 1995, *ինչպես նաեւ*՝ P. G. KREYENBROEK & KHALIL RASHOW, God and Sheikh Adi Are Perfect: Sacred Poems and Religious Narratives from the Yezidi Tradition, Wiesbaden: Harrassowitz, 2005: Տե՛ս նաեւ B. AÇIKYILDIZ, The Yezidis: The History of a Community, Culture and Religion, London: I. B. Tauris, 2014, էջ 88 շրնկ.:

³⁵ Եզդիների կրոնին, լեզվին, ինքնությանն ու պատմությանը նվիրված ուսումնասիրություններ առկա են հետեւյալ աշխատություններում՝ C. ALLISON, *նշ. աշխ.*, 2001, եւ J. S. GUEST, The Yezidis: A Study in Survival, London & New York: KPI, 1987, *ինչպես նաեւ*՝ P. G. KREYENBROEK, Yezidism..., 1995 եւ *նույնի*, Yezidism in Europe..., 2009: Տե՛ս նաեւ I. SCHULZE & W. SCHULZE, A Handbook of the Minorities of Armenia: A Sociocultural and Sociolinguistic Survey, Hamburg: Kovac, 2016, եւ Տ. TAGAY & S. ORTAÇ, Die Eziden und das Ezidentum. Geschichte und Gegenwart einer vom Untergang Bedrohten Religion, Hamburg: Landeszentrale für politische Bildung, 2016:

³⁶ Թեեւ պահպանվել են մի քանի գրավոր նյութեր (աղոթքներ եւ կրոնական երգասացություններ), այնուամենայնիվ եզդի հոգեւոր գործիչները հազվադեպ են կիրառում դրանք:

Սրբավայրերը, որոնք հաճախ կապված են կարեւորագույն խասերի (հոգեւոր զորութեամբ օժտված սուրբ էակներ [կամ՝ սրբեր]) գերեզմանների հետ, ուխտատեղիներ են։ Նվիրական սուրբ առարկաները պահվում են շէյխերի եւ փիրերի տներում։ Աշխարհականներն այցելում են նրանց՝ պահպանվող սրբություններին հարգանքի տուրք մատուցելու կամ յուրահատուկ օգնություն խնդրելու համար։ Կրոնին բնորոշ առանձնահատկություններից են բանավորությունն ու ճշմարիտ գործողությունը (օրթոպրաքսիա)³⁷, ինչպես նաեւ՝ խիստ ներտոհմային ամուսնությունը (էնդոգամիա)։ Ամուսնությանը վերաբերող կանոնները ներամուսնություն են պահանջում նաեւ կրոնական յուրաքանչյուր դասակարգում։ Համայնքի անդամակցությունը հնարավոր է միայն [դրանում] ծնված լինելու ճանապարհով³⁸։

Ուղղափառ մահմեդական համակարգում եզդիները միշտ նկատվել են իբրեւ հերետիկոսներ կամ անհավատներ եւ այդ իսկ պատճառով նրանք վերապրել են բռնի կրոնափոխություն ու հալածանքներ։ Այսօր (անդրազգային) եզդիական համայնքը շեշտադրում է իր հալածանքների երկար պատմությունը՝ պնդելով, որ իրենք ականատես են եղել 74

³⁷ «Օրթոպրաքսիա» (հին հուն․՝ «ὀρθοπραξία», այսինքն՝ «ճշմարիտ/ճիշտ գործողություն») եզրույթն առաջին անգամ կիրառվել է 1851 թվականին։ Այն կրոնական մտածողության մի տեսակ է, որը մեծ նշանակություն է տալիս ոչ թե հավատին, շնորհներին, այլ բարոյական ու ծիսական վարքագծին, գործողություններին, արարքներին եւ այլն։ Օրթոպրաքսիան ուշադրություն է դարձնում նաեւ այնպիսի արժեքների, ինչպիսիք են ընտանեկան կապերը, մշակութային ամբողջականությունը, ավանդույթների փոխանցումն ու ծիսկարգերի անադարտության պահպանումը։ Օրթոպրաքսիայի տարրեր առկա են նաեւ այլ կրոններում (քրիստոնեություն, մահմեդականություն, հուդայականություն, հինդուիզմ, ջայնիզմ, նեոհեթանոսություն եւ այլն)։ Սույն եզրույթը կիրառվում է նաեւ 1970–1980-ական թթ. լատինական Ամերիկայում սկզբնավորված ազատագրման աստվածաբանության մեջ՝ քրիստոնեական հավատի գործնական ու քաղաքական բովանդակության հետ կապված գործողությունների կարեւորությունն ընդգծելու նպատակով (առավել մանրամասն տե՛ս W. A. CURTIS, Orthodoxy, “Encyclopaedia of Religion and Ethics”, vol. 9, ed. by J. Hastings, Edinburgh, 1917, եւ P. BOURDIEN, Outline of a Theory of Praxis, Cambridge, 1979, ինչպես նաեւ՝ L. DUMONT, Homo Hierarchicus: An Essay on the Caste System, Chicago, 1980, ու F. M. DENNY, Orthopraxy in Islam and Judaism: Convictions and Categories, “Studies in Islamic & Judaic Traditions: Papers Presented at the Institute for Islamic-Judaic Studies”, vol. 2, ed. by W. M. Brinner & S. D. Ricks, Atlanta, 1989, էջ 83–95։ Տե՛ս նաեւ D. K. MCKIM, Westminster Dictionary of Theological Terms, Westminster: John Knox Press, 1996, էջ 197, եւ J. SCHROEDER, Nagarjuna and the Doctrine of “Skillful Means”, “Philosophy East & West”, vol. 50, № 4, 2000, էջ 559–584, ինչպես նաեւ՝ M. WESTLEY, The Bibliophile’s Dictionary: 2054 Masterful Words and Phrases, Cincinnati, Ohio: Writer’s Digest Books, 2005, էջ 91, ու E. JACKSON, The Illustrated Dictionary of Culture, Lotus Press, 2007, էջ 147 եւ այլն՝ ծնթ. թրգմ.)։

³⁸ Տե՛ս R. LESCOT, Enquête sur les Yezidis de Syrie et du Djebel Sindjâr, Beyrouth: Institut français de Damas, 1938, եւ C. ALLISON, նշ. աշխ., 2001։

Ֆիրմանի³⁹. եզդիներն այդպես են անվանում կատաղի հալածանքների ծայրահեղ գործողությունները: Հայաստանաբնակ եզդիների ներկայիս աշխարհայեցողության համաձայն՝ Առաջին աշխարհամարտի ընթացքում կազմակերպված բնաջնջումն ու տեղահանությունը համարվում են 72-րդ Ֆիրմանը: Սույն պատմությունը գլխավորապես զարգացել է Հայաստանում բնակվող եզդիների միջավայրում եւ վերջինիս համապատասխան սփյուռքում, սակայն այն լայն տարածում չի գտել Իրաքի եզդիների շրջանում, որոնք ընդհանուր կերպով են հղում եզդիների պատմության «72 Ֆիրմաններին»⁴⁰: Հայաստանաբնակ եզդիների լեզվում գոյություն չունեն առանձնահատուկ եզրույթ՝ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում տեղի ունեցած ցեղասպանական հալածանքները բնութագրելու համար: [Մեր իրականացրած] հարցման մասնակիցներն օգտագործում էին «քոմկուժի» («komkujî»՝ զանգվածային սպանդ), «ջարդ»⁴¹ կամ «Ֆիրման»⁴² բառերը: «74 Ֆիրմանների» վերաբերյալ պատմությունը, ամենայն հավանականությամբ, մշակվել է 2015 թ. վկայակոչված Հայոց ցեղասպանության հարյուրամյակի, Հայաստանի՝ Առաջին աշխարհամարտի ընթացքում քրիստոնեական տարբեր, առավել փոքր խմբերի հանդեպ իրագործված ցեղասպանությունների ճանաչ-

³⁹ Եզդիների աղոթքներում եւ բանավոր պատմության մեջ 72 թիվն ունի այլաբանական իմաստ, քանի որ նրանք աղոթում են աշխարհի 72 մարդու, այսինքն՝ բովանդակ մարդկության համար:

⁴⁰ Կցանկանալի երախտագիտություն հայտնել անանուն գրախոսին՝ սույն արժեքավոր մեկնաբանության համար:

⁴¹ «Ջարդ» եզրույթը փոխառություն է հայերենից, որը նշանակում է «կոտորել», իսկ փոխաբերական իմաստով՝ «կոտորել, բնաջնջել»: Լեզվաբանական սույն բացատրության համար շնորհակալ եմ պ.գ.թ. Թերեզա Ամրյանին: Տե՛ս R. LESCOT, նշ. աշխ., 1938, էջ 129: Ի հավելումն՝ նշենք նաեւ, որ «ջարդ» բառը էզդիկի լեզվում (կուրմանջի բարբառի տեսակ) ընթերցվում է կարճ «ա»-ով եւ կիրառվում երկու տարբեր իմաստով. առաջին՝ սույն եզրույթով եզդի ժողովուրդը բնութագրել է Առաջին աշխարհամարտի ընթացքում Օսմանյան Թուրքիայում բնակվող այլադավան համայնքներին բնաջնջելու նպատակով մահմեդականներից կազմավորված զինված ջոկատներին: Երկրորդ՝ «ջարդ» բառն օգտագործվել է «ցեղասպանություն» նշանակությամբ. այն, հիմնականում, շրջանառել են եղեռն վերապրած եզդիներն ու նրանց ժառանգները: Ներկայումս «ջարդ»-ի փոխարեն եզդիներն ավելի հաճախ կիրառում են «քոմկուժի» եզրույթը (սույն մեկնաբանության համար խորին երախտագիտություն եմ հայտնում ԵՊՀ Իրանագիտության ամբիոնի դոցենտ, պ.գ.թ. Թերեզա Ամրյանին՝ ծնթ. թրգմ.):

⁴² Պարսկերեն «Ֆիրման» բառը նշանակում է հրամանագիր: Սույն հոդվածում այն վերաբերում է Օսմանյան կայսրությունում հրապարակված հրամանագրերին, որոնց միջոցով օրինականացվում էին եզդիների նկատմամբ գործադրված բռնությունները: Սույն եզրույթի առնչությամբ տես նաեւ 1-ին ծնթ. (ծնթ. թրգմ.):

ման եւ հենց Հայաստանում եզդիների ցեղասպանության պարբերաբար հիշատակման⁴³ հանրապատկերի վրա⁴⁴:

Եզդիները հաճախ հալածվում էին իրենց քրիստոնյա հարեւանների հետ միասին. Օսմանյան կայսրության պատմության վերջին շրջափուլում⁴⁵, այսպես կոչված՝ հերետիկոսական համայնքներն (ներառյալ՝ եզդիները, Ահլ-է Հաքք [ուղղության հետեւորդները]⁴⁶ եւ ալավիները⁴⁷) ամենախոցելի խմբերն էին: ԺԹ. դարավերջում եզդիներն այլեւս չէին բնակվում Օսմանյան Թուրքիայի արեւելյան ծայրագավառների պայմանական բնակավայրերում: Հալածանքների, աքսորների ու բռնի կրոնափոխության ներքին արդյունքում նրանք տեղահանվեցին եւ սփռվեցին Օսմանյան կայսրության հարավարեւելյան ու արեւելյան նահանգներում⁴⁸:

ԺԹ. դարում եւ Ի. դարասկզբում օսմանյան նահանգների ժողովրդագրական պատկերը վիճարկելի է հատկապես եզդիների պարագայում: Հարավարեւելյան ծայրագավառների առնչությամբ վիճակագրական ստույգ տեղեկությունների հավաքագրումը շատ բարդ է ոչ միայն սկզբնաղբյուրների անբավարար քանակության, այլեւ՝ դրանց սահմանների փոփոխության պատճառներով⁴⁹: Այնտեղ, որտեղ հնարավոր են սկզբնաղբյուրների համեմատությունները, տարամիտումներն ակն-

⁴³ Սուլյն հատվածում հոգվածագիրն օգտագործել է «ճանաչել, ընդունել» բառը, սակայն հաշվի առնելով հայերենի լեզվամտածողության որոշ առանձնահատկություններ՝ նախընտրել ենք այն փոխարինել «հիշատակում» բառով (ծնթ. թրգմ.):

⁴⁴ Ինչպես նշել ենք սույն հոգվածի սկզբնամասում՝ Իրաքում եզդիների հավաքական երկու քաղաքներ հարձակման են ենթարկել 2007 թվականին, որը համարվում է 73-րդ ֆիրմանը: 2014 թ. Սինջարում կազմակերպված հալածանքները դիտվում են իբրեւ 74-րդ ֆիրման:

⁴⁵ Այն ընդգրկում 1789–1918 թթ. միջակայքի պատմությունը (ծնթ. թրգմ.):

⁴⁶ «Ահլ-է Հաքք» եզրույթը թարգմանվում է իբրեւ «ճշմարտության ժողովուրդ»: Հայտնի է նաեւ «Յարսան» անվանումը: Մահմեդականության ճյուղերից մեկի՝ շիականության ներսում ԺԴ. դարում սկզբնավորված գաղտնագիտական (էզոթերիկ) բնույթի համադրական մի ուսմունք, որը տարածված է Իրանի արեւմտյան հատվածում եւ Իրաքի արեւելքում՝ հիմնականում քրդերի շրջանում (ծնթ. թրգմ.):

⁴⁷ Ալավիները շիականության մի ուղղություն են: «Ալավի» անվանումը ստացել են Ալի խալիֆի անունից, որին համարում են աստծու մարմնավորում: Իրենց երկրորդ անվանումը՝ «Նուսայրիներ», ստացել են Մուհամմադ իբն Նուսայրի (887 թ.) անունից, որն այս ուղղության հիմնադիրն է: Սուլյն ուսմունքի հետեւորդները հիմնականում բնակվում են Սիրիայում (Լաթակիա, Տարսուս), Հարավային Թուրքիայում (Անտիոք, Տարսոն, Ադանա) եւ Հյուսիսային Լիբանանում (ծնթ. թրգմ.):

⁴⁸ Տե՛ս R. LESCOT, նշ. աշխ., 1938, էջ 129:

⁴⁹ Տե՛ս U. Ü. ÜNGÖR, The Making of Modern Turkey: Nation and State in Eastern Anatolia, 1913–1950, Oxford: Oxford University Press, 2011, էջ 16 եւ էջ 31 շրնկ. (հղումները):

հայտ են դառնում⁵⁰, քանի որ հասանելի աղբյուրներն ու համապատասխան գնահատականները ոչ միշտ են ներառում տվյալ շրջանների ազգատոհմիկ եւ կրոնական բոլոր խմբերը: Եզդիները հաճախ ընդհանրապես չեն հիշատակվում, կամ առկա աղբյուրները մյուս՝ առավել փոքր ազգատոհմիկ եւ կրոնական համայնքների հետ միասին նրանց եւս դասում են միեւնույն կարգի ներքո:

Քանի որ եզդիները, հիմնականում, անասնապահներ էին, որոնք զբաղվում էին արոտային հովվությամբ, նրանց հաշողվում էր առավել հեշտությամբ խուսափել գրանցումից, քան՝ քաղաքային կամ գյուղական նստակյաց բնակչությանը⁵¹: Եզդիների համար գրանցումը, ինչպես կտեսնենք, ոչ միայն վերահսկողություն եւ հարկում էր նշանակում, այլև՝ բռնի մահմեդականացման ենթարկում:

Վերջին հարյուրամյակի ընթացքում պատերազմների, դաժան լածանքների, ատելության եւ արտաքսման, ինչպես նաեւ՝ տնտեսական գործոնների պատճառներով զգալիորեն փոխվել են եզդիների ավանդական բնակության վայրերը: Հատկապես վերջին տասնամյակի ընթացքում ներկայիս մեկ միլիոն եզդիները վերապրել են մեծ ծավալների հասած անդրազգայնացումը: Եզդիական ազգաբնակչության 70 տոկոսը

⁵⁰ Տե՛ս J. LEPSIUS, Der Todesgang des Armenischen Volkes. Bericht über das Schicksal des Armenischen Volkes in der Türkei während des Weltkrieges, Potsdam: Tempelverlag, 1919: Չնայած Յոհանես Լեփսիուսի հաշվարկների համաձայն՝ էրզրումում ապրել է 3000 (անդ, էջ 34), Դիարբեքիրի վիլայեթում՝ 4000 (անդ, էջ 74), Վանում՝ 5400 (անդ, էջ 77) եւ Բիթլիսում՝ 5000 եզդի (անդ, էջ 112), այնուամենայնիվ առկա չեն մասնահատուկ աղբյուրների հղումները: Քրիստոնյա ազգաբնակչության թվաքանակը կարող է առավել ճշգրիտ լինել, որը պայմանավորված է քաղաքագործային համակարգով, զուգորդված զինապարտությանը եւ գրավոր մշակույթ ունենալու ընդհանուր ավանդույթով: Համեմատության համար նշենք, որ, օրինակ, Վ. Քյուլինեն ընդհանրապես չի հիշատակում էրզրումի վիլայեթի եզդիներին (տե՛ս V. CUINET, La Turquie d'Asie. Géographie Administrative. Statistique descriptive et Raisonnée de chaque province de l'Asie — Mineure, Paris: Ernest Leroux, 1891): Ի հավելումն՝ նշենք նաեւ, որ բնագրում կիրառված «militia» բառը, ըստ համատեքստի իմաստային հարմարության, թարգմանել ենք «քաղաքագործ[ային] համակարգ», «հեծելագունդ», «զորագունդ» եւ «ազգային պահակագունդ» իմաստներով (ծնթ. թրգմ.):

⁵¹ Թե՛ս Լեփսիուսը Դիարբեքիրի նահանգում հաշվում էր 4.000 եզդի, այդուհանդերձ 1913 թ. Դիարբեքիրի վիլայեթի օսմանյան ժողովրդագրական վիճակագրության տվյալներում նրանք ընդհանրապես հաշվառված չեն (տե՛ս Ս. Ս. ÜNGÖR, նշ. աշխ., 2011, էջ 16 եւ էջ 35): Տեղեկությունների պակասության կամ հակասականության պատճառները բազմաթիվ են: Զինվորագրության ընթացքում [նրանց]՝ որպես մահմեդականների պատահական հաշվառումը քողարկում էր մահմեդականացման գործընթացները, որոնք չեղարկվում էին, եթե թույլ էր տալիս իրավիճակը, կամ կրոնափոխությունները, որոնք կրում էին տեւական բնույթ, քանի որ հարկադրանքով էին իրագործվում:

դեռեւս ապրում է Իրաքում: Սինջարի նահանգի եզդիներն այսօր հիմնականում ներքին տեղահանության ենթարկվածներն⁵² են, մինչդեռ Տիգրիս գետից արեւելք ընկած շրջաններում (Դուհլիս⁵³, Շեյխան⁵⁴) բնակվող եզդիական համայնքները չեն տեղահանվել⁵⁵: Թուրքիայի եւ Սիրիայի գրեթե բոլոր եզդիները ստիպված են եղել գաղթել եւ ապաստան փնտրել Եւրոպայում (հատկապես՝ Գերմանիայում, Սկանդինավիայում եւ Ֆրանսիայում): Խորհրդային Միության փլուզումից հետո տնտեսական վիճակի վատթարացումից խուսափելու նպատակով Հայաստանի հին եզդիական սփյուռքը արտագաղթելու համար Ռուսաստանը նույնպես դարձրել է թիրախային երկիր: Ներկայումս անդրազգային եզդիական համայնքների վերաբերյալ առկա չէ հավաստի որեւէ տեղեկություն, թեեւ հասարակական կազմակերպություններն ու փաստաբանական խմբերն իրականացրել են գնահատման որոշ աշխատանքներ:

ԵԶՊԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ի. դարասկզբին եզդիներն ապրում էին իրենց սեփական կամ խառն ազգաբնակչություն ունեցող գյուղերում, հիմնականում՝ օսմանյան նահանգների՝ Կարսի, Իգդիրի, Վանի, Դիարբեքիրի, Մարզինի եւ Բիթլիսի (ներկայիս Թուրքիա) հեռավոր շրջաններում⁵⁶, Սինջարի ու Շեյխանի

⁵² Սուլեյի առնչությամբ տե՛ս 22-րդ ծնթ. (ծնթ. թրգմ.):

⁵³ «Դուհլիս»-ը հայտնի է նաեւ հետեւյալ անուններով՝ «Ադիաբեն», «Նոհատրա», «Նուխարրա» եւ այլն: Սուլեյ երկրամասը գտնվել է Մեծ Հայքի եւ Միջագետքի սահմանագլխին: Ն. Ադոնցի կարծիքով դրա տարածքի մի մասից էր կազմված հին Հայաստանի Նոշիրական կամ Նոր Շիրական բեզդիսությունը (սուլեյի առնչությամբ տե՛ս Թ. Խ. ՀԱՅՈՒՐՅԱՆ, Ս. Տ. ՄԵԼԻՔ-ԲԱՆԵՅԱՆ, Հ. Խ. ԲԱՐՍԵՂՅԱՆ, Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 1-ին, Երեւան, 1986, էջ 33–34: Հմմտ. «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան», հտ. 4-րդ, էջ 11 եւ էջ 36՝ ծնթ. թրգմ.):

⁵⁴ Շեյխանի առնչությամբ տե՛ս անդ, էջ 103 (ծնթ. թրգմ.):

⁵⁵ 2014 թ. օգոստոս ամսին Իրաքի եւ Սիրիայի Իսլամական Պետության զրոհայինները հարձակվել են Նինվեի հարթավայրերում գտնվող Բաշիքահ եւ Բահզանի փոքր քաղաքների վրա: Նախկինում քրիստոնեական-եզդիական այս երկու քաղաքների խառն ազգաբնակչությանը հաջողվել է ապաստան գտնել [այլ վայրերում]: Ավերվել են եկեղեցիներն ու եզդիական տաճարները: Թեեւ քրդական փեշմերգան (քրդ.՝ Pêşmarge, այսինքն՝ «դեպի մահ գնացողներ», «մահի երեսին նայողներ»․ Իրաքյան Քուրդիստանի քրդական զինյալ զորամիավորումների ամբողջական անվանումը՝ ծնթ. թրգմ.) 2016 թ. ազատագրել է հիշյալ քաղաքները, այդուհանդերձ նախկին բնակիչները վարանում են այնտեղ վերադառնալու հարցում (տե՛ս T. SCHMIDINGER, Werden die Olivenbäume wieder wachsen?, in: “Wiener Jahrbuch für Kurdische Studien”, Band 5, heraus. von K. Brizić, A. Grond, Ch. Osztovcics, T. Schmidinger, M. Six-Hohenbalken, Wien, 2017, էջ 255–256):

⁵⁶ Տե՛ս B. AÇIKYILDIZ, նշ. աշխ., 2014:

նահանգներում (այժմ՝ Իրաք), ինչպես նաեւ Աֆրիկայում (ներկայիս Սիրիա)։ Երբ Առաջին համաշխարհային պատերազմի ստվերի տակ սկսվեցին ցեղասպանական հալածանքները, զանգվածային սպանդն ու տեղահանությունները թիրախավորեցին ոչ միայն քրիստոնեական տարբեր համայնքներին, այլ նաեւ՝ նրանց եզդի հարեւաններին։ Վանի ու Դիարբեքի ճյուղում բնակվածների համար Կովկասում ապաստան գտնելը ցեղասպանությունից փրկվելու միակ տարբերակն էր։ Վանի հարավում, օրինակ, Կարադաշլու⁵⁷ եւ Ռումկալեում⁵⁸ ապրած եզդիները փախուստի են դիմել դեպի հարավ՝ Իրաք եւ ճյուղասպան Սիրիա։

Օսմանյան եւ Ռուսական կայսրությունների միջեւ սահմանամերձ շրջանների համար պայքարն սկսվել է դեռեւս ԺԶ. դարավերջից. մինչեւ Ի. դարասկիզբը այն տասներեք պատերազմի պատճառ է դարձել։ Հայերից եւ հույներից բացի՝ սահմանամերձ շրջաններում կամ դրանց մերձակաքում ապրող քրդերն ու եզդիները նույնպես փորձել են ձեռք բերել նրանց աջակցությունն ու հավատարմությունը եւ սույն պատերազմին զոհ դարձել։ Այսպիսով, եզդիական ու քրդական ցեղային միությունները հաճախ էին փոխում կողմերին կամ փորձում էին չեզոքություն պահպանել⁵⁹։ ԺԹ. դարասկզբից ճյուղասարեւելյան Անատոլիայի նահանգներում ապրող եզդիները սկսեցին խուսափել այս պատերազմից՝ բնակություն հաստատելով այն ժամանակ Ռուսական կայսրության կազմում գտնվող Հայաստանի գյուղերում, որտեղ բռնի դավանափոխությունը սպառնալիք չէր։ Առաջին համաշխարհային պատերազմի ողջ ընթացքում շարունակվում էր սահմանային գոտիների համար պայքարը։

⁵⁷ Գտնվում է Վան նահանգի հարավային հատվածում, Հեքյարի կամ Հաքյարի գավառում (սույն գավառի մասին տես Թ. Խ. ՀԱԿՈՐՅԱՆ, ՍՏ. Տ. ՄԵԼԻՔ-ԲԱԽՇՅԱՆ, Հ. Խ. ԲԱՐՍԵՂՅԱՆ, Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 3-րդ, Երեւան, 1991, էջ 397 եւ էջ 410՝ ծնթ. թրգմ.)։

⁵⁸ Գավառակ Հալեպի նահանգի Ուրֆայի գավառում։ Հայտնի է նաեւ «Հռոմկալի գավառակ», «Ռումկալե», «Ուրումկալա» եւ այլ անուններով։ ԺԲ.-ԺԳ. դարերում մտնում էր Կիլիկիայի Հայկական թագավորության մեջ։ Կենտրոնը Հռոմկալ բերդն (ավանն) էր (տես Ա.Ն.Գ., էջ 456, ինչպես նաեւ՝ «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան», հտ. 4-րդ, էջ 451՝ ծնթ. թրգմ.)։

⁵⁹ Տես, օրինակ, W. JWAIDEH, Kurdish Nationalist Movement: Its Origins and Development, New York: Syracuse UP, 2006, հատկապես՝ էջ 117 շրնկ., իսկ Ռուսաստանի հետ քրդական ցեղերի համագործակցության առնչությամբ՝ J. KLEIN, The Margins of Empire: Kurdish Militias in the Ottoman Tribal Zone, Stanford: Stanford UP, 2011, էջ 161, 171 շրնկ. եւ էջ 220, ինչպես նաեւ՝ N. ABDULLA, Empire, Frontière et tribu. Le Kurdistan et le conflit de frontière turco-persan (1843–1932), Iraq: Editions de la Direction culturelle de la presse & le Centre de Zheen, 2013։

Առաջին աշխարհամարտի տարիներին մոտ 12 000 եզդի կարողացավ օսմանյան՝ Կարսի եւ Իզմիրի սահմանամերձ շրջաններից, ինչպես նաեւ՝ Վանի պես առավել հեռավոր մարզից փախչել Հայաստան⁶⁰։ Նրանց հաջողվեց եզդիական համայնքներ հիմնել 40 գյուղում, որոնք բնակեցված էին բացառապես եզդիներով, ինչպես նաեւ՝ գյուղական այլ համայնքներում, որտեղ նրանք կողք-կողքի ապրում էին հայ հարեւանների հետ։ Նրանք նաեւ տներ են կառուցել քաղաքային կենտրոններում։ [Նրանց]՝ դեպի Հայաստան փախուստի արդյունքում ձեւավորվեց սփյուռքային համայնքը, որը հետագայում Խորհրդային Միության համափակ սահմանների պատճառով կտրված էր նախկին հայրենիք(ներ)ում ապրող եզդիներից։ Հայաստանի Խորհրդային Հանրապետությունում եզդիներին շնորհվեց մշակութային գործունեության իրավունք (լրատվական միջոցներ, լեզվի ուսուցում), իսկ հետխորհրդային ժամանակների Հայաստանում նրանք պաշտոնապես ճանաչվեցին որպես ազգատոհմիկ-կրոնական համայնք⁶¹։ Փրկվածների՝ գոյության միջոցներ ստեղծելուն եւ դրանք պահպանելուն, ինչպես նաեւ՝ իրենց խիստ բարդ հասարակական դասակարգային համակարգը վերահաստատելուն ուղղված ջանքերը գործադրվել են միջպատերազմյան ողջ ընթացքում⁶²։

Շարունակությունը՝ հաջորդիվ

⁶⁰ Պաշտոնական վիճակագրության համաձայն՝ 1830 թ. Հայաստանի տարածքում հաշվվում էր մոտ 324 եզդի, որոնք հիմնականում բնակվում էին Թուրքիայի սահմանամերձ գյուղերում։ Մինչեւ 1926 թ. նրանց թիվը հասել է 12.237-ի (տե՛ս «Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնություններն այսօր», խմբ.՝ Յ. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ, Երեւան. Գիտություն, 2000, էջ 28 շրնկ.)։ Մինչ Խորհրդային Միության փլուզումը՝ 1989 թ. գրանցված էր մոտ 56 976 եզդի։ ԺԹ. դարում Երեւանի նահանգում եզդիական բնակավայրերի պատմության առնչությամբ տե՛ս M. ANGELOVA, Yezidis in the Yerevan Gubernia (Province) after the Russo-Ottoman War (1877–1878), “Balkanistic Forum”, vol. 3: “Emigrants and Minorities. The Silenced Memory of the Russo-Ottoman War 1877–1878”, ed. by D. Gutmeyr, 2015, էջ 118–126։

⁶¹ Սուլեյի առնչությամբ տե՛ս I. SCHULZE & W. SCHULZE, նշ. աշխ., 2016։

⁶² Եզդիական գյուղեր կազմավորվել են Արագած լեռան շրջակայքում՝ Ապարանի ու Թալինի տարածաշրջանում, ինչպես նաեւ Արարատյան դաշտավայրում։ Նորաստեղծ գյուղերից մի քանիսը բնակեցված էին միայն եզդիներով, իսկ մյուս վայրերում, օրինակ, Արարատյան դաշտավայրում, առկա էին էթնիկապես համակցված գյուղական բնակավայրեր՝ հայ ու եզդի ազգաբնակչությամբ։ 1960-ական թթ. եզդիական գյուղական համայնքներ կարելի էր գտնել Ապարանի, Աստարատի, Զանգիբազարի (այժմ՝ Մասիս՝ ծնթ. թրգմ.), Թալինի, Հոկտեմբերյանի եւ Վաղարշապատի շրջաններում, որտեղ նրանք ձեւավորել էին կոլտնտեսություններ, մի քանիսը՝ էթնիկ խառը բնակչությամբ (տե՛ս A. BENNIGSEN, Les Kurdes et la kurdologie en Union soviétique, in: “Cahiers du monde russe et soviétique”, vol. 1, № 3, 1960, էջ 513–530, հատկապես՝ էջ 515)։

ԽՈՍՔ ԹԱՐԳՄԱՆՉԻ

Ծաղկաքաղ հատվածների ներկա թարգմանությունը Թուրքիայի Տուր Աբդին երկրամասում ապրած ասորախոս համայնքների 1915 թ. Ցեղասպանության (ասոր՝ ܣܝܦܐ/Sayfo/Seyfo) — բառացի նշանակում է «սուր») մասին է: Կատարել ենք ըստ հետեւյալ հրատարակության՝ “The Persecution and the Extermination in Tur Abdin 1915”, Reports gathered by Chorepiscopus Sleman Henno from Arkah, Tur Abdin, trans. from Syriac into German by A. Gorgis & G. Toro, trans. from German into English by Dr. Jan Jonk, Syriac Orthodox Patriarchate, 2015: Նշյալ գրքի առանձին հատվածների էջերը կնշվեն տողատակերում (ծնթ. թրգմ.): Ցեղասպանական ինչպես եւ հոգեւոր-կրոնական նյութերի վերաբերյալ հնարավորինս մանրամասն տեղեկություններ ենք տրամադրել ճանաչողական կողմն ըստ կարելիւն համակողմանիորեն ապահովելու համար:

ՅՈՒՆԿ ՍԱՐԿԱՎԱԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՏՈՒՐ ԱՐԴԻՆԻ 1915 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ԿՈՏՈՐԱԾԸ

(Զեկույցներ, որ ժողովել է ֆոթեպիսկոպոս Սլեման Հեմնոն...)

ԱՐԱՄԵԱՑԻՆԵՐԸ Ա. ԴԱՐՈՒՄ¹

Տուր Աբդինի² ասորա-արամեական բնակչությունն [իրենց ազգային ավանդույթամբ] սերում է Նոյի որդու՝ Սեմի ցեղից։ Նրանք ժառանգներն են Միջագետքի հնագույն ազգերի, որոնք մարդկությանը տվել են քաղաքակրթություն, գիտություն ու արվեստ, եւ որոնք վերացրել են տգիտությունը հին աշխարհից։ Հետագայում նրանք իրենց գիտելիքները փոխանցել են պարսիկներին ու արաբներին։ Նրանց քաղաքակրթությունն այն օրինակն էր, որին պետք է հետեւեին հույներն ու հռոմեացիները։ Նկարչական արվեստն ու քարագործությունը, զարդագործությունը, ջուլհակագործությունը եւ գրագիտությունն այն հմտություններից են, որոնք նրանք ստեղծել ու փոխանցել են մյուս ազգերին։ Միջագետքում կատարված բացահայտումները հաստատել են սույն մշակույթների գոյության փաստը։ Պատմաբաններն ու նշանավոր գիտնականներն արդարացիորեն շատ բարձր են գնահատել այս նվաճումները,

¹ Տե՛ս “The Persecution and the Extermination in Tur Abdin 1915”, 2015, էջ 5։ Արամեախոս բնակչության ցեղասպանության հետ կապված խնդիրների վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս S. DE COURTOIS, The Forgotten Genocide: Eastern Christians, The Last Arameans, Gorgias Press, New Jersey, 2004, եւ J. RHÉTORÉ, Les chrétiens aux bêtes. Souvenirs de la guerre sainte proclamée par les Turcs contre les chrétiens en 1915. Étude et présentation du document par J. Alichoran, Paris, 2005, ինչպես նաեւ՝ D. GAUNT, Massacres, Resistance, Protectors: Muslim-Christian Relations in Eastern Anatolia during World War I, Gorgias Press, New Jersey, 2006, ու “Let Them Not Return: Sayfo — The Genocide against the Assyrian, Syriac and Chaldean Christians in the Ottoman Empire”, ed. by D. Gaunt, N. Atto & S. O. Barthoma, New York - Oxford, 2017՝ ծնթ. թրգմ.)։

² Տուր Աբդինը երկրամաս կամ գավառ է Հայոց (Վերին) Միջագետքում՝ Տիգրիս գետի վերին հոսանքի շրջակայքում, Բաբելի երկրամասի եւ Կաշիյարի լեռան մոտակայքում, որի կենտրոնը Տուր Աբդին քաղաքն է։ Հայտնի է նաեւ Մավդեք, Կաղմուխ, Կատմուխի, Կուղմուխու, Կուլմուխ, Տուն Կաղմուսի, Տուր Աբդին եւ այլ անուններով (տե՛ս Թ. Խ. ՀԱՎՈՐԵԱՆ, ՍՏ. Տ. ՄԵԼԻՔ-ԲԱԽՇԱՆ, Հ. Խ. ԲԱՐՍԵՂՅԱՆ, Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 5-րդ, Երեւան, 2001, էջ 143–144, եւ Թ. Խ. ՀԱՎՈՐԵԱՆ, ՍՏ. Տ. ՄԵԼԻՔ-ԲԱԽՇԱՆ, Հ. Խ. ԲԱՐՍԵՂՅԱՆ, Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 3-րդ, Երեւան, 1991, էջ 705՝ ծնթ. թրգմ.)։

իսկ ասորա-արամեական մշակույթը բնութագրել որպես «թագուհի մշակույթի, մայր մշակության եւ քաղաքակրթության»³։

ՔՐԻՍՏՈՆՅԱ ԱՐԱՄԵԱՑԻՆԵՐԸ

Առաջին դարի սկզբներին մեր Տիրոջ Ավետարանի բարի լուրը Պետրոս եւ Պողոս առաքյալների շնորհիվ հասավ Արեւելքի մայրաքաղաք՝ Անտիոք։ Ի թիվս այլ ազգերի՝ արամեական ժողովուրդը նույնպես քրիստոնեությունն ընդունեց Անտիոքում։ 34—37 թթ. միջակայքում սուրբ Պողոս առաքյալի օգնությամբ Անտիոք քաղաքում հիմնադրվեց սուրբ Պետրոսի առաքելական աթոռը։ Ողջ Արեւելքը՝ մինչեւ Հնդկաստան, հայտնվեց սույն աթոռի իրավասության ներքո։ Մինչեւ Ե. դարի սկիզբը Անտիոքի Սուրբ Աթոռի հովանու ներքո եղել են 12 մետրոպոլիտական եւ 130 եպիսկոպոսական աթոռներ, իսկ Քաղկեդոնի ժողովից (451 թ.) հետո մետրոպոլիտական աթոռների թիվը հասել է 20-ի, իսկ եպիսկոպոսական աթոռների քանակն իջել է 103-ի⁴։

ԱՍՈՐԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅՐԵՐՆ ՈՒ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ⁵

Քրիստոնեության ընդունումից հետո ասորիները կամ արամեացիները գիտություն եւ գրականության բնագավառում ունեցան շատ ավելի մեծ ձեռքբերումներ, քան՝ մյուս ժողովուրդները։ Ասորական ուսումնառության համբավը գերիշխում էր այս աշխարհում ավելի քան տասներեք դար։ Ասորա-արամեական գիտելիքը լուսավորեց ամբողջ աշխարհը, եւ քրիստոնեության բերկրալի ավետիսը տարածվեց մինչեւ Հնդկաստան ու Չինաստան։ Նրանք հիմնեցին եկեղեցիներ ու վանքեր։ Մոտավորապես 1236 թվականին նրանց նախաձեռնությամբ արդեն կառուցված էր շուրջ 20 000 եկեղեցի։ Նրանք հաստատել են նաեւ հարյուրավոր վանական համալիրներ ու ճգնարաններ՝ բնակեցված աշխարհաթող հազարավոր վանականներով եւ մենակյացներով, որոնք զբաղվում էին եկեղեցու համար պատշաճ կանոնների ու օրենքների մշակմամբ։ Ժամանակագրություններից մեկում պահպանվել է մի

³ METROPOLITAN TUMA, SEVERIUS JACOB, Tarikh al-Kanisah al-Suryanieh al-Antakieh (History of the Syrian Church of Antioch), Lebanon, 1953, էջ 12։

⁴ Անդ, էջ 12։

⁵ Տէս «The Persecution and the Extermination in Tur Abdin 1915», 2015, էջ 6—8։

վկայություն, համաձայն որի՝ Եղեսայի շրջակայքի լեռներից մեկի վրա պետք է լիներ 300 վանք, որոնցում Ե. դարի սկզբներին բնակություն էր հաստատել 90 000 ասորի վանական⁶: Իրենց հրեշտակային ճգնաժամային շրջանում նրանք հիմնադրել են ճեմարաններ (ակադեմիաներ), որտեղից դուրս են եկել մեծանուն գիտնականներ, որոնք իրենց նվիրել են Սուրբ Գրոց թարգմանությանն ու դասախոսությունների կազմակերպմանը, եւ որոնք հայտնի են դարձել իրենց աստվածաբանական բազմաբնույթ աշխատությունների շնորհիվ: Բազմաթիվ հանրահայտ գիտնականների շարքում հարկ ենք համարում հիշատակել հետեւյալներին՝ Մոր/Մար Եփրեմ Ասորի⁷ († 373 թ.), Մոր/Մար Հակոբ Սրճեցի⁸ († 521 թ.), Մոր/Մար Փիլոքսենոս Մաբուգեցի⁹ († 523 թ.), Մոր/Մար Հակոբ (Հակուբ) Եղեսայի¹⁰ († 708 թ.), Մոր/Մար Մուշե [Մովսես] Բար Կեփացի¹¹ († 903 թ.) եւ Մոր/Մար Գրիգորիոս Բարհեբրեոս¹² († 1286 թ.): Իրենց հիասքանչ աշխատություններով այս գիտնականները նույնիսկ գերազանցել են հին հույներին: Ասորի ժողովուրդը ծնունդ է տվել ոչ միայն կանոնական ու կրոնական օրենսդրության, այլ նաեւ՝ կանոնական ու աշխարհիկ պատմության ոլորտներում հայտնի մեծ գիտնականների: Դրանից զատ՝ նրանք հավաքել են ասորերենով ու արաբերենով գրված բազմաթիվ կարեւոր ու օգտակար գրքեր: Նրանք շարադրել են նաեւ պարսկական ու հռոմեական հալածանքների ընթացքում սպան-

⁶ Առավել մանրամասն տե՛ս METROPOLITAN TUMA, SEVERIUS JACOB, նշ. աշխ., 1953, էջ 15:

⁷ Ընդհանրական Եկեղեցու նշանավոր հայրապետներից Ս. Եփրեմ Խուրի Ասորին (306–373 թթ.) Հայ Առաքելական Եկեղեցու այն սուրբ հայրերից է, որոնք հայտնի են «երկոտասան վարդապետք» անունով (ծնթ. թրգմ.):

⁸ Ասորի Ուղղափառ Եկեղեցու հայրերից Հակոբ Մաբուգեցին (450/451–521 թթ.) հայ մատենագրության մեջ հայտնի է «Հակոբ Սրճեցի» կամ «Հակոբ Արծվապայի եպիսկոպոս» անուններով (ծնթ. թրգմ.):

⁹ Ասորի Ուղղափառ Եկեղեցու մեծագույն հայրերից Փիլոքսենոս Մաբուգեցին († 523 թթ.) հայտնի է նաեւ «Աքսենայա» եւ «Փիլոքսենոս Հիերապոլսեցի» անուններով: Եռանդուն պալքար է մղել Քաղկեդոնի ժողովական սահմանումների դեմ, ինչի արդյունքում մի քանի անգամ քստորվել է Սիրիայից (ծնթ. թրգմ.):

¹⁰ Ասորի պատմագիր, մեկնիչ, աստվածաբան ու փիլիսոփա Հակոբ Եղեսային (մոտ 633–708 թթ.) է. դարի արեւմտաստորական ավանդության ամենավաղ ներկայացուցիչն է (ծնթ. թրգմ.):

¹¹ Ասորի մատենագիր, աստվածաբան եւ եպիսկոպոս Մովսես Բար Կեփացու (մոտ 833–903 թթ.) (ծնթ. թրգմ.):

¹² Միջնադարյան նշանավոր աստվածաբան, փիլիսոփա, պատմագիր, բժիշկ, քերական, մեկնիչ եւ բանաստեղծ Գրիգոր Բարհեբրեոսը (1226–1286 թթ.) հայտնի է նաեւ Աբուլ Ֆարաջ անունով (ծնթ. թրգմ.):

ված նահատակների ու վկաների հարյուրավոր վարքեր: Այս առումով հայտնի են Յոշվա Ստիլիտը¹³ (Սյունակյաց, † 515 թ.), Հովհաննես Եփեսացին († 587 թ.), Զաքարիա Հոետորը¹⁴ (526 թ.-ից հետո), Մոր/Մար Հակոբ Եդեսացին¹⁵ († 708 թ.), Դիոնիսիոս Տելլ Մահրացին¹⁶ († 845 թ.), Մոր/Մար Միքայել Մեծը¹⁷ († 1199 թ.), Անանուն Եդեսացին (1234 թ.-ից հետո) եւ Մոր/Մար Գրիգորիոս Բարհեբրեոսը¹⁸ († 1286 թ.): Նրանք արժանահավատ հեղինակներ են, եւ անհրաժեշտ է միշտ դրվատել նրանց¹⁹:

Ասորի գիտնականներն ու եկեղեցական հայրերը ազդեցիկ են եղել նաեւ արվեստի մյուս ճյուղերում: Գ. դարասկզբին նրանք սկսեցին ստեղծել ամենագեղեցիկ մեղեդիները եւ այս ոլորտում նրանք աչքի ընկան առավել, քան՝ քրիստոնեական մյուս համայնքները: Նրանք հեղինակել են աղոթքներ բովանդակող ստվարածավալ հատորներ, հունարենից ասորերեն թարգմանել արժեքավոր աշխատություններ, գովասանքի արժանի այնպիսի աշխատանք, որն անհնար է ըստ արժանվույն չգնահատել: Սույն թարգմանություններից շատերի բնագրերը չեն հասել մեզ, մինչդեռ պահպանվել են դրանց ասորերեն բնագրերը: Առաքյալների՝ Ա. դարով թվագրվող բազմաթիվ նամակներից եւ Բ. ու Գ. դարերին վերաբերող առաքելական կանոններից զատ՝ ասորի վարդապետները եբրայեցերենից ասորերեն են թարգմանել նաեւ Սուրբ Գիրքը: Նրանք

¹³ Ե.—Զ. դարերի ասորի մատենագիր: Նրան վերագրվող «Ժամանակագրություն» աշխատությունն ընդգրկում է Ե. դարավերջի եւ Զ. դարասկզբի իրադարձությունները: Արժեքավոր տեղեկություններ է հաղորդում նաեւ Հայաստանի, պարսիկների դեմ հայերի ապստամբությունների մասին (ծնթ. թրգմ.):

¹⁴ Մատենագրության մեջ Զաքարիա Հոետորը (մոտ 465—553 թթ.) հայտնի է նաեւ «Միտիլենացի» անունով (ծնթ. թրգմ.):

¹⁵ Տե՛ս սույն թարգմանության 11-րդ հղումը:

¹⁶ Դիոնիսիոս Տելլ Մահրացու մասին շատ քիչ տեղեկություններ են պահպանվել: Հայտնի է, որ ծնվել է Տելլ Մահրում: Քենեշըրինի վանքում ուսանել է աստվածաբանություն, իրավագիտություն, բանասիրություն եւ փիլիսոփայություն, իսկ հետո ուսումը շարունակել է Կաշլումի Մար Հակոբի վանական դպրոցում: 818—845 թթ. եղել է Ասորի Ուղղափառ Եկեղեցու պատրիարքը (ծնթ. թրգմ.):

¹⁷ Միքայել Ասորին կամ Միքայել Մեծը (1166—1199 թթ.) իր ժամանակի ամենաուսյալ անձնավորություններից մեկն է եղել: 1166 թ. ընտրվել է Ասորի Ուղղափառ Եկեղեցու պատրիարք: Միքայել Ասորու գրական հարուստ ժառանգության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում նրա «Ժամանակագրությունը», որը համառոտ կերպով 1248 թ. թարգմանվել է հայերեն (ծնթ. թրգմ.):

¹⁸ Տե՛ս սույն թարգմանության 13-րդ հղումը:

¹⁹ Տե՛ս METROPOLITAN TUMA, SEVERIUS JACOB, նշ. աշխ., 1953, էջ 16—21:

փոխադրել են նաեւ հունարենով, լատիներենով եւ ղպտերենով ստեղծագործած մեծագույն աստվածաբանների ու մեկնիչների կարեւորագույն աշխատությունները: Դրանց հավելենք իրավունքի ու փիլիսոփայության բնագավառին վերաբերող հեղինակավոր աշխատությունների թարգմանությունները՝ հունարենից: Հույն նշանավոր բժիշկների՝ Գալենի²⁰, Հիպոկրատի եւ Դիոսկորիդեսի²¹ բժշկագիտության վերաբերյալ երկերից բացի՝ նրանք փոխադրել են նաեւ անտիկ շրջանի հույն փիլիսոփաների՝ Սոկրատեսի, Պլատոնի, Արիստոտելի եւ այլոց ասացվածքները, խրատները, իմաստուն մտքերն ու նամակները:

Թարգմանիչները, մեծավ մասամբ, հոգեւոր դասի ներկայացուցիչներ էին: Դ. դարում Եդեսիայի հռչակավոր դպրոցը հունարենի՝ այս փոքրիկ թագավորության պետական ու գրական լեզվի ուսուցումը ներմուծեց իր ուսումնական ծրագրի մեջ՝ այդպիսով հետեւելով այն ուսումնական հանրահայտ հաստատություններին, որտեղ հունարենը դասավանդվել է մինչեւ ԺԲ. դարավերջը: Այսկերպ, հունարենով գրված բոլոր հիմնական աշխատությունները հասանելի դարձան ասորիներին: Է. դարից հետո ասորի գիտնականներն այս անգամ իրականացրին հույն փիլիսոփաների երկերի արաբերեն թարգմանությունները. սույն փոխադրությունները, վերջիվերջո, արաբները տեղափոխեցին Անդալուզիա (Իսպանիա), որտեղ եւրոպացիներն, իրենց հերթին, հաղորդակից դարձան հունական գիտությանը: Դրանք նաեւ հիմք են դարձել ժամանակակից առաջընթացի համար, որը քաջ հայտնի է պատմությանը հետեւող յուրաքանչյուր մեկին: Իրենց եկեղեցիներում եւ վանքերում ասորիները հիմնել են նաեւ բազմաթիվ նշանակալից գրադարաններ: Թեեւ ավարառության արդյունքում այս գրավոր հուշարձանները ցիրուցան են եղել աշխարհով մեկ, այդուհանդերձ արեւելյան եւ արեւմտյան գրադարաններում պահպանվել են բազմահազար օրինակներ, որոնք կազմում են աշխարհի հնագույն հավաքածուները:

²⁰ Նկատի ունի անտիկ բժշկագիտության ռահվիրա, հունական ծագմամբ հին հռոմեական բժիշկ, փիլիսոփա Կլավդիոս Գալենին (հուն.՝ Γαληνός, 131–201 թթ.): Վերջինս հսկայական ավանդ ունի բժշկական բազմաթիվ գիտակարգերի զարգացման բնագավառում՝ ներառյալ կազմախոսությունը, բնախոսությունը, ախտաբանությունը, նյարդաբանությունը, ինչպես նաեւ՝ փիլիսոփայությունն ու տրամաբանությունը (ծնթ. թրգմ.):

²¹ Պեդանիոս Դիոսկորիդեսը (հուն.՝ Πεδάνιος Διοσκορίδης, 40–90 թթ.) հունական ծագմամբ հին հռոմեական դեղաբան, բժիշկ եւ բուսաբան է, որը մոտ 77 թ. հինգ գրքով շարադրել է «De materia medica» (հուն.՝ «Περὶ ὕλης ἱατρικῆς») երկը (ծնթ. թրգմ.):

ԱՍՈՐԻՆԵՐԻ ՀԱՃԱԽԱԿԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՈՒ 1915 Թ.

ԿՈՏՈՐԱԾԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ²²

Շատերին է հետաքրքրում այն հարցը, թե ինչո՞ւ են, ընդհանրապես, տեղի ունեցել հալածանքները:

Հնչեցնում եմ հետեւյալ պատասխանը՝ Իսլամի սկզբնավորումից սկսյալ՝ նրանք թալանել ու կողոպտել են քրիստոնյաներին այնտեղ, որտեղ որ տեսել են այդ հնարավորությունը. Նրանք, հատկապես՝ թուրքերը եւ քրդերը, հայտնի են թե՛ իրենց կարծրասրտությամբ եւ թե՛ իրենց անարդարությանը: Ամեն անգամ, երբ հանգամանքները թույլ են տվել, նրանք սկսել են սպանել, կողոպտել եւ հալածել սարսափելի ձևով: Յուրաքանչյուր դարաշրջան վկայում է նրանց իրագործած կոտորածների մասին: Սուլյին քաջատեղյակ ընթերցողների համար կցանկանայի մատնանշել ջարդերի որոշ դեպքեր, որոնք մեր երկրում իրականացվել են մեր ժողովրդի դեմ: Երբեմն պատմության գրքերը պատմում են դրանց մասին, իսկ շատ բաներ էլ իմանում ենք զրույցներից ու բանավոր ավանդույթից: Ահա՛ ամենակարեւոր տեղեկագրությունները:

Նախ եւ առաջ, հատվածներ են պահպանվել երանելի քահանա Իշայա Բեթ Սբիրինացու²³ († 1425 թ.) պոեմից, որը նա գրել է այն ժամանակ, երբ թուրքերը Միջագետքի գրավման ընթացքում կազմակերպել են [տեղի բնակչության] կոտորածը. «Եղբայրներ, ուժեղ եղեք, որովհետեւ ես պետք է ձեզ պատմեմ արյան լողանքների մասին, որոնք տեղի են ունեցել ձեր ժամանակներում»: Մեկ այլ հատվածում էլ նա հետեւյալն է գրում. «Լաց, ողբ եւ հառաչանք՝ սոսկալի տառապանքի մեջ գտնվող այս ժողովրդի համար: Լաց եւ արտասուք ու ողբագրություն՝ եկեղեցիների ու վանքերի մասին:

Եկեղեցիներն ավերվեցին, եւ բոլոր նրանք, ովքեր ապաստան էին փնտրում այնտեղ, սպանվեցին: Թուրքերը թալանեցին մեզ, իսկ քրդերը կողոպտեցին մեզ. սրբերի դամբարաններից գողացան նրանց ոսկորներն ու նետեցին փողոցները. նրանք պատռեցին նաեւ Սրբազան Գրքերը, հափշտակեցին սրբերի ու մարտիրոսների սրբապատկերները, իսկ հոգեւորականների սուրբ զգեստներից նրանք հագուստներ պատրաստեցին մեղսագործ տղամարդկանց եւ կանանց համար: Եկեղեցիներ-

²² Տե՛ս “The Persecution and the Extermination in Tur Abdin 1915”, 2015, էջ 15–20:

²³ Ասորի քահանա, որի գրական ժառանգությունից պահպանվել է երկու պոեմ, որտեղ մանրամասն նկարագրված են Լենկթեմուրի՝ Տուր Աբդինի շրջակայքում գործած ավերածություններն ու կոտորածը (ծնթ. թրգմ.):

րը, խորաններն ու սրբավայրերը կողոպտվեցին, իսկ մարդկանց կյանքը վերածվեց դժոխքի»:

Ընթերցողին կպատմեմ մեկ այլ կոտորածի մասին, որը Տուր Աբդինում իրագործել են Ամիդի (Դիարբեքիր) կառավարիչ Բիդինը եւ Գզիրայի²⁴ իշխան Շեմդինը: Հոգեւորական Յոհաննոն (Հովհաննես) Բեթ Սբի-րինացին²⁵ սուլն կոտորածը հիշատակում է 1711 թ.-ին (Սելեւկյանների դարաշրջանից²⁶ 2022 տարի հետո): Նա վկայում է, որ արցունքներով է գրի առել այն ամենը, ինչ արել են այս ոճրագործները. նրանք սպանել են առաջնորդներին ու քահանաներին եւ հեղել հավատացյալների ու սարկավագների արյունը: Չարագործները հավաքվել են հոկտեմբերի սկզբին եւ եկել Տուր Աբդին՝ կողոպտելու, սպանելու եւ եկեղեցիները քանդելու համար: [Այդ նպատակի իրագործման համար] նրանք իրենց շուրջն են համախմբել հազարավոր մարդկանց:

Ամիդից (Դիարբեքիր) դեպի Տուր Աբդին տանող ճանապարհին Բիդինը սպանել է բոլորին, ում հանդիպել է: Բոթի²⁷ գյուղում նա կոտրել է Մոր Աֆրեմ (Նիրեմ) եկեղեցու Ս. Սեղանը եւ ոչնչացրել ամբողջ գյուղը: Զագ²⁸ գյուղում նա հրամայել է հողին հավասարեցնել տեղի Մոր Դիմեթ եկեղեցին:

²⁴ Քաղաք (բերդաքաղաք, ավան) Հայոց Միջագետքում՝ Տիգրիսի ձախակողմյան խաբուր վտակի գետաբերանից հյուսիս-արեւմուտք (առավել մանրամասն տե՛ս «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան», հտ. 1-ին, էջ 856՝ ծնթ. թրգմ.):

²⁵ Հովհաննես Բեթ Սբիրինացի († 1729 թ.)՝ ասորի հոգեւորական (ծնթ. թրգմ.):

²⁶ Հուլյանների դարաշրջանը Սելեւկյան թագավորության ժամանակաշրջանն է, որը սկսվում է Ք. ա. 312 թ. հոկտեմբերի 1-ից: Այդ ժամանակահատվածում Միջագետքը գտնվում էր սելեւկյանների տիրապետության տակ, իսկ Նեզեսիայում փաստաթղթերը սկսել են գրել ասորերենով: Մինչ վերջերս բոլոր տեղեկագրություններում կիրառվել է տոմարական սուլն հաշվարկը (տե՛ս էնգրյու Պալմերի Ներածությունը՝ հետեւյալ հրատարակության առիթով՝ H. HOLLERWEGER, Lebendiges Kulturerbe Tur Abdin, Linz: Freunde der Tur Abdin, 1999, էջ 34):

²⁷ Սուլն տեղանվան հայերեն տարբերակն է «Բաթանի»: Գյուղ՝ Արեւմտյան Հայաստանում, Դիարբեքիրի նահանգի Դիարբեքիրի գավառում՝ Միդիադ կամ Միդյաթ քաղաքից 15 կմ դեպի հյուսիս-արեւելք (տե՛ս «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան», հտ. 1-ին, էջ 549՝ ծնթ. թրգմ.):

²⁸ Հայկական աղբյուրներում սուլն գյուղը համարվում է քաղաք՝ «Զագաբուհ» (այժմ՝ Իզբիրակ) անունով: Այն գտնվում է Դիարբեքիրից հյուսիս-արեւելք: Հիշատակված է ասորական սեպագիր արձանագրություններում (տե՛ս «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան», հտ. 2-րդ, էջ 257՝ ծնթ. թրգմ.): Համաձայն հնագույն վկայությունների՝ Ասորեստանի արքա Աշուրնասիրպալ Բ.-ն (Ք. ա. 883–859 թթ.) Ք. ա. 879 թ. Նաիրի երկրի դեմ կազմակերպած արշավանքի ճանապարհին իր ռազմական ճամբարը տեղակայել է հենց այս բնակավայրում (տե՛ս A. PALMER, Monk and Mason on the Tigris Frontier: The Early History of Tur Abdin, Cambridge University Press, 1990, էջ 1, 29՝ ծնթ. թրգմ.):

Նա ոչնչացրել է այլ գյուղեր ու եկեղեցիներ՝ եւս եւ վերացրել ընտանիքներ։ Նիդոմից²⁹ Օտան³⁰ հրի է մատնել ամեն բան։ Այս սարսափազդու աղետի ընթացքում նույնիսկ նորածինները, երեխաներն ու կանայք են սպանդի ենթարկվել։ Եւ այսպէս նրանք շարունակել են թալանել ու սպանել հիսուն օր։

Մեկ այլ կոտորած կազմակերպել է քրդական Ռեւանդուզ³¹ գյուղի քուրդ կառավարիչ Մուհամմադ Փաշան³², որը հայտնի է նաեւ «Mir Kur [կամ՝ Mirê Kor]», այսինքն՝ «կույր իշխան» մականունով։ Նրան են միացել նաեւ Սաֆդին³³ իշխանն ու Բոհթանի տիրակալ Բեդիր Խան Բեյր³⁴։ Ազեխի³⁵ (այժմ՝ Իդիլ) եպիսկոպոս Գիվարգիսը³⁶ վերոհիշյալ կոտորա-

²⁹ Սուլեյ քաղաքի մասին չհաջողվեց որեւէ տեղեկություն գտնել, այդ իսկ պատճառով հայերեն թարգմանության մեջ տառադարձել ենք լատինատառ անվանումը (ծնթ. թրգմ.):

³⁰ Սուլեյ բնակավայրի մասին չհաջողվեց որեւէ տեղեկություն գտնել, այդ իսկ պատճառով հայերեն թարգմանության մեջ տառադարձել ենք լատինատառ անվանումը (ծնթ. թրգմ.):

³¹ Գտնվում է Հայոց Միջագետքում, Եդեսիայի շրջանում (առավել մանրամասն տե՛ս Թ. Խ. ՀԱՊՈԲՅԱՆ, Ս. Տ. ՄԵԼԻՔ-ԲԱԽՇՅԱՆ, Հ. Խ. ԲԱՐՍԵՂՅԱՆ, Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 4-րդ, Երեւան, 1998, էջ 439, 443՝ ծնթ. թրգմ.):

³² Սորանի քրդական էմիրության (1813–1838 թթ.) իշխան Մուհամմադ Փաշան (1783–1838 թթ.), ասորիների ջարդերից զատ, կազմակերպել է նաեւ եզդի ազգաբնակչության կոտորածները (տե՛ս A. H. LAYARD, Nineveh and Its Remains: With an Account of a Visit to the Chaldaean Christians of Kurdistan, and the Yezidis, Or Devil-Worshippers, and an Enquiry Into the Manners and Arts of the Ancient Assyrians, v. 1, London, 1849, էջ 275–277 շրնկ., ինչպէս նաեւ՝ A. Hirmis, Assyrians, Kurds, and Ottomans, Intercommunal Relations on the Periphery of the Ottoman Empire, New York, 2008, եւ այլն՝ ծնթ. թրգմ.):

³³ Բոհթանի քրդական էմիրության տիրակալ. հայտնի է նաեւ «Սեյֆեդին» կամ «Սաֆդին» անուններով։ Իշխել է Բեդիր Խան Բեյից առաջ։ Ի տարբերություն սուլեյ էմիրության մյուս ներկայացուցիչների՝ նրա մասին առկա տեղեկությունները սակավ են (տե՛ս B. HENNING, Narratives of the History of the Ottoman-Kurdish Bedirhani Family in Imperial and Post-Imperial Contexts: Continuities and Changes, “Bamberger Orientstudien”, Band 13, University of Bamberg Press, 2018, էջ 95–96՝ ծնթ. թրգմ.):

³⁴ Բոհթանի քրդական էմիրության վերջին իշխանը (1821–1847 թթ.), որը եռանդուն մասնակցություն է ունեցել 1830–1840-ական թթ. կազմակերպված ասորի ու եզդի ազգաբնակչության ջարդերին։ Դրանից զատ՝ փորձել է բռնի մահմեդականացնել եզդիական համայնքներին (տե՛ս M. VON BRUNNEN, Agha, Shaikh and State: The Social and Political Structures of Kurdistan, London & New Jersey, 1992, էջ 177–182, եւ S. WINTER, The other Nahdah: The Bedirxans, the Millis and the tribal roots of Kurdish nationalism in Syria, “Oriente Moderno” 25 (86), № 3, 2006, էջ 461–474: Հմմտ. “Bamberger Orientstudien”, Band 13, 2018, էջ 64–121՝ ծնթ. թրգմ.):

³⁵ Ազեխը Արեւմտյան Հայաստանի հնագույն գյուղերից մեկն է, որը գտնվում է Սղերդ քաղաքից մոտ 70 կմ հարավ-արեւմուտք, Բազաբդայի շրջակայքում (տե՛ս «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան», հտ. 1-ին, էջ 43): Հնում հայտնի է եղել նաեւ «Բեթվաբդե» անունով (անդ, էջ 643): Այն հիմնականում բնակեցված է եղել ասորիներով (ծնթ. թրգմ.):

³⁶ Ասորի Ուղղափառ եկեղեցու բարձրաստիճան այս հոգեւորականի մասին առավել մանրամասն տե՛ս I. A. BARSOUM, նշ. աշխ., 2003, էջ 521–522 (ծնթ. թրգմ.):

ծի առնչությամբ գրել է մի պոեմ, որից ընտրել ենք հետեւյալ տողերը. «1837 թ. տեղի ունեցավ հետեւյալ աղետը: Քուրդ առաջնորդն իր շուրջը հավաքեց որոշ մարդկանց, ասպատակեց Ալքոշը³⁷, պատերազմեց ասուրիների դեմ, իր սրով սպանեց մարդկանց, կալանավորեց հազարավորներին եւ լռեցրեց եկեղեցիների ու վանքերի աստվածային մեղեդիները»:

Նա շարունակում է պատմել, թե ինչ է տեղի ունեցել տվյալ շրջանի կենտրոն Բեթ Զաբդայ³⁸ քաղաքում (այժմ՝ Իդիլ): Նա նկարագրում է երեխաների, երիտասարդների, հոգեւորականների, Սիմոն (Շեմուն) քահանայի, Աբեդ Յեշու, Մուրադ (ով հմուտ էր գիտության ու պատմության ոլորտներում) եւ Բեհնամ սարկավագների կոտորածը: Երիտասարդ տղաներն ու աղջիկները սպանվել են, իսկ դուստրերը՝ մատնվել գերության: Եւ այս մասին բանաստեղծն է խոսում՝ ողբալով Իդիլ քաղաքի համար. «Վայ քեզ, Բեթ Զաբդայ, աշխարհն ահաբեկված է: Ինչպե՞ս կարող էիր մեկ ժամվա ընթացքում ընկղմվել դժբախտության մեջ: Մեկ օրում ականատեսը եղար երկու հարյուր տղամարդկանց կոտորածին: Արհավիրք, որ բառերով անկարելի է նկարագրել»:

[Այնուհետեւ] բանաստեղծը փոխում է իր նյութը՝ Ազեխի (այժմ՝ Իդիլ) փոխարեն կենտրոնանալով արդեն Հսֆեսի³⁹ վրա, եւ նկարագրում այնտեղ տեղի ունեցած դառը, սրտամորմոք տեսարանները: Այս գյուղում սպանվել է ութսուն մարդ, այդ թվում նաեւ՝ նրանց առաջնորդ Արբոն, որը սարկավագ էր, եւ Ազիզ անունով մի քահանա: Մեր բանաս-

³⁷ Ալքոշը (նաեւ՝ Ալկոշ կամ Ալքուշ) քաղաք է Հյուսիսային Իրաքի Նինվեի հարթավայրում եւ գտնվում է Մոսուլ քաղաքից 45 կմ հյուսիս: Տեղաբնակները հիմնականում ասուրիներ են, որոնք Քաղղեական կաթոլիկ եկեղեցու հետեւորդներ են (քաղաքի եւ անվան ստուգաբանության առնչությամբ տես A. J. MACLEAN, Dictionary of the Dialects of Vernacular Syriac, Oxford, 1901, էջ 13 b, եւ D. WILMSHURST, The Ecclesiastical Organisation Of The Church Of The East, 1318—1913, “Corpus Scriptorum Christianorum Orientalium”, v. 582, sub. t. 104, Lovanii, 2000, էջ 258—259, ինչպես նաեւ A. HIRMIS, նշ. աշխ., 2008, էջ 36, եւ այլն՝ ծնթ. թրգմ.):

³⁸ Բեթ Զաբդայ քաղաքի հայերեն անվանումն է «Բեթզաբդե»: Հայտնի է նաեւ «Գզիրա» անվամբ (տես «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան», հտ. 1-ին, էջ 643, 856՝ ծնթ. թրգմ.):

³⁹ Ասորական եւ ասուրական գյուղ ներկայիս Թուրքիայի Շիրնակ/Շրընաք նահանգի Իդիլի շրջանում (գյուղի, այնտեղ պահպանված վանքերի եւ պատմական հուշարձանների առնչությամբ մանրամասն տես P. KRÜGER, Das Syrisch-Monophysitische Mönchtum Im Tūr‘Ab(h) dīn’, “Orientalia Christiana Periodica”, vol. IV, № 1—2, Roma, 1938, էջ 5—46, հատկապես՝ էջ 34—35, եւ G. BELL & M. M. MANGO, The Churches and Monasteries of the Tūr‘Abdin, London: Pindar Press, 1982, էջ 131—132, ինչպես նաեւ H. HOLLERWEGGER, նշ. աշխ., 1999, էջ 204—209, եւ D. GAUNT, նշ. աշխ., 2006, էջ 215—216: Հմմտ. “Way of Teaching”, ed. by Mor T. G. Saliba, 2nd edition, Mount Lebanon, 2007, էջ 130՝ ծնթ. թրգմ.):

տեղծը ողբում է կատարվածի համար եւ գրում հետեւյալը. «Հուսահատությամբ ու ցավով ես արտասովում եմ գերության մատնված կանանց, ինչպես նաեւ՝ տղաների ու աղջիկների համար, որոնց մերկացրել էին ամբարիշտները»:

Եւ նրանք սպանում էին բոլոր նրանց, ովքեր հանդիպում էին իրենց ճանապարհին, գողանում էին նրանց հարստությունն ու ունեցվածքը եւ հրի մատնում գյուղերը: Բնակիչները փախչում էին տարբեր վայրեր, նրանց գրքերը պատառոտվում ու նետվում էին փողոցները: Նրանք մեծ կոտորած կազմակերպեցին նաեւ Մոսուլի մերձակայքում, որտեղ այրեցին եզդիներին: Այլ դժբախտություններ էլ տեղի ունեցան Շալխանի⁴⁰ գյուղերում: Սպանվում է Ալի բեյը՝ եզդիների առաջնորդը: 1836 թ. նրան բռնում են Բաղդադից ժամանած Ալի Փաշայի զինվորները, եւ Կ. Պոլսից եկած Ռաշիդ Փաշան հետագայում նրան, որպես բանտարկյալի, տեղափոխում է մայրաքաղաք, որտեղ գլխատում են 1837 թ.:

Իսկ հետո տեղի ունեցավ մեկ այլ ողբերգություն, որն ավելի մեծ էր, քան վերելում նկարագրվածը. 1895 թ. կազմակերպվեց հայերի, ասորիների, արամեացիների եւ մյուս քրիստոնյաների զանգվածային բնաջնջումը⁴¹: Այինվարդույի⁴² քահանա Յոհաննոնը (Հովհաննես) գրել է երկարաշունչ, հուզիչ մի բանաստեղծություն, որտեղից վկայակոչել ենք հետեւյալ տողերը. «Հենց այն օրը՝ հոկտեմբերի 20-ին, երբ պատրիարք Աբդուլ Մասիհ Բ.-ն⁴³ ժամանեց Ամիդ (Դիարբեքիր), մահմեդականները սրի քաշեցին արամեացիներին, ինչը շատ սարսափեցրեց հույներին ու քաղդեացիներին: Պատրիարքն ուղերձ հղեց սուլթան Աբդուլ Համիդ 2-րդին, ինչին ի պատասխան վերջինս անհապաղ արձակեց հետեւյալ

⁴⁰ Գյուլ Արեւմտյան Հայաստանի Դիարբեքիրի նահանգում (տե՛ս «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան», հտ. 4-րդ, էջ 103՝ ծնթ. թրգմ.):

⁴¹ Թուրքիայում 1895 թ. զանգվածային ջարդերի առնչությամբ տե՛ս B. MORRIS & D. ZE'EVİ, The Thirty-Year Genocide: Turkey's Destruction of Its Christian Minorities, 1894–1924, Cambridge, MA: Harvard University Press, 2019 (ծնթ. թրգմ.):

⁴² Ասորական գյուղ Թուրքիայի Մարդինի նահանգում, Միդյաթի (Միդիադ) շրջանում: Հնում կոչվել է նաեւ «Իվարդո», «Ին Վարդո», «Այինվարդա[ո]» եւ այլն: Թուրքերեն անունն է «Գյուլգյոզե» (տե՛ս I. A. BARSOU, նշ. աշխ., 2003, էջ 559, եւ D. GAUNT, նշ. աշխ., 2006, էջ 348, ինչպես նաեւ՝ «The Gorgias Encyclopedic Dictionary of the Syriac Heritage», ed. by S. Brock, New Jersey: Gorgias Press, 2011, էջ 48, 226, 244, ու «Let Them Not Return: Sayfo...», 2017, էջ 164՝ ծնթ. թրգմ.):

⁴³ Նկատի ունի Ասորի Ուղղափառ Եկեղեցու գահակալ Իգնատիոս Աբդուլ Մասիհ Բ. (1895–1905 թթ.) պատրիարքին (ծնթ. թրգմ.):

հրամանը՝ չսպանել ասորի ուղղափառ ժողովրդին: Ինքը՝ պատրիարքը դարձավ ասորիների պաշտպանը, իսկ Ամիդի Աստվածամոր եկեղեցին՝ նրանց Նոյյան Տապանը: Դրանից զատ՝ Ամիդի (Դիարբեքիր) նահանգապետը հեռագրեց Մարդինի, Միդյաթի եւ Գզիրայի սպաներին՝ չվնասել ասորիներին եւ արամեացիներին: Հակառակ այս ամենին՝ ասորիներն ու արամեացիները ստիպված եղան հաղթահարել բազում չարչարանքներ՝ անցնելով քրդերի իրագործած տղամարդկանց սպանությունների ու կանանց, կույսերի, ինչպես նաեւ՝ հարսների առեւանգումների ճանապարհով:

Վեցերորդ ժամին Ամիդի (Դիարբեքիր) մահմեդականները վերցրին իրենց սրերն ու հրարձակները եւ սպանեցին տղամարդկանց ու կանանց, եւ շարամիտ մի խումբ մարդիկ իրենց սրերով ավերեցին Տիգրիսի տարածաշրջանը՝ Խեսնո դը Կիֆ[ի]ոյից⁴⁴ (Հասանքեյֆ) մինչեւ Սիվաս⁴⁵: Նրանք գողանում էին ոսկի, արծաթ, խոշոր եղջերավոր անասուններ, ջորիներ ու ոչխարներ: Նրանք նաեւ մերկ կալանավորյալներին տանում էին լեռնագագաթները, որտեղ եւ սովամահ էին անում նրանց: Այս բոլոր դժբախտությունները Հագարի որդիներն առանց որեւէ հիմքի պատճառեցին հայերին՝ վկայակոչելով այն կեղծ փաստարկը, թե հայերն ուզում են նոր պետություն ստեղծել: Սա հնարավորություն տվեց նրանց՝ սպանելու յուրաքանչյուրին, ով իրեն համարում էր քրիստոնյա»:

Այինվարդոյի քահանա Յոհաննոնը դեռեւս պատմելու բան ունի Տուր Աբդինի ասորիների ու արամեացիների մասին. «Այնտեղ էր գտնվում թուրքական գումարտակի մի հրամանատար, որն աջակցում էր Տուր Աբդինի ժողովրդին եւ պաշտպանում նրանց՝ քրդերի ձեռամբ սպանվելու վտանգից: Երբ Հենո Սաֆարն ու նրա զարմիկը՝ Շիրկոն, գնացին նրան հանդիպելու եւ ասելու «մենք՝ ասորիներն ու արամեացիները, վայելում ենք կառավարության պաշտպանությունը», թուրք հրամանատարը խոստացավ օգնել նրանց եւ սկսեց շրջել գյուղերով՝ քրդերին քշելու համար»:

⁴⁴ Բնակավայրի ասորերեն անվանումն է: Հայտնի է նաեւ «Հասանքեյֆ», «Հրսնիքիֆ» անուններով. գյուղաքաղաք, որը գտնվում է Արեւմտյան Հայաստանի Դիարբեքիր նահանգի Դիարբեքիրի գավառում (տե՛ս «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան», հտ. 3-րդ, էջ 371, 412՝ ծնթ. թրգմ.):

⁴⁵ Սիվասը նույն Փոքր Հայքի Սեբաստիա քաղաքն է: Հայտնի է նաեւ «Սվազ» անունով (տե՛ս «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան», հտ. 4-րդ, էջ 552—554, 620՝ ծնթ. թրգմ.):

Ջարդն սկսվեց 1895 թ. հոկտեմբերի 20-ին եւ տեւեց մինչեւ հաջորդ տարվա ապրիլ ամիսը⁴⁶։ Սիվասի, Ռուվանջայի⁴⁷, Բեթ Ուրլոյեի⁴⁸ եւ Շիրվանի⁴⁹ շրջակայքում նրանք սպանեցին մեր ժողովրդի զավակներին, իսկ Կաֆրիմ⁵⁰ գյուղում՝ տեղի քահանային ու 30 տղամարդու։ Նրանք կողոպտեցին Օտան⁵¹, Բմարդ⁵² եւ Ռադվան⁵³ քաղաքները ու հրո ճարակ դարձրին դրանք։ Անաստված հրոսակախումբը կոտորած կազմակերպեց նաեւ Եդեսիայում եւ Միջագետքում, որտեղ զոհվեցին 13 000 տղամարդ ու կին։

Օ՛, փորձառու ընթերցող, տե՛ս եւ խորհի՛ր աննախագեպ այս բարբարոսություն մասին։ Լսի՛ր, թե ի՛նչ է ասում բանաստեղծը. «Եդեսիայում կար անաստված մի մարդ, որը կազմակերպեց կոտորածը։ Իր սեփական ձեռքերով նա սպանեց 40 երիտասարդ տղամարդու։ Նույնը տեղի

⁴⁶ Համիդյան ջարդերը 1894—1897 թթ. իրագործել է սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի կառավարությունը։ Սուլն ոճրագործությունը պատմագրության մեջ ամրագրվել է նաեւ «Հայկական կոտորածներ» անունով։ Հայկական ջարդերի հիմնական մասը տեղի է ունեցել 1894—1896 թթ., իսկ 1895—1896 թթ. կազմակերպվել են ասորի ազգաբնակչության կոտորածները։ 300 000 հայերի հետ (տե՛ս R. G. SUNY, Looking toward Ararat: Armenia in Modern History, Bloomington & Indianapolis, 1993, էջ 99) Համիդյան ջարդարարության զոհ են դարձել նաեւ 55 000 ասորիներ (տե՛ս REV. J. NAAYEM, Shall This Nation Die?, New York, 1921, էջ 274)։

⁴⁷ Սուլն բնակավայրի մասին չհաջողվեց որեւէ տեղեկություն գտնել, այդ իսկ պատճառով հայերեն թարգմանության մեջ տառադարձել ենք լատինատառ անվանումը (ծնթ. թրգմ.)։

⁴⁸ Սուլն բնակավայրի մասին չհաջողվեց որեւէ տեղեկություն գտնել, այդ իսկ պատճառով հայերեն թարգմանության մեջ տառադարձել ենք լատինատառ անվանումը (ծնթ. թրգմ.)։

⁴⁹ Գյուղ եւ ավերակ բերդ Արեւմտյան Հայաստանում, Բիթլիսի նահանգի Սղերդ գավառի հյուսիսարեւելյան հատվածում (տե՛ս «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան», հտ. 4-րդ, էջ 135)։ Հայտնի է նաեւ «Կյուֆրա» անվամբ (տե՛ս «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան», հտ. 3-րդ, էջ 178՝ ծնթ. թրգմ.)։

⁵⁰ Մեզ հասանելի գրականության մեջ, համացանցային հարթակներում եւ հին ու նոր քարտեզներում չհաջողվեց գտնել «Կաֆրիմ» անունով ասորական բնակավայրը։ Հավանաբար հեղինակը նկատի ունի «Կաֆրո Թահթոյո» եւ «Կաֆրո Ելայթո» գյուղերից որեւիցե մեկը, որոնք երկուսն էլ գտնվում են Դիարբեքլիի նահանգում։ Դրանք հայտնի են նաեւ «Քաֆերգո/Կաֆարգո Ներքին» եւ «Քաֆերգո/Կաֆարգո Վերին» անուններով։ Այս գյուղերը 1895 թ. կողոպտել ու ավերել են թուրքերը (տե՛ս «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան», հտ. 5-րդ, էջ 336, եւ «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան», հտ. 3-րդ, էջ 78։ Հմմտ. I. A. BARSOUM, նշ. աշխ., 2003, էջ 559՝ ծնթ. թրգմ.)։

⁵¹ Տե՛ս 33-րդ ծնթ.։

⁵² Սուլն քաղաքի մասին չհաջողվեց որեւէ տեղեկություն գտնել, այդ իսկ պատճառով հայերեն թարգմանության մեջ տառադարձել ենք լատինատառ անվանումը (ծնթ. թրգմ.)։

⁵³ Սուլն քաղաքի մասին չհաջողվեց որեւէ տեղեկություն գտնել, այդ իսկ պատճառով հայերեն թարգմանության մեջ տառադարձել ենք լատինատառ անվանումը (ծնթ. թրգմ.)։

ունեցավ նաեւ Բիթլիսում, Սուրբեհում⁵⁴, Բելագոլբեհում⁵⁵, Միլիտենեում եւ Սիվասում⁵⁶: Այն, ինչ մահմեդականներն արեցին քրիստոնյաներին, գերազանցում է այն ամենը, ինչ Տիտոս արքան⁵⁷ արեց հրեաներին, եւ Հերովդեսը՝ անմեղ մանուկներին՝ Բեթղեհեմում⁵⁸: Մայրերի արյունը միախառնվել էր նրանց կաթին: Նրանք նեղ կտրվածքով բացում էին հղի կանանց որովայնները, վերցնում վերջիններս՝ դեռ չծնված երեխաներին եւ ուժգնորեն հարվածում պատին»:

Բազմաքանակ են քրդերի ու թուրքերի իրագործած կոտորածները, որոնք քրիստոնյաներն ստիպված եղան վերապրել Արեւելքում: Այստեղ տեղ գտած նկարագրությունները բավարար են հմուտ ընթերցողի համար:

Տեսա՞ր, սիրելի՛ եղբայր, թե ինչպե՞ս են նրանք սպանել ու թալանել՝ պատեհ ու անպատեհ առիթով, երբ նման հնարավորություն է ընձեռվել, եւ ինչ չարչարանքների ու համակերպության են ենթարկել մեր ժողովրդին՝ առանց խղճմտության, առանց ողորմության:

Հաջորդող շարադրանքում մենք կբացատրենք Մեծ Պատերազմի⁵⁹ ընթացքում քրիստոնյաների դեմ կազմակերպված հսկայածավալ հալածանքների պատճառը: Այս անգամ թուրքերը կրկին հայտարարեցին, որ արամեացիներն իրենք են մեղավոր այս ամենի համար: Իսկ երբ բրիտանացիների ու ֆրանսիացիների դեմ մղվող պատերազմի ընթացքում Օսմանյան կայսրությունը միացավ Գերմանիային՝ մի՞թե արամեացիները մտածեցին, որ սա լավ հնարավորություն է յոթ նահանգների տարածքում հռչակել անկախ պետականություն՝ որպես անցյալում իրենց հասցված վնասի փոխհատուցում: Իսկ միգուցե օսմանյան ղեկավարությունը վախենում էր արամեացիներից, քանի որ հայերը եւրոպական ազգերի

⁵⁴ Սուլյն քաղաքի մասին չհաջողվեց որեւէ տեղեկություն գտնել, այդ իսկ պատճառով հայերեն թարգմանության մեջ տառադարձել ենք լատինատառ անվանումը (ծնթ. թրգմ.):

⁵⁵ Սուլյն քաղաքի մասին չհաջողվեց որեւէ տեղեկություն գտնել, այդ իսկ պատճառով հայերեն թարգմանության մեջ տառադարձել ենք լատինատառ անվանումը: Քաղաքի անվանը նման է «Բելագի» տեղանունը, որը Արեւմտյան Հայաստանի Սղերդի շրջանում գտնվող գյուղի անվանում է (տե՛ս «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան», հտ. 1-ին, էջ 644՝ ծնթ. թրգմ.):

⁵⁶ Տե՛ս 48-րդ ծնթ.:

⁵⁷ Հեղինակը նկատի ունի Հռոմի կայսր Տիտոս Փլավիոս Վեսպասիանոսին (39–79–81 թթ.), որը, 70 թ. ճնշելով հրեական ապստամբությունը, գրավել ու հիմնահատակ ավերել է Երուսաղեմը (ծնթ. թրգմ.):


⁵⁸ Մատթ. Բ.1–19 (ծնթ. թրգմ.):


⁵⁹ Հեղինակը նկատի ունի Առաջին համաշխարհային պատերազմը (1914–1918 թթ.), որի արդյունքում ամբողջ աշխարհում մահացել է 50–100 միլիոն մարդ (ծնթ. թրգմ.):

հետ միասին մեղադրանքներ էին ներկայացրել թուրքական կառավարության դեմ: Այսպիսով, թուրքերի եւ արամեացիների միջեւ թշնամանքը մեծացավ, եւ ատելության՝ թուրքական զգացումը խորացավ այն աստիճան, որ նրանք արամեացիներից ու քրիստոնյաներից վրեժխնդիր եղան 1915 թ. ջարդերի միջոցով:

Ծագում է հետեւյալ հարցը. արդյո՞ք սա բավարար պատճառ էր՝ քրիստոնյաների դեմ գործադրված հալածանքները, ծերերի, կանանց ու երեխաների՝ թուրքերի կազմակերպած սպանդն արդարացնելու համար: Մի՞թե աշխարհում յուրաքանչյուր ազգ, ինքնորոշման եւ անկախության արդար պահանջից հետո, իրավունք չունի ձգտելու իր ազատությանը:

Նույնիսկ եթե թուրքերը չափազանց զայրացած էին հենց մեծ պատերազմի կեսին ապստամբած արամեացիների վրա, նրանք, այնուամենայնիվ, իրավունք չունեին անխտրաբար սպանելու բոլոր քրիստոնյաներին, այլ միայն՝ նրանց, որոնք առիթ էին տալիս պատժվելու համար: Եւ եթե հայերն, ի վերջո, մեղավոր էին եւ դրա համար պատժվել էին մահով, ապա ի՞նչ էին արել մյուս քրիստոնյաները՝ ասորա-արամեացիները, քաղդեացիները, ասուրիներն ու հույները, որ նրանք նույնպես զոհ դարձան կոտորածներին: Այս ամենը առաջացնում է մեկ այլ հարցադրում՝ եթե թուրքերի պահանջը կրում էր քաղաքական բնույթ, ապա ինչո՞ւ են նրանք իսլամը պարտադրել քրիստոնյաներին: Եւ ինչո՞ւ չեն սպանել որեւէ մեկին, որն իսլամ է ընդունել: Պատճառը, անշուշտ, չէր կրում աշխարհիկ բնույթ: Նրանց բոլորին անողորմաբար բնաջնջել են, քանի որ նրանք պարզապես մահմեդականներ չէին:





ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊԵԱՆ

Բանասիրական գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ ԼԻ

ԲԱՐԲԱՈԱՅԻՆ ՆԻԺԹԵՐԸ «ԱՐԱՐԱՏ» ՀԱՆԴԵՍԻ ԷՋԵՐՈՒՄԻ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանութեան առաջին խօսնակը՝ «Արարատը», կրօնագիտական, պատմական, բանասիրական եւ բարոյական ուղղութիւններով ունեցող պարբերական է: Այն իր գործունէութեան սկզբնական շրջանում հիմնականում ներկայացնում էր եկեղեցական կեանքը եւ քննում դաւանաբանական, ընդհանուր աստուածաբանական հարցեր: Հանդէսն առաջին համարի առաջաբանում ծանուցում է տպագրուելիք նիւթերի բովանդակութիւնը՝ մասնաւորեցնելով. «Բանասիրականը պիտի լինի ազգիս զարգացման վիճակին, դաստիարակութեան վերաբերեալ յօդուածներ, ուսումնական ճառեր, ճանապարհորդութիւններ, ոտանաւորներ եւ նամականիք նախնեաց»²:

Հայագիտական նիւթերի ծաւալն աւելանում է մասնաւորապէս հանդէսի տպագրական գործունէութեան երկրորդ տասնամեակից (1888—1897 թթ.): Մկրտիչ Խրիմեան կաթողիկոսն առանձին կոնդակով հրահանգում է բարձրացնել ամսագրի գիտական մակարդակը. «Ձան ի գործ դնել զօրացուցանել ըստ կոչման ամսագրին Մ. Աթոռոյս զգիտական, զպատմական, զմատենագրական, զհնախօսական բաժինն առ ի բարձրացուցանել զբարի անուն եւ զգիտական համբաւ միաբանութեան սուրբ Էջմիածնի» [1900.3]: Նաեւ յանձնարարում է խմբագրապետ Գարեգին վարդապետ Յովսէփեանին «առ ի խրախոյս աշխատակցաց բանասիրաց՝ տալ նոցա ըստ ցանկութեան իւրեանց զարտատպութիւն յօդուածոցն առանձին տետրակօր» [1900.3]:

¹ Ստացուել է 5.03.2023, գրախօսուել է 13.03.2023: էլ. հասցէ՝ haykanushm@mail.ru:

² «Արարատ» ամսագիր, 1868, Ս. Էջմիածին, №1, էջ Ե. (այսուհետեւ՝ «Արարատ» ամսագրից կատարուած յղումները յօդուածում՝ ուղիղ փակագծերում՝ տարեթուի եւ էջերի համառոտումով [1868.Ե]):

Բանասիրական նիւթերի հրատարակումը համակարգող Գ. Յովսէփեանը հանդէսի խմբագրականում գրում է. «...կցանկանայինք Մայր Աթոռի միաբաններից եւ մշտական միւս աշխատակիցներից զատ նաեւ դրսի բանասէրների մասնակցութիւնը տեսնել: Արդէն Մայր Աթոռի միաբան բանասէրների թիւը հետզհետէ բազմանում է, կարճ ժամանակից յետոյ յոյս ունինք, որ «Արարատ»-ը գիտական տեսակէտից աւելի մեծ յառաջադիմութիւն ցոյց կտայ, քան մինչեւ այժմ, սակայն մեզ համար ցանկալի է, որքան կարելի է գիտական բազմազան ուժեր հաւաքել «Արարատ»-ի շուրջը» [1900.21]:

Հանդէսի գիտականութեան ապահովումը կայանում է: Այս մասին Ա. Հատիտեանը եւ Ս. Քօլանջեանը գրում են. «Տարիների ընթացքում «Արարատ»-ի շուրջ համախմբուեց ինչպէս հայագիտութեան, այնպէս էլ աստուածաբանութեան նուիրուած պատուական հոգեւորականների մի խումբ, որը լուրջ ու գիտական ուսումնասիրութեամբ առաջ մղեց հայ դաւանաբանական միտքը՝ արժէքաւոր ուսումնասիրութիւններ հրապարակելով նաեւ կրօնական, եկեղեցապատմական նիւթերի մասին»³:

Ամսագրի էջերում հանդէս են գալիս նշանաւոր հայագէտներ եւ ձեռագրագէտներ Կարապետ վարդապետ Տէր-Մկրտչեանը, Սողոմոն սարկաւազ Սողոմոնեանը, Սահակ վարդապետ Ամատունին, Խաչիկ վարդապետ Դադեանը, Մեսրոպ վարդապետ Տէր-Մովսիսեանը, Գալուստ Տէր-Մկրտչեանը, Կարապետ Կոստանեանը, Մանուկ Աբեղեանը, Ստեփանոս Մալխասեանը, Գրիգոր Խալաթեանը, Երուանդ Շահազիզը, Նիկողայոս Քարամեանը, Արշակ Տէր-Միքէլեանը, Սարգիս Հայկունին եւ այլք: Ամսագրի էջերը հայագիտական ուսումնասիրութիւններով համալրում են նաեւ Նիկողայոս Մառը, Նիկողայոս Ադոնցը, Յակոբ Մանանդեանը, Երուանդ Տէր-Մինասեանը, Ստեփան Կանայեանը, Միքայէլ Բերբերեանը, Կարապետ Բասմաջեանը, Յարութիւն Թիրեաքեանը, Տրդատ Եպիսկոպոս Պալեանը, Բաբկէն վարդապետ Կիւլեսէրեանը եւ այլք: 1898-ից հանդէսին աշխատակցում է Հր. Աճառեանը:

«Արարատում» ընդգրկուած նիւթերը շարադրուած են գրաբարով, միջին հայերէնով, գրական արեւմտահայերէնով եւ արեւելահայերէնով: Առանձնակի ուշադրութեան են արժանի հանդէսի էջերում տեղ գտած

³ Մատենագիտութիւն «Արարատ» ամսագրի, կազմող՝ Ս. ԿՈՄԻՆԵԱՆ, խմբագրեցին Ս. ՔՈՒԱՆՋԵԱՆ, Ա. ՀԱՏԻՏԵԱՆ, Երեւան, 1970, էջ 111:

բարբառային բնագրերը, բարբառագիտության տեսութեանն առնչուող հրապարակումները, ինչպէս նաեւ հայ բարբառագիտության համար հետաքրքրութիւն ներկայացնող նիւթերը: Տարբեր տարիներին հանդէսի էջերում առկայ բարբառային նիւթերն ու բարբառաբանութիւնները ներկայացրել ենք երեք հիմնական բաժիններով՝ ա) բարբառային փրակական ձեւեր, բառեր եւ արտայայտութիւններ պարունակող ֆարոգներ, կրօնակեղեցական եւ այլ բնոյթի յօդուածներ, բ) բարբառային բնագրեր կամ գրական հայերէնով շարադրուած ուսումնասիրութիւններում առկայ բարբառային ընդարձակ բնագրեր, գ) բարբառագիտական ուսումնասիրութիւններ, տեսական հարցեր արծարծող յօդուածներ:

ա) Բարբառային փրակական ձեւեր, բառեր եւ արտայայտութիւններ պարունակող ֆարոգներ, կրօնակեղեցական եւ այլ բնոյթի յօդուածներ:

1869 թ. «Ազգային» խորագրի ներքոյ [1869.42—43] «Նամակ Կարսից» գրական արեւմտահայերէնով շարադրուած նիւթում գործածուած են Կարնոյ բարբառի Կարսի խօսուածքին ոչ բնորոշ -նի, -նին որոշեալ յոդով յոգնակիակազմ մասնիկով ձեւեր, որոնք բնորոշ են յատկապէս արեւելեան խմբակցութեան Արարատեան բարբառի Լօռու խօսուածքին, օրինակ՝ յառաջադիմութիւննին, ֆննութիւննին, պատասխաննին («...նոյնպէս կարճ միջոցի մը մէջ ունեցած յառաջադիմութիւննին սքանչելի է... Հոյսիսիմեաց օրիորդաց դպրոցի աշակերտուհիք իրենց ընթերցանութեան եւ գրավարժութեան ֆննութիւննին տուին: Յետոյ ... մանր ուսմունք անուամբ Քրիստոնէական Վարդապետութեան հարց պատասխաննին սկսան»): Լեզուական այս իրողութիւնը կարելի է բացատրել կամ նամակագրի՝ տուեալ խօսուածքի կրող լինելով, կամ Կարսի քաղաքային բնակչութեան շրջանում բարբառային հայերէնի տարատեսակների առկայութեամբ:

Նշուած նամակում հանդիպում են նաեւ ֆննութիւն, աշակերտուհի, օտարազգի արեւմտեան բարբառներին յատուկ -ֆ եւ -իք գրաբարակերպ յոգնակերտներով տարբերակներ:

Կարնոյ բարբառի Շիրակի խօսուածքին բնորոշ մի շարք բառեր եւ արտայայտութիւններ կան Երուանդ Մովսիսեանի «Շիրակի գիւղական կեանքից պատկերներ» արեւելահայերէնով գրուած նիւթում՝ համապատասխան բացատրութիւններով [1900.406—411, 476—480]:

Ղ. Աղայեանի «Խորհրդածութիւն դաստիարակութեան վերայ» (1869.160—177) արեւելահայերէնով շարադրուած ուսումնասիրութեան «Հոգի» հատուածում հանդիպում են Արարատեան բարբառին յատուկ

որոշ բարբառաբանություններ. սկզբումը (1869.166), տոկոսիք (1869.166), իրանց, օրերումը (1869.168), բառանշում է (1869.169), սենեակների մի-նի մէջ (1869.172), վախող (1869.173), միմը (1869.176), էնդուր համար (1869.176), սոպո (1869.176), առաջին առնել (1869.176) եւ այլն:

Հայերէնի մի շարք բարբառներին, ինչպէս նաեւ գրաբարին եւ մի-ջին հայերէնին բնորոշ լեզուական յատկանիշներ են արտայայտուած 1894 թ. տպագրուած «Գիւղական քահանայի քարոզում» [1894.71–74]. օրինակ՝ մեք, լինիմք, սորա, նորա, զմեզ, հանչնայ, թողլով եւ այլն: Քարո-զում առկայ են նաեւ ն որոշիչ յօդի բացակայութիւն, բացառական յոլովի եւ ից-ով, եւ -էն-ով ձեւեր, մէկ արեւմտահայերէն, մէկ արեւելահայերէն գրական լեզուներին յատուկ դիմաւոր բայաձեւեր: Այսպէս՝ մտիկ արեք [1894.71], եկեր եմք, կը թախանձէ, կը ծառայէ, սպասաւորում է, կը հաս-կընայ, «տրեխ ոտք գնացեր մտել է դպրոց», «համն ու ճաշակ չեմ առեր» «Սիրելի՛ ժողովուրդ, ես գրելով եւ քարոզելով քո ճաշակ պիտի բամամ: Այժմ այսքանս բաւական է, գարուն եկած է, երգում է ճախրակ մանիկ, լըծէ լըծէն. երթանք՝ ես դէպ ի դպրոց իմ դաս, դուք դէպ ի դաշտ՝ ձեր գու-թան» [1894.74]:

1897 թ. տպագրուած «Արեգ ամիս» յօդուածում (հեղինակ՝ Կ.Կ. -կար-ծում ենք՝ Կարապետ Կոստանեանց) բարբառային օրինակներ կան Ակնի, Վանի, Ալաշկերտի տարածքներից, ինչպէս նաեւ մէկ-երկու արտայայ-տութիւն Լոռու խօսուածքից. օրինակ՝ զարնան Խսեն աշունն է [1897.105], շատ հետի չէ մեզանից [1897.27] եւ այլն:

1906 թ. Սահակ Ամատունու՝ արեւելահայերէնով գրուած «Այդրը գե-օլ» բանաստեղծութեան մէջ կան Արարատեան տարածքային տարբերա-կին յատուկ բարբառային բառեր եւ արտայայտութիւններ. օրինակ՝ երեք դնից [1906. 293], խտրտում են ծովակիս [1906.293], Մեծամօթի քիպ դիմաց [1906.293], ծով կտրել [1906.293], դրկել [1906.293], աշկարայ [1906.293], հմմմայ ափ [1906.294], զոմփոռ շուն [1906.294], քար ու քոպ [1906.294], միմն [1906.294], ժըլժըլում են ու ժըլում [1906.294] եւ այլն: Տուեալ դէպ-քում բարբառային ձեւերն ունեն չափածոյ խօսքը յանգաւորելու եւ ոճաւորելու նպատակ:

«Արարատի» տարբեր համարներում զետեղուած են Հր. Աճառեանի ստուգաբանական բնոյթի աշխատանքները, որոնցում ականաւոր լե-զուաբանը յաճախ է անդրադառնում առանձին բարբառային բառերի բացատրութեանը եւ տարածքային պատկանելութեանը, ինչպէս, օրի-

նակ՝ մոռմոռոզ (Պոլիս), ուրուն պէկ (Խնուս), խուխուլին (Նիկոմեդիա), լինիլ «յարձակուել» (Ալաշկերտ) [1917. 350–354] եւ այլն:

«Արարատ» հանդէսի մի շարք համարներում երբեմն բարբառային բառերին կից տրուում են բացատրութիւններ, որոնք, որպէս հաւաստի նիւթեր, տեղ են գտել յետագայում կազմուած բարբառային բառարաններում. այսպէս՝ ղանվլէ [1870. 346] թուրքերէնից կատարուած փոխառութիւնն ունի սրճաւան բացատրութիւնը: Բարբառային բացատրութիւն ունեն նաեւ հանրութեանը քիչ յայտնի որոշ գրական բառեր. Հուռուքն «ամուկէտ» [1918.107], պանդոկ «քեարուանսարա» [1870.345], վզի փոքր կապ «շարֆ» («...ձեռագործներից ունէին բաւականաչափ պատրաստած եւ անպատրաստ վզի փոքր կապեր (շարֆ)» [1870.344], խօսօզ «աքլոր», պէյաթի «տաճկական եղանակ», զիմ գլխի ֆաթէն կիտամ, գրուսան «աշուղ» [Կոմիտաս վարդապետ, 1900.367–368], շարստան «քաղքենի», ալա «ընտիր», դող-պէ-դող «շարան», թոռուն «պարարտ, առոյգ» [1915.585] եւ այլն:

Նշուած բարբառաբանութիւնները խօսքը դարձնում են աւելի բնական եւ անմիջական:

բ) Բարբառային բնագրեր կամ գրական հայերէնով շարադրուած ուսումնասիրութիւններում առկայ բարբառային ընդարձակ բնագրեր:

Բարբառագիտական հետազօտութիւններ կատարելու, բարբառային բառարանները համալրելու եւ որոշ բառայօդուածներ ճշգրտելու համար կարեւոր դեր ունեն «Արարատ» հանդէսի էջերում ամփոփուած բարբառային բնագրերը: Դրանք առաւել քան հաւաստի են, որովհետեւ գրանցուած են դեռեւս ժԹ. դարում եւ Ի. դարի սկզբներին, երբ հայ ժողովուրդը դեռ եղեռնազարկ չէր, ապրում էր բնօրրանում եւ բարբառախօս էր: Մի շարք բարբառային նիւթերի հեղինակները կամ գրի առնողները յաճախ ճեմարանի բարբառակիր սաներն են:

1896 թուականի ամանորին նուիրուած գրական երեկոյթին հանդէս է եկել Զ. դասարանի աշակերտ Ե. Մովսիսեանը, որը մի պատկեր է ներկայացնում Շիրակի գիւղական կեանքից: Կարնոյ բարբառի Շիրակի խօսուածքով շարադրուած «Նոր տարի» բնագիրը Գէորգեան ճեմարանի վարչութեան թոյլտուութեամբ տպագրուում է «Արարատ» հանդէսում [1896.18–22]: Բնագրին բնորոշ են Շիրակի խօսուածքի արեւմտակեզուական հիմնական յատկանիշները, սակայն միայն ներկայ ժամանակի ձեւերը արեւելեան են (ուտըմ ենմ, խըմըմ էին): Կարծիք կայ, որ Շորագեալի (Արեւմտեան Շիրակ) հայ բնակչութեան խօսուածքին բնորոշ են

եղել սահմանական ներկայի — ըմփով ձեւերը, որոնք ժամանակի ընթացքում փոխարինւում են կարնեցիների կողմից կիրառուող կը եղանակիչով ներկայ ժամանակի բայաձեւերով: Այս առումով բնագիրը հետաքրքրութիւն է ներկայացնում՝ բայ խօսքի մասին վերաբերող տեսական հարցերը ճշգրտելու եւ արեւելեան բարբառներին բնորոշ — ում (//-ըմ) ձեւի մոռացութեան պատճառները հիմնաւորելու համար:

1897 թ. «Հայոց գրականութիւնը պարտական է մնում հայ մայրերին եւ զաւակներին» յօդուածում (հեղինակ՝ Ս.Մ.— կարծում ենք՝ Սեդրակ Մանդինեան) զետեղուած են խրիմի եւ Նոր Նախիջեւանի բարբառով, Մարգարայ գիւղի խօսուածքով խաղիկներ, մանկական ոտանաւորներ [1897.164—169]: Բնագրի բարբառային որոշ բառեր ունեն բացատրութիւններ՝ դուրդուշում «արճիճ», քաւից քեօմուր «քարածուխ», շարխ [1897.168], կաւմունջ [1897.168] եւ այլն: Ուշագրաւ է «ցեմենտ» բառի սիմիւնդ հնչատարբերակը, որով համանունութիւն է ստեղծուում Լօռու խօսուածքի սիմիւնդ «եգիպտացորեն» բառային զուգաբանութեան հետ:

Մոկաց բարբառով է Ս. Հայկունու գրի առած «Բարակ շահ, Անուշ շահ եւ Տիւլին շահ» [1901.382.] ժողովրդական վէպը, իսկ Ալաշկերտի խաստուր գիւղի խօսուածքով՝ «Ախ իմ դարտեր» [1901.304] բանաստեղծութիւնը: Յատկանշական է, որ «Արարատ» հանդէսում տպագրուած մի շարք բարբառային նիւթեր հիմք են հանդիսանում հետագայում որպէս առանձին մենագրական աշխատանքներ տպագրելու համար⁴:

Վանի, Մոկսի եւ Մուշի բարբառով տաղերի, աւետիսների արժէքաւոր հատուածներ են վկայաբերուած Գարեգին վարդապետ Յովսէփեանի «Ժողովրդական բանահիւսութեան հետքեր միջնադարեան տաղարաններից» յօդուածաշարում [1898. 545—551 եւ 1899.44—47], Հայկ Աճէմեանի՝ Վասպուրականի հայ ժողովրդական բանահիւսութեան ծաղկաքաղից [1917.543—568]: Գ. Վ. (կարծում ենք՝ Գարեգին վարդապետ Յովսէփեան) ստորագրութեամբ հեղինակը «Ռուստամ Զալ» պարսից ժողովրդական վէպից Մոկսի բարբառով մի հատուած է տեղադրել՝ մի շարք բառերի բացատրութեամբ [1899. 91—94]: Հեղինակը նաեւ նշում է, որ Ֆիրդուսու այս վէպը զանազան փոփոխակներով պատմուում է հայոց մէջ, եւ իրեն յայտնի են ապարանեան եւ մոկաց ամբողջական տարբերակները:

⁴ Տե՛ս «Բարակ շահ, Անուշ շահ եւ Տիւլին շահ», գրի առաւ Ս. ՀԱՅԿՈՒՆԻ (Մոկաց բարբառով ժողովրդական վէպ), տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, Վաղարշապատ, 1901:

1898 թ. Ս. Հայկունին հլաթի Փրիսուս գիւղի բանասաց քըրսեցի Արեւ-
շատից գրի է առել «Օխան Օծնելի» պատումը [1898.412—414], որը մե-
ծարժէք է յատկապէս բանագիտական առումով: Տուեալ դէպքում «Արա-
րատի» միջոցով հասանելի բանահիւսական նիւթը նուիրուած է հայոց
երեւելի հայրապետներից մէկին՝ Յովհաննէս Օծնեցուն:

Գրառումը հետաքրքրութիւն է ներկայացնում նաեւ բարբառային
տարածքի առումով, քանի որ Մուշի բարբառի հլաթի խօսուածքը նիւ-
թերի սակաւութեան պատճառով առանձին ուսումնասիրութեան ենթար-
կուած չէ:

Ս. Հայկունու գրի առած այս պատմութիւնը, այլեւ յաջորդ համարում
տպագրուած «Սասնայ ծռեր» էպոսի «Սասունայ Դաւիթ» [1898.520—525]
ծիւղը նոյնպէս հլաթի խօսուածքով են:

Արաբերէն, պարսկերէն, թուրքերէն բարբառային օտարաբանու-
թիւններով հարուստ են աշուղներ Միսկին Բուրջու, Ղազարի, Ղալամ-
օղլու, Քէշիշ-օղլու, Քեանհանի՝ Արարատեան բարբառի տարբեր խօ-
սուածքներով գրուած աշուղական երգերը (մուխամմազները, «մուղամ-
ները», դաստանները)՝ գետեղուած «Ս. էջմիածինը հայ աշուղների եր-
գերում» [1903. 511—520] յօդուածում (խասրատը կու փաշեմ, մասիբ ըմի,
ջառ, ջերկա-ջերկա, ճիսնիալ «ծլվլալ», ալմաս, թրաշ, ըսկի, դալամ, սհաթ,
ջուխտ, մայիլ էլա մտիկ տալով եւ այլն): Նշուած աշուղներից առանձ-
նանում են Զիւանին՝ Կարնոյ բարբառի Զաւախքի Կարծախ գիւղի խօ-
սուածքով եւ Քիշիկ Նովան (Քիւշուկ -պարսկերէն՝ «փոքրիկ»), որը Սա-
յեաթ-Նովայի նմանողութեամբ իր երգերը գրել է Թիֆլիսի բարբառով
(դիփ, տիղմ եւ այլն): Ուշագրաւ են աշուղ Ղազարի սիրուն-սիրուն
(«Սիրուն-սիրուն դռներ ունիս») եւ Քէշիշ-օղլու սուրփազան գրական
հայերէնեան ձեւերի հնչիւնական տարբերակները, որոնք մէկ այլ տա-
րածքում չեն հանդիպում:

Մ. Արեղեանը «Ժողովրդական խաղեր» [1904.172—188. 259—272.
354—357. 467—474. 556—563. 642—648. 772—785. 884—898. 975—988. 1078—
1096], ինչպէս նաեւ «Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու
«Հայոց պատմութեան» մէջ» [1900.140—144, 193—205, 264—267, 302—307,
354—361, 415—425] ծաւալուն ուսումնասիրութիւններում ժողովրդական
երգերի, ոտանաւորների կառոյցների մասին վերլուծութիւններն ու բա-
նահիւսական պատմութիւններն նուիրուած մեկնաբանութիւններն ընդմի-
ջում է Հայաստանի տարբեր տարածքներում յայտնի բազմաթիւ բարբա-

ռային խաղիկներով, ժողովրդական պատմություններով, առասպելների տարբերակներով⁵:

Այսպես, մի հատուած Տորքի եւ Մեծ Մհերի համեմատութիւնից. «էկաւ էնտեխ (Ջգիրու քաղաք, Տիգրիսի մօտ-Հ.Մ.), մէկ մեծ ահագին քար էբի, կցից քեաղաքի քեամակ, գիտու մէջ. գետ ելաւ էրկու ճեող, մէկ ճեող էն եանէն կիեայ, մէկ էս, էլ քեաղաք չի աւրի: Բրջայ բալաքն էլ վեար էն քեարին շինից, իսկի աւիրիլ չկայ էն բերդին» [1900. 143] կամ Փոքր Մհերից՝ չափածոյ. «Ո՛վ Տէր Աստուած, Իմ խօր անէծք ձի խասիր ի, Իմ միջաց էրակ քաշիր ի...Ո՛վ Տէր Աստուած, գթիզ եմ կանչիր, Տիւ ընցկուն էնես, ձի ձգես Վանայ քար» [1900.355]:

Գրաշար Յարութիւն Աւշեանի «Նիստ ու կաց Խոյեցւոց» [1909.650—662] բնագիրը ամբողջութեամբ շարագրուած է Ուրմիայի Կերտապատ գիւղի խօսուածքով, որը բանահաւաքը գրի է առել էջմիածնի Հայթաղ գիւղում բնակութիւն հաստատած կերտապատցիներից: Հեղինակի ծանուցումից իմանում ենք, որ նա գրել է «բազմաբովանդակ մեծածաւալ ժողովածու», «որը ժամանակի ընթացքում գուցէ ուսումնասիրութեան մի նշանաւոր նիւթ կը դառնայ բանասէրների եւ հայ մատենագրութեան համար» [1909.650]: Բնագրային մի շարք անհասկանալի բառեր ունեն տողատակի բացատրութիւններ, մեկնաբանուած են նաեւ անբացատրելի ձայնաւորի գլ, կլ, ֆլ քմային պայթականների, երկբարբառների արտասանութեան եղանակները [1909.650]: Ի դէպ, Մ. Ասատրեանն «Ուրմիայի (Խոյի) բարբառը» գրքում այս արժէքաւոր ուսումնասիրութեանը չի անդրադառնում. հաւանաբար ծանօթ չի եղել: Յաւելենք, որ Աւշեանի՝ Կերտապատի խօսուածքին նուիրուած խոստացուած ժողովածուն, ցաւօք, յայտնի չէ արդի բարբառագիտութեանը:

Թադէոս Աւդալբէգեանի «Խաչատուր Աբովեան. կեանքի եւ ստեղծագործութեան մասին» ծաւալուն յօդուածաշարում ընդարձակ հատուածներ կան Արարատեան բարբառի Քանաքեռի խօսուածքով [1910. 555—563, 643—651, 735—743, 867—874, 965—972]: «Գրասէր» գրական անունով հեղինակը եւս «Խաչատուր Աբովեանի երկերը» մատենախօսութեան մէջ,

⁵ Տէն նաեւ՝ Մ. ԱՔԵՂԵԱՆ, Հազար ու մի խաղ, ժողովրդական երգարան, 1 յիսնեակ [Կոմիտասի համատեղ խմբագրութեամբ], Վաղարշապատ, 1903: Նոյնի՝ Բ. տպագրութ., «Ժողովրդական խաղեր (ուսուածք)», Վաղարշապատ, 1904: Նոյնի՝ որոշ յաւելումով՝ «Ժողովրդական խաղիկներ», ներածութիւն, Երեւան, 1940: Նոյնի վերահրատարակութիւնը՝ «Ժողովրդական խաղիկներ» վերնագրով, «Երկեր», հատ. Բ., Երեւան, 1967: Նոյնի՝ Գ. տպագրութ., Երեւան, 1969, 134 էջ:

վերլուծելով Ի. Ժամհարեանցի՝ Խ. Աբովեանի մասին գիրքը (Մոսկուա, տպ. Ք. Բարխուդարեանի, 1897), օրինակներ է բերում Քանաքեռի խօսուածքով [1897.116—121]: Գրասէրը նաեւ տեսական հարցեր է արծարծում՝ կատարելով բարբառագիտական իւրովի ճշգրտում: Նա գրում է. «Վերջապէս ի զուր են կարծում, թէ Աբովեանի լեզուն ամենայն ճշտութեամբ համապատասխանում է Քանաքեռի բարբառին. ցաւում ենք, որ յօդուածիս սահմանը թոյլ չի տալիս մեզ յառաջ բերել «Վէրք Հայաստանի»-ից բազմաթիւ բառեր, դարձուածներ եւ քերականական ձեւեր, որոնք չեն պատահում Քանաքեռի բարբառում» [1897.121]:

գ) Բարբառագիտական ուսումնասիրութիւններ, տեսական հարցեր արծարծող յօդուածներ:

Հր. Աճառեանի «Ուսումնասիրութիւններ հայկական բարբառախօսութեան» [1899. 394—399] վերնագրի ներքոյ ամփոփուած է հեղինակի բարբառագիտական երրորդ կարեւոր ուսումնասիրութիւնը՝ նուիրուած Ղարաբաղի բարբառին⁶, որը յաջորդաբար լոյս է տեսել «Արարատ» հանդէսի տարբեր համարներում: Սամուէլ Անթոսեանն այս մասին գրում է. «Հր. Աճառեանը «Արարատում» տպագրեց «Քննութիւն Ղարաբաղի բարբառի» (1899, 1900, 1901) արժէքաւոր աշխատութիւնը, որը իւրովի ընդօրինակելի դարձաւ երիտասարդ բարբառագէտների համար»⁸:

«Քննութիւն Ղարաբաղի բարբառին» հետազօտութեան «Յառաջաբանում» Հր. Աճառեանը գրում է. «Անծանօթ մնացած բարբառ մը չէ Ղարաբաղի բարբառը. ընդհակառակը՝ Տփղիսի բարբառին հետ գրականութեան ամէնէն աւելի ծանօթացած հայ բարբառներէն մէկն է. այս բարբառով գրուած աշխատութեանց ամբողջութիւնը կարող է փոքրիկ մատենագրութիւն մը կազմել» [1899. 394]: Անդրադառնալով առկայ ուսումնասիրութիւններին՝ անուանի լեզուաբանը շարունակաբար «Արարատի» տարբեր համարներում մանրամասնօրէն ներկայացնում է այս բարբառի հնչիւնական համակարգի, հնչիւնափոխական իրողութիւնների, շեշտի, յօգի, ձեւաբանութեան, քերականական այլ առանձնայատկութիւնները՝ մէջբերելով բազմաթիւ բարբառային օրինակներ

⁶ Հր. ԱճԱՌԵԱՆԻ բարբառագիտական առաջին աշխատանքը նուիրուած է Ասլանբէգի բարբառին՝ տպագրուած Վենետիկում 1898 թ.-ին, իսկ երկրորդը՝ Սուլաւայի բարբառին՝ տպագրուած «Բազմավէպում»:

⁷ Հր. ԱճԱՌԵԱՆ, Քննութիւն Ղարաբաղի բարբառին, «Արարատ» (ամսագիր), Վաղարշապատ, 1899, սեպտեմբեր, էջ 394—399, հոկտեմբեր-նոյեմբեր, էջ 453—459:

⁸ Ս. ԱՆԹՈՍԵԱՆ, Հայ լեզուաբանութիւնը «Արարատի» էջերում, «էջմիածին», 1968, էջ 5:

[1899. 453—459, 1899.44—47, 1900. 26—28, 73—76, 190—193, 411—415, 529—533, 612—616, 1901.236—239, 310—312, 368—375]: Հր. Աճառեանն իր ընդարձակ ուսումնասիրութիւնն աւարտում է «Նմոյշ մը Ղարաբաղի բարբառէն» խորագրի տակ զետեղուած «Թիւնիի պըէլին» հէքիաթով [1901.373—375]:

Նշանակալից է Ռուբէն Աբրահամեանի «Խնչ կերպ հնարաւոր է հայերէնի գիտական ուսումնասիրութիւնը» [1912.364—377] յօդուածը, որում հեղինակը խօսում է հայոց լեզուի մասին՝ այն բնորոշելով որպէս աբստրակցիա՝ որպէս գումար «այն բոլոր անհատների լեզուների, որոնցից կազմւում է հայ ժողովուրդը» [1912.364]: Նման անհատական լեզուներից են առաջանում ենթաբարբառները, բարբառները եւ ողջ ժողովուրդին վերագրուող ընդհանուր լեզուն [1912.365]: Նա հայերէնը համարում է հայ բարբառների ամբողջութիւնը եւ կարծում է, որ «եթէ մեզ յայտնի են այդ բարբառների գիտական ուսումնասիրութեան, այսինքն՝ բարբառաբանութեան հետեւանքները, մենք նրանց համեմատութիւնից կարող ենք հիւսել հայոց լեզուի պատմութիւնը» [1912.367]: Հայերէնի ուսումնասիրութեան համար կարեւորելով գրաբարը՝ Ռ. Աբրահամեանն այն համարում է հայերէնի բարբառներից մէկը [1912.367]: Նա նաեւ իրաւամբ փաստում է, որ հայ բարբառաբանութեան հիմնադիրը Ք. Պատկանեանն է, չնայած նրանից առաջ ես եղել են հայ բարբառների ուսումնասիրութեան փորձեր: Հայերէնի ուսումնասիրութեան յաջող ընթացքը նա պատկերացնում է բարբառների ուսումնասիրութեամբ. «այդ ուսումնասիրութիւնը մեր խորին համոզմամբ պէտք է կատարուի հայութեան կեդրոնում՝ Ս. Էջմիածնում, ուսումնասիրութիւնը պէտք է լինի ոչ թէ մասնաւոր անհատների գործ, այլ կոլեկտիւ, կազմակերպուած ձեռնարկութիւն» [1912.371]: Անդրադառնալով հայ բարբառագիտութեան անցած ճանապարհին՝ նա իւրովի է մեկնաբանում յատկապէս բարբառային հնչիւնաբանութեան հիմքի վրայ կատարուող քննութիւնը: Նա գրում է. «Բարբառների ուսումնասիրութիւնը հրապարակ է հանում բազմաթիւ լեզուական երեւոյթներ, որոնք հետաքրքիր են եւ ուսումնասիրութեան նիւթ կարող են դառնալ ոչ միայն այս կամ այն լեզուի համար, այլ եւ լեզուի համար ընդհանրապէս: Այդպիսով բարբառաբանութիւնը կարող է իւր ստացած հետեւանքներով նպաստել լեզուի ծագման եւ զարգացման հարցերի լուծման» [1912.374]: Ապա յաւելում է, որ բարբառաբանութեան տուեալների իմացութիւնը կարեւոր է հայերէնով զբաղուող իւրա-

քանչիւր գրագէտ մարդու համար, եւ առաջարկում է բարբառը ուսումնասիրելու մի շարք արդիւնաւէտ եղանակներ:

Մ. Աբեղեանը «Մեր երկու գրական լեզուի միութեան խնդիրը» [1897.424—431, 494—503] գրախօսութեան մէջ անդրադառնում է «Հանդէս Ամսօրեայի» «Ծաղկաքաղ» ստորագրութեամբ յօդուածագրին, որն անհնարին է համարում գրական լեզուի արեւելահայ եւ արեւմտահայ ճիւղերի միացումը: Մ. Աբեղեանը բաւականին ընդարձակ ընդդիմախօսութեան մէջ համեմատում է արեւմտահայ եւ արեւելահայ բարբառների հնչիւնաքերական մի շարք իրողութիւններ, անդրադառնում բարբառագիտութեան տեսութեան մի շարք հարցերի:

Հր. Աճառեանի «Նամակ խմբագրութեան»-ը [1914. 279—281] բարբառագիտական տեսական հարցերի համակողմանի քննութիւն է եւ լաւագոյն վերլուծութիւնն է իր իսկ «Հայերէն գաւառական բառարանի»:

«Արարատ», ապա եւ «Շողակաթ Ս. Էջմիածնի» հայագիտական ժողովածուի Առաջին գրքում զետեղուած բարբառագիտական ուշագրաւ նիւթերից է «Հայերէն կրկնաւորները Երեւանի բարբառում (Քանաքեռի խօսուածք)» վերնագրով յօդուածը, որը հեղինակել է Մեսրոպ վարդապետ Մաքսուդեանը⁹: Յօդուածագիրը մասնաւորաբար նշում է. «Հայերէնի մէջ հանդէս եկած կրկնութեան մասին ընդարձակօրէն գրած է արդէն պ. Հր. Աճառեան «Հանդէս Ամսօրեայ»-ի էջերում (1899 յուլ.-օգ.)՝ ուսումնասիրելով յատկապէս հին եւ նոր գրական հայերէնի եւ Պոլսի բարբառի ընձեռած օրինակները: Ոչ նուազ շահեկան պիտի լինէր, եթէ, իբրեւ լրացումն կամ շարունակութիւն այդ մանրակրկիտ ուսումնասիրութեան, քննութեան առնուէին նաեւ այն կրկնաւոր ձեւերը, որոնք գոյութիւն ունին միւս բարբառներում»¹⁰: Ապա «Վէրք Հայաստանի» (Մոսկուա, 1890) գրքի բառագանձի հիման վրայ ներկայացնում է կրկնութեան երեւոյթը Երեւանի բարբառում եւ յատկապէս Քանաքեռի խօսուածքում: Այս առումով արժէքաւոր է Մեսրոպ վարդապետ Մաքսուդեանի հետեւեալ դիտարկումը. «Այդ կրկնութեան մեծ մասն ունի իր համապատասխան օրինակները դասական հայերէնի մէջ, կան այնպիսիներ էլ, որոնք յատուկ են սոյն բարբառին»¹¹:

⁹ Մ. ՎՐԴ. ՄԱՔՍՈՒԴԵԱՆ, «Շողակաթ» Ս. Էջմիածնի, Հայագիտական ժողովածու, Գիրք Առաջին, Նուիրուած Հայ գրքի եւ տպագրութեան մեծ յոբելեանին, 412—1512—1912, Ելեւորաշարժ տպարան Ս. Էջմիածնի, Վարդաշապատ, 1912, էջ 164—166, <http://greenstone.flib.sci.am/gsd/collect/400years/book/krknavor.pdf>:

¹⁰ Նշ. աշխ., էջ 164:

¹¹ Նոյն տեղում:

Նշուած շարադրանքում որպէս նորոյթ յատկանշական են բարբառ եւ խօսուածք բարբառագիտական եզրերի առանձնացումն ու սահմանումը:

Այսպիսով, ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ «Արարատ» հանդէսն ամփոփում է հսկայածաւալ բարբառային նիւթ, որը կարող է դառնալ առանձին լուրջ հետազոտութեան թեմա, ինչպէս նաեւ նոր լոյս սփռել արդի բարբառագիտութեան զարգացման ճանապարհին: Հանդէսից իմանում ենք նաեւ ժամանակին գրուած, սակայն չտպագրուած բարբառային անյայտ աշխատանքների մասին, որոնք որոնման եւ բացայայտման կարիք ունեն: Ինչպէս գրում են բազմաբեղուն այս պարբերականի մատենագիտութեան խմբագրականի հեղինակները, «Արարատ»-ի կողմից հայ բանասիրութեանը մատուցած մեծ ծառայութիւնները, «Արարատ»-ի կողմից հայ բանասիրութեանը մատուցած մեծ ծառայութիւնները իրաւամբ նրան դասում են համահայկական չափանիշով մեր ամենանշանաւոր հայագիտական պարբերականների շարքում»¹²:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

«Արարատ» ամսագիր, խմբագրական, բարբառ, խօսուածք, Հրաչեայ Աճառեան, «Հանդէս Ամսօրեայ», Յովհաննէս Օձնեցի որ Մուշի, Խլաթի բարբառ, խօսուածք, «Սասնայ ծռեր» Էպոս, «Սասունայ Դաւիթ»:

РЕЗЮМЕ

В статье представлены диалектные тексты и публикации, связанные с теорией диалектологии, нашедшие место на страницах «Арагат». Вышедшие в свет в научно-духовном журнале материалы отобраны, классифицированы и представлены в трех основных группах: а) православные проповеди, религиозно-церковные и другие статьи в которых нашли место диалектные грамматические формы, слова, словосочетания и выражения, б) чисто диалектные тексты и фрагменты, вошедшие в исследования, написанные на литературном армянском языке, в) исследования по диалектологии, статьи, освещающие теоретические вопросы. Исследование показывает, что журнал «Арагат» предоставля-

¹² Մատենագիտութիւն «Արարատ» ամսագրի, էջ XVI:

ет огромный материал для изучения армянских диалектов. И как пишут авторы редакционной статьи журнала, «Арабат» сыграл известную роль в развитии армянской филологии и церковной литературы.

SUMMARY

This article presents dialectal texts, publications related to the theory of dialectology, as well as publications of interest to Armenian dialectology, which found a place in the pages of “Ararat” journal. We have highlighted and classified the publications that were published in different issues of the spiritual-scientific journal. We have presented the various dialectal materials that exist in three main groups: a) orthodox sermons, religious-ecclesiastical and other articles that use dialectal grammatical forms, words, phrases and expressions, b) purely dialectal texts or extensive dialectal passages in studies written in literal Armenian language, c) dialectological studies, articles that highlight theoretical issues.

The study shows that “Ararat” journal summarizes a huge dialectal material, which could become a separate important topic for the study of the Armenian dialects, as well as open a new path for the development of the Armenian modern dialectology. And as the authors of the editorial in the bibliography of this journal write, “Ararat” has played a prominent role in the development of Armenian philology and ecclesiastical literature. This journal can be included in the preferred list of important periodicals of Armenian studies.



ԱԼԵՔՍԱՆԴՐ ՌԻՔԻՆ

ՆԻՆՎԵԻ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԸ

Սկիզբը՝ թիվ 2022 թ. ԺԲ., 2023 թ. Բ., Գ.

ՄԱՍ 5. ՀԱՆՐԱՔՎԵ

Քրդերն աշխարհի ամենամեծաթիվ ժողովուրդն են, որ չունեն սեփական պետություն: Նրանց թիվը, ըստ տարբեր գնահատականների, 20-ից 40 միլիոն մարդ է: Նրանք բնակվում են Թուրքիայի, Իրաքի, Իրանի եւ Սիրիայի սահմաններում: Անկախ պետության ստեղծմանն ամենամոտը իրաքյան քրդերն էին՝ 2003-ի ամերիկյան ներխուժումից հետո:

Իրաքյան քրդերի փեշմարգայի զինված կազմավորումները Սադամ Հուսեյնի ռեժիմի տապալման ժամանակ ԱՄՆ բանակի գլխավոր դաշնակիցներն էին: Քրդերն ինքնուրույն եւ ամերիկյան ստորաբաժանումների հետ Սադամի զորքերից ամբողջովին մաքրեցին երկրի հյուսիսը: Հենց այդ ժամանակահատվածում էլ փեշմարգայի իշխանության ներքո հայտնվեցին այն շրջանները, որտեղ համախումբ բնակվում են ասորիները, եզդիները եւ թուրքմենները: Նրանք Իրաքյան Քուրդիստանի ինքնավարությունից դուրս էին, որը ճանաչում էր Սադամ Հուսեյնի վարչակարգը:

Սկզբնական շրջանում փոքրամասնությունները ողջունեցին քրդերի գալուստը: Բայց շուտով ստիպված էին բախվել նրանց ազգայնամոլությանը: Հատկապես կատաղի ազգայնամոլներ էին Քուրդիստանի դեմոկրատական կուսակցության (ԲԴԿ) անդամները: Կուսակցության ղեկավարը Մասուդ Բարզանին էր: 2005 թ. նրան ընտրեցին Իրաքյան Քուրդիստանի ինքնավարության նախագահ:

Ինքնավարությունն իր հերթին բաժանվեց երկու ազդեցիկ կլանների միջեւ: Հյուսիսային մասը (Դոհուկի, Էրբիլի գավառները, ասորիներով եւ եզդիներով բնակեցված Նինվեի հարթավայրի շրջանները եւ սիրիական սահմանի մոտ գտնվող եզդիական Շանգալ ներգավառը (enclave) հայտն-

վեցին Բարզանիի կլանի վերահսկողության տակ: Հարավային մասը (Սուլեյմանիա եւ Հալաբջա գավառներ) Թալաբանիի կլանի եւ նրա «Քուրդիստանի հայրենասիրական միության» (ՔՀՄ) վերահսկողության ներքո էր:

Էրբիլը ճանաչվեց ինքնավարության մայրաքաղաք, ուստի կառավարությունը ձեւավորվեց հիմնականում Բարզանիի կլանի անդամներից եւ նրանց կողմնակիցներից: Թալաբանիի կլանը ստացավ իրավունք՝ տարածաշրջանի շահերը ներկայացնելու իշխանության դաշնային մարմիններում. նրանք լրացնում էին քրդերի քվոտան երկրի խորհրդարանում եւ կառավարությունում:

Յուրաքանչյուր կլան ունի սեփական փեշմարգան, որը ենթարկվում է բացառապես նրա հրամաններին: Ազդեցության գոտիների սահմանագծերին տեղակայված են ստուգիչ անցակետեր:

Թալաբանիի կլանն ավելի շատ հակված է բարեկամության իրանի եւ Ռուսաստանի հետ: Բարզանին՝ Թուրքիայի ու ԱՄՆ-ի: Կլանները թշնամանաբար էին վերաբերվում միմյանց: Երբեմն դա հասնում էր զինված բախումների:

Սուլեյմանիայում կարգերն ավելի աշխարհիկ էին եւ ավելի հանդուրժող էին ոչ քուրդ բնակչության նկատմամբ: Մասուդ Բարզանին կրկնօրինակում էր Թուրքիայի նախագահ Ռեջեփ Էրդողանին՝ կառուցելով ազգայնական իսլամական վարչակարգ: Ճիշտ է, ի տարբերություն էրդողանի Թուրքիայի, ՔԴԿ-ի իշխանության տակ գտնվող շրջաններում կոռուպցիան պարզապես աներեւակայելի էր: Սադամից ազատագրվելուց 10 տարի անց շարքային քրդերը մասնավոր զրույցներում խոստովանում էին, որ «Սադամը նման անկարգություն թույլ չէր տա»:

Իրաքյան Քուրդիստանը 10 տարվա ընթացքում ձեւավորել է լիարժեք պետական համակարգ, ինքնուրույն զբաղվում է նավթի արտահանմամբ (ՔԴԿ-ն նավթ է արտահանում Թուրքիա, ՔՀՄ-ն՝ Իրան), ստեղծել է իր անվտանգության մարմիններն ու զինված ուժերը, տալիս հրավերներ: Ըստ էության, միակ բանը, որ Իրաքյան Քուրդիստանին կապում էր Իրաքի մնացած մասի հետ, ընդհանուր անձնագրերն ու ընդհանուր փողերն էին, իրաքյան դինարները:

Անկախ պետություն հռչակելու համար անհրաժեշտ էր, որ Բարզանիի եւ Թալաբանիի կլանները համաձայնության հասնեին, այնուհետեւ պետք էր համոզել հարեւաններին, որ անկախ Քուրդիստանը նրանց համար ավելի օգտակար կլինի, քան միասնական դաշնային Իրաքը:

2014-ի ամռանը իրաքյան բանական ու ոստիկանությունը Մոսուլից հետո առանց մարտի թողեցին Քիրքուկը: Քաղաքին մոտենում էին ԻՊ ջոկատները: Քիրքուկը եւ մոտակա նավթահանքերը հապշտապ հասցրել էր զբաղեցնել փեշմարգան: ԻՊ-ի մոտեցող ծայրահեղականներին քշեցին: Դրանից հետո քրդական նավթի արտահանումն աճեց 40 տոկոսով:

2017-ի գարնանը ՔԴԿ-ի եւ ՔՀՄ-ի միջեւ երկարատեւ բանակցություններից հետո Մասուդ Բարզանին հայտարարեց, որ սեպտեմբերի 25-ին տեղի կունենա Իրաքյան Քուրդիստանի անկախության հանրաքվե: Իրաքյան բանակն այդ ժամանակ Մոսուլի համար ճակատամարտ էր մղում եւ մեծ կորուստներ կրեց: Բաղդադի պաշտոնյաների արձագանքը զայրալից էր, մոտավորապես՝ «ինչ է խելքներին փշել, ինչ անկախություն, նախ պետք է ԻՊ-ի վերջը տալ»: Ուրիշ ինչ կարող էին ասել: Նրանք ուժային ռեսուրս չունեին:

Իրաքյան Քուրդիստանը պատրաստվում էր քվեարկության՝ միաժամանակ փորձելով համոզել հարեւաններին եւ հատկապես ԱՄՆ-ին՝ աջակցելու քրդական պետության ստեղծմանը: Չհամոզեցին: Քվեարկության օրը քրդերը միայնակ մնացին քվեատուփերի առջեւ: Նրանց կողքին այլ ազգություններ չկանգնեցին: Բացի այդ, իրաքյան բանակն ավարտել էր Մոսուլի գործողությունը. Բաղդադի տրամադրության տակ արդեն ձեւավորվել էր բռնցք՝ նրանց սպառնալու կամ վզակոթին հասցնելու համար:

Իմ հաղորդումն այն մասին, թե ինչպիսին էր ինքնավարության ազգային-դավանաբանական փոքրամասնությունների վերաբերմունքը հանրաքվեին, վերնագրել էի՝

Քրդական հանրավե.

Անկախություն առանց անկախության

Իրաքյան Քուրդիստանի ինքնավար շրջանի անկախության մասին սեպտեմբերի 25-ի հանրաքվեն ոչ մի անակնկալ չմատուցեց: Իրավիճակը միանգամայն կանխատեսելի էր. քրդերը քվեարկեցին իրենց պետության ստեղծման օգտին, Բաղդադի իրաքյան դաշնային կառավարությունը եւ հարեւանները՝ Իրանը, Թուրքիան եւ Սիրիան (քանի որ նրանց տարածքներում ապրում են զգալի բնակչությամբ քրդական հա-

մայնքներ) դատապարտեցին նրանց: Սակայն, չնայած խիստ հռետորաբանությանը, ո՛չ Թուրքիան, ո՛չ Իրանը որեւէ զինված գործողություն չձեռնարկեցին Իրաքի քրդերի դեմ: Որովհետեւ ինքնավար տարածաշրջանի հետ նրանց կապում են փոխադարձ տնտեսական շահերը. քրդերը մեծ ծավալներով նավթ են արտահանում, իսկ փոխարենը ստանում են իրանական եւ թուրքական ապրանքներ: Հանրաքվեի ընդհանուր լուսաբանման համապատկերում գրեթե աննկատ մնացին Իրաքյան Քուրդիստանի այն բնակիչները, ովքեր չեն ցանկանում ապրել անկախ քրդական պետությունում:

Հանրաքվեի նախաշեմին Իրաքյան Քուրդիստանում թեւածում էր «դրոշների ցունամին»: Դեռ երբեք ինքնավարությունը այս քանակությամբ քրդական կարմիր-սպիտակ-կանաչ դեղին արեւներով դրոշներ չէր տեսել: Խանութները, դպրոցները, տեղական վարչակազմերը, ավտոմեքենաները, հեծանիվները, ուսապարկերը. այն ամենը, ինչին կարելի է գործվածք կամ դրոշակաձող ամրացնել, ընկել էին այս «ցունամի» տակ: Տարածվածությամբ երկրորդ տեղում 25—9 (սեպտեմբերի 25, հանրաքվեի ամսաթիվը) թվերով պաստառներն էին: Ընդհանուր առմամբ, ինքնավարության շրջանների գերակշիռ մասում բարձր տրամագրություն էր տիրում: Տեղի բնակիչների շրջանում նման ոգեւորություն չէր եղել անգամ այն ժամանակ, երբ 2016-ի վերջին — 2017-ի առաջին կեսին տեղի էր ունենում Մոսուլի եւ նրա շրջակայքի ազատագրումը «Իսլամական պետության» գրոհայիններից:

«Սա մեր հնարավորությունն է, — ասում էր ինձ Դոհուկ նահանգից Նարչիվան անունով 23-ամյա բնակիչը: — Մենք պետք է անկախություն ձեռք բերենք: Նորից արաբների հետ ապրելն անտանելի է: Նրանք դավաճանել են մեզ»: Նարչիվանը, միակը չէ, որ այդպես է մտածում: Իրաքի քրդերի շրջանում գերակշռում է այն կարծիքը, որ իրենց հանրաքվեն առաջին հերթին դեմ լինելու դրսեւորում է, այլ ոչ թե կողմ: Արաբների հետ նույն պետության մեջ ապրելու դեմ է գլխավորապես: Սեփական ազգային պետություն ստեղծելը երկրորդ տեղում է: Իհարկե, Իրաքյան Քուրդիստանի առաջին դեմքերի պաշտոնական հայտարարություններում դա չես լսի: Նրանք ավելի հաճախ խոսում են «քրդերի նկատմամբ պատմական անարդարության», «դաշնային կառավարության հետ հակասությունների» եւ «Սահմանադրությանը համապատասխան ինքնորոշման իրավունքի» մասին:

«Երբ Սադամ Հուսեյնն էր ղեկին, արաբները մեզ ճնշում էին: Հալաբ-ջայում 1988 թվականին մեզ ումբակոծում էին նույնիսկ քիմիական զենքով: Երբ հայտնվեց ԴԱԻՇ-ը, սուլնի արաբները աջակցում էին նրան: ԴԱԻՇ-ը սպանում էր քրդերին, սպանում էր եզդիներին: Ում արաբները չէին սպանում, վռնդում են Մոսուլում եւ դրա մերձակայքում գտնվող սեփական տներից: Մինչեւ 2014 թվականը Մոսուլի արեւելյան հատվածի բնակիչների մեծ մասը, օրինակ, քրդեր էին: Դրանից հետո արաբների հետ ապրել հնարավոր չէ», — համառոտ այսպիսին է արաբների նկատմամբ քրդերի պահանջների ցանկը էրբիլի բնակիչ Լուկման Մենմուստի ներկայացմամբ: Նա 27 տարեկան է, ամուսնացած է, ունի երկու տարեկան դուստր: Հեռախոսով ցույց է տալիս կնոջ եւ դստեր լուսանկարները. նրանց ձեռքերում ինքնավարության դրոշակներ են: Հանրաքվեի օրը Լուկմանն ինձ լուսանկար ուղարկեց. նա ընտանիքի հետ քվեարկության տեղամասում է. երեքի ձեռքերում էլ քրդական դրոշակներ են:

Մենք իրաֆցիներ ենք

«Դրոշների ցունամին» հանդարտվեց քրիստոնեական Ալկոշ քաղաքին հասնելով: Միայն մի քանի «կաթիլներ ցողեց» նրա վրա: Այնտեղ Իրաքյան Քուրդիստանի դրոշներ էին ծածանվում միայն այն հատվածում, որտեղ տեղակայված էին քրդական փեշմարգայի ռազմական կազմավորման մարտիկները, եւ տեղի վարչակազմի շենքի վրա:

Ալկոշը նման էր դաժան անառիկ կղզու մոտեցող անկախության հանրաքվեի ծովում: Տեղի բնակիչները հանրաքվեի դեմ ցույցեր եւ հանրահավաքներ չէին կազմակերպում, բայց եւ ոչ մի կերպ չէին աջակցում: Լուռ դիմադրություն՝ ատամներն ամուր սեղմած:

Ալկոշի բնակչությունը կազմված է բացառապես ասորիներից, որոնք պատկանում են Քաղդեական կաթոլիկ եկեղեցուն: Քաղաքի վերելում, լեռան մոխրագույն լանջին ամուր գամված է հինավուրց Ռաբբան Հորմիզդ վանքը: Վանքի հիմնադիրն ինքը՝ Ռաբբան Հորմիզդը, քաղդեացիների ամենահարգված սրբերից է: Իսկ նրա հիմնադրած վանքը հնագույններից է Մերձավոր Արեւելքում: Այսօր այնտեղ վանականներ չեն ապրում, թեեւ լավագույն ժամանակներում 1200 վանական էր բնակվում:

Վանքը հսկում են Իրաքի դաշնային ոստիկանության ծառայողները: Ոստիկաններից մեկը՝ Իլհաբ Մալանը, ով անգլերեն որոշ չափով խոսում է, իմ եւ ուս լուսանկարչի համար շրջայց է կազմակերպում: Նրա գործընկերները լանջի վրա հսկում են վանքի մուտքը: Ինքը՝ Իլհաբը, անմիջականորեն զբաղվում է վանական շինությունների պահպանությամբ: «Ես այստեղ մեծ մասամբ մենակ եմ: Զբոսաշրջիկները քիչ են, այցելուները՝ նույնպես: Հազվագեպ է ինչ-որ մեկը գալիս այստեղ: Վանքում ժամերգությունը, որպես կանոն, տարին մեկ անգամ է լինում՝ Ռաբբան Հորմիզդի հիշատակի տոնին: Այդ օրը վանք են այցելում քաղղեացիներ ոչ միայն Իրաքից, այլեւ ամբողջ աշխարհից: Ես այստեղ զբաղվում եմ տնտեսություն, մաքրություն եմ անում, լվանում, խորհում: Համարյա վանականի պես», — իր ծառայության նրբություններն է ներկայացնում Իլհաբը:

Նախորդ դարերում քուրդ ավագակախմբերը բազմիցս թալանել են վանքը: Վերջին նման հարձակումները թվագրվում են ԺԹ. դարի կեսերով, բայց դրանք դեռ հիշվում են: Ընդհանրապես ասորիների շրջանում բավականին լավ են պահպանվել քրդերի կողմից իրենց նկատմամբ բռնությունների մասին հիշողությունները:

«Մենք հիշում ենք, թե ինչպես են մեր նախնիները հարյուր տարի առաջ տառապել այստեղ իրենց հավատքի համար», — ասում է Ալկոշի մեկ այլ բնակիչ՝ Ռենանը: Նա ուղղակիորեն չի հիշատակում քրդերին, բայց նրանք, ովքեր գիտեն պատմական համատեքստը, հասկանում են՝ խոսքն ում մասին է: Քաղղեական քաղաքի բնակիչներն անծանոթ օտարերկրյա լրագրողին ուղիղ չեն ասում, որ իրենք դեմ են հանրաքվեին: Բայց նրանք այնքան ոգեւորված չեն, որքան քրդերը:

Քրդերը, խոսելով իրենց ինքնավարության մասին, ասում են՝ մեզ մոտ՝ Քուրդիստանում, մենք քրդեր ենք, մեր պետությունը Քուրդիստանն է: Ալկոշի բնակիչները օգտագործում են բոլորովին այլ բառամթերք՝ մենք իրաքցիներ ենք, մեզ մոտ՝ Իրաքում:

«Իրականում մեր քաղաքը վիճելի տարածք է, — ասում է Իլհաբը քարանձավից քարանձավ անցնելիս, որոնք լեռան մեջ հատել են Ռաբբան Հորմիզդ վանքի վանականները: — Ալկոշը գտնվում է Նինվեի հարթավայրի ամենաարեւելյան եզրին: Նինվեի հարթավայրը քրիստոնեական տարածք է: Այստեղ Սադամի տապալումից առաջ հիմնականում ապրում էին ասորիներ՝ կաթոլիկներ եւ ուղղափառներ: Հետո սկսվեց անկայունությունը, շատերը հեռացան: Քրդական շրջանները մեզնից բաժանված

են սարերով»։ Բաղդադի պատկերացմամբ՝ Ալկոշը պատկանում է Նինվե գավառին։ Իրաքյան Քուրդիստանի կառավարության կարծիքով՝ այն Դո-հուկ գավառի մի մասն է, որը մտնում է ինքնավարության կազմի մեջ։

Քաղաքում կարգը հսկում են եւ քրդական փեշմարգան, եւ դաշնա-յին ոստիկանությունը։ Նրանց միջեւ բախումներ չեն լինում։ Եւ այնտեղ, եւ այստեղ ծառայողները բացառապես տեղաբնակներն են։ Դաշնային կառավարության թուլության պատճառով քաղաքի վարչակազմի նշա-նակումը պարտադրում է էրբիլը։ Բառիս բուն իմաստով՝ պարտադրում է։ Այս տարվա հուլիսին, հանրաքվեի օրը նշանակելուց հետո, Իրաքյան Քուրդիստանի կառավարության որոշմամբ պաշտոնից հեռացվեց քաղա-քապետը, որին ավելի վաղ ընտրել էին տեղի բնակիչները։ Նրա փոխա-րեն նշանակվեց «Քուրդիստանի դեմոկրատական կուսակցությունից» մի գործունյա կին։ Տեղի բնակիչները մի քանի անգամ հանրահավաք կազ-մակերպեցին այդ նշանակման դեմ։ Բայց դաշնային կառավարությունը ոչ մի իրական օգնություն չցուցաբերեց ալկոշիներին, եւ բնակիչներն իրենց իրավունքները պաշտպանելու համար ստիպված պիտի դիմեին ավելի արմատական գործողությունների, ինչը կարող էր հանգեցնել արյունահեղության։ Այժմ Ալկոշում վարչական իշխանությունը պատկա-նում է ՔԴԿ-ին։

Ձայներ արտերկրից

Ազգային-կրոնական փոքրամասնությունների ներկայությունը շատ մեծ չէ Իրաքյան Քուրդիստանի բնակչության մեջ։ Բացի ասորիներից, ինքնավարությունում ապրում են արաբներ, թուրքմեններ, քրդախոս շաբաքներ, կակայներ եւ եզդիներ։ Թե որքան է հիմա ինքնավարության բնակչության թիվը, ստույգ հայտնի չէ։ Նախ՝ ինքնավարության կազ-մում 2014-ին եւ 2016-ի աշնանը Մոսուլի ազատագրման գործողության ընթացքում հայտնվեցին մի շարք շրջաններ, որոնք պատկանում էին Իրաքի այլ տարածաշրջանների։ Երկրորդ՝ բնակչության քանակական եւ ազգային կազմը փոփոխությունների է ենթարկվել արաբական շրջաննե-րից եկած փախստականների հաշվին՝ քրդեր, քրիստոնյաներ, այլ փոք-րամասնությունների ներկայացուցիչներ, որոնց քաղաքներն ու գյուղերը ԻՊՊ վերահսկողության տակ էին հայտնվել 2014 թվականին։

Պաշտոնապես ինքնավարություն կառավարությունն իր բնակչության թիվը գնահատում է 5,2 միլիոն քաղաքացի: Ճնշող մեծամասնությունը սուննի քրդերն են: Հենց նրանք են «արաբներից անջատվելու» ամենամեծ ջատագովը: Ասորիները մոտ 200 հազար մարդ են: Առնվազն 250 հազար մարդ է հաշվվում եզդիների համայնքում:

Քրդերը եզդիներին համարում են իրենց ժողովրդի մի մասը, թեև եզդիներն իրենք իրենց ներկայացնում են որպես առանձին ազգատոհմիկ խումբ (նրանք խոսում են քրդերեն, բայց իսլամադավան չեն, նրանց կրոնը այլ է): Եզդիական գլխավոր սրբավայրը՝ Լալեշ վանական համալիրը, գտնվում է Իրաքյան Քուրդիստանի լեռնային տարածքի խորքերում: Մոտերքում գտնվում է Շեյխան քաղաքը, որում մինչ Սադամ Հուսեյնի տապալումը հիմնականում բնակվում էին եզդիներ: Այսօր նրանք գրեթե փոքրամասնություն են (հստակ տվյալներ չկան): Բնակիչների առնվազն կեսը, իրենց իսկ խոսքով, վերաբնակ սուննի քրդեր են: Շեյխանը, ինչպես որ ինքնավարության բնակավայրերի մեծ մասը, առատորեն լցված է ազգային դրոշներով եւ պաստառներով, որոնք կոչ են անում մասնակցել հանրաքվեին եւ քվեարկել անկախության օգտին:

Եզդիներն ավելի զգուշավոր են, քան քրիստոնյաները: Նրանք հերթապահ պատասխան ունեն. «Այո, պետք է քվեարկել անկախության օգտին»: Նրանց պատասխաններից տպավորություն է ստացվում, որ ուզում են հնարավորինս շուտ ազատվել զրուցակցի ներկայությունից: Զկա այն հուզական պոռթկումը, ցանկությունը, որով առանձնանում են քրդերը՝ քննարկելու, թե ինչու է պետք անկախությունը եւ ինչպես օգտագործել այն:

Տարեց եզդի Սամին Շեյխանում չի ապրում, այլ հարեւան գյուղում: Նա նույնպես իմիջիպալոց է խոսում անկախության օգտին քվեարկելու անհրաժեշտության մասին: Բայց նաեւ, ըստ երեւույթին, արտահայտվելու պահանջ ունի: Ուստի շարունակում է. «Դե, իհարկե, Սադամի օրոք նման խառնակություն չի եղել: Ինչ անենք, որ նրա ժամանակ բջջային հեռախոսներ չունեինք: Փոխարենը իրար չէին մորթում ու սպանում: Ես կարող էի թեկուզ ճամփեզրին պառկել ու քնել, եւ ինձ չէին կողոպտի կամ սպանի: Հիմա, եթե քուրդ ես, ավելի լավ է Իրաքի արաբական շրջանում չհայտնվես, եթե արաբ ես, ավելի լավ է քրդերի մոտ չխցկվես: Մենք՝ եզդիներս, ընդհանրապես ավելի լավ է ոչ մի տեղ չերեւանք: Քրդերն

ասում են, որ մենք յուրային ենք, բայց չեն հարգում մեր հավատքը: Համարում են երկրորդ կարգի մարդիկ»:

Ավելի անկեղծ են արտասահմանում ապրող եզդիները: Օրինակ՝ ռուսաստանաբնակ եզդի Ռուստամ Ռզգոյանը, որ խմբագրում է այդ փոքրամասնության ռուսալեզու պարբերականներից մեկը, ասում է, որ Իրաքյան Քուրդիստանում իր հավատակիցները պարզապես ահաբեկված են: «2014-ի օգոստոսին Իրաքի հյուսիսում եզդիների ցեղասպանությունը տեղի ունեցավ ՔԴԿ-ի փեշմարգայի մեղքով: Նրանք վստահեցնում էին, որ երբեք չեն լքելու եզդիներին, հուսալիորեն ապահովելու են նրանց անվտանգությունը: Սակայն օգոստոսի սկզբին փեշմարգան լուռ ու աննկատ հեռացավ Շանգալից, եւ այնտեղ մտան «Իսլամական պետության» գրոհայինները: Զինյալները սպանեցին հազարավոր եզդիների, հազարավորները ստրկության մեջ հայտնվեցին իսլամիստների մոտ, հարյուրհազարավորները դարձան փախստական: Եզդիները ծեծված են ու հալածված, ցրված, չունեն ուժեղ առաջնորդներ: Նրանք չեն աջակցում Իրաքի հանրաքվեին, քանի որ քրդերը նրանց էլ ավելի վատ են վերաբերվում, քան արաբները: Սակայն վախենում են այդ մասին բացահայտ հայտարարել՝ երկյուղելով հալածանքներից», — վստահ է Ռզգոյանը:

Համանման վիճակում են թուրքմենները: Նրանք զբաղեցնում են Քիրքուկի թաղամասերի մեկ երրորդը: Նրանց փոխարեն հանրաքվեին դեմ են արտահայտվում թուրքական իշխանությունները: Թուրքերն ու Իրաքում ապրող թուրքմենները, ըստ էության, նույն ազգաբանական խմբի ներկայացուցիչներ են:

Անկախ պետություն դառնալու ցանկության մասին հայտարարած ինքնավարության տարածքում հայտնված արաբ բնակչության իրավունքները փորձում են պաշտպանել Բաղդադն ու Արաբական պետությունների լիգայի երկրները: Բայց նրանց ջանքերը հայտարարություններից այն կողմ չեն անցնում:

Իրաքյան Քուրդիստանի ներսում փոքրամասնությունների դիրքորոշման մեջ գերակայում է այն, որ նրանց ձեռնտու է Իրաքի Դաշնային Հանրապետության ձեւաչափը: Ինչ վերաբերում է ասորիներին ու եզդիներին, ապա նրանք կցանկանային ստանալ իրենց ինքնավարությունները Իրաքի կազմում: Երկուսն էլ հղում են անում պետության սահմանադրության 140-րդ հոդվածին, որը իրավունք է տալիս փոքրամասնություններին ստեղծելու այդպիսի վարչատարածքային կազմավորումներ:

Բայց կարծես թե նրանց բոլորովին չեն լսում ոչ Իրաքյան Քուրդիստանի նախագահ Մասուդ Բարզանին, ոչ էլ նրա կառավարությունը: Զանադրաբար հանդես գալով քրդերի ինքնորոշման իրավունքի օգտին՝ ինքնավարության կառավարությունն իսպառ անտեսում է իր ոչ քուրդ համերկրացիների ինքնորոշման իրավունքը:

Ես ընդամենը երեք հազորդում եմ գրել հանրաքվեի մասին՝ նախապատրաստությունը, քվեարկության օրը եւ այս մեկը, որն ի մի է բերում տեղի բնակչության տրամագրություններն ու Իրաքյան Քուրդիստանի իշխանությունների վարքագիծը: Դրանց շնորհիվ ես հեշտությամբ փակեցի Իրաք ուղեւորությանս ծախսերը:

Քրդերից ոչ ոք, ում հետ ես շփվել եմ սեպտեմբերի 25-ին ընտրատեղամասերում, չէր հավատում, որ հանրաքվեի արդյունքները հրապարակվելուց անմիջապես հետո Բարզանին անկախություն կհայտարարի: Քվեարկությունն ընկալվում էր որպես առաջին քայլ մոտ ապագայում անկախ Քուրդիստանի ստեղծման շուրջ համաշխարհային հանրության հետ պայմանավորվելու ճանապարհին: Մեր ժամանակներում քիչ է քեզ անկախ հռչակելը, պետք է, որ քո ինքնիշխանությունը ճանաչեն «աշխարհի առաջատար տերությունները»: Եւ ահա ճանաչման առումով Բարզանին լուրջ խնդիրներ ունեն: Դա պայմաններ էր ստեղծում Բաղդադի կողմից կոշտ արձագանքի համար:

ՄԱՍ 6. ՀՈՒՅՍ

Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Թուրքիայի եւ Իրանի ներկայացուցիչները հանդես եկան Իրաքի Դաշնային Հանրապետության տարածքային ամբողջականության պահպանման օգտին: Իսրայելի ներկայացուցիչները, ներառյալ վարչապետ Բենիամին Նեթանյահուն, հայտարարեցին, որ քրդերը ունեն սեփական պետության իրավունք, արժանի են դրան: Բայց ինչ է Իսրայելը Մերձավոր Արեւելքում: Ավելի լավ կլիներ, որ իսրայելցիներն ընդհանրապես լռեին, թե չէ միայն զայրացրին քուրդ հարեւաններին:

Այսպիսով, երբ էրբիլում պաշտոնապես հայտարարվեցին քվեարկության արդյունքները, Բաղդադը պատասխանեց, որ «ջանքեր կգործադրի

սահմանադրական կարգը վերականգնելու համար»։ Քրդերի եւ արաբների շրջանում լուրեր տարածվեցին, որ իրաքյան բանակը կփորձի հետ գրավել Քիրքուկն ու նրա նավթային շրջակայքը։ Դա իսկապես «սահմանադրական կարգը վերականգնելու» ամենից ակնհայտ նպատակն էր. այնտեղ գետնի տակ նավթի իսկական ծով կա։ Ուստի հանրաքվեից հետո ես մեկնեցի Քիրքուկ եւ տեղում պարզեցի, որ

Քիրքուկում պատերազմի չեն սպասում

Ուրբաթ օրվանից Թուրքիան մտադիր է փակել Իրաքյան Քուրդիստանի հետ միակ սահմանային անցակետը։ Բաղդադը սպառնում է զորքեր մտցնել Իրաքյան Քուրդիստանի շրջաններ, որտեղ խառնազգ բնակչություն է ապրում։ Էրբիլում ՄԱԿ-ի ներկայացուցչությունը մշակում է իր աշխատակիցների հնարավոր տարահանման ծրագիրը։ Այս ամենը նախորդ երկուշաբթի տեղի ունեցած Իրաքյան Քուրդիստանի անկախության հանրաքվեի հետեւանքն է։ Այն մասին, թե ինչպիսին է իրավիճակը Քիրքուկ քաղաքում, որը կարող է դառնալ քրդերի եւ Բաղդադի կառավարության միջեւ բախումների հիմնական էպիկենտրոնը, կներկայացնենք մեր հաղորդման մեջ։

Իրաքյան Քուրդիստանի ինքնավար շրջանի կառավարությունը խոստացել էր սեպտեմբերի 25-ին կայացած հանրաքվեի արդյունքները հայտարարել քվեարկությունից երեք օր անց։ Հայտարարվեց մեկ օր շուտ։ Անցած չորեքշաբթի, երբ քրդական Հանրաքվեի եւ ընտրությունների բարձրագույն անկախ հանձնաժողովը հայտարարեց քվեարկության արդյունքները, մեկը մյուսին հաջորդեցին Բաղդադի, Թուրքիայի եւ Իրանի կտրուկ հայտարարությունները։ Իրաքից տարածաշրջանի անկախության օգտին քվեարկել էր ընտրատեղամասեր եկածների մոտ 93 տոկոսը։ Ընդհանուր առմամբ, հանրաքվեին մասնակցել էր մոտ 3,4 միլիոն մարդ։

Բացի այն շրջաններից, որտեղ բնակվում է քրդերի ճնշող մեծամասնությունը, ընտրատեղամասեր են գործել, այսպես կոչված, վիճելի շրջաններում։ Դրանք են՝ Շանգալ եզդիական անկլավը, Ալկոշ, Թել Քեյֆ եւ Բաշիկա քրիստոնեական քաղաքները եւ Քիրքուկի շրջանը համառոտ քաղաքի հետ, որտեղ, բացի քրդերից, ապրում են թուրքմենների եւ

արաբների խիտ համայնքներ: Բաղդադի կարծիքով՝ այդ շրջանները չեն մտնում ինքնավարության կազմի մեջ, այլ անջատվել են քրդերի կողմից իրաքյան այլ շրջաններից ռազմական միջամտության արդյունքում:

Ամենահակասականը համարվում են Քիրքուկը եւ նրա նավթով հարուստ շրջակա բնակավայրերը: Այն բանից հետո, երբ հրապարակվեցին հանրաքվեի արդյունքները, Իրաքի խորհրդարանը հանդես եկավ իրաքյան բանակը այդ վիճելի տարածաշրջան մտցնելու նախաձեռնությամբ, եթե Իրաքյան Քուրդիստանն իսկապես որոշի իրեն անկախ հռչակել:

«Մեր կառավարությունը Բաղդադում է,
ոչ թե Էրբիլում»

Քիրքուկ քաղաքում իրավակարգի պահպանման առումով իրավիճակը լրջորեն փոխվել է, եթե համեմատելու լինենք 5–6 ամիս առաջվա իրավիճակի հետ, երբ տեղի էր ունենում Մոսուլի ազատագրման գործողությունը: Փողոցներում նկատելիորեն նվազել է զինված պարեկների եւ հատուկ տեխնիկայի քանակը: Այսօր ռազմականացման ծավալներով այն նույն մակարդակի վրա է գտնվում Իրաքյան Քուրդիստանի խոշորագույն քաղաքների՝ Էրբիլի, Սուլեյմանիայի եւ Դոհուկի հետ: Այդուհանդերձ, համաշխարհային լրատվական գործակալությունները հայտնում են Քիրքուկի վրա կառավարական ուժերի հնարավոր հարձակման մասին: Երբ գտնվում ես քաղաքի ներսում, տպավորություն է ստեղծվում, որ լուրերը վերաբերում են ինչ-որ այլ, շատ հեռավոր, ոչ իրաքյան Քիրքուկին:

Քաղաքում կյանքը հոսում է իր սովորական հունով: Կենտրոնական շուկան, որ մերձավորարեւելյան ցանկացած քաղաքի սիրտն է, գործում է հանգիստ եւ անխափան: Ոչ մի լուր այն մասին, որ առաջիկա օրերին ստիպված են լինելու փակվել, շուկան չի տարածում: Իսկ չէ՞ որ ցանկացած իրաքյան, ցանկացած մերձավորարեւելյան քաղաքի համար շուկան տեղեկատվության հիմնական աղբյուրն է: Այն, ինչ հաղորդվում է համացանցում, ռադիոյով կամ հեռուստատեսությամբ, երկրորդական է:

Անցած հանրաքվեն բոլորովին չի ազդել Քիրքուկի կենսառիթմի վրա: Քաղաքը բաժանված է երեք հիմնական մասի՝ քրդական, թուրքոման/թուրքմենական եւ արաբական: Ինչպես նախքան հան-

րաքվեն, հիմա էլ այս ազգային խմբերն իրենց ենթակա են համարում որոշակի կառավարության:

«Մեր կառավարությունը Բաղդադում է, այլ ոչ թե էրբիլում», — ասում է թուրքմենական Չադիլլի շրջանում վարսավիրանոցի եւ սննդի խանութի սեփականատեր Հուսեյնը: — Հանրաքվեն մեզ վրա ոչ մի կերպ չի ազդել: Մենք ցանկանում ենք ապրել միասնական Իրաքում»:

Չադիլլիում իրավակարգը պահպանում են Իրաքի դաշնային ոստիկանությունը եւ տեղի թուրքմենական աշխարհագործ: Շրջանի կենտրոնում՝ բարձր դրոշակաձողի վրա, ծածանվում է իրաքցի թուրքմենների դրոշը՝ կապտաճերմակ կտավը՝ կիսալուսնով եւ աստղով: Թեեւ որոշ տեղերում երբեմն կարելի է տեսնել նաեւ Իրաքյան Քուրդիստանի հնամաշ դրոշները:

Արաբական թաղամասերում եւս ամեն ինչ հանգիստ է եւ կայուն՝ ոչ մի իրարանցում կամ զգուշավորություն: Այդ թաղամասերում ընդհանրապես աշխատում են դրոշներից զերծ մնալ՝ թե՛ իրաքյան պետական, թե՛ քրդական: Միայն որոշ տեղերում կան շիաների դրոշներ՝ իմամ Հուսեյնի պատկերով: Փողոցները պարեկում են բացառապես Իրաքի դաշնային ոստիկանության ծառայողները:

Եւս մեկ կարեւոր փոփոխություն՝ համեմատած 5–6 ամիս առաջվա իրավիճակի հետ: Քիրքուկի ամրոցից, որտեղ գտնվում են ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցանկում ընդգրկված հուշարձանները, դուրս են բերվել փեշմարգայի քրդական զինված կազմավորումները: Այժմ ամրոցը բաց է բոլոր ցանկացողների համար, ընդ որում՝ անվճար:

«Այստեղ անվտանգ չէ»

Ի տարբերություն թուրքմենական եւ արաբական թաղամասերի՝ բուլղորովին այլ տրամադրություն է տիրում քրդական շրջաններում: Քրդերը շտապում են հայտնել օտարերկրացիներին, որ Քիրքուկում պետք է շրջեն միայն զինված պահապանների ուղեկցությամբ:

«Դուք ի՞նչ եք անում այստեղ, — հարցնում է տեղի երթուղայինի վարորդը՝ Մերիվան անունով քուրդը: — Այստեղ անվտանգ չէ: Ոչ մի դեպքում ոտքով մի քայլեք քաղաքում: Այստեղ ամեն օր մարդկանց են առեւան-

գում: Քիրքուկում գտնվել առանց փեշմարգայի պահպանության օտարերկրացիների համար շատ վտանգավոր է»:

Նշենք, որ քրդերն այդպես են արձագանքում 2014 թվականից, երբ քաղաքն ու շրջակայքը անցան փեշմարգաների վերահսկողության տակ: Արաբներին ու թուրքմեններին քրդերն ընկալում են որպես թշնամիներ: Դա որոշ չափով արդարացված է: «Իսլամական պետության» գրոհայինների բոլոր հարձակումները սկսվել են արաբական եւ թուրքմենական շրջաններից: Վերջին նման հարձակումը տեղի է ունեցել 2016-ի հոկտեմբերին՝ Մոսուլի ազատագրման գործողության մեկնարկից հետո: Մինչ այժմ քաղաքային շենքերի վրա, որտեղ տեղի են ունեցել ամենաթեժ փոխհրաձգությունները, երեսում են փամփուշտների հետքերը:

Ու թեեւ քրդերը զգուշանում են իրենց հարեւաններից, նրանց թիվը տեղի բնակչության մեջ կայուն աճում է, եւ նրանք քաղաքը համարում են իրենցը, իսկ արաբներին ու թուրքմեններին՝ եկվորներ: Ճիշտ է, եթե, այնուամենայնիվ, դիմում ենք պատմությանը, ապա պարզվում է, որ քաղաքը հիմնադրվել է ասորիների կողմից, որոնց ժամանակի ընթացքում միասին հաջողությամբ դուրս են մղել քրդերը, արաբներն ու թուրքմենները:

Ընդհանուր առմամբ, հանրաքվեից հետո քաղաքում տրամադրությունները շատ չեն փոխվել: Նույն կենսառիթմը, քրդերի նույն մտավախությունները եւ արաբների ու թուրքմենների հյուրընկալությունը: Նշաններ չկան, որ հավանական հակառակորդներն ամրապնդում են դիրքերը՝ պատրաստվելով մարտերի:

Էրբիլում ՄԱԿ-ի առաքելության մեր աղբյուրը վստահ է, որ տարածաշրջանում իրավիճակը սահմանափակվելու է բարձրագույն խստաշունչ հայտարարություններով: «Իրական հակամարտությունը ձեռնտու չէ ոչ ոքի՝ ո՛չ քրդերին, ո՛չ Բաղդադին, ո՛չ Թուրքիային, ո՛չ Իրանին: Նրանք ունեն փոխադարձ տնտեսական շահեր: Եթե ինչ-որ մեկը կտրուկ քայլեր ձեռնարկի, ապա դա կազդի բոլորի վրա: Ուստի գործը խոսքերից այն կողմ չի անցնի: Առավելագույնը, 2—3 շաբաթից ամեն ինչ կհանդարտվի, իրավիճակը կկայունանա», — վստահ է աղբյուրը:

Նրա կարծիքով՝ 2—3 շաբաթ անց կկայունանան նաեւ նավթի գները, որոնք արագորեն աճեցին Իրաքյան Քուրդիստանից եւ Բաղդադից եկող նորությունների համապատկերում: Բաղդադը չի դիմանա քրդերի նման լուրջ հակառակորդի դեմ լայնածավալ պատերազմին: Իր հերթին Էրբի-

լին ձեռնառու չեն հարեւանների հետ բացահայտ հակամարտությունները, քանի որ հենց նրանք են իր նավթի հիմնական սպառողները: Նավթը ինքնավարության, որը որոշել է անկախության հանրաքվե անցկացնել, եկամուտների գլխավոր աղբյուրն է:

ՄԱԿ-ի առաքելությունից իմ ծանոթի կանխատեսումը չիրականացավ: Հանրաքվեից երեք շաբաթ անց իրաքյան բանակը, գլխավորապես շիա «Հաշդ աշ Շաաբի»¹ աշխարհագործի ուժերը, շարժվեցին դեպի Քիրքուկ: Այդ ընթացքում ես վերադարձել էի Ռուսաստան եւ հետեւում էի իրադարձություններին լուրերի թողարկումներով եւ հանրային հարթակների հաղորդագրություններով:

Հոկտեմբերի 16-ի վաղ առավոտյան «Համվի»-ները եւ «Աբրամս»-ները շիաների իմամ Հուսեյնին պատկերող դրոշներով առանց կռվի գրավեցին թուրքմենական Չադիզլե արվարձանը: Քիրքուկի մասին նորությունները հայտնվեցին խոշորագույն լրատվական գործակալությունների գլխավոր էջերում: Սպասվում էր, որ կատաղի մարտեր կսկսվեն Քիրքուկի համար կառավարական ուժերի եւ փեշմարգայի միջեւ: Սոցիալական ցանցերում հայտնվեցին Դոհուկի եւ էրբիլի քրդերի տեսաուղերձները այն մասին, որ իրենք պատրաստ են օգնության հասնել «Քիրքուկի եղբայրներին ու քույրերին» եւ նրանց հետ միասին պաշտպանել «հինավուրց քրդական քաղաքը»:

Բայց կռիվներ չկային: Մեկը մյուսի հետեւից ականատեսները հաղորդագրություններ էին տարածում, որ «հաշդերն» ու բանակն անարգել գրավում են շրջան շրջանի հետեւից: Ճաշի ժամին նրանք գրավել էին քաղաքի շրջակայքի նավթահանքերը եւ «Կ-1» հսկայական ռազմական լայնը: Միայն հազվադեպ տեղի են ունենում փոքրիկ փոխհրաձգություններ: Դրանք փեշմարգայի որոշ մարտիկներ էին, որ չէին ենթարկվել հրամանատարների հրամանին եւ որոշել էին դիմադրություն ցույց տալ: Նրանք չէին հավատում կամ չէին ուզում հավատալ, որ իրենց հրամանատարները պայմանավորվել են Քիրքուկը հանձնելու մասին:

«Հաշդերի» եւ բանակի հարձակումից երկու օր առաջ տեղի էր ունեցել շատ կարեւոր հանդիպում՝ «Քուրդիստանի հայրենասիրական միության» առաջնորդ Զալալ Թալաբանիի եւ իրանցի գեներալ Կասիմ Սուլեյմանիի միջեւ: Սուլեյմանին հանդիպմանը ներկայացնում

¹ Ժողովրդի մեջ նրանց անվանում են «հաշդեր»:

էր Բաղդադը: Իրաքցի պաշտոնյաները նրան անվանում են «Իրաքի կառավարության խորհրդական»:

Սուլեյմանին մեր ժամանակների մեծագույն գործիչներից է: Մեր-ձավոր Արեւելքում Իրանի ռազմական ընդլայնման գլխավոր ճարտարապետը: Հենց նա է շիա աշխարհագործի՝ «Հաշդ աշ-Շաաբի» ստեղծման նախաձեռնողը, որն առանցքային դեր խաղաց Մոսուլի շրջափակման եւ Իրաքում ԻՊ ջախջախման գործում: Նրա նախաձեռնությունամբ Ռուսաստանը սիրիական պատերազմի մեջ մտավ՝ ի պաշտպանություն Բաշար Ասադի (Սուլեյմանին երկու անգամ թռավ Մոսկվա, նախքան Ռուսաստանի ղեկավարությունը պաշտոնապես կհայտարարեր, որ ռուսական բանակը կողարկի Սիրիա): Եւ նա գրասենյակային գեներալ չէ: Համացանցը լի է լուսանկարներով, թե ինչպես է ամենադաժան մարտերի ժամանակ Սուլեյմանին այցելում առաջնագծեր մերթ Սիրիայում, մերթ Իրաքում:

Իրանցի գեներալը Զալալ Թալաբանիի հետ խոսել էր հոկտեմբերի 13-ին կամ 14-ին: Նա համոզել էր Թալաբանիին աջակցել Բաղդադին, այլ ոչ թե Բարզանիին: Թե ինչպես է համոզել՝ մնում է կռահել: Քիրքուկում՝ «Կ-1» ռազմակայանում եւ մոտակա նավթային հանքավայրերում, տեղակայված էր փեշմարգան, որը ենթարկվում էր հենց ՔՀՄ-ին: Փեշմարգան կազմակերպված հեռացավ, նրան կազմակերպված փոխարինեցին «հաշդերը», բանակն ու դաշնային ոստիկանությունը:

Քիրքուկով գործը չսահմանափակվեց: Իրաքի վարչապետ ալ Աբադին հայտարարեց, որ կառավարական ուժերի նպատակն է գրավել բոլոր «վիճելի շրջանները»:

Դաշնային կառավարության ծրագրերը ոգեւորել են եզդիներին եւ ասորիներին, որոնք ապրում են Իրաքյան Քուրդիստանի իշխանության ներքո: Նրանք կրկին ինքնավարություն ստանալու հույս են փայփայում, որն այդպես էլ չստացան ոչ Առաջին համաշխարհային պատերազմի արդյունքում, ոչ էլ 2003-ին Իրաքի ամերիկյան բռնազավթումից հետո:

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ասորական ինքնավարություն ստեղծելու գաղափարին աջակցում էր Ռուսական կայսրությունը: Բայց 1918-ին Ռուսաստանում սկսված քաղաքացիական պատերազմի պայմաններում ռուսների հոգսը այլեւս հեռավոր, տարաշխարհիկ ասորիները չէին: Մինչդեռ Օսմանյան կայսրության պարտությունն ավելի ու ավելի ակնառու էր դառնում: Պետք էր որսալ պահը եւ

միանալ դրա անխուսափելի մասնատմանը: Ասորիների առաջնորդները դա շատ լավ էին հասկանում:

1919 թվականին Փարիզում կայացած խաղաղության համաժողովին, երբ հաղթողները որոշում էին պարտվածների ճակատագիրը, ասորական պատվիրակությունը ժամանեց իր առաջարկով: Պատվիրակությունը գլխավորում էր Սիրիայի ուղղափառ եկեղեցու եպիսկոպոս Մար Եփրեմ Բարսումը: Հենց սիրիական ուղղափառ եկեղեցու ծխականներն էին հիմնականում Թուր Սեդին սարահարթի բնակչությունը, որտեղ թուրքերն ու քրդերը ոչնչացրին կամ վտարեցին խաղաղ քրիստոնյա բնակչությանը:

Պատվիրակությունը քարտեզ էր պատրաստել՝ նշելով Ասորաքաղդեական անկախ պետության սահմանները: Յեղասպանությունից հետո ասորիներն այլևս չէին ցանկանում ապրել օտարի իշխանության տակ, նրանք իրավունք ունեին հավակնելու սեփական պետությանը՝ հետագայում նման ողբերգություններից խուսափելու համար: Հնարավոր Ասորաքաղդեական պետության տարածքը ներառում էր Վերին Միջագետքը, Հաբարիի լեռնային շրջանը եւ Նինվեի հարթավայրը: Այսինքն՝ ասորիների համախումբ բնակչության շրջանները ցեղասպանությունից առաջ:

Սակայն անգլիական պատվիրակությունը մեծ ջանքեր գործադրեց, որպեսզի ասորիները համաժողովում ձայնի իրավունք չստանան: Անգլիացիները ցանկանում էին ստանալ Իրաքը որպես իրենց պրոտեկտորատ՝ նավթի շատ հարուստ պաշարներով (Քիրքուկն այն ժամանակ էլ որոշիչ գործոն էր): Իրաքի հյուսիսային շրջանները «յուրացրել» էին Ասորաքաղդեայի մոտ կեսը: Համաշխարհային պատերազմի մյուս հաղթողը Ֆրանսիան էր: Նա հավակնում էր Սիրիային, որին նույնպես բաժին էր ընկնում ասորական հավանական պետության զգալի մասը: Ասորաքաղդեայի մնացած շրջանները տրվեցին երիտասարդ թուրքական հանրապետությանը: Յեղասպանությունից տուժած ժողովրդին անգամ ինքնավարություն չտրվեց:

Մեկ տարի անց բրիտանացիների հետ տարաձայնությունների պատճառով Ֆրանսիացիները նախաձեռնեցին Սիրիայի հյուսիս-արեւելքում (Ջիզիրայի շրջանում, որտեղ 100 տարի անց կհայտնվի Ջազիրա երկրամասը՝ Ռոժավայի ինքնավարության մի մասը) ասորական ինքնակառավարում ստեղծելու նախագիծը: Գործին մասնակից դարձրին արքայազն (մալիկ) Ղամբարին, որը ցեղասպանության շրջանում փախել էր Օսմանյան կայսրությունից Վրաստան: Նա Քաղդեական կաթոլիկ եկեղեցու

հետեւորդ էր, թերեւս, այդ պատճառով էլ ֆրանսիացիները խաղաղորույթ կատարեցին նրա վրա:

Սիրիայի հարցով Ֆրանսիայի գերագույն հանձնակատար գեներալ Գուրոն 1920-ի ամռանը Բեյրութում հանդիպել էր Ղամբարի հետ: Պայմանավորվել էին, որ մալիկը պետք է վերադառնա Կովկաս, հավաքի ասորի կամավորների եւ նրանց հետ մեկնի Զազիրա: Ֆինանսական ծախսերը ստանձնում էին ֆրանսիացիները: Ինչպես իր հոգւածում գրել է լիբանանցի հրապարակախոս Աշուր Գիվարգիսը, որը մանրամասն ուսումնասիրել է թեման, Ղամբարին բավականին արագ հաջողվել է հավաքել 450 կամավորների, այսինքն՝ մի լիարժեք գումարտակ: Նրանց թվում էին տարբեր եկեղեցական հոսանքների հետեւորդներ՝ եւ կաթոլիկ քաղղեացիներ, եւ սիրա-կաթոլիկներ, հակոբիկյաններ եւ Արեւելքի ասորական եկեղեցու ծխականներ:

Գումարտակը ժամանում է Զազիրա եւ ձեռնամուխ լինում իրավակարգի պահպանմանն ու Թուրքիայի հետ սահմանի հսկմանը: Մալիկ Ղամբարը զուգահեռաբար ներքաշվում է ասորիների այլ հոգեւոր եւ հասարակական առաջնորդների հետ հակամարտությունների մեջ: Նրանք վիճում են միմյանց հետ՝ ինքնավարություն ստեղծելու համար ուժերը միավորելու փոխարեն: Այդ վիճաբանություններին միջամտում են անգլիացիները եւ մի բան էլ՝ նոր պատճառներ ստեղծում պառակտումների համար:

Վերջապես, 1922-ի հուլիսին Ազգերի լիգան պաշտոնապես ճանաչեց Սիրիան եւ Լիբանանը որպես Ֆրանսիայի ենթամանդատ տարածքներ: Բացի այդ, ճանաչվեց Իրաքի, Հորդանանի եւ Պաղեստինի նկատմամբ Բրիտանիայի իրավունքը: Ֆրանսիացիները ցրեցին ասորական գումարտակը եւ նրա զինծառայողներին ընդգրկեցին Օտարերկրյա լեգեոնի մեջ: Ֆրանսիան փակեց ինքնավարության թեման:

1933-ին Սիմելի կոտորածից հետո ասորիները նորից սկսեցին խոսել սեփական վարչատարածքային կազմավորում ունենալու մասին: Այդ հարցը քննարկվեց Ազգերի լիգայում: Ժամանակն անցնում էր, հստակ որոշումներ չէին ընդունվում, արդյունքում Ազգերի լիգան դադարեցրեց քննարկումները:

Հաջորդ անգամ ինքնավարության թեման օրակարգային դարձավ 2003-ին Իրաքի ամերիկյան բռնազավթումից հետո: Երկրում սրվեցին ազգատոհմիկ-կրոնական հակասությունները: Ամերիկացիների կող-

մից ձեւավորված կառավարությունն ի վիճակի չէր ապահովելու ազգային փոքրամասնությունների անվտանգությունը: 2004–2008 թվականներին Մոսուլում կրոնական արմատականները սպանում էին ասորի հոգեւորականներին, առեւանգում եւ սպանում միտրոպոլիտներին: Բաղդադի Դորա քրիստոնեական արվարձանը, որտեղ ապրում էր 50 հազար ասորի, ժամանակ առ ժամանակ գրոհում էին ահաբեկիչները: 2010 թվականի հոկտեմբերի 31-ին 6 ահաբեկիչներ 100 մարդու պատանդ վերցրին Սուրբ Կույս Մարիամ Աստվածածնի կաթոլիկ տաճարում: Տաճարը գրոհեցին իրաքյան հատուկ ստորաբաժանումները, զոհվեց 58 մարդ, այդ թվում՝ հոգեւորականներ, ծխականներ, ոստիկաններ եւ պատահական անցորդներ, 78 մարդ վիրավորվեց կամ խեղվեց: Հարձակման պատասխանատվությունը ստանձնեց «Իրաքի իսլամական պետություն» կազմակերպությունը (հետագայում այն դարձավ ԻԼԻՊ, իսկ 2014-ի ամռանը՝ ԻՊ): Դորայի բնակիչները զանգվածաբար լքեցին տարածքը: Այժմ այս արվարձանում ապրում է ոչ ավելի, քան 100 քրիստոնյա ընտանիք:

2014-ի հունվարին Իրաքի կառավարությունը կարծես թե համաձայնվեց ստեղծել Նինվեի հարթավայր անվանումով առանձին նահանգ, որտեղ կկազմակերպվեր ասորական ինքնակառավարումը: Ենթադրվում էր Նինվե նահանգից առանձնացնել երեք շրջան, որտեղ հիմնականում քրիստոնյաներ են ապրում՝ Թե ԲեյՖը, Համդանիան եւ Շեյխանը, եւ դրանցից ձեւավորել նոր շրջան: Սակայն այս գաղափարը կյանքի կոչելու համար կառավարությունը գործնական ջանքեր չգործադրեց: Նույն թվականի ամռանը Նինվեի նահանգը հայտնվեց ԻՊ իշխանության ներքո:

Երբ 2016-ի աշնանը իրաքյան բանակն ու փեշմարգան ազատագրեցին Նինվեի հարթավայրը, ասորական քաղաքական կազմակերպությունները դարձյալ հայտարարեցին՝ մեզ անհրաժեշտ է ինքնավարություն, որպեսզի չկրկնվեն քրիստոնյաների հալածանքները: Իրաքի իշխանություններն այդ թեման հետաձգեցին մինչեւ Մոսուլի լիակատար ազատագրումը: Քանի դեռ շարունակվում էր Արեւմտյան Մոսուլի գրոհը, Իրաքյան Քուրդիստանում հանրաքվե անցկացնելու մտադրության մասին հայտարարեց Մասուդ Բարզանին: Նորից ասորիների համար ժամանակ չգտնվեց:

2017-ի հոկտեմբերի երկրորդ կես: Նինվեի հարթավայրի ասորիները կողմ արտահայտվեցին, որ իրենց հողերը գտնվեն Բաղդադում

դաշնային կառավարության վերահսկողության ներքո: Անցկացված հանրաքվեն ցույց տվեց, որ քրդական քաղաքական կուսակցությունները մտադիր չեն հաշվի նստել փոքրամասնությունների իրավունքների հետ: Եզդիները եւս ցանկություն հայտնեցին լինել Բաղդադի իրավազորության ներքո:

Թողնելով Քիրքուկը՝ փեշմարգան նահանջեց մյուս վիճելի տարածքներից: Եզդիական Շանգալն առանց դիմադրության անցավ «հաշդերի» վերահսկողությանը: Բաշիկա քաղաքը եւս, որտեղ, բացի ասորիներից, ապրում են եզդիական եւ քրդական համայնքներ, «հաշդերը» առանց կռվի գրավեցին. տեղացիները նրանց դիմավորեցին երգ ու պարով:

Դաշնային ուժերի ժամանմանը սպասում էին Ալկոշում: Բայց քաղաքից 15 կմ հեռավորության վրա՝ ասորական Բակուֆա գյուղում, փեշմարգան, որը ենթարկվում էր Մասուդա Բարզանիի կուսակցությանը, մարտի բռնվեց դաշնային ոստիկանության եւ «հաշդերի» հետ: Գործի դրվեց ծանր հրետանին: Ալկոշի բնակիչները սոցիալական ցանցերում տեղադրում էին Բակուֆայի վրա բարձրացող սեւ ծխի լուսանկարներ:

Կարծես թե պարագործս է. արաբներին, որոնց 2014-ի ամռանից փոքրամասնությունները մեղադրում էին ԻՊ հաղթարշավի համար, ասորիները, եզդիներն ու թուրքմենները հանկարծ սկսեցին համարել իրենց փրկությունը: Փրկությունը քրդական ազգայնականությունից: Ազգային փոքրամասնությունները հավատացին, որ կարող են ստանալ իրենց ինքնակառավարումը, եթե ենթարկվեն Բաղդադին, այլ ոչ թե էրբիլին: Ուզում էին հավատալ: Նրանց մեջ կրկին հույս արթնացավ... հերթական ողբերգությունից հետո: Եւ նրանց, հատկապես ասորիներին ու եզդիներին՝ Իրաքի ամենահալածված փոքրամասնություններին, հույսը, հավատը շատ են պետք, որ ահա ուր որ է կունենան իրենց ինքնավարությունը: Առանց դրա, նրանց համար պարզապես անտանելի կլինի Իրաքում ապրելը:

Իսկ ի՞նչ եղավ իրաքյան քրդերի վիճակը: Քրդերը հանրաքվեից մեկ ամիս անց այդպես էլ չանկախացան: Կորցրեցին նավթով առատ Քիրքուկը եւ իրենց տարածքի 30 տոկոսը, որ վերահսկում էին մինչեւ հանրաքվեն: Անկախության մասին հանրաքվեի նախաձեռնողը՝ Մասուդ Բարզանին հրաժարական տվեց (արեւմտյան լրատվամիջոցները պնդում են՝ օտարերկրյա դիվանագետների ճնշման տակ): Ինքնավարության կառավարությունը խնդրեց Բաղդադին գումար հատկացնել փեշմարգայի


մարտիկներին եւ ինքնավարության պաշտոնյաներին աշխատավարձ վճարելու նպատակով:

Այդպիսին է Մերձավոր Արեւելքը, եւ առհասարակ Արեւելքը. նրանք, ովքեր իշխանություն են ստանում, արագորեն վերածվում են անսկզբունք կեղեքիչների. նրանք, ովքեր կորցնում են այն կամ երբեւէ չեն ունեցել, ապրում են տարտամ հույսերով՝ գրեթե անիրականանալի կամ գրեթե երբեք չիրականացող:

2017 թվական, աշուն
Երբիլ-Կիմրի

Թարգմանությունը ուսերենից՝
բանասիրական գիտ. թեկնածու
ԱՐՄԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻ





ԱՐՈՒԵՍՏՆԵՐԻ ԱՐՈՒԵՍԱԸ,
ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԳԻՏՈՒԹԻՒՆ
ՍԱՐԴՈՒՆ ՀՈՎՈՒԵԼԸ ԵՒ ՈՒՂՂԵԼՆ Է

Վերջին շրջանի կարևոր հրատարակություններից կարելի է համարել Մելքիսեդեկ Եպիսկոպոս Մուրադեանցի ձեռնարկի¹ վերահրատարակությունը. գիրք, որը Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմի Առաջնորդ Յովհան Արքեպիսկոպոս Տէրտէրեանը բնութագրում է իբրեւ «ամենօրեայ ընթերցանութեան գիրք մը»: Աշխատութիւնն արեւմտահայերէնից արեւելահայերէնի փոխադրել եւ «Երկու խօսքը» հեղինակել է տէր Յովէլ քահանայ Օհանեանը: Յոյժ կարեւոր եւ շնորհակալ գործն իրականացուել է վերոյիշեալ թեմի Օքլենդի Սուրբ Վարդան Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հաւատաւոր զաւակների նուիրատուութեան շնորհիւ:

Այս անփոխարինելի ձեռնարկի հեղինակը՝ Մելքիսեդեկ Եպիսկոպոսը, Առաջաբանում շեշտում է, որ աշխատութիւնը նուիրում է Ներսէս է. Աշտարակեցի «երանաշնորհ» Հայրապետին, որն անգամ տազնապի օրերին, իսկ այդ պահին առաւել եւս, ջանադրաբար շարունակել է տարածել Աւետարանի լոյսը «սրբել ու լուսաւորել համայնքի քրիստոնէական կեանքն ու կենցաղը» (էջ 17): Եւ իր գլխաւոր պարտքն է համարել «ընտիր եկեղեցականներ պատրաստելն ու քարոզիչ հովիւներ հասցնելը» (Անդ): Գիրքն առաջին անգամ հրատարակուել է Կ. Պոլսում 1892-ին «Ն. Կ. Պէրպէրէան» տպագրատանը:

«Հովուական աստուածաբանութիւն»՝ դժուարին գործ էր նախաձեռնել մեր երեւելի հոգեւորականը, որը թանձրացական դարձնելու համար ուսումնասիրել էր հրապարակում եղած երկասիրութիւնները (ի մասնաւորի՝ շուեյցարացի աստուածաբան Ալեքսանդր Վինէի համանուն աշխատութիւնը), բծախնդրօրէն ընտրել, թարգմանել, ի մի էր բերել,

¹ ՄԵԼՔԻՍԵԴԵԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԵԱՆՑ, Հովուական աստուածաբանութիւն, Սուրբ էջմիածին, 2022, 296 էջ:

տեղայնացրել եւ մեկնաբանել՝ «Առաքելական Սուրբ Եկեղեցու պաշտելի ուղղութեան համաձայն» (22): Հոփուութեան կոչուածների համար այս դասագիրքը, անփոխարինելի լինելուց զատ, նաեւ մատչելի եւ օգտակար կարող է լինել «Իւրաքանչիւր» ընթերցողի համար, քանզի յայտնի իրողութիւն է՝ Մուրադեանցը հրապարակախօսի անուրանալի-եզակի շնորհ ունէր, առերեւոյթ՝ անմիջական, պարզ, առինքնող, սակայն խորհելու մղող գրիչ, կլանող մի ոճ, որի շնորհիւ ընթերցողը համակուում է նիւթով, հաստատապէս փորձում է մտապահել շարադրանքի բոլոր կարեւոր մտքերը, տողերը: Ամենը՝ առանց բացառութեան: Հեղինակը շարադրանքը տրոհել է մասերի, ենթակէտերի, որոնց վերնագրերն արդէն խօսուին են՝ հարցադրում եւ պատասխաններ պարունակող: Իսկ սա նշանակում է, որ ընթերցողը կարող է իրեն յուզող դժուարին խնդիրների պատասխանները, լուծումները հեշտութեամբ գտնել: Շարադրանքն առատօրէն համեմուած է սուրբգրային մէջբերումներով, որոնք հեղինակը հիմնովին մեկնում ու լուսաբանում է՝ տեղ չթողնելով որեւէ տարընթերցման համար:

Դասագիրքը ստեղծելու նպատակը մէկն էր. որ հովիւը՝ «հաւատացեալների աստուածապաշտութեան, քարոզչութեան եւ հոգեւոր կրթութեան պաշտօնեան», անթերի կատարի իր՝ քարոզչի, ուսուցչի առաքելութիւնը, քանզի «...ուսուցանող դասը յաւէտ պաշտօնեայ եւ հովիւ է նկատուել, որովհետեւ Աւետարանի պաշտօնն էապէս Տիրոջ խօսքի, քարոզութեան եւ վարդապետութեան պաշտօն է» (էջ 27): Ըստ էութեան՝ այս փաղանգն սկիզբ է առել առաքեալներից եւ նրանց գործի շարունակողն է. «Քանի որ շնորոգել եւ շարունակել այն, ինչ որ մի անգամ հիմնուել է, նշանակում է դատապարտել առաջին հիմնադրութիւնը, որը եթէ շարունակուելու նպատակ չունենար, չպէտք է հիմնադրուեր» (էջ 45): Եւ հովիւներին պէտք է բժախնդրօրէն ընտրել, որպէսզի նրանց մէջ Սուրբ Հոգին խօսի:

Հայ Առաքելական Եկեղեցին է, որ ընտրում է եկեղեցականին: Այս է մեծ սկզբունքը, որ Եկեղեցին զինուորութիւն է, եւ իւրաքանչիւրն անխտիր զինուոր է զօրապետութեամբ միակ եւ անյաղթ Զօրագլխի՝ Յիսուս Քրիստոսի. «...առաքելական այս գեղեցիկ սկզբունքով տեսնում ենք, որ եկեղեցականութիւնը նեղ դասակարգ չէ, այլ ընտրեալ պաշտօնատարութիւն, որ ընդհանուր ձայնով է որոշում եւ ընտրում, ձեռնադրութեամբ եւ աղօթքով հաստատում եւ օրհնութեամբ ու օծմամբ ընծայում Եկե-

ղեցու կարիքները հոգալու, Սուրբ Խորհուրդները մատակարարելու, Աստուծոյ Աւետարանն աւետարանելու եւ հասարակութեան ամենամեծ շահն ու օգուտը պաշտպանելու եւ ապահովելու համար» (էջ 51): Ընդամին, որքան քրիստոնէութիւնն է կարեւոր մարդկութեան, նոյնքան էլ՝ հովուական պաշտօնէութիւնը այդ ուսմունքի-վարդապետութեան համար: Եկեղեցական կեանքը նուիրումի եւ անձնագոհութեան բիւրեղացումն է: Եւ մարդկային կեանքի կարեւոր ջրբաժաններին՝ ծնունդ, մկրտութիւն, պսակադրութիւն, մահ, Աստուծոյ պատգամաբերը՝ հովին է իրականացնում ամենակարեւոր առաքելութիւնը:

Մարդկային հասարակութեան պատմութիւնը երբեք ու երբեք հարթ-հաշտ չի եղել: Այն անդադար վերելքների ու վայրէջքների շղթայ է: Եւ որպէսզի իրենց վստահուած հօտն անխոտոր առաջնորդել կարողանան, հովիւները պարտաւոր են դիւցազուններ լինել. «...քանի որ ճշմարիտ քրիստոնէութիւնն արդէն իսկ դիւցազնութիւն է աշխարհիկ գայթակղութիւնների մէջ» (էջ 63):

Հեղինակը նկատում է, թէ հովուական աշխատանքը կարող է միօրինակ լինել, երբեմն՝ անշնորհակալ, պատահում են տխուր եւ վշտալի պարտականութիւններ, սակայն ծանրաբեռնուածութիւնը երբեք չի կարող պատճառ լինել քարոզն ու վարդապետութեան ուսուցումն անտեսելու համար: «հովուական պաշտօնը սահման կամ եզրակէտ չունի», - մաթեմատիկական ճշգրտութեամբ բանաձեւում է Մելքիսեդեկ Սրբազանը (էջ 67):

Հովուական առաքելութեան ընթացքում որն է աւելի կարեւոր՝ քարոզչութիւնը, թէ՛ հօտի հոգսերին ականջալուր լինելու կարողութիւնը: Ոմանք կարեւորում են առաջինը, միւսները՝ երկրորդ բաղադրիչը, մինչդեռ դրանք հաւասարապէս կարեւոր են, միասնական, անբաժանելի՝ համոզուած է հեղինակը: Թէեւ քրիստոնէական արժեհամակարգն ազդում է մարդու խառնուածքի վրայ, սակայն հովուի բնաւորութիւնն էական ազդեցութիւն ունի ծառայութեան ժամանակ. «օրինակ՝ երկշտութիւնը, երկմտութիւնը, թուլակամութիւնը կարող են մնալ նաեւ քրիստոնեայ դառնալուց յետոյ, ինչպէս նաեւ ընտրուելուց եւ ձեռնադրուելուց յետոյ եւ մնալ այն աստիճան, որ եկեղեցականի պաշտօնը պատուով մնալու փոխարէն խափանուի, կաշկանդուի ու անարգուի: Այս կէտերը պէտք է մեծ ուշադրութեամբ ու խնամքով քննել ու կշռադատել»: (էջ 90): Այս հարցում չենք կարող զուգահեռներ չանցկացնել մերօրեայ վիճակի

հետ: Պատերազմող երկրի, ժողովրդի, զինուորի կողքին՝ առաջնագծում, առանց երկնչելու, անվարան կանգնած եղել են եւ են մեր գնդերէցները, հոգեւոր հայրերը, որոնց ներկայութիւնը, խօսքը քաջալերել ու սխրանքների են տարել մարտիկներին:

Մելքիսեդեկ եպիսկոպոսը Եկեղեցին բուժարան է համարում, որտեղ հիւանդներին խնամողները հովիւներն են, եւ որպէսզի առաքելութիւնն անթերի, արդիւնաւէտ լինի, կարեւոր են ճգնողութիւնը, հոգեւոր կրթութիւնը:

Հեղինակը շատ է կարեւորում կոչման խնդիրը (չէ՞ որ հոգեւորականը պատգամաւորն է Քրիստոսի, էջ 100) եւ համարում է, որ այն միշտ պէտք է լինի ուշադրութեան եւ հոգածութեան ծիրում: Մարդը կոչում ունի թէ ոչ՝ յստակեցւում է «անձնափորձութեամբ» (էջ 99), որքան է իրականութիւնը համապատասխանում երեւակայութեանն ու իղձերին: Առանց ներքին խոր համոզման հովուութեան լծուածը վնասում է եւ իրեն, եւ պաշտօնը: Նա կեղծաւոր է, անազնիւ այն հօտի հանդէպ, որին փրկել է Տէրը:

Աշխատութեան առաջին մասում Մելքիսեդեկ եպիսկոպոսն առանձին գլուխներով անդրադառնում է հովուի անհատական ու ներքին կեանքին, առանձնութեանը, որը պարտաւորութիւնների շարքում առաջնային է, աղօթքին, Սուրբ Գրոց ընթերցումներին՝ ընդամին շեշտելով, որ այն պէտք է ուսումնասիրել բնագրով: Նա առանձին անդրադառնում է նաեւ ժամանակի տնտեսման խնդրին. «...մի գաղտնիք, որ ամենից աւելի պէտք է իմանայ եւ տիրապետի եկեղեցական պաշտօնեան, քանի որ որեւէ մէկը պատրաստ չէ հովուի պէս յարգել ժամանակը, որով կազմուած է յաւիտենութիւնը» (էջ 119): Եւ, ի հարկէ, ճգնողական կամ պահեցողական կեանքն է դիտարկում՝ Նոր Կտակարանից առատ մէջբերումներով համեմուած. «պահքը եւ աղօթքը միշտ միասին են ներկայացուած, բայց կամաւոր պահեցողութիւնն աւելի սրբագործուած է այս խօսքով. «բայց այս տեսակ դելը այլ կերպ դուրս չի ելնում, եթէ ոչ աղօթքով ու ծոմապահութեամբ» (Մատթ. Ժէ. 20) (էջ 122):

Աշխատութեան Բ. մասը նուիրուած է հովուի հանրային կամ հասարակական կեանքին: Հովիւր քրիստոնէական վարդապետութեան խտացում-խորհրդանիշն է հասարակութեան աչքին, ուրեմն կարեւոր է, որ ըստ պատշաճի ու բարձր գիտակցութեամբ իրականացնի իր ծառայութիւնը: Մուրադեանցը հոգեւորականին համեմատում է լեռան վրայ կառուցուած քաղաքի հետ՝ բարձր եւ շատ տեսանելի:

Պարկեշտութիւն, պարզութիւն, համեստութիւն, խաղաղասէր հոգի, հեղութիւն, քաղցրութիւն, հաւատարմութիւն, արդարութիւն, անաշառութիւն, անշահասիրութիւն. սրանք պէտք է լինեն հոգեւորականի բնութագրիչները, նկարագրի, դիմագծի կերտման նրբերանգները:

«Կրօնը մասնագիտութիւն է, որն ամփոփում է ամեն բանէ»,— եզրափակում է Ա. գլուխը հեղինակը (էջ 149):

«Եկեղեցական պաշտօնեայի ընտանեկան կեանքը» գլուխը քրիստոնէական ընտանիքի ներդաշնակութիւններին է նուիրուած, որոնք իրենց «վարք ու բարքով» պէտք է օրինակ հանդիսանան հետեւորդների համար: Ընտանիք, որտեղ կինը քահանայի առաջին հաւատակիցն ու օգնականը պէտք է լինի (էջ 158): Հովուի տան դռներն էլ միշտ հիւրընկալ-բաց պէտք է լինեն հաւատակիցների, նեցուկ ու ըմբռնում փնտրողների, բոլոր կարօտեալների առջեւ:

«Հովիւը՝ որպէս ծիսական պաշտօնակատար եւ հասարակութեան ուսուցիչ, կապուած է ողջ ժողովրդի հետ, իսկ որպէս հոգեւոր բժիշկ՝ կապուած է անհատների եւ ընտանիքների հետ»,— հովուական կեանքին նուիրուած գլուխը Մեքսիկեցի սրբազանն սկսում է խորհրդածութիւններով (էջ 165):

Աշխատութեան երկրորդ հատուածը նուիրուած է ուսուցման խնդիրներին՝ քարոզչութիւն եւ վարդապետական ուսուցում: Ինչ է քարոզչութիւնը, որն է դրա խորհուրդը, ինչ սկզբունքներով պէտք է առաջնորդուի հովիւը: Նա պէտք է իմանայ, որ «քարոզչութիւնը գործողութիւն է, իրական մի խօսք ու ոչ նմանողութիւն կամ ընդօրինակում, իսկ ճարտարախօսութիւնը մի զօրութիւն եւ առաքինութիւն է: Եթէ արուեստի կողմը զատենք, այն ժամանակ քարոզչութիւնը մարդասիրական մի գործ է, մի պաշտօն, աստուածային պաշտամունքի մի մաս» (էջ 184): Քրիստոնէական բեմասացութեան նիւթն էլ պէտք է լինի Խաչեալ Յիսուս Քրիստոսը: Ունկնդիրներն էլ առաջին հայեացքից նման, բայց էութեամբ կարող են խիստ տարբեր լինել՝ հաւատացեալներ եւ թերահաւատներ, գիտուններ եւ տգէտներ: Սակայն, քարոզիչը երբեք ու երբեք չպէտք է նրանց տարանջատի: Աւելին, մէկ միասնութիւն, կոռւ ամբողջութիւն պէտք է դառնան. «պատահական կամ մասնաւոր մարդը պէտք է անհետանայ եւ տեղի տայ հանրային մարդուն: Սրանում է եկեղեցական պաշտօնի զօրութիւնը» (էջ 192):

Հեղինակը շօշափում է նաեւ քարոզչութեան ձեւի հետ կապուած հարցերը, տարանջատում է տօնական եւ պատահական քարոզները:

Բայց ընդհանուր է մէկ հանգամանք՝ բոլոր դէպքերում պէտք է պատրաստուել քարոզին: Հովիւը պէտք է անդադար իր անձը կրթի հոգեւոր մտածողութեամբ:

Ներկայացուող հատուածի երկրորդ գլխում հեղինակը խօսում է քրիստոնէական վարդապետութեան ուսուցման կարեւորութեան, նպատակի, եղանակի մասին: Եւ խորհրդով դիմում է վարդապետութեան ուսուցիչներին՝ մանուկների հետ աշխատանքը պէտք է լինի համբերատար, ոճը՝ մտերմիկ, մատուցումը՝ հասկանալի, դիւրամբոնելի:

Եւ, վերջին՝ երրորդ հատուածը վերնագրուած է՝ «Հովուական խնամք կամ տքնութիւն հոգիների համար»: Մուրադեանցը նախ խօսում է համայնքի ու Եկեղեցու փոխկապուածութեան մասին, ապա ընտանիքի եւ անհատի եւ այս երկուսին կապող կարեւորագոյն հաստատութեան՝ դպրոցի մասին: Սերնդի դաստիարակութեան հոգսը հաւասարապէս ընդհանուր է ժողովրդի եւ Եկեղեցու միջեւ. «Մենք՝ հայերս, բարեբախտաբար, բնաւ չենք յուզուել այն խնդրով, թէ ո՞ւմ է պատկանում դաստիարակութեան իրաւունքը՝ աշխարհականներին, թէ՞ եկեղեցականներին, քանի որ հաւատացել ենք, որ երկուսին էլ պատկանում է, եւ նրանք պարտաւոր են միասին եւ անանջատ գործել: Դպրոցը կրօնի, եւ կրօնն էլ դպրոցի կարիքն ունեն» (էջ 224): Դարձեալ, զուգահեռներ անցկացնելով մերօրեայ կեանքի հետ, պէտք է շեշտենք, որ Սրբազան Հօր խօսքը խիստ այժմէական է: Եւ, թերեւս, ճշմարիտ կը լինի միշտ:

Առանձին քննարկման նիւթ է դարձել հովուական այցելութիւնը: Անհնար է արդարացում գտնել այն հովուի համար, որն անտարբեր է անհատների կարիքների հանդէպ: Հոգեւոր հովիւը պէտք է լաւ ճանաչի իր հոտը ամբողջութեան մէջ եւ իւրաքանչիւր անհատին. «Նոր Ուխտի եւ նոր եկեղեցականութեան ամենակարեւոր յատկանիշներից է հոգածութիւն ունենալ անհատների հանդէպ» (էջ 228): Անհատներ, որոնք տարբեր են արտաքին հանգամանքների եւ ներքին կացութեան բերումով: Հովիւը պէտք է ուսուցանի բարեպաշտներին, Հաւատքը առաքինութեան հետ լծորդողներին, բժախնդիրներին եւ երկիւղածներին, սնապաշտներին ու նորահաւատներին, հոգեւոր արթնութեան եկածներին ու խռովեալներին. «Պէտք է անհուն փափագ ունենալ, որ բոլորն էլ քրիստոնէութեան ծոցը դիմեն եւ հպատակուեն ճշմարտութեան թագաւորութեանը» (էջ 233):


Արտաքին կացութեան՝ վիճակի հարցերը քննելիս հեղինակը շեշտում է, թէ կան յատուկ հոգածութեան կարօտեալներ՝ հիւանդներ, սգաւոր ընտանիքներ, այրիներ, մտաւոր հիւանդներ, աղքատներ եւ գլուխն ամփոփում է խիստ բանաձեւումով. «Ով ամօթ է համարում այս պաշտօնը կատարելը (սատարելը, աշակցելը,— Ա.Խ.), նա հրաժարում է պաշտօնէութեան ամենագեղեցիկ մասերից մէկից եւ «պատրաստում» է մերժուելու մարդկանց կողմից» (էջ 261):


Առանձին բաժին է նուիրուած վարչական կամ պաշտօնէական կեանքին՝ կարգապահութիւն, յարաբերութիւններ կրօնական այլ խմբերի, եկեղեցականների, քաղաքական իշխանութիւնների հետ:

Մեքիսեդեկ եպիսկոպոսի աշխատութիւնը թարգմանաբար վերահրատարակելը շնորհակալ գործ էր, ճիշտ ժամանակին, հրամայական: Եւ այն, աշխարհական ընթերցողների, լայն հասարակութեան համար անգամ կարելորդ, անփոխարինելի կլինի: Հաստատապէս: Եւ՝ միշտ:

ԱՆԻ ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ





ՎԱՐՂԱՆ ԴԵԻՐԻԿԵԱՆ

(1964–2023)

Ապրիլի 13-ին կեսանքի 58-րդ տարում
ի Տէր ննջեց Ամենայն Հայոց Կաթողիկոսու-
թեան պաշտօնական «Էջմիածին» հայա-
գիտական եւ կրօնագիտական ամսագրի
վաստակաշատ նախկին խմբագիր Վար-
դան Դերիկեանը: Հանգուցեալը հայրենի
գիտութեան անդաստանի նուիրեալ մշակ-

ներից էր, որ տարիներ շարունակ իր հաւատարիմ ծառայութիւնն է բերել Մայր
Աթոռ Սուրբ Էջմիածնում:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

Կենսագրութիւն

Վարդան Դերիկեանը ծնունել է 1964 թ. մայիսի 18-ին Վանա-
ձոր քաղաքում՝ արձակագիր եւ հրապարակախօս Գէորգ Դերիկեա-
նի ընտանիքում:

1971–1981 թթ. սովորել է Երեւանի Ալ. Շիրուանզադէի անուան թիւ
21 դպրոցում:

1981–1986 թթ. ուսանել է Երեւանի պետական համալսարանի բանա-
սիրական ֆակուլտետում:

1986–1988 թթ. ասպիրանտ է եղել նոյն ֆակուլտետի հայ գրականու-
թեան ամբիոնում:

1989 թ. յունուարին աշխատանքի է անցել Մեսրոպ Մաշտոցի
անուան Մատենադարանում:

1989–1993 թթ. եղել է «Գթութիւն» բարեգործական կազմակերպութե-
ան «Լուսաւորիչ» թերթի խմբագրի տեղակալ, իսկ 1990 թ-ից՝ խմբագիր:

1988–1994 թթ. պարբերաբար եղել է «Հայ զինուոր» եւ «Երկիր» թերթերի յատուկ թղթակից Արցախում: Հայաստանեան մամուլում հրատարակել է Արցախեան շարժմանը եւ պատերազմին նուիրուած հարիւրաւոր յօդուածներ:

1994 թ. փետրուար-յուլիս ամիսներին եղել է Մարտակերտի ռազմաճակատում տեղաբաշխուած 5-րդ առանձին մօտոհրաձգային կամաւորական բրիգադի օպերատիւ բաժնի աւագ սպայ, մասնակցել է Արցախի ազատագրման մարտերին, արժանացել կապիտանի աստիճանի: Պարգեւատրուել է ՀՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով:

1996 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախօսութիւն «Ղեւոնդ Ալիշանը եւ հայ հին գրականութիւնը» թեմայով եւ ստացել բանասիրական գիտութիւնների թեկնածուի գիտական աստիճան:

1993–2009 թթ. աշխատել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում. 1993–1999 թթ. որպէս «Էջմիածին» ամսագրի փոխխմբագիր, իսկ 2002–2009 թթ.՝ գլխաւոր խմբագիր, 1997–2009 թթ. եղել է նաեւ Մայր Աթոռի Զեռագրատան վարիչ:

2009 թուականից աշխատում էր ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղեանի անուան Գրականութեան ինստիտուտում՝ նախ որպէս աւագ գիտաշխատող Հայ հին գրականութեան բաժնում, ապա՝ այդ բաժնի վարիչ, 2009 թ. դեկտեմբերի 24-ից՝ որպէս ինստիտուտի գիտական գծով փոխտնօրէն: 2015 թ. մայիսի 4-ին ընտրուել է ինստիտուտի տնօրէն:

2013 թ. պաշտպանել է դոկտորական ատենախօսութիւն «Հայ միջնադարեան գանձերը եւ «Գանձարան» ժողովածուն» թեմայով եւ ստացել բանասիրական գիտութիւնների դոկտորի գիտական աստիճան:

Հեղինակ է աւելի քան 30 գրքի եւ 50-ից աւելի յօդուածների, որոնք տպագրուել են հայերէն, անգլերէն, ռուսերէն, ֆրանսերէն եւ ուղմիներէն:



СОДЕРЖАНИЕ

ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И ГРАМОТЫ БЛАГОСЛОВЕНИЯ

Послание ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН , по случаю праздника чудесного Воскресения Господа нашего Иисуса Христа	5
Послание ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН , по случаю Дня памяти свв. мучеников Геноцида армян	9

ПРОПОВЕДИ

Проповедь ЕПИСКОПА АРТАКА ТИГРАНЯНА , произнесенная во время Св. Литургии в монастыре Св. Гаяне	10
Проповедь АРХИЕПИСКОПА АРШАКА ХАЧАТРЯНА , произнесенная в монастыре Св. Гаяне во время Пасхальной Литургии Сочельника	15
Проповедь АРХИМАНДРИТА ЗАКАРИИ БАГУМЯНА , произнесенная во время Св. Литургии в церкви Св. Георгия в Мугни в праздник Антипасхи	20
Проповедь АРХИМАНДРИТА ЗАКАРИИ БАГУМЯНА , произнесенная во время Св. Литургии в монастыре Св. Гаяне в честь Зеленого воскресенья	24

РЕЛИГИОВЕДЕНИЕ

КАТОЛИКОС СИМЕОН ЕРЕВАНЦИ — Исполнивший долг	28
---	----

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

ДЬЯКОН САМВЕЛ ПОГОСЯН — Возрождение средневекового образования и распространение просвещения в армянской общине Османской империи	47
МАРИЯ СИКС-ГОГЕНБАЛКЕН — 72-й фирман езидов: «Замаскированный геноцид» организованный в ходе Первой мировой войны	63

ХОРЕПИСКОП СЛЕМАН ГЕНО — Гонения и резня 1915 года в Тур Абдине . . .	86
--	----

СООБЩЕНИЯ


АЙКАНУՍ ՄԵՏՐՈՊՅԱՆ — Дialeктные материалы на страницах журнала «Арарат»	101
АЛЕКСАНДР РЫБИН — Ниневийские христиане	114

РЕЦЕНЗИИ. БИБЛИОГРАФИЯ

АНИ ХУДАВЕРДЯՆ — Искусство искусств, знание знаний — пасти и направлять человека	135
--	-----

НЕКРОЛОГИ

Вардан Деврикан	142
---------------------------	-----



CONTENTS

PONTIFICAL ENCYCLICALS, LETTERS OF BLESSING

- Message of **HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS**, on the occasion of the glorious feast of Holy Resurrection of our Lord Jesus Christ 5
- Message of **HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS**, on the occasion of the commemoration day of holy martyrs of the Armenian Genocide 9

SERMONS

- Sermon delivered by **H.G. BISHOP ARTAK TIGRANYAN** during the Divine Liturgy celebrated at St. Gayane Monastery 10
- Sermon delivered by **H.E. ARCHBISHOP ARSHAK KHACHATRYAN** during the Divine Liturgy celebrated on the Easter Eve at St. Gayane Monastery 15
- Sermon delivered by **PROTO-ARCHIMANDRITE ZAKARIA BAGHUMYAN** during the Divine Liturgy celebrated on New Sunday at St. Gevork Church of Moughny. 20
- Sermon delivered by **PROTO-ARCHIMANDRITE ZAKARIA BAGHUMYAN** during the Divine Liturgy celebrated on Sunday of the World Church (Green Sunday) at St. Gayane Monastery 24

RELIGIOUS STUDIES

- CATHOLICOS SIMEON OF YEREVAN** — Debt repayment 28

HISTORICAL-PHILOLOGICAL STUDIES

- DEACON SAMVEL POGHOSYAN** — The Revival of Medieval Education and the Spread of Enlightenment among the Armenian Population of the Ottoman Empire . 47
- MARIA SIX-HOHENBALKEN** — The 72nd Firman of the Yezidis: A “Hidden Genocide” during World War I? 63

CHOREPISCOPUS SLEMAN HENNO – The Persecution and the Extermination in Tur Abdin 1915	86
--	----

ESSAYS

HAYKANUSH MESROPYAN – Dialectal materials in “Ararat” journal	101
ALEXANDER RIBIN – The Christians of Nineveh.	114

LITERARY REVIEW

ANI KHUDAVERDYAN – The art of arts, the science of sciences is shepherding and correcting a person	135
--	-----

OBITUARY

Vardan Devrikyan	142
----------------------------	-----



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ. ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳՐԵՐ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ պատգամը
մեր Տեր Յիսուս Զրիստոսի հրաշափառ Յարության տօնի առիթով. 5

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ուղերձը
Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների յիշատակի օրույ առիթով. . . 9

ՔԱՐՈՉԽՕՍԱԿԱՆ

Տ. ԱՐՏԱԿ ԵՊՍ ՏԻԳՐԱՆԵԱՆԻ քարոզը՝ խօսուած Ս. Գայանէ
վանքում մատուցուած Ս. Պատարագին 10

Տ. ԱՐՇԱԿ ԱՐՔ. ԽԱՉԱՏՐԵԱՆԻ քարոզը՝ խօսուած Ս. Գայանէ վանքում
Սուրբ Յարության Ճրագալոյցին մատուցուած Ս. Պատարագին 15

Տ. ԶԱՔԱՐԻԱ Ծ. ՎՐԴ. ԲԱՂՈՒՄՅԱՆԻ քարոզը՝ խօսուած Մուղնու Ս. Գէորգ
եկեղեցում Կրկնագատկի տօնին 20

Տ. ԶԱՔԱՐԻԱ Ծ. ՎՐԴ. ԲԱՂՈՒՄՅԱՆԻ քարոզը՝ խօսուած Ս. Գայանէ
վանքում Աշխարհամատրան կիրակիին 24

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

ՍԻՄԷՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՐԵՒԱՆՅԻ — Պարտավճար 28

ՊԱՏՄԱՔԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԱՄՈՒԷԼ ՍՐԿ. ՊՕՂՈՍԵԱՆ — Միջնադարեան կրթության
վերագարթօնքը եւ լուսաւորութեան տարածումը Օսմանեան
կայսրութեան հայութեան մէջ 47

ՄԱՐԻԱ ՍԻՔՍ-ՀՕՀԷՆԲԱԼՔԷՆ — Եզդիների 72-րդ ֆիրմանը.
«Քողարկուած ցեղասպանութիւն»՝ Ա. աշխարհամարտի ընթացքում 63

ՔՈՐԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԼԵՄԱՆ ՀԷՆՆՕ — Տուր Արդինի 1915 թուականի հալածանքն ու կոտորածը	86
---	----

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՀԱՅԿԱՆՈՒԾ ՄԵՍՐՈՊԵԱՆ — Բարբառային նիւթերը «Արարատ» հանդէսի էջերում	101
---	-----


ԱԼԵՔՍԱՆԴՐ ՌԻԲԻՆ — Նինուէի քրիստոնեաները	114
--	-----

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՆԻ ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆ — Արուեստների արուեստը, գիտութիւնների գիտութիւնը մարդուն հովուելը եւ ուղղելն է	135
---	-----

ՄԱՀԱԳՐԱԿԱՆ

Վարդան Դերիկեան.	142
--------------------------	-----



- ԱԲՀ** - Առձեռն բառարան հայկազնեան լեզուի (Մ. Ազեդեան, Գր. Ճելալեան), Վենետիկ, 1846 եւ 1865
- ԱԺ** - Արեւելագիտական ժողովածու, Երեւան
- ԱԻ** - Արեւելագիտության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԱՀ** - Ազգագրական հանդէս (խմբ.՝ Ե. Լալայեան), հ. 1-26, Շուշի/Թիֆլիս, 1896-1916
- ԱՖՏ** - Աստվածաբանության ֆակուլտետի տարեգիրք, Երեւան
- ԲԵՀ** - Բանքեր Երեւանի համալսարանի, Երեւան
- ԲՀ** - Բանքեր հայագիտության, Երեւան
- ԲՀԱ** - Բանքեր Հայաստանի արխիվների, Երեւան
- ԲՄ** - Բանքեր Մատենադարանի, Երեւան
- ԳԱԹ** - Գրականության եւ արվեստի թանգարան, Երեւան
- ԳԻ** - Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԳՀՀ** - Գեորգեան հոգեւոր ճեմարան (աստուածաբանական համալսարան), Ս. Էջմիածին
- ԴԱՆ** - Դաշտային ազգագրական նյութեր
- ԴՀՊ** - Դիւան հայոց պատմութեան (խմբ.՝ Գ. Աղանեան), հ. 1-13, Թիֆլիս, 1893-1917
- ԴՀՎ** - Դիվան հայ վիմագրության, Երեւան
- Ե(Լ)Ժ** - Երկերի (լիակատար) ժողովածու
- ԵՊԿ** - Երեւանի պետական կոնսերվատորիա
- ԵՊՀ** - Երեւանի պետական համալսարան
- ԷԱԺ** - Էմինյան ազգագրական ժողովածու (խմբ.՝ Գ. Խալաթյան, Կ. Կոստանյան), հ. 1-9, Մոսկվա, 1901-1913
- ԷՊԱԹ** - Էջմիածնի պատմաազգագրական թանգարան
- ԼԻ** - Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԼՀԳ** - Լրաբեր հասարակական գիտությունների, Երեւան
- ՀԱ** - Հանդէս Ամսօրեայ, Վիեննա
- ՀԱԱ** - Հայաստանի ազգային արխիվ, Երեւան
- ՀԱԲ** - Հայերեն արմատական բառարան (Հ. Աճառյան), հ. 1-4, Երեւան, 1971-1979
- ՀԱԲՆ** - Հայ ազգագրություն եւ բանահյուսություն, Երեւան
- ՀԱԲՈ** - Հայոց անձնանունների բառարան (Հ. Աճառյան), հ. 1-5, Երեւան, 1942-1962
- ՀԱԹ** - Հայոց ազգագրության եւ ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան, Սարդարապատ
- ՀԱԻ** - Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ՀԱՊ** - Հայաստանի ազգային պատկերասրահ, Երեւան
- ՀԲԲ** - Հայերեն բացատրական բառարան (Սո. Մալխասյան), հ. 1-4, Երեւան, 1944-1945
- ՀԺՀ** - Հայ ժողովրդական հեքիաթներ, Երեւան
- ՀՀ** - Հայագիտական հանդէս, Երեւան
- ՀՀ ԳԱԱ** - Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա, Երեւան
- ՀՀՀ** - «Հասկ» հայագիտական հանդէս, Անթիլիաս
- ՀՀՀԾ** - Հայաստանի հնագիտական հուշարձանները, Երեւան
- ՀՀՀՍ** - Հայկազեան հայագիտական հանդէս, Բեյրութ
- ՀՀՄ** - Հայաստանի հնագույն մշակույթը, Երեւան
- ՀՀՄԾ** - Հին Հայաստանի մշակույթը, Երեւան
- ՀՀՑ** - Հայագիտության հարցեր, Երեւան
- ՀՀՇՏԲ** - Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան (Թ. Խ. Հակոբյան, Սո. Ս. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բաբսեղյան), հ. 1-5, Երեւան, 1986-2001
- ՀՊԹ** - Հայաստանի Պատմության թանգարան, Երեւան
- ՀՊՀ** - Հնագիտական պեղումները Հայաստանում, Երեւան
- ՀՊՀՑ** - Հայոց պատմության հարցեր, Երեւան
- ՀՊՄՀ** - Հայաստանի պետական մանկավարժական համալսարան, Երեւան
- ՀՍՀ** - Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1-13, Երեւան, 1974-1987
- ՀՏ** - «Հուշարձան» տարեգիրք, Երեւան
- ՄԱ** - Մերձավոր Արեւելք, Երեւան
- ՄԱԵԺ** - Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ, Երեւան
- ՄՀ** - Մատենագիրք Հայոց, Անթիլիաս

- ՄՄ** - Մաշտոցի անվան Մատենադարան, Երևան
- ՄՊՎ** - Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Երևան
- ՄՅՀԶ** - Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Երևան
- ՆՀԲ** - Նոր բառգիրք հայկազեան լեզուի (Գ. Աւետիքեան, Խ. Միւրմէլեան, Մ. Աւգերեան), հ. 1-2, Վենետիկ, 1836-1837
- ՆՀԺՊ** - Նյութեր հայ ժողովրդի պատմության, Երևան
- ՇՀՀԿ** - Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. գիտական աշխատանքներ, Գյումրի
- ՊԲՀ** - Պատմաբանասիրական հանդես, Երևան
- ՊԻ** - Պատմության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երևան
- ՊՄ** - «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Երևան
- ՎՀԵՊ** - Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, Երևան
- ՎՀՀ** - «Վէմ» համահայկական հանդես, Երևան
- ՏՀԳ** - Տեղեկագիր հասարակական գիտությունների, Երևան
- ՑԶՄՄ** - Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Երևան
- ՔՀ** - Քրիստոնյա Հայաստան, Ս. Էջմիածին
- ՔՀՀ** - «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002
- ՕԱՀՀՄ** - Օտար աղբյուրները հայերի և Հայաստանի մասին, Երևան
- ԱԳՎ** - Армянский гуманитарный вестник, Ереван
- АО** - Археологические открытия, Москва
- АПА** - Археологические памятники Армении, Ереван
- АРА** - Археологические раскопки в Армении, Ереван
- ВВ** - Византийский временник, Ленинград-Москва
- ВДИ** - Вестник древней истории, Москва
- ВЕУ** - Вестник Ереванского университета, Ереван
- ВОН** - Вестник общественных наук, Ереван
- ДВ** - Древний Восток, Ереван
- ДКА** - Древнейшая культура Армении, Ереван
- ИАЭ** - Институт археологии и этнографии, ИАН РА, Ереван
- ИАН** - Известия Академии наук Армянской ССР, Общественные науки, Ереван
- ИФЖ** - Историко-филологический журнал, Ереван
- КБС** - Кавказско-ближневосточный сборник, Тбилиси
- КВ** - Кавказ и Византия, Ереван
- КДА** - Культура древней Армении, Ереван
- КСИА** - Краткие сообщения института археологии, Москва
- КСИИМК** - Краткие сообщения института истории материальной культуры, Москва
- МАК** - Материалы по археологии Кавказа, Москва
- МИАН** - Материалы по истории армянского народа, Ереван
- МНМ** - Мифы народов мира, Москва (ред. С. А. Токарев), 1991-1992
- НАА** - Национальный архив Армении, Ереван
- СА** - Советская археология, Москва
- СМОМПК** - Сборник материалов для описания местностей и племён Кавказа, т. 1-46, Тифлис, 1881-1915
- СЭ** - Советская этнография, Москва
- ХВ** - Христианский Восток, Санкт-Петербург
- AJNES** - Armenian Journal of Near Eastern Studies, Yerevan
- AS** - Anatolian Studies, Cambridge
- AW** - Antike Welt, Mainz am Rhein
- BAR** - British Archaeological Reports, International Series, Oxford
- CAH** - Cambridge Ancient History, Cambridge
- IC** - Iran and the Caucasus, Leiden
- JANER** - Journal of Ancient Near Eastern Religions, Leiden
- JAOS** - Journal of American Oriental Society, Michigan
- JAS** - Journal of Armenian Studies, Belmont
- JSAS** - Journal of the Society for Armenian Studies, Fresno
- MDOG** - Mitteilungen der Deutschen Orient-Gesellschaft, Berlin
- OrCh** - Oriens Christianus, Leipzig
- PO** - Patrologia Orientalis, Paris-Brepols
- REArm** - Revue des études arméniennes, Paris
- SMEA** - Studi Micenei ed Egeo-Anatolici, Roma

ISSN 1829—4243
eISSN 2953—7843

Հրատարակում է
Գէորգեան հոգեւոր ճեմարանի
(աստուածաբանական համալսարան)
գիտխորհրդի երաշխատրույթեամբ եւ որոշմամբ

Հրատարակչական բաժնի տնօրէն՝
Տ. Արարատ քինյ. Պօղոսեան

Խմբագրութեան հասցէն՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ, Ք. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ,
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ»
ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Республика Армения, Эчмиадзин, редакция журнала «Эчмиадзин»

Republic of Armenia, Etchmiadzin, Editorial Office of the Journal "Etchmiadzin"

Էլ. փոստ՝ etchmiadzinamsagir@gmail.com

Հեռ. (+374-10) 517-276

Ստորագրուած է տպագրութեան՝ 30.05.2023 թ.



ԴԱՅՐ ԼԹՈՒ ՄՈՒԲԻ
ԷՋՄԻԱԾԻՆԻ ՏՊԱՐԱՆ